Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ճառեր

# ԱՆԽԱԽՏ բարեկամություն

32С1
Հ-42

Ա. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



373

# ԱՆԽԱԽՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ

„ՀԱՅԱՍՏԱՆ"
հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ · 1969

Сектор Востоковедения АН Арм...
БИБЛИОТЕКА
ԳՐԱԴԱՐԱՆ

32С1
—
Հ 42

Խմբագիր՝ Լ. Հ. ԲԱԲԱՅԱՆ

Араманс Багратович Арутюнян—Аренц

Нерушимая дружба

1—6—3

(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван, 1969



# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սովետական Միության բազմազգ ժողովուրդն իր հերոսական աշխատանքով լուծում է մարդկության պատմության սոցիալական խնդիրը՝ կառուցում է կոմունիզմի հոյակապ շենքը:

Մարքս-լենինյան գիտությունը սովորեցնում է, որ ժողովուրդը պատմության կերտողն է, իսկ կոմունիզմի կառուցումը ժողովրդի եռանդի ու բանականության գործն է: Կոմունիզմի հաղթանակը լիովին կախված է մարդկանցից, և կոմունիզմը մարդկանց համար է կառուցվում:

Սովետական ժողովուրդը ՍՍՀՄ-ում կոմունիզմի կառուցումը դիտում է որպես իր ինտերնացիոնալ խնդիրը, որը լիովին համապատասխանում է աշխարհի բովանդակ մարդկության կենսական շահերին: Սովետական ժողովուրդը քաջ գիտակցում է, որ «կոմունիզմը կատարում է բոլոր մարդկանց սոցիալական անհավասարությունից, ճնշման ու շահագործման բոլոր ձևերից, պատերազմի սարսափներից փրկելու պատմական միսիան և աշխարհում հաստատում է **Խաղաղություն, Աշխատանք, Ազատություն, Հավասարություն, Եղբայրություն ու Երջանկություն** բոլոր ժողովուրդների համար»[1]:

---

[1] Սովետական Միության կոմունիստական կուսակցության ծրագիր: Երևան, 1961, էջ 6:

Կոմունիզմը կառուցելու համար անհրաժեշտ է էլ ավելի ամրապնդել ժողովուրդների բարեկամությունը և զարգացնել նրանց համագործակցությունն ու միասնությունը։

Կոմունիստական կուսակցության անմիջական ղեկավարությամբ մեր հայրենիքի աշխատավորները ստեղծել են բազմազգ սոցիալիստական պետություն՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միություն, որը զարգանում է երկրի բոլոր ժողովուրդների բարեկամության, եղբայրության ու համագործակցության հիման վրա։ Ժողովուրդը ՍՄԿԿ ղեկավարությամբ նվաճեց քաղաքական իշխանությունը, նրա ամենօրյա ղեկավարությամբ հետևողականորեն ամրապնդելով բանվորների ու գյուղացիների դաշինքը, ապահովեց բոլոր ազգերի ու ժողովուրդների իրավահավասարությունն ու եղբայրությունը, ՍՍՀՄ-ում կառուցեց սոցիալիզմ, որի հիման վրա արդի էտապում բանվորների ու գյուղացիների իշխանությունը զարգանում է ամբողջ ժողովրդի իշխանությունը դառնալու նշանաբանով։ Բանվոր դասակարգի ու կոլտնտեսային գյուղացիության դաշինքը սովետական պետության անխախտ հիմքն է, որի մեջ ղեկավար դերը պատկանում է բանվոր դասակարգին՝ կոմունիզմի կառուցման համար մղվող պայքարի առաջավոր ուժին։ Երկրի Սովետների դեպուտատների մեջ կան ավելի քան հարյուր ազգությունների ներկայացուցիչներ, որոնք ձեռք-ձեռքի տված լուծում են պետական շինարարության բազմազան հարցեր և հաջողությամբ զուգակցում համաժողովրդական ու ազգային շահերը։

ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը սովետական հասարակության զարգացման ու հզորության կարևորագույն աղբյուրը և ուժն է։ Սովետական երկրի ժողովուրդների բարեկամությունը և համագործակցությունն անընդհատ զարգանում և ամրապնդվում են։

Արդի էտապում ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական բարեկամության և համագործակցության ստեղծարար ուժը դըրսևորվում է կոմունիստական շինարարության բոլոր բնագավառներում և մեծագույն ուժով նպաստում է ինչպես ՍՍՀՄ առանձին ազգերի, այնպես էլ Սովետական Միության ամբողջ տնտեսության ու կուլտուրայի անշեղ աճմանն ու զար-



գացմանը։ Սովետական Միությունը, ծավալուն կերպով առաջ մղելով կոմունիզմի շինարարությունը, հաստատուն քայլերով ընթանում է դեպի այդ նոր հասարակության բարձունքները։ Առաջնորդվելով այդ սկզբունքով՝ ՍՄԿԿ-ն իր առաջնահերթ խնդիրն է համարում կոմունիզմի վսեմ գաղափարների անշեղ կենսագործման համար անընդհատ զարգացնել աշխատավորական լայն զանգվածների ակտիվությունը, ստեղծագործական նախաձեռնությունը, ժողովուրդների եղբայրական բարեկամությունն ու համագործակցությունը։ Սովետական պետության կողմից դեպի կոմունիզմը կատարվող ամեն մի առաջընթացում դրսևորվում է ՍՍՀՄ բազմազգ ժողովուրդների անխախտ բարեկամության ու համագործակցության վիթխարի ուժը։ Ժողովուրդների բարեկամությունն օբյեկտիվ, օրինաչափ, պատմականորեն հիմնավորված ու ստուգված գործոն է և ունի պատմական խոր արմատներ։

ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը սկիզբ է առել հին ժամանակներից և ունի հարուստ պատմություն։ Մեր հայրենիքի պատմական անցյալը էական դեր է խաղացել սոցիալիստական ազգերի համագործակցությունը նախապատրաստելու և ժողովուրդների բարեկամությունը զարգացնելու համար։

Սովետական ժողովուրդների բարեկամությունն իր զարգացման բարձր աստիճանին հասավ ՍՍՀՄ-ում սոցիալիզմի լիակատար և վերջնական հաղթանակի շնորհիվ։ ՍՍՀՄ բազմազգ ժողովուրդների լենինյան բարեկամությունն ու սոցիալիստական համագործակցությունը ՍՄԿԿ մեծագույն հաղթանակն է։

ՍՍՀՄ-ում կոմունիզմի կառուցման արդի էտապում կոմունիստական կուսակցությունն առանձնահատուկ նշանակություն է տալիս ժողովուրդների բարեկամության ու համագործակցությանը։

Սովետական երկրի մեծ ու փոքր, ազատ ու իրավահավասար ազգերը և ժողովուրդները ՍՍՀՄ-ում կոմունիզմի ակտիվ կառուցողներն են։ Սոցիալիզմը և կոմունիզմը լայն հնարավորություններ են ստեղծում մարդկանց ֆիզիկական և մտավոր ընդունակությունների համակողմանի զարգացման հա-

մար, կյանք են տալիս ժողովրդական ամենալայն զանգվածների ստեղծագործական ուժերին։

Հասարակական նոր, սոցիալիստական կարգը աշխատավորներին լիապես հարազատ է։ Նա զարգացնում ու ամրապնդում է ժողովուրդների եղբայրական բարեկամությունն ու համագործակցությունը։ Սովետական հասարակությունն ունի ներքին կուռ միասնություն, աշխատավորական զանգվածների նպատակների և շահերի ընդհանրություն։ Այդ հանգամանքն իր ցայտուն արտահայտությամբ դրսևորվում է սովետական երկրի ժողովուրդների լենինյան բարեկամության և փոխօգնության մեջ։ Արդի էտապում, երբ հաջողությամբ ստեղծվում է կոմունիզմի նյութատեխնիկական բազան, երբ ժողովուրդներն իրենց ակտիվությունը հանդես են բերում հասարակական կյանքի բոլոր ասպարեզներում, հրամայաբար պահանջ է առաջանում՝ էլ ավելի զարգացնել ու ամրապնդել սովետական բոլոր հանրապետությունների տնտեսական ու կուլտուրական կապերը և սոցիալիստական համագործակցությունը։ ՍՍՀՄ ժողովուրդների տնտեսական և կուլտուրական համագործակցության շնորհիվ սովետական երկրի ժողովրդական տնտեսության ընդհանուր սիստեմի մեջ հաջողությամբ զարգանում են միութենական բոլոր հանրապետությունների, երկրամասերի, մարզերի և ազգային օկրուգների տնտեսությունը, կուլտուրան և գիտությունը։

ՍՄԿԿ XXIII համագումարը մեծ գոհունակությամբ նշեց, որ սովետական երկրի ժողովուրդների պատմության վերջին տարիները նշանավորվեցին միութենական հանրապետությունների փայլուն նվաճումներով և հատուկ ուժով ընդգծեց ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների տնտեսական կապերի, փոխօգնության, սոցիալիստական համագործակցության հետագա զարգացման խիստ անհրաժեշտությունը։

ՍՄԿԿ XXIII համագումարը մատնացույց արեց, որ սովետական երկրի ժողովուրդների պատմության արդի էտապում տեղի են ունենում ազգերի մերձեցում, ժողովուրդների բարեկամության և համագործակցության ընդարձակում, որի գիտական ուսումնասիրությունն ու համակողմանի լուսաբանումը հանդիսանում են հասարակական գիտությունների կարևո-



րագույն խնդիրներից մեկը։ Այդ ուղղությամբ կատարված է որոշակի աշխատանք։

ՍՍՀՄ-ում ազգային հարցի լուծման և ժողովուրդների բարեկամության վերաբերյալ գոյություն ունի հարուստ գրականություն։ Վերջին ժամանակներում երևան եկան մի շարք աշխատություններ, որոնց մեջ լուսաբանված են սոցիալիստական շինարարության պրոցեսում ազգային հարցի լենինյան ծրագրի իրագործումը, մեր հայրենիքի բոլոր ժողովուրդների եղբայրության ու համագործակցության հաստատումն ու զարգացումը։ Դրանց մեջ հատուկ ուշադրության արժանի են հատկապես այն աշխատությունները, որոնցում լուսաբանված է լենինյան ժառանգության նշանակությունը, ներկայացված են Սովետական Միության կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության կենսագործման արդյունքները։

Սովետական գիտնականների աշխատությունների մեջ ցույց է տրված և գիտականորեն հիմնավորված այն կենսական հարցը, թե ինչպես կոմունիստական կուսակցությունը, հաղթահարելով բազում դժվարություններ, կարողացել է կենսագործել ազգային հարցի լենինյան ծրագիրը։ Այդ աշխատություններում ուշագրավ են ազգային հարցի կենսագործման բնագավառում Վ. Ի. Լենինի գործունեության համակողմանի ուսումնասիրությունը և այդ կապակցությամբ նոր փաստերի ու նյութերի գիտական շրջանառության մեջ դնելու ուղղությամբ կատարված մեծ աշխատանքը։

Այդ հեղինակների աշխատություններում միաժամանակ ցույց են տրված առանձին հանրապետություններում և մարզերում ազգային հարցի բնագավառում տեղ գտած սխալներն ու խեղաթյուրումները։

Դրանցից բացի, վերջին շրջանում հրատարակվել են նաև փաստաթղթերի և հոդվածների մի շարք ժողովածուներ, որոնց մեջ հեղինակները հանգամանորեն ցույց են տվել սոցիալիստական ազգերի ձևավորման առանձնահատկությունները։

ՍՄԿԿ XXIII համագումարի որոշման մեջ ասված է. «Համագումարը բոլոր կուսակցական կոմիտեներին պարտավորեցնում է այսուհետև էլ անշեղորեն իրագործել լենինյան

ազգային քաղաքականությունը, սովետական բոլոր մարդկանց դաստիարակել սովետական հայրենասիրության ոգով և ՍՍՀՄ-ի ժողովուրդների լավագույն, առաջադիմական ազգային տրադիցիաները հարգելու ոգով, եղբայրական սոցիալիստական բոլոր երկրների ժողովուրդների հետ, համայն աշխարհի աշխատավորների հետ բարեկամության ոգով, հաստատակամ պայքար մղել նացիոնալիզմի ու շովինիզմի բոլոր դրսևորումների դեմ»[1]:

Կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության հաղթանակը սովետական գիտնականներին պարտավորեցնում է ավելի խոր հետազոտել սովետական ազգերի արդի կենցաղի և կուլտուրայի առանձնահատկությունները:

ՍՄԿԿ XXIII համագումարի նշված ցուցումը սովետական գիտնականներին պարտավորեցնում է կուսակցության ազգային քաղաքականության հաղթանակի ու ժողովուրդների բարեկամության ամբողջ պատմությունը ուսումնասիրել և գիտական ընդհանրացումներ կատարել կոմունիստական շինարարության պրակտիկայի հետ սերտ կապի մեջ: Համագումարի բերելով ժողովուրդների գործունեությունը բարեկամության ու համագործակցության բնագավառում, սովետական առաջավոր գիտությունն ընդգծում է, որ կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականությունը լիովին պաշտպանում է բոլոր ազգերի ու ազգությունների արմատական շահերը, արտահայտում նրանց իղձերը, նրանց միավորում միասնական ընտանիքում, ուր համակողմանիորեն զարգանում են ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների տնտեսությունն ու կուլտուրան:

ՍՍՀՄ բոլոր ժողովուրդները, համախմբված կոմունիստական կուսակցության շուրջը, ջերմորեն պաշտպանում են լենինյան ազգային քաղաքականությունը և միասնական ջանքերով կառուցում կոմունիստական հասարակարգ:

Ներկա աշխատության նպատակն է ցույց տալ, թե ինչպես կոմունիստական կուսակցության բացառիկ ուշադրության

[1] ՍՄԿԿ XXIII համագումարի նյութերը, Երևան, 1967, էջ 313—314:



և հովանավորության շնորհիվ ամրացել, կոփվել, կատարելագործվել են ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունն ու սոցիալիստական համագործակցությունը:

Աշխատության մեջ բացահայտված է ՍՄԿԿ այն տիտանական գործունեության վիթխարի նշանակությունը, որ նա սովետական պետության կեսդարյա գոյության ընթացքում կատարել ժողովուրդների լենինյան բարեկամության ու համագործակցության ամրապնդման, բարգավաճման և աշխատավորներին պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու համար:

Ձեռնամուխ լինելով սույն աշխատությանը՝ նպատակ ենք ունեցել ցույց տալ, որ սովետական բազմազգ ժողովուրդների բարեկամության ու համագործակցության հետագա զարգացումը, սոցիալիստական երկրների եղբայրական ժողովուրդների հետ տնտեսական ու կուլտուրական կապերի ամրապնդումը և աշխարհի բոլոր խաղաղասեր ժողովուրդների բարեկամությունը եղել ու մնում են Սովետական Միության Կոմունիստական կուսակցության հոգատարության գլխավոր առարկաներից մեկը:

Ներկա աշխատությունը գրելու ժամանակ օգտագործել ենք մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունները, ՍՄԿԿ համագումարների, կոնֆերանսների, պլենումների, սովետների համագումարների, ՍՍՀՄ Գերագույն սովետի սեսիաների համապատասխան որոշումները, կուսակցության ու կառավարության ղեկավարների ելույթները, միութենական հանրապետությունների, երկրամասերի, ազգային օկրուգների, կուսակցական ու սովետական օրգանների որոշումները, պաշտոնական վիճակագրական հաշվետվությունները, ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի նյութերը, ՍՍՀՄ պետական կենտրոնական արխիվի, ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի արխիվի, Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի, Քիշնևի, Տաշքենդի, Ռիգայի, Բաքվի Թբիլիսիի, Երևանի հեղափոխական թանգարանների նյութերը, փաստաթղթերը, պարբերական մամուլը և պատմա-քաղաքական գրականությունը:

Աշխատությունը գրված է մասսայական ընթերցողի հա-

մար և իրենից ներկայացնում է պատմական, սոցիալ-տնտեսական, քաղաքական համառոտ մի ակնարկ: Այդ պատճառով մենք բնավ չենք կարծում, թե այն լիովին ընդգրկում է ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության և համագործակցության բովանդակ պատմությունը:

Ուստի հեղինակը սիրով կընդունի և իր հետագա աշխատանքում հաշվի կառնի ամեն մի օգտակար դիտողություն:

Հեղինակը միաժամանակ իր շնորհակալությունն է հայտնում բոլոր այն կազմակերպություններին և անձանց, որոնք իրենց տրամադրած փաստերով, նյութերով և վավերագրերով օժանդակել են սույն աշխատության ստեղծման գործին:

# I

## ԼԵՆԻՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Գիտական կոմունիզմի հիմնադիրները հատուկ ուշադրություն են դարձրել ազգային հարցի վրա: «Գերմանական գաղափարախոսություն» աշխատությունում Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը հատուկ ուժով ընդգծել են, որ տարբեր ազգերի փոխհարաբերությունները կախված են այն բանից, թե որքանով են նրանցից ամեն մեկը զարգացրել իրենց արտադրողական ուժերը, աշխատանքի բաժանումը և ներքին շփումը: Մարքսիզմի հետագա զարգացման ընթացքում գիտական խոր ուսումնասիրության առարկա դարձան ոչ միայն ազգերի փոխհարաբերությունները, այլև յուրաքանչյուր ազգի ներքին կառուցվածքը, որից կախված են նրա արտադրության զարգացման մակարդակը, նրա ներքին և արտաքին հարաբերությունները: Ռուսաստանի մարքսիստները, Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, ոչ միայն ընդունեցին և պաշտպանեցին Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի հայացքները ազգային հարցի մասին, այլև այն ստեղծագործաբար զարգացրին և ստեղծեցին գիտական կուռ ուսմունք, որն արժանացավ միջազգային հեղափոխական ուժերի բարձր գնահատականին:

Վ. Ի. Լենինն ստեղծեց կոմունիստական կուսակցության ծրագիրն ազգային հարցի վերաբերյալ, և Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի շնորհիվ ապահովվեց նրա կենսագործումը Ռուսաստանում: ՍՄԿԿ-ն

իր ամբողջ գործունեության ընթացքում ազգային շինարարության մեջ կենսագործում է մարքսիզմ-լենինիզմի ուսմունքը ազգային հարցի վերաբերյալ՝ հաշվի առնելով Ռուսաստանի բոլոր առանձնահատկությունները։ Ռուսաստանը բազմազգ երկիր էր, որի զարգացումը ցարիզմն արգելակել էր։ Ցարիզմի ոչնչացումը դարձավ բոլոր ժողովուրդների ու ազգերի ընդհանուր գործը։

## 1. ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՆՏ

Ցարական Ռուսաստանը հետամնաց մի երկիր էր, ուր գործում էին սակավաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ։ Ցարական Ռուսաստանը գերազանցապես ագրարային երկիր էր, որտեղ բանվորները դաժան շահագործվում էին, իսկ գյուղացիներն էլ հողազուրկ ու աղքատ վիճակում էին գտնվում։ Ռուսաստանի բազմազգ ժողովուրդը զուրկ էր քաղաքական իրավունքներից։ Նահապետական և ֆեոդալական-ճորտատիրական կարգերի մնացուկները, ինչպես և երկրի կախումը միջազգային կապիտալից շարունակում էին գոյություն ունենալ ցարական Ռուսաստանում։ Այս ամենը Ռուսաստանը դարձնում էր սոցիալական և ազգային ճնշման կենտրոն։

Բուրժուա-կալվածատիրական Ռուսաստանը, ինչպես և ժամանակակից կապիտալիստական բազմազգ պետությունները եղել են ժողովուրդների բանտ։ Ճնշվում և հալածվում էին բոլոր ազգերի աշխատավորները։ Ցարիզմը ռուս ժողովրդի, առավել ևս ոչ ռուս ժողովուրդների ոխերիմ թշնամին էր։ «Այլազգիներին» կեղեքելը մի փաստ է, որ երկու ծայր ունի։ Մեկով նա հարվածում է «այլազգուն», մյուսով՝ ռուս ժողովրդին»[1]։ Միլիոնավոր մարդիկ հեծում էին ցարիզմի ծանր լծի տակ։ Ռուսաստանի ազգային ծայրամասերում, ուր թագավորում էին համատարած անգրագիտություն, հետամնացություն և խավար, սոցիալական ծանր ճնշումը օրավուր կրկնապատկվում էր ազգային խտրականության և արհամարհանքի զուգակցությամբ։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 288։



Երկրի մի շարք ծայրամասերում բնակչության բացարձակ մեծամասնությունն անգրագետ էր։ Այսպես, օրինակ, Բելոռուսիայում անգրագետները կազմում էին՝ 80, Հայաստանում՝ 85, Ադրբեջանում՝ 98,5, Թուրքմենստանում և Յակուտիայում՝ 99,3, իսկ Տաջիկստանում և Կիրգիզիայում՝ 100 տոկոս։ Ցարիզմը տեղական դպրոցներից և հիմնարկներից հանեց ոչ ռուս ժողովուրդների ազգային լեզուները, արգելակեց նրանց տնտեսական և կուլտուրական զարգացումը, հետևողականորեն վարեց ռուսականացման քաղաքականություն, հրահրեց ազգամիջյան թշնամանք և կազմակերպեց արյունահեղ ընդհարումներ։ Միայն Կովկասում ցարիզմը փակեց 300-ից ավելի հայկական դպրոցներ, բարեգործական ու կուլտուրական հիմնարկներ։ Ցարական կառավարությունը ամենադաժան ձևով խեղդում էր ժողովուրդների ազգային-ազատագրական և հեղափոխական շարժումները։ Սոցիալական ու ազգային դաժան ճնշումն առաջ էր բերում աշխատավորների ատելությունը ցարիզմի և բուրժուա-կալվածատիրական կարգի նկատմամբ։ Երկրի ժողովուրդների ազատության ու անկախության համար մղվող պայքարի արմատական շահերը հրամայաբար թելադրում էին, որ ազգերն ու ազգությունները սերտորեն համախմբվեն բազմամիլիոն ռուս ժողովրդի շուրջը, որն առաջատար դեր էր խաղում այդ պայքարում։ Ժողովուրդների պայքարը ցարիզմի դեմ ազգային և դասակարգային խոր արմատներ ուներ։ Ռուս ժողովուրդը և նրա առաջավոր ներկայացուցիչները խորապես համակրում էին ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարը՝ շարունակ եղբայրական օգնության ձեռք մեկնելով նրանց։ Նրանք երազում էին այդ ժողովուրդների ազատագրման և նրանց միջև եղբայրական փոխհարաբերությունների հաստատման մասին։ Ռուս հեղափոխական դեմոկրատներ Ա. Ի. Գերցենը, Վ. Գ. Բելինսկին, Ն. Գ. Չերնիշևսկին, Ն. Ա. Դոբրոլյուբովը և ուրիշներ համարձակորեն պաշտպանում էին ժողովուրդների ազատագրական ձգտումները և անարգանքի սյուներին գամում այդ ժողովուրդներին ճնշող ցարական քաղաքականությունը։ Ռուս հեղափոխական դեմոկրատները կոչ էին անում Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին՝ համատեղ և

վճռական պայքար մղել ընդհանուր թշնամու՝ ճորտատիրության և ինքնակալության դեմ։ Ռուսական առաջավոր, հատկապես հեղափոխական-դեմոկրատական կուլտուրայի ազդեցության ներքո ծավալվում էր երկրի ժողովուրդների առաջավոր գործիչների սերտ համագործակցությունը և ամրապնդում պայքարը ցարիզմի դեմ։ Ուկրաինական ժողովրդի առաջավոր գրողների, նկարիչների, գիտնականների մի ամբողջ համաստեղության՝ Մարկո Վովչոկի, Իվան Ֆրանկոյի, Պանաս Միրնիի, Լեսյա Ուկրաինկայի և շատ ուրիշների սերտ համագործակցությունները զարգանում էին ռուսական առաջավոր մարդկանց բարերար ազդեցությամբ, որը հետագայում դեր խաղաց ցարիզմի դեմ ժողովուրդների պայքարի կազմակերպման գործում։ Ուկրաինական հեղափոխական բանաստեղծ Տ. Գ. Շևչենկոն իր պայծառ կյանքը նվիրեց ճորտատիրության և ինքնակալության դեմ ժողովրդական զանգվածների պայքարի կազմակերպման մեծ գործին։

Հասարակական-քաղաքական ակտիվ գործիչ, նշանավոր բանաստեղծ Ի. Յա. Ֆրանկոն հետևողականորեն կազմակերպեց ուկրաինական ժողովրդի պայքարը՝ ընդդեմ ճորտատիրության և ինքնակալության։

Ուկրաինական ժողովուրդը 1654 թվականից ընդմիշտ իր բախտը կապեց ռուս մեծ ժողովրդի հետ և նրա հետ միասին պայքարի ելավ ցարիզմի դեմ, որը պսակվեց պատմական հաղթանակով։ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի ժողովուրդների հասարակական-քաղաքական գործիչները, անկեղծորեն մտահոգված լինելով իրենց ժողովուրդների ճակատագրով, վաղուց արտահայտվել են Անդրկովկասը Ռուսաստանին միանալու օգտին՝ այն դիտելով իբրև Ռուսաստանի և Անդրկովկասի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացման օբյեկտիվ արդյունք, նրանց բազմադարյան և սերտ կապերի հետևանք։ Նրանք իրավացիորեն նշում էին, որ Ռուսաստանի հետ միանալով, Անդրկովկասի ժողովուրդներն իրենց բախտը ընդմիշտ կկապեն ռուս մեծ ժողովրդի բախտի հետ։ Այստեղ նրանք նկատում էին երկու Ռուսաստան՝ ցարական և դեմոկրատական։ Դեմոկրատական Ռուսաստանը դիտում էին որպես ճնշված ժողովուրդների



փրկարար, որպես փոքր ժողովուրդների անկեղծ բարեկամ ու հավատարիմ պաշտպան։ Այսպիսի վեհ նպատակով Անդրկովկասի ժողովուրդներն իրենց ազատագրական պայքարը միավորեցին ռուս ժողովրդի հեղափոխական պայքարի հետ։

Ռուսական առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության անմիջական ազդեցությամբ Անդրկովկասում ծավալվեց հեղափոխական շարժումը։ Անդրկովկասի աշխատավորական մասսաների ուշադրությունը հեղափոխությունից շեղելու նպատակով ցարական կառավարությունը կազմակերպում է ազգամիջյան կռիվներ։ 1905—1907 թթ. ցարիզմը մի քանի անգամ կազմակերպեց հայ-թաթարական ջարդեր։ Արյունոտ ընդհարումներ են տեղի ունենում Բաքվում, Երևանում, Նախիջևանում, Ելիզավետպոլում, Շուշիում և Անդրկովկասի այլ շրջաններում։

«Ցարական ինքնակալությունն իրեն որոշակի հաշիվ էր տալիս այն հսկայական նշանակության համար, որ ուներ Բաքվի բանվորական շարժման գործում,— գրում էր Ս. Մ. Կիրովը։— Որպեսզի բանվորական շարժումը արյան մեջ խեղդի, ոչ մի բանի առաջ կանգ չէր առնում։ Բաքվի պրոլետարիատը 1904—1905 թթ. դուրս էր եկել միջազգային հեղափոխական շարժման ասպարեզ»[1]։

ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեն 1905 թվականի փետրվարի 13-ի իր կոչում գրում էր, որ ցարական կառավարությունը, մեկ ազգը կռվի հանելով մյուս ազգի դեմ, ձգտում էր ամբողջ ժողովրդի ուշադրությունը շեղել Ռուսաստանի հեղափոխությունից, նրանց զրկել ժողովրդի ոխերիմ թշնամու՝ ցարիզմի դեմ պայքարելու հնարավորությունից[2]։

Ցարական կառավարությունը կազմակերպեց այդ ազգամիջյան կռիվները, որպեսզի Քիշնևի, Գոմելի, Սեդլեցի հրեաների ջարդերի նման ազգային թշնամանք առաջ բերի նաև մյուս ազգերի միջև և պրոլետարիատի ուշադրությունը շեղի հեղափոխական շարժումից։

ՌՍԴԲԿ Կովկասյան միության IV կոնֆերանսը 1905 թ. նոյեմբերի վերջին քննարկելով ազգային հարցը, ընդունեց ո-

[1] «Бакинский рабочий», 22 апреля 1924.

[2] «Кавказский рабочий листок», № 10, 1905.

բռնում, որի մեջ ասված է. «Նկատի առնելով Ռուսաստանի ազգությունների ազատ զարգացման նկատմամբ ցարական կառավարության հաճախակի գործադրած բռնությունները, կոնֆերանսը, պրոլետարիատի ուժերի ազատ և լիակատար զարգացման նպատակով, արտահայտվում է Ռուսաստանի ազգությունների քաղաքական ինքնորոշման իրավունքի օգտին»[1]: Առաջնորդվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, կոնֆերանսը ժողովուրդների առաջ խնդիր դրեց միացյալ ուժերով պայքարել ցարիզմի դեմ:

Աշխարհի բոլոր երկրների առաջադիմական գործիչները մերկացրին ցարիզմի ազգային մարդատյաց քաղաքականությունը: Փարիզում այդ առթիվ տեղի ունեցավ միտինգ, ուր ֆրանսիական ժողովրդի անունից հանդես եկավ Անատոլ Ֆրանսը և ասաց. «Ցարիզմը ոչ միայն ռուսական, այլև եվրոպական չարիք է»:

Մաքսիմ Գորկին ամբողջ հոգով ողջունեց Անատոլ Ֆրանսին և նշեց աշխարհի բոլոր ժողովուրդների միջև բարեկամություն ստեղծելու խիստ կարևորությունը:

«Լինելով Կովկասում,— գրում է Մ. Գորկին,— ես ամենուրեք տեսել եմ, թե ինչպես վրացին, թաթարը, հայը կողք-կողքի համերաշխ աշխատել են, եղբայրի նման պարզ և ուրախ կատակներ արել, երգել, ծիծաղել և ինչպես դժվար է հավատալ, որ այդ հասարակ, հիանալի մարդիկ այժմ չար ու մութ ուժերի թելադրանքով անմտորեն մեկը մյուսին կոտորում են»[2]: Դիմելով Անդրկովկասի բազմազգ ժողովուրդներին՝ Մ. Գորկին ասել է. «Մենք բոլորս մեկ թշնամի ունենք՝ դա ցարիզմն է, որին ընդհանուր ուժերով պետք է ոչնչացնենք»[3]:

Ցարիզմի ազգային քաղաքականությունը զայրույթ էր առաջ բերել Միջին Ասիայի ժողովուրդների մեջ: Ինքնակալությունը ճնշում ու հալածում էր այդ ժողովուրդներին:

---

[1] «Кавказский рабочий листок», № 9, 1905.

[2] **М. Горький,** Ранняя революционная публицистика, М., 1938, стр. 39.

[3] **М. Горький,** Соч., т. 23, стр. 337.



Միջին Ասիայի ժողովուրդները ցարիզմի տիրապետության ժամանակաշրջանում ենթարկվում էին ազգային-գաղութային ճնշման, զուրկ էին ազգային ինքնավար իրավունքներից: Նրանք իրենց ազատությունը տեսնում էին ռուս ժողովրդի հեղափոխական պայքարի մեջ:

Ցարական Ռուսաստանի տիրապետության տակ եղած բոլոր ժողովուրդները գտնվում էին սոցիալական, ազգային ու դասակարգային դաժան ճնշման տակ: Այդ պատճառով Մերձբալթյան երկրների առաջադիմական ուժերը նույնպես իրենց ժողովուրդների ազատագրման գործն անմիջականորեն կապում էին ռուս մեծ ժողովրդի ազատագրական պայքարի հետ:

Երկրի բոլոր ժողովուրդները, ստեղծելով բարիդրացիական կապեր և անկեղծ բարեկամություն, պայքարի ելան ինքնակալության դեմ, որպեսզի ոչնչացնեն ցարիզմը, վերջ տան ժողովուրդների բանտին և ստրկությանը:

## 2. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԼԵՆԻՆՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

373

Մեր երկրի ժողովուրդների ապագայի համար վճռական նշանակություն ունեցավ այն, որ պատմական ասպարեզ իջավ ռուսական հեղափոխական պրոլետարիատը և նրա մարտական ավանգարդ կոմունիստական կուսակցությունը՝ հանճարեղ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ: Ազգային քաղաքականության բոլշևիկյան ծրագիրը, լինելով մեր կուսակցության հեղափոխական քաղաքականության օրգանական մասը, ծնունդ առավ, զարգացավ և ամրապնդվեց II ինտերնացիոնալի կուսակցությունների բուրժուական նացիոնալիզմի դեմ Վ. Ի. Լենինի մղած համառ պայքարի պայմաններում:

«Ազգային հարցը մեր ծրագրում», «Չինական պատերազմը», «Հայկական սոցիալ-դեմոկրատների մանիֆեստի մասին», «Բունդի դիմումի առթիվ» և այլ աշխատություններում, որոնք գրվել են մինչև ՌՍԴԲԿ II համագումարը, Վ. Ի. Լենինը հանդես էր գալիս որպես բուրժուական գաղափարախոսության դեմ պայքարող խանդավառ մարտիկ, որպես պրոլետարական մարտնչող ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության ջերմ պաշտպան: Այդ աշխատություններում,





БИБЛИОТЕКА ԳՐԱԴԱՐԱՆ

մերկացնելով միջազգային օպորտունիզմի էությունը, Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ ազգային հարցը չի կարելի կտրել դասակարգային պայքարից։ Նա ընդգծեց, որ օպորտունիստները ձգտում են ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը օգտագործել բուրժուազիայի շահերի համար։ Վ. Ի. Լենինը ստեղծագործաբար զարգացրեց Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի դրույթները ազգային-գաղութային հարցի վերաբերյալ ու մարքսիստական մտքի պատմության մեջ առաջին անգամ մշակեց պրոլետարական կուսակցության ազգային ծրագիրը և քաղաքականությունը։ Վ. Ի. Լենինի «Քննադատական դիտողություններ ազգային հարցի մասին», «Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին», «Վելիկոռուսների ազգային հպարտության մասին», «Հեղափոխական պրոլետարիատը և ազգերի ինքնորոշման իրավունքը» և շատ ուրիշ աշխատություններ խոշոր ավանդ են մարքսիզմի ուսմունքի մեջ։ Այդ աշխատություններում շարադրված են ազգային հարցի վերաբերյալ կոմունիստական կուսակցության սկզբունքները և ծրագիրը։ Դրանցում միմյանց հակադրված են երկու ծրագիր, երկու աշխարհայացք ազգային հարցում՝ մի կողմից II ինտերնացիոնալի, իսկ մյուս կողմից՝ լենինիզմի։ Վ. Ի. Լենինը քննադատեց II ինտերնացիոնալի օպորտունիստական հայացքները ազգային հարցի վերաբերյալ։ Այդ աշխատություններում Վ. Ի. Լենինը տվել է ազգի ծագման գիտական հիմնավորումը և բուրժուական ազգերի ներքին պայքարի դասակարգային բնույթը։

Վ. Ի. Լենինը նշում է, որ ազգն անցել է պատմական երկարատև պրոցես, այդ առումով ազգը, ինչպես և պատմական ամեն մի երևույթ, իր պատմությունն ունի, որի մեջ ուշագրավ են լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի, կուլտուրայի, կենցաղի և այլ յուրահատկությունները։ Դեռևս 1894 թվականին «Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ինչպե՞ս են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ» աշխատությունում նա ցույց տվեց նարոդնիկ Միխայլովսկու սխալ հայացքները ազգի ծագման մասին։ Նա ընդգծեց, որ ազգը բուրժուական հարաբերությունների արդյունք է։ Ֆեոդալիզմի վերացման և կապիտալիզմի զարգացման պրոցեսը միաժամա-



նակ մարդկանց իբրև ազգեր կազմավորվելու պրոցես է։ Հետևապես ազգը ոչ թե սոսկ պատմական, այլ որոշ դարաշրջանի, բարձրացող կապիտալիզմի դարաշրջանի կատեգորիա է։

Վ. Ի. Լենինը ցույց է տվել, որ բանվոր դասակարգը պայքարել է և պայքարելու է ազգային ճնշման ամեն մի քաղաքականության դեմ։ Այդ առումով աշխարհի բոլոր ազատասեր աշխատավորների համար հրաշալի օրինակ հանդիսացավ Ռուսաստանի պրոլետարիատը։ Նա կազմակերպեց ու գլխավորեց ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը։ Վ. Ի. Լենինը ցույց է տվել, որ բոլոր ազգերի աշխատավորները միացյալ ուժերով կարող են տապալել կալվածատերերի և կապիտալիստների տիրապետությունը և ստեղծել իրենց պետականությունը, ազգային անկախությունը։

Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի նախօրյակին գրած աշխատություններում Վ. Ի. Լենինը ո՛չ միայն արժանի հարված հասցրեց օպորտունիստներին, ո՛չ միայն պաշտպանեց մարքսիստական ազգային տեսությունը և բոլշևիկների ազգային քաղաքականությունը, այլև, ստեղծված նոր, օբյեկտիվ պայմաններին համապատասխան, ստեղծագործաբար զարգացրեց այն և ստեղծեց ազգային հարցի մասին գիտական կուռ ուսմունք։ Վ. Ի. Լենինը նշեց, որ իմպերիալիզմի ժամանակաշրջանում ազգային հարցը կազմում է պրոլետարական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի մասին ուսմունքի անբաժանելի մասը։ Վ. Ի. Լենինն ազգային հարցը դիտեց հեղափոխական հեռանկարների հետ անխզելի կապի մեջ։ Մինչև առաջին համաշխարհային պատերազմը Վ. Ի. Լենինը ազգային հարցի լուծումը կապում էր Ռուսաստանի բուրժուա-դեմոկրատական հեղափոխության հաղթանակի հետ, նոր իշխանության հաստատման հետ, որն ունենալու էր պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի ձև։

Սոցիալիստական հեղափոխության ժամանակաշրջանում Վ. Ի. Լենինն ազգային հարցի լուծումը սերտորեն կապեց սոցիալիստական հեղափոխության բախտի, բանվոր դասակարգի դիկտատուրայի հաղթանակի հետ։ Կապիտալի իշխա-

նությունը ապացուցելու համար կոմունիստական կուսակցությունը Վ. Ի. Լենինի գլխավորությամբ մոբիլիզացրեց Ռուսաստանի բոլոր ազգերի աշխատավորներին, դրա հետ միասին բոլշևիկները կազմակերպեցին նրանց հեղափոխական պայքարն ընդդեմ ամեն տեսակի ազգային ճնշման ու շահագործման։ Կոմունիստական կուսակցությունն ազգային հարցի վերաբերյալ իր ծրագրի մեջ մտցրեց ազգերի ինքնորոշման, ընդհուպ մինչև որպես ինքնուրույն պետության անջատման իրավունքը։

Ի՞նչ է նշանակում ազգերի ինքնորոշման իրավունքը։

Դեռևս ՌՍԴԲԿ I համագումարում ընդգծվել է ազգերի ինքնորոշման իրավունքի անհրաժեշտությունը, իսկ հետագայում այն դարձել է կուսակցության ծրագրային պահանջ։

Ազգերի ինքնորոշման հասկացողության տակ կուսակցությունը միշտ ընդգծել է, որ յուրաքանչյուր ազգ ինքնուրույն կերպով կարող է որոշել՝ ցանկանո՞ւմ է մնալ միյալ պետության կազմում, թե՝ ոչ, և եթե մնում է, ապա ինչպիսի՞ պայմանով, և կամ եթե որոշում է անջատվել և կազմել ինքնուրույն ազգային պետություն, ի՞նչ շարժառիթներով է այդ քայլը կատարում։

Պայքարելով նացիոնալիստական ամեն կարգի տեսությունների դեմ, Լենինը բազմակողմանիորեն բացահայտեց ազգերի ինքնորոշման իրավունքի գիտական ըմբռնումը և հիմնավորեց այն։ Պրոլետարական ինտերնացիոնալիզմը և ժողովուրդների բարեկամությունը սերտորեն կապված են ազգերի ինքնորոշման իրավունքի լենինյան լոզունգի հետ։

«Իմպերիալիզմը,— գրել է Վ. Ի. Լենինը,— ամբողջ աշխարհի ազգերի աճող ճնշման դարաշրջանն է, ճնշում մի բուռ «մեծ» տերությունների կողմից, այդ պատճառով էլ ընդդեմ իմպերիալիզմի, ինտերնացիոնալ սոցիալիստական հեղափոխության համար պայքարն անհնարին է առանց ազգերի ինքնորոշման իրավունքը ճանաչելու»[1]։

Վ. Ի. Լենինը 1913 թվականին գրել է. «Բուրժուական նացիոնալիզմ և պրոլետարական ինտերնացիոնալիզմ՝ ահա երկու թշնամական-անհաշտ լոզունգներ, որ համապատասխանում են ամբողջ կապիտալիստական աշխարհի երկու մեծ դասակարգային լագերներին և արտահայտում են երկու քաղաքականություն (ավելին՝ երկու աշխարհայեցողություն) ազգային հարցում»[1]։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 401—402։



Պրոլետարական ինտերնացիոնալիզմը և ժողովուրդների բարեկամությունը հիմնված են ազգերի ճանաչման, նրանց սուվերեն իրավունքի պաշտպանման, ազգերի և ռասաների իրավահավասարության, բոլոր ժողովուրդների իրավունքների հարգանքի հիման վրա։ Կոմունիստական կուսակցությունը միշտ նշել է, որ ազգերը չեն կարող ազատ լինել, եթե նրանք շահագործվում են կապիտալիստների կողմից։ Դրա համար անհրաժեշտ է բոլոր ազգերին ազատագրել ամեն տեսակի ճնշումից և շահագործումից ու ապահովել պրոլետարական մասսաների շարքերի միասնությունը։ Այդ կապակցությամբ Վ. Ի. Լենինը գրել է. «Ազգությունների կեղեքման քաղաքականությունը ազգերի բաժանման քաղաքականությունն է։ Նա միաժամանակ հանդիսանում է ժողովրդի գիտակցությունը սիստեմատիկ կերպով այլասերելու քաղաքականություն։ Ուստի և՝ բանվոր դասակարգը վճռականապես պետք է դեմ արտահայտվի ազգությունների որևէ կեղեքման»[2]։

Վ. Ի. Լենինը բանվոր դասակարգի միասնական կուսակցության ստեղծման ժամանակ համախմբում է Ռուսաստանի բոլոր ազգերի բանվորներին և ընդգծում նրանց գլխավոր խնդիրը՝ կազմակերպել և գլխավորել հեղափոխական պայքարն ընդդեմ ցարիզմի, ընդդեմ միջազգային բուրժուազիայի։

Ազգերի անջատումը միյալ պետության կողմից իրականացնելու կամ նրանց իրավահավասարությունը դեմոկրատական բազմազգ պետության սահմանում ապահովելու համար անհրաժեշտ է հաշվի առնել պատմական այն պայմանները, որոնք առաջ են եկել այդ պահին։ Տվյալ հարցի լուծման ժամանակ նկատի պետք է ունենալ ինչպես ամեն մի ազգի վիճակը, այնպես և պրոլետարիատի համընդհանուր շահերը և

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 13։
[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 287—288։

հեղափոխության հեռանկարները։ Այսպիսով, ազգերի ինքնորոշման իրավունքն անքակտելի կերպով կապված է ազգերի կամավոր միություն ստեղծելու հարցի հետ, սակայն միայն այն բանից հետո, երբ ոչնչացված կլինեն ազգային ամեն մի ճնշում և բուրժուազիայի բիրտ քաղաքականությունը։ Վ. Ի. Լենինը ջերմորեն պաշտպանեց ազգերի կամավոր միավորումը մեկ դեմոկրատական պետության մեջ։

«Մենք ուզում ենք ազատ միացում և այդ պատճառով էլ մենք պարտավոր ենք ճանաչել անջատման ազատությունը (առանց անջատման ազատության՝ միացումը չի կարող ազատ կոչվել)»[1]։

Ուկրաինայի բանվորներին ու գյուղացիներին ուղղված հայտնի նամակում Վ. Ի. Լենինն ընդգծել է. «Մենք ազգերի կամավոր միություն ենք ուզում, այնպիսի միություն, որը ո՛չ մի բռնություն չթույլատրեր մի ազգի կողմից մյուսի վրա, այնպիսի միություն, որը հիմնված լիներ ամենալրիվ վստահության վրա, եղբայրական միասնության պարզ գիտակցության վրա, լրիվին կամավոր համաձայնության վրա»[2]։

Իր աշխատություններում Վ. Ի. Լենինը միաժամանակ մերկացրեց բուրժուական հակագիտական հայացքներն ազգերի ինքնորոշման իրավունքի մասին։ Նա խիստ քննադատության ենթարկեց նաև բունդական Կաուցկու, Յուրկեւիչի, ինչպես և Ռոզա Լյուքսեմբուրգի ու մյուսների սխալներն ազգային հարցի բնագավառում։

«Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին» աշխատությունում Վ. Ի. Լենինը բացահայտել է ազգային հարցի առանձնահատկությունները Ռուսաստանում։ Նա նշել է, որ Ռոզա Լյուքսեմբուրգը ազգերի ինքնորոշման իրավունքը համարում է «ոչ պրակտիկ», «ուտոպիստական»։ Վ. Ի. Լենինը ցույց տալով Ռոզա Լյուքսեմբուրգի սխալները, միաժամանակ ընդգծում էր, որ ազգային հարցը անհրաժեշտ է քննարկել կոնկրետ պայմաններում և դիալեկտիկական մոտեցմամբ։ Ազգային ծրագիրը կազմելու ժամանակ հաշվի պետք է առնել

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 287։
[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 268։



երկրի տվյալ ժամանակաշրջանի պատմական կոնկրետ առանձնահատկությունները։ Պայքարելով ազգային հարցի վերաբերյալ գոյություն ունեցող իդեալիստական հայացքների դեմ, Վ. Ի. Լենինը տվեց ազգային հարցի լուծման հեղափոխական ուղին։ Նա կոնկրետ կերպով քննարկելով ազգային հարցի առանձնահատկությունները Ռուսաստանում, ընդգծեց, որ ազգային հարցը կարող է լուծվել Ռուսաստանի ընթացիկ մոմենտի հետ անխզելիորեն կապված, երկրի լիակատար դեմոկրատացման հիման վրա, իսկ այդ հնարավոր է միայն սոցիալիստական հեղափոխության հաղթանակի պայմաններում։ Ազգերի ինքնորոշում ասելով,— ընդգծում էր Վ. Ի. Լենինը,— հասկացվում է ինքնուրույն ազգային պետության գոյացում։ Այդ նշանակում է, որ ազգը ինքը կարող է իր ճակատագիրը որոշել, ոչ որ իրավունք չէ բռնի կերպով խառնվելու ազգի ներքին կյանքին։ Ինքնորոշման իրավունքը նշանակում է՝ ազգը լիապես կարող է տնօրինել իր գործերը սեփական ցանկությամբ։ Նա իրավունք ունի իր կյանքը տնօրինել ավտոնոմիայի, ֆեդերացիայի հիմունքներով ու հարաբերություններով։ Ազգը սուվերեն է, և բոլոր ազգերը իրավահավասար են։

Մարքսիզմ-լենինիզմն ազգային հարցը լուծում է՝ ելնելով բանվոր դասակարգի որպես հասարակության ամենից առաջավոր, ամենից հեղափոխական ուժի կենսական շահերից, ելնելով սոցիալիզմի և դեմոկրատիայի շահերից։ Այս սկզբունքների հիման վրա կոմունիստական կուսակցությունն իր ծրագրում հիմնավորեց և կենսագործեց Ռուսաստանի բոլոր ազգերի իրավահավասարությունը։ Ռուսաստանի հերոսական բանվոր դասակարգը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ մշակեց բոլոր ազգերին մեկ բազմազգ պետության մեջ կամավոր միավորման գործական սկզբունքները։ Նա նշեց ազգերի լրիվ իրավահավասարության լայն իրավունքները և ինտերնացիոնալիզմի գաղափարով խարսխված եղբայրական համագործակցության պայմանները։

Ազգերի ինքնորոշման իրավունքի լենինյան այս սկզբունքները և քաղաքականությունն արմատապես տարբերվում են բուրժուական քաղաքականությունից։ Բուրժուազիան ջանում

է խորացնել և բորբոքել ազգամիջյան կռիվները։ Վ. Ի. Լենինը և կոմունիստական կուսակցությունը ազգային հարցի ծրագրի մշակման ու զարգացման բոլոր պարագաներում հաշվի առան երկրի ո՛չ միայն ներքին, այլև արտաքին պայմանները։ Այսպես, օրինակ, Ռուսաստանի համար կարևոր էր հաշվի առնել այն հանգամանքը, որ նա գտնվում է Արևմտյան Եվրոպայի և Ասիայի երկրների շրջապատման մեջ։ Իսկ հայտնի է, որ այդ ժամանակաշրջանում Արևմտյան Եվրոպայում զորանում էր իմպերիալիզմը, իսկ Ասիայում անխուսափելի կերպով աճում էին դեմոկրատական ազգային-ազատագրական հեղափոխությունները։

«Քննադատական դիտողություններ ազգային հարցի մասին» աշխատությունում Վ. Ի. Լենինն ուշադրություն դարձրեց զարգացող կապիտալիզմի պայմաններում երկու պատմական տենդենցների վրա ազգային հարցում։ Առաջին հերթին նա նկատի ուներ ազգային կյանքի և ազգային շարժումների զարթոնքը, պայքարը ամեն տեսակի ազգային ճնշման դեմ, ազգային պետությունների ստեղծումը։ Երկրորդ հերթին նկատի ուներ ամեն տեսակ հարաբերությունների զարգացումը ազգերի միջև, ազգային միջնորմների քանդումը, տնտեսական կյանքի, քաղաքականության, գիտության զարգացումը և ինտերնացիոնալ միասնության ստեղծումը։

Վ. Ի. Լենինը սովորեցնում էր, որ այս երկու տենդենցները ազգային հարցում անհրաժեշտ է հաշվի առնել և այնուհետև պաշտպանել նախ՝ ազգերի ու նրանց լեզուների իրավահավասարության անհրաժեշտությունը և ապա՝ անհաշտ պայքար մղել նացիոնալիզմի դեմ աշխատավորների շրջանում, զարգացնելով ինտերնացիոնալիզմի սկզբունքները և գաղափարները։

Վ. Ի. Լենինը գտնում էր, որ պրոլետարիատի խնդիրն է ազատագրել ճնշված ազգերին իմպերիալիստական լծից և, կամավոր կերպով, սոցիալիստական տնտեսության բազայի վրա նրանց միավորել մեկ եղբայրական ընտանիքի մեջ։ Այսպիսով, Վ. Ի. Լենինն իր հեղափոխական ամբողջ գործունեության ընթացքում մշակեց և զարգացրեց մարքսիստների ազգային հարցի ծրագիրը և նրա լուծման ուղիները։ Նրա այդ



ասպարեզում Վ. Ի. Լենինի մեծ այն է, որ նա հայացքների մի կուռ սիստեմում ի մի հավաքեց մարքսիզմի հիմնադիրների գաղափարները, ազգային հարցը կապեց իմպերիալիզմի տապալման հարցի հետ և ազգային-գաղութային հարցը հայտարարեց պրոլետարական միջազգային հեղափոխության ընդհանուր հարցի բաղկացուցիչ մաս։ Վ. Ի. Լենինն ստեղծեց գիտական ուսմունք ազգերի մասին և ցույց տվեց ազգային հարցի լուծման միակ ճիշտ, հեղափոխական ճանապարհը։ Ազգային հարցի լենինյան տեսությունը և ՍՄԿԿ ազգային քաղաքականությունն ունեն համաշխարհային-պատմական խոշոր նշանակություն։ Մարքսիստական-լենինյան ուսմունքն ազգային հարցի մասին կարևոր զենք է ամբողջ աշխարհի աշխատավորների ձեռքում՝ ազատության և անկախության համար մղվող պայքարի հաղթանակի ու ժողովուրդների բարեկամության և համագործակցության զարգացման համար։

## 3. ՀՈԿՏԵՄԲԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ ԼՈՒԾԵՑԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ

Ռուսաստանի բանվոր դասակարգը և աշխատավոր գյուղացիությունը, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, 1917 թվականի նոյեմբերի 7-ին (հոկտեմբերի 25-ին) կատարեցին Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը։

Հոկտեմբերյան հեղափոխությունն ստեղծեց պրոլետարիատի դիկտատուրա, ստեղծեց նոր տիպի պետություն՝ սովետների սոցիալիստական հանրապետություն, նոր տիպի դեմոկրատիա աշխատավորների համար։

Հոկտեմբերյան հեղափոխությունը ոչնչացրեց ամեն մի շահագործման և ազգային ճնշման տնտեսական ու քաղաքական հիմքերը, դրեց ժողովուրդների բարեկամական փոխըմբռնման ու եղբայրության սկիզբը։

Ցարական Ռուսաստանի ստրկացված ազգերին սոցիալական ու ազգային ճնշումից ազատագրեց Մեծ Հոկտեմբերը և այդ օրվանից սկսած ժողովուրդների բարեկամության և եղբայրական անշահախնդիր փոխօգնության գաղափարախո-



Վ. Ի. Լենինը հռչակում է սովետական իշխանությունը

ությունը մեր երկրում դարձավ իրողություն։ Մեծ Հոկտեմբերի զավակ սովետական իշխանությունը որակապես նոր, բարձր աստիճանի հասցրեց ժողովուրդների բարեկամության և փոխօգնության պատմական տրադիցիաները։ Նոր հասարա-



թյուններով և գծերով հարստացավ ժողովուրդների բարեկամությունը։ Սովետական իշխանության առաջին իսկ օրերին, Վ. Ի. Լենինի անմիջական մասնակցությամբ, մշակվեցին սովետական պետության այն կարևորագույն դեկրետներն ու դեկլարացիաները, որոնցում կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականությունը պետական օրենքի ուժ ստացավ։ «Շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիա»-ում, ժողովրդական կոմիսարների խորհրդի՝ «Ռուսաստանի և Արևելքի բոլոր աշխատավոր մուսուլմաններին» ուղղված դիմումի մեջ և աշխարհում առաջին բանվորա-գյուղացիական կառավարության այլ պատմական փաստաթղթերում մարմնավորվեցին ազգային հարցի կոմունիստական կուսակցության լենինյան ծրագիրը, ժողովուրդների բարեկամությունը և սոցիալիստական համագործակցությունը, ազգերի ինքնորոշման իրավունքը։

Սովետական ժողովուրդները, համախմբված կոմունիստական կուսակցության շուրջը, ջերմորեն պաշտպանեցին լենինյան ազգային քաղաքականությունը, իրենց անմիջական նախաձեռնությամբ ու ջանքերով զարգացրին ժողովուրդների բարեկամությունը և համագործակցությունը։ Կոմունիստական կուսակցության նախաձեռնությամբ և ղեկավարությամբ 1922 թվականին սովետական բոլոր հանրապետություններում աշխատավորների մասսայական շարժում սկսվեց՝ հանուն Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության ստեղծման։ Ռուսաստանի, Ուկրաինայի, Անդրկովկասի, Բելոռուսիայի սովետական հանրապետությունները որոշեցին կամավոր հիմունքներով միանալ և կազմել ՍՍՀՄ-ը։

1922 թվականի դեկտեմբերի 30-ին Մոսկվայում բացվեց ՍՍՀՄ սովետների առաջին համագումարը, որը հաստատեց Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմելու վերաբերյալ դեկլարացիան։ Դեկլարացիայում շարադրված էին սովետական հանրապետությունների միավորման հիմնական սկզբունքները, ընդգծված էին ՍՍՀՄ-ի կազմի մեջ մտնելու կամավոր և լիիրավ սկզբունքը, ինչպես և հանրապետությունների՝ ՍՍՀՄ-ի կազմից դուրս գալու ազատ իրավունքը։ Սկզբում ՍՍՀՄ-ի կազմում մտան ՌՍՖՍՀ, Ուկ-

րաինական ՍՍՀ, Բելոռուսական ՍՍՀ, Անդրկովկասյան ՍՖՍՀ։ ՍՍՀՄ-ի առաջացումը լենինյան ազգային քաղաքականության մեծագույն հաղթանակն է, որն ունի համաշխարհային-պատմական հսկայական նշանակություն։ Սովետների առաջին համագումարը ընտրեց ՍՍՀ Միության Կենտգործկոմ, որի նախագահ ընտրվեց Մ. Ի. Կալինինը։ ՍՍՀՄ-ի՝ միասնական միութենական բազմազգ պետության ստեղծման կամավոր սկզբունքը թելադրում էր տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացման յուրահատուկ ընթացք և արդյունք էր լենինյան ազգային քաղաքականության։ Ներքին ու արտաքին թշնամիների դեմ հանրապետությունների համատեղ պայքարի փորձը ցույց տվեց, որ վերջիններիս միջև կնքված պայմանագրերը սովետական իշխանության առաջին տարիներին անբավարար էին ինչպես հանրապետությունների տնտեսության վերականգնման, սոցիալիզմի կառուցման, այնպես էլ իրենց ինքնուրույն ու անկախ պետության պաշտպանման համար։

ՍՍՀՄ-ի առաջացումը բխում էր սովետական իշխանության բնույթից, նրա ինտերնացիոնալ էությունից։ Սակայն դեռևս քիչ էր ժողովուրդների ազատության ու հավասարության հռչակելը։ Հարկավոր էր նաև վերացնել ազգերի փաստական անհավասարությունը, որը ժառանգություն էր մնացել հին կարգից, վերացնել տնտեսական ու կուլտուրական զարգացման մակարդակում եղած արմատական տարբերությունները։ Քիչ էր ժողովուրդների նոր հարաբերությունները հռչակելը։ Անհրաժեշտ էր նաև արագորեն հաղթահարել դարավոր նախապաշարմունքները, փոխադարձ անվստահության ու ազգային անհաշտության տարրերը, անհրաժեշտ էր վերացնել անցյալի ազգային երկպառակության ամեն մի մնացուկ։ Քիչ էր ճիշտ քաղաքականություն մշակելը, պետք էր իրականացնել այդ ճիշտ քաղաքականությունը։

Ստեղծելով բազմազգ սոցիալիստական պետություն, կոմունիստական կուսակցությունը հաշվի էր առնում այդ բոլոր դժվարությունները և բարդությունները։ Ձեռնամուխ լինելով այդ մեծ գործին, կոմունիստական կուսակցությունն առաջնորդվեց Վ. Ի. Լենինի այն ցուցումով, որ տարբեր ազգերի



շահերի նկատմամբ վիթխարի ուշադրությունն ու անսահման հոգատարությունն են միայն վերացնում կոնֆլիկտների հողը, ստեղծում տարբեր լեզուներով խոսող բանվորների ու



Մ. Ի. Կալինին

գյուղացիների վստահությունը: Կենսագործելով լենինյան ազգային քաղաքականությունը, կոմունիստական կուսակցությունը կարողացավ, ամենից առաջ, ժողովուրդների միջև ստեղծել փոխադարձ վստահություն և հարգանք, որը հենց սոցիալիզմի մեծագույն ուժի վկայությունն է:

Անշեղորեն կենսագործելով լենինյան ազգային քաղաքականությունը, կոմունիստական կուսակցությունն ապահովեց անցյալում հետամնաց ժողովուրդների և ազգերի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացումը: Սոցիալիզմի զարգացման ընթացքում այդ ժողովուրդները ձեռք բերեցին սեփական պետականություն և ակտիվորեն մասնակցեցին երկրի տնտեսության ու կուլտուրայի սոցիալիստական բարձրագույն ձևերի ստեղծման գործին:

Հոկտեմբերյան հեղափոխությունը, սոցիալիզմի կառուցումը ՍՍՀՄ-ում բոլոր ժողովուրդների համար ապահովեցին փաստական հավասարություն թե՛ տնտեսական և թե՛ կուլտուրական տեսակետից: Այս բանում մեծ դեր է պատկանում ռուսական բանվոր դասակարգին, ռուս ժողովրդին: Սովետական Միության բոլոր ժողովուրդներն ու ազգերը բարձր են գնահատում ռուս ժողովրդի անշահախնդիր օգնությունը: ՍՍՀՄ ժողովուրդներն այն համոզման են, որ բարեկամ լինել ռուս ժողովրդի հետ, նշանակում է ընթանալ առաջ և երջանիկ կյանքի ուղիով, նշանակում է ապահովել բոլոր ազգերի աննախընթաց զարգացումը:

«Ազգային հարցի լուծման գործում,— ասված է ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսներում,— կարևոր ուղենիշներ հանդիսացան ուկրաինական, բելոռուսական ու մոլդավական ժողովուրդների վերամիավորումը, սովետական իշխանության վերականգնումը Մերձբալթյան հանրապետություններում և նրանց մտնելը Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ»[1]:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության պատմական հաղթանակի և սոցիալիզմի կառուցման շնորհիվ

[1] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50 տարին, Երևան, 1967, էջ 21:



իրագործվեց ազգային հարցի լենինյան ծրագիրը, հաստատվեց սովետական երկրի բոլոր ժողովուրդների սոցիալիստական եղբայրությունը, որը բացառիկ նշանակություն ունի կոմունիստական շինարարության հաջող ընթացքի համար: Այսօր Ռուսաստանյան ՍՖՍՀ-ն, Ուկրաինական ՍՍՀ-ն, Բելոռուսական ՍՍՀ-ն, Ուզբեկական ՍՍՀ-ն, Ղազախական ՍՍՀ-ն, Վրացական ՍՍՀ-ն, Ադրբեջանական ՍՍՀ-ն, Լիտվական ՍՍՀ-ն, Մոլդավական ՍՍՀ-ն, Լատվիական ՍՍՀ-ն, Կիրգիզական ՍՍՀ-ն, Տաջիկական ՍՍՀ-ն, Հայկական ՍՍՀ-ն, Թուրքմենական ՍՍՀ-ն, Էստոնական ՍՍՀ-ն ազատ և իրավահավասար ժողովուրդներն ունեն կամավոր միություն, եղբայրական համերաշխ հզոր ընտանիք՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միություն, որը լիապես ապահովում է բոլոր ազգերի ու ազգությունների տնտեսական և կուլտուրական բարգավաճումը:

ՍՍՀՄ-ը բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետություն է: ՍՍՀՄ-ի կազմի մեջ մտնում են 15 միութենական հանրապետություն, 20 ինքնավար հանրապետություն, 8 ինքնավար մարզ, 10 ազգային օկրուգ: ՍՍՀՄ-ը բազմազգ պետություն է:

ՍՍՀՄ-ում բնակվում են հետևյալ ազգերը և ժողովուրդները[1]

| | | |
|---|---|---|
| Ռուսներ | Մոլդավներ | Դաղստանի ժողովուրդներ |
| Ուկրաինացիներ | Գերմանացիներ | |
| Բելոռուսներ | Չուվաշներ | Դրանցից՝ |
| Ուզբեկներ | Լատիշներ | |
| Թաթարներ | Տաջիկներ | Ավարներ |
| Ղազախներ | Լեհեր | Լեզգիներ |
| Ադրբեջանցիներ | Մորդվիններ | Դարգիններ |
| Հայեր | Թուրքմեններ | Կումիկներ |
| Վրացիներ | Բաշկիրներ | Լակեր (լաքեր) |
| Լիտվացիներ | Էստոնացիներ | Նողայներ |
| Հրեաներ | Կիրգիզներ | Թաբասարաններ |

[1] Տե՛ս Союз Советских Социалистических Республик (1917—1960). Энциклопедический справочник, М., 1967, стр. 36.

Աղուլներ
Ռուտուլներ
Ցախուրներ
Ուդմուրտներ
Մարիներ
Կոմիներ և կոմիպերմյակներ
Չեչեններ
Օսեր
Բուլղարներ
Կորեացիներ
Հույներ
Բուրյաթներ
Յակուտներ
Կաբարդիններ
Կարակալպակներ
Կարելներ
Հունգարներ
Գնչուներ
Հյուսիսի ժողովուրդներ

Դրանցից՝

Էվենկներ
Նենեցներ
Խանտեր
Չուկչիներ
Էվեններ
Նանայներ
Մանսեր
Կորյակներ
Սելկուպներ
Նիվխիններ
Ուլչիներ
Սաամներ
Ուդեհեյներ
Էսկիմոսներ
Իտելմեններ
Կետեր
Օրոչներ
Նգանասաններ
Յուկագիրներ
Ալեուտներ
Գագաուզներ
Ռումիններ
Կալմիկներ
Ինգուշներ
Տուվիններ
Ույղուրներ
Ֆիններ
Կարաչաևցիներ
Ադիղեյներ
Աբխազներ
Քրդեր
Խակասներ
Ալթայցիներ
Բալկարներ
Թուրքեր
Չերքեզներ
Չինացիներ
Չեխեր
Դունգաններ
Այսորներ (ասորիներ)
Պարսիկներ
Աբազիններ
Վեպսեր
Շոռեր
Սլովակներ
Թաթեր
Արաբներ
Բելուջներ
Կարաիմներ
Ալբանացիներ
Հարավսլավներ
Ուդիներ
Իսպանացիներ
Աֆղաններ
Մոնղոլներ
Իտալացիներ
Իժորեցներ
Ֆրանսիացիներ
Ճապոնացիներ
Վիետնամցիներ
Տոֆալարներ
Այլ ազգություններ

1959 թ. մարդահամարի համաձայն ՍՍՀՄ-ի բնակչության 208827 հազար ընդհանուր քանակից ռուսները կազմում են 54,6%, ուկրաինացիները՝ 17,8%, բելոռուսները՝ 3,8%, ուզբեկները՝ 2,9%, ղազախները՝ 1,7%, վրացիները՝ 1,3%, ադրբեջանցիները՝ 1,4%, հայերը՝ 1,3%, լիտվացիները՝ 1,1%,



մոլդավները՝ 1,1%, լատիշները՝ 0,7%, կիրգիզները՝ 0,5%, տաջիկները՝ 0,7%, թուրքմենները՝ 0,5%, էստոնացիները՝ 0,5%։

1959 թ. մարդահամարից հետո ՍՍՀՄ բնակչությունը աճել և դարձել է 235 միլիոն մարդ. 1917 թ. համեմատությամբ ավելացել է 73 միլիոն մարդով։ Սովետական Միության բնակչության աճը վերջին տարիներին տարեկան կազմում է 2,5—3 միլիոն մարդ, որը համասար է այնպիսի պետությունների ազգաբնակչությանը, ինչպիսիք են՝ Իռլանդիան, Ուրուգվայը կամ Նոր Զելանդիան։

Այժմ ՍՍՀՄ-ում բնակվում է երկրագնդի ամբողջ բնակչության 7%-ը, բնակչության թվով մեր երկիրը աշխարհում գրավում է երրորդ տեղը[1]։

ՍՍՀՄ բնակչության աճի կապակցությամբ արժե նշել, որ անցած 1959 թ. մարդահամարից հետո ժողովուրդների մոտավոր թիվը 1965 թ. սկզբներին կազմում էր՝ ռուսներ—122 մլն մարդ, ուկրաինացիներ—40 մլն մարդ, բելոռուսներ—8,5 մլն, ուզբեկներ—7,5 մլն, թաթարներ—5,5 մլն, ղազախներ—4,5 մլն, ադրբեջանցիներ—3,6 մլն, հայեր—3,4 մլն, վրացիներ—3 մլն, լիտվացիներ—2,5 մլն, հրեաներ—2,5 մլն, մոլդավներ—2,5 մլն, գերմանացիներ—1,8 մլն, տաջիկներ—1,7 մլն, չուվաշներ—1,6 մլն, լատիշներ—1,5 մլն, լեհեր—1,5 մլն, մորդվիններ—1,4 մլն, թուրքմեններ—1,2 մլն, կիրգիզներ—1,2 մլն, բաշկիրներ—1,4 մլն, էստոնացիներ—1,05 մլն մարդ[2]։

ՍՍՀՄ-ում հատուկ ուշադրությամբ և խնամքով հաշվի են առնված յուրաքանչյուր ազգի առանձնահատկությունները, սովորույթները, կենցաղը և զարգացման հեռանկարները։

ՍՍՀՄ սոցիալիստական ազգերի համագործակցության բարերար ազդեցությունը և խոշոր արդյունքները դրսևորվում են ժողովրդական տնտեսության և կուլտուրայի զարգացման արագ թափի, սովետական բոլոր ազգերի ու ազգությունների նյութական և հոգևոր ուժի ծաղկման, սովետական պետու-

[1] СССР 1917—1967, М., 1967, стр. 3.
[2] Союз Советских Социалистических Республик, стр. 35.

թյան ամրապնդման մեջ։ ՍՍՀՄ բազմազգ ժողովուրդների բարեկամության վիթխարի ուժը արտահայտվում է ժողովրդական տնտեսության զարգացման պլանների կատարման ու գերակատարման մեջ, կոմունիստական շինարարության բոլոր բնագավառներում։

Սոցիալիստական հայրենիքի ժողովուրդների բարեկամությունն ու համագործակցությունն իրենց ամբողջ ուժով դրսևորվեցին Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի տարիներին։ Ֆաշիստական Գերմանիայի պարագլուխները կարծում էին, թե կարող էին ազգամիջյան կռիվներ առաջ բերել ՍՍՀՄ ժողովուրդների միջև և դրանով իսկ վերջ տալ սովետական հասարակության միասնությանն ու հասնել իրենց նպատակին։ Պատերազմի դաժան փորձությունների մեջ բացահայտվեց իմպերիալիստների հաշիվների սնանկ լինելը սովետական ազգերի բարեկամության մասին։ Հայրենական պատերազմում գերմանա-ֆաշիստական զավթիչների ու ճապոնական իմպերիալիզմի դեմ Սովետական Միության տարած պատմական հաղթանակի մեջ փայլուն կերպով դրսևորվեցին ՍՍՀՄ բազմազգ ժողովուրդների բարեկամության կենարար ուժը, նրա համաշխարհային-պատմական նշանակությունը։ Հայրենական պատերազմում ՍՍՀՄ ժողովուրդները է՛լ ավելի համախմբվեցին հարազատ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության շուրջը։ Սովետական բոլոր ժողովուրդները մեկ մարդու պես ոտքի ելան և կրծքով պաշտպանեցին սովետական հայրենիքը։

Սովետական ժողովուրդը պայքարեց հանուն ազատության, հանուն սոցիալիստական մեծ նվաճումների, որ նա ձեռք է բերել սոցիալիզմի կառուցման ընթացքում։ Ֆաշիստական զավթիչների դեմ կյանքի ու մահու մարտի ելան սոցիալիստական բոլոր ազգերն ու ազգությունները, սովետական հայրենասերների բազմամիլիոնանոց զանգվածները։ Դրանք սովետական միաձույլ ժողովրդի ոգով ուժեղ, սոցիալիստական հայրենիքին անսահմանորեն նվիրված մարդիկ էին, դրանք ռուսներ էին և ուկրաինացիներ, Կովկասի և Միջին Ասիայի բնակիչներ, բոլոր միութենական հանրապետությունների որ-



դիներն ու դուստրերը։ Հայրենական պատերազմում ամբողջ սովետական ժողովուրդը հանդես եկավ միասնական։ Երկրի բոլոր ազգերը հավասարապես բաժանում էին ինչպես վիշտն ու զրկանքները, այնպես և հաղթանակներն ու ուրախությունը։ Սովետական հայրենիքի ազատագրման համար մղված պայքարում քաջերի մահով զոհվեցին բոլոր ազգերի ու ազգությունների հազարավոր ու հազարավոր հավատարիմ զավակներ։

ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական բարեկամությունը դիմացավ պատերազմի ահավոր փորձություններին և ավելի ևս ամրապնդվեց, որի զարգացումը հիանալի դրսևորվում է նոր էտապում, կոմունիստական շինարարության տարիներին։

ՍՍՀՄ-ը բացառիկ նշանակություն ունի սովետների երկրի բոլոր ժողովուրդների տնտեսության ու կուլտուրայի հետագա ծաղկման և զարգացման, ժողովուրդների բարեկամության, համագործակցության ու սովետական հասարակության բարոյա-քաղաքական միասնության ամրապնդման համար։

Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը Սովետական Միության կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության արգասիքն է։ ՍՍՀՄ-ում տեղի է ունենում ազգերի ծաղկում, անընդհատ ամրապնդվում է նրանց սուվերենությունը, որոնք ոգևորում են աշխարհի բոլոր ժողովուրդներին։ Մեծ Հոկտեմբերի 50-ամյակը ամբողջ աշխարհին ցույց տվեց, որ Սովետական Միության ազգերն ու ազգությունները արմատապես տարբերվում են բուրժուական ազգերից։ Սոցիալիզմը վերջ տվեց շահագործմանը, մասնավոր սեփականությանը և ստեղծեց նոր, սոցիալիստական հարաբերություններ, որի հիման վրա փոխվեց սովետական ազգերի դեմքը։ Սոցիալիզմի լիակատար և վերջնական հաղթանակի շնորհիվ սովետական երկրում տեղի ունեցավ տնտեսության ու կուլտուրայի վիթխարի թռիչք, փոխվեց ՍՍՀՄ բոլոր ազգերի աշխատավորների կազմը։ Այժմ 0,5 միլիոնից ավելի բնակիչ ունեցող քաղաքների թիվը մեր երկրում հասնում է 33-ի, ցարական Ռուսաստանի 3-ի փոխա-

րեն։ Այդ քաղաքներում ապրում է երկրի քաղաքային բնակչության 1/4 մասը։ Այդ խոշոր քաղաքներից 10-ի բնակիչների թիվն անցնում է մեկ միլիոնից։ Բանվոր դասակարգը մեր հասարակության առաջատար ուժն է։ Երկրի բանվոր դասակարգն աճեց ո՛չ միայն քանակական, այլև որակական տեսակետից։ ՍՍՀՄ բանվորների համար բնորոշ են մասնագիտական կրթությունը, առաջատար մասնագիտությունների տիրապետելը, տեխնիկայի ու գիտության նվաճումներին հաղորդակից լինելը։ Նա իր ղեկավար դերը փայլուն կերպով իրականացնում է և այսօր, կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանում։

Գյուղացիությունը՝ բանվոր դասակարգի դաշնակիցը, ակտիվ մասնակցություն է ունենում կոմունիստական հասարակարգի կառուցմանը։ Գյուղում կատարված էական փոփոխություններից մեկն էլ այն է, որ գյուղատնտեսական աշխատանքը զգալիորեն մոտեցավ ինդուստրիալ աշխատանքին։ Սովետական ժողովրդի հերոսական ջանքերով աստիճանաբար ջնջվում են քաղաքի և գյուղի միջև եղած էական տարբերությունները։

Սովետական իշխանության տարիներին առաջացել է բանվորների ու գյուղացիների ծոցից դուրս եկած ժողովրդական մտավորականություն, որը արտադրության, գիտության, տեխնիկայի արագ զարգացման պայմաններում լայնորեն ծավալում է իր ստեղծագործական համակողմանի գործունեությունը։ Արմատական փոփոխություններ են առաջացել ազգերի բարիդրացիական, եղբայրական հարաբերությունների մեջ։ Սոցիալիզմի լիակատար և վերջնական հաղթանակի շնորհիվ ՍՍՀՄ բոլոր ազգերի ու ազգությունների միջև ստեղծվել են բարեկամական ու եղբայրական նոր հարաբերություններ։ Այդ մեծագույն հաղթանակն ապահովվեց մեծապետական շովինիզմի և բուրժուական նացիոնալիզմի դեմ կոմունիստական կուսակցության մղած հետևողական պայքարի և աշխատավորական զանգվածների պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու հիման վրա։

Հոկտեմբերյան հեղափոխությունը և սոցիալիզմը ՍՍՀՄ ազգերին ու ազգություններին ապահովեցին ո՛չ միայն քա-



ղաքական իրավահավասարություն, այլև զարգացման համար ստեղծեցին տնտեսական խոշոր բազա, կուլտուրական նոր կյանք։

Այս գործում անգնահատելի են ռուս մեծ ժողովրդի, ուկրաինական, բելոռուսական և սովետական մյուս ժողովուրդների համատեղ ծառայությունները։

ՍՍՀՄ-ում ազգային հարցի լուծման կարևորագույն արդյունքներից մեկն էլ այն է, որ անցյալում հետամնաց ժողովուրդները մեր երկրի ընդհանուր զարգացման ընթացքում ավելի արագ թափով զարգացան, քան ՌՍՖՍՀ-ն, կամ Սովետական Միությունն ամբողջությամբ վերցրած։ Հենց այդ մասին է խոսում միութենական հանրապետությունների տնտեսական ու կուլտուրական զարգացման վերաբերյալ հետևյալ աղյուսակը[1].

| | [illegible] (1913 թ. = 1) | | [illegible] | | [illegible] | | [illegible] | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1913 | 1966 | 1914/15 | 1966/67 | 1914/15 | 1966/67 | 1913 | 1966 |
| ՌՍՖՍՀ | 1 | 67 | 5684 | 26186 | 86,5 | 2470 | 16 | 326,3 |
| Ուկրաինական ՍՍՀ | 1 | 44 | 2607 | 8468 | 35,2 | 739 | 7,9 | 114 |
| Բելոռուսական ՍՍՀ | 1 | 64 | 489 | 1769 | — | 116 | 1,2 | 19,8 |
| Ուզբեկական ՍՍՀ | 1 | 32 | 18 | 2592 | — | 188 | 0,1 | 19,5 |
| Ղազախական ՍՍՀ | 1 | 101 | 105 | 2865 | — | 163 | 0,2 | 23,4 |
| Վրացական ՍՍՀ | 1 | 62 | 157 | 928 | 0,3 | 81 | 0,5 | 16,4 |
| Ադրբեջանական ՍՍՀ | 1 | 25 | 73 | 1199 | — | 78 | 0,4 | 11,6 |
| Լիտվական ՍՍՀ | 1 | 51 | 118 | 562 | — | 51 | 0,4 | 7 |
| Մոլդավական ՍՍՀ | 1 | 99 | 92 | 763 | — | 41 | 0,3 | 6,3 |
| Լատվիական ՍՍՀ | 1 | 18 | 172 | 343 | 2,1 | 36 | 0,6 | 7,5 |
| Կիրգիզական ՍՍՀ | 1 | 117 | 7 | 657 | — | 37 | 0,02 | 3,5 |
| Տաջիկական ՍՍՀ | 1 | 63 | 0.4 | 613 | — | 35 | 0,02 | 4,1 |
| Հայկական ՍՍՀ | 1 | 119 | 35 | 553 | — | 43 | 0,1 | 6,3 |
| Թուրքմենական ՍՍՀ | 1 | 33 | 7 | 455 | — | 23 | 0,1 | 4,2 |
| Էստոնական ՍՍՀ | 1 | 25 | 92 | 215 | 3,3 | 22 | 0,5 | 4,0 |

[1] Sb'и СССР 1917—1967, М., 1967, стр. 23.

Երկրի տնտեսական այսպիսի բուռն զարգացումից օգտվել են ՍՍՀՄ բոլոր ազգերը։ Ուզբեկստանի կամ Ադրբեջանի տնտեսության վերելքից օգտվում են ո՛չ միայն ուզբեկներն ու ադրբեջանցիները, այլև ռուսները, բելոռուսները, ղազախները և Սովետական Միության բոլոր ազգերն ու ազգությունները։

ՍՍՀՄ-ում սոցիալիզմի լիակատար ու վերջնական հաղթանակը սոցիալիստական ազգերին դարձրեց միասնական ընտանիքի իրավահավասար անդամներ, որոնց մեջ չկան թշնամանք, անվստահություն, դասակարգային հակասություններ, որպիսիք բնորոշ են բուրժուական ազգերին։

ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը կազմում է մարդկանց հասարակական կյանքի և աշխարհայացքի ամբողջ հիմքը։

Սոցիալիզմի պատմական հաղթանակը ՍՍՀՄ-ում ազգային հարաբերությունների հետագա զարգացման համար նոր հեռանկարներ ու պայմաններ ստեղծեց։ Ազգային հարաբերությունների մեջ մի կողմից զարգանում են ազգերի տրադիցիաները և կուլտուրան, որոնք հարստացնում են ո՛չ միայն տվյալ ազգի, այլև ՍՍՀՄ-ի բոլոր ազգերի հոգևոր կյանքը, իսկ մյուս կողմից յուրաքանչյուր ազգի անընդհատ աճող ավանդի ներդրման հիման վրա զարգանում է սովետական ամբողջ ժողովրդի տնտեսական և կուլտուրական կյանքը։ Այսպիսի պայմաններում ավելի են ամրապնդվում սովետական ժողովրդի սոցիալ-տնտեսական ընդհանրությունը, եղբայրական բարեկամությունը և սոցիալիստական համագործակցությունը։ Սոցիալիզմի օրով ազգերի վերափոխությունները տեղի են ունեցել հետևողականորեն, դասակարգային ներքին և միջազգային սուր պայքարի պայմաններում՝ ընդգրկելով քաղաքականության, տնտեսության և գաղափարախոսության բնագավառները։ Այդ փոփոխությունները կատարվել են բանվոր դասակարգի ղեկավարությամբ, մարքսիզմ-լենինիզմի գաղափարական ազդեցության ներքո։ Սովետական Միության սոցիալիստական ազգերի փոփոխությունները տեղի են ունեցել տարբեր պայմաններում, քանի որ միութենական հանրապետությունները, երկրամասերը և ազգային օկրուգները



եկել են սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր մակարդակի վրա։ Այսպես, օրինակ, Ռուսաստանում կապիտալիզմը տապալելու, բուրժուազիան և նրա ազգային կուսակցությունները լիկվիդացնելու և սովետական իշխանություն հաստատելու հետևանքով հին բուրժուական ազգերի փլատակների վրա ձևավորվեցին և զարգացան սոցիալիստական նոր ազգերը։ Այդպես առաջ եկան և ձևավորվեցին ռուսական, ուկրաինական, բելոռուսական, վրացական, հայկական, լիտվական և սոցիալիստական մի շարք այլ ազգերը։ Սակայն այդպես չձևավորվեցին ուզբեկական, թուրքմենական, կիրգիզական, տաջիկական և սոցիալիստական մյուս ազգերը։ Հայտնի է, որ Միջին Ասիայի, Կովկասի, Հյուսիսի որոշ ժողովուրդներ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը գտնվում էին զարգացման ցածր մակարդակի վրա։ Կապված չլինելով տնտեսական կյանքի ընդհանրությամբ, տարաբաժանված լինելով տերիտորիապես՝ նրանք չէին կազմել միասնական ազգեր։

Այդ ժողովուրդները կյանքի սոցիալիստական ձևերին են անցել՝ շրջանցելով կապիտալիստական կամ զարգացած կապիտալիզմի փուլը և կոնսոլիդացվել են արդեն ոչ թե բուրժուական հարաբերությունների պայմաններում, այլ սովետական իշխանության հովանու տակ։

Պատմության մեջ իր օրինակը չունեցող այս փաստը հաստատում է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և սոցիալիզմի խոշոր նշանակությունն ու դերը ո՛չ միայն հին բուրժուական ազգերի վերափոխման գործում, այլև այն ժողովուրդների ազգային կոնսոլիդացման գործում, որոնք չէին հասցրել կազմավորվել որպես ազգ։ Ընդ որում, ժողովուրդների՝ որպես ազգ կոնսոլիդացման պրոցեսը, որ սկսվեց Մեծ Հոկտեմբերի հաղթանակով, ընթացավ չտեսնված արագ թափով, որովհետև սոցիալիզմը դրա համար ստեղծեց ամենաբարենպաստ պայմաններ։

Կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության հաղթանակի շնորհիվ ՍՍՀՄ-ի ազգերի միջև նոր կապեր ստեղծեց, հաստատեց միասնություն, որ հիմնըված է ոչ թե բռնության, այլ եղբայրության, կամավորության սկզբունքների վրա։

Ազգային մարզերում և հանրապետություններում զարգացնելով սովետական պետականությունը, կոմունիստական կուսակցությունը հատուկ ուշադրություն դարձրեց ժողովուրդների սերտ բարեկամության հետագա ամրապնդման վրա։

Միասնական սովետական պետությունն ապահովում է սոցիալիստական ազգերի բարեկամական համագործակցությունը, յուրաքանչյուր ժողովրդի ազգային շահերի ներդաշնակ զուգակցումը համապետական շահերին։ Սովետական բազմազգ պետության կենսունակության մասին են վկայում ՍՍՀ Միության անընդհատ ամրապնդումն ու ընդարձակումը, ինքնավար հանրապետությունների ու մարզերի, ազգային օկրուգների, միութենական հանրապետությունների պետականության բուռն զարգացումը։ Սոցիալիստական ազգերի սովետական պետականության ձևերը մշակվել են սոցիալիստական ազգերի ծագման ու զարգացման ընթացքում և արտացոլում են այն առանձնահատկությունները, որ կան ազգերի միջև՝ համապատասխան նրանց տնտեսական, կենցաղի, սովորությունների, աշխարհագրական դիրքի և բնակչության յուրահատկությունների։

ՍՍՀՄ սոցիալիստական ազգերն ունեն իրենց ազգային պետականությունը։ Ազգային սովետական պետականությունն օգնեց աշխատավորական լայն մասսաներին ներգրավել երկրի կառավարման և սոցիալիստական հասարակության կառուցելու գործում։ Ազգային սովետական պետականության ստեղծումը և ՍՍՀ Միության կազմելը հանդիսացավ այն քաղաքական ձևը, որն արմատապես փոխեց հին ազգերի տնտեսական բազիսը և հոգեկան կերտվածքը։

Սովետական Միության յուրաքանչյուր միութենական հանրապետություն ունի իր սահմանադրությունը, պետական դրոշակը, հիմնը, օրենսդրությունը։ Նախկինում ճնշված ժողովուրդների՝ դարերով ստեղծված ավանդությունների, կենցաղի ու լեզվի առանձնահատկությունների համապատասխան ազգային պետության ստեղծումը, ազգային կադրերի պատրաստումը վճռական նշանակություն ունեցան բոլոր ժողովուրդների ստեղծագործական ուժերի զարգացման համար։



Սովետական Միության պետական իշխանության բարձրագույն օրգանները լիովին արտացոլում են երկրի բոլոր ազգերի ու ազգությունների աշխատավորների կենսական շահերը, պահանջմունքներն ու ավանդույթները։ Միութենական հանրապետությունների իրավահավասարությունն ապահովված է սովետական իշխանության պետական բոլոր օրգաններում։ Միութենական հանրապետության Գերագույն սովետի նախագահության նախագահը միաժամանակ հանդիսանում է ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալը, ինչպես նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետի կազմի մեջ են մտնում բոլոր միութենական հանրապետությունների կառավարությունների ղեկավարները։ Այս փաստը ցույց է տալիս սովետական իշխանության պետական օրգանների կառուցվածքի դեմոկրատիզմը և բոլոր ազգերի ակտիվ մասնակցությունը երկրի կառավարման գործին։

Առանց վերացնելու փաստական ազգային անհավասարությունը, որ պայմանավորված էր պատմականորեն ստեղծված տնտեսական անհավասարությամբ, չէր կարելի ազգերի ճիշտ ու հաստատուն համագործակցություն ստեղծել մեկ միասնական միութենական պետության շրջանակներում։

ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման գլխավոր գործոնը պրոլետարիատի՝ դիկտատուրայի պետությունն է, որ ընդունակ եղավ կազմակերպելու սոցիալիստական ազգերի ստեղծագործ աշխատանքը և ապահովելու սոցիալիզմի կառուցումը։ Սոցիալիզմի լիակատար և վերջնական հաղթանակի մեծագույն նվաճումներից մեկը ՍՍՀՄ-ում ազգային հարցի արդարացի լուծումն է։ Կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության հաղթանակով սոցիալիստական հասարակարգում ոչ միայն ապահովված է նրանց քաղաքական իրավահավասարությունը, ստեղծված է սովետական ազգերի պետականություն, այլև վերացված է հին հասարակարգից ժառանգություն մնացած ազգերի տնտեսական և կուլտուրական անհավասարությունը։

ՍՍՀՄ-ում ազգային հարցը լուծվել է լենինյան ազգային քաղաքականության հիման վրա, հաստատվել են բոլոր ազգերի ու ազգությունների, բոլոր մեծ ու փոքր ժողովուրդների

իրավահավասարության սկզբունքները, նրանց ինքնորոշման իրավունքը։ ՍՍՀՄ բոլոր քաղաքացիները, անկախ նրանց ազգությունից, ռասայականությունից և սովորություններից, տնտեսական, պետական, կուլտուրական և հասարակական-քաղաքական գործունեության բոլոր բնագավառներում հանդես են գալիս և գործում են հավասարապես ու լրիվ իրավունքներով։

Այսպիսով, ՍՍՀՄ-ում ազգերի ու ազգությունների իրավահավասար ու կամավոր միավորումը, պետական, տնտեսական և կուլտուրական շինարարության բնագավառում նրանց սոցիալիստական համագործակցությունը, եղբայրական բարեկամությունը, կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության փայլուն հաղթանակներն են։

Միասնական բազմազգ պետության ստեղծման փորձը ունի միջազգային կարևոր նշանակություն։ Այդ փորձի նկատմամբ մեծ հետաքրքրություն գոյություն ունի ոչ միայն վերջերս գաղութատիրական լծից ազատագրված երկրների, այլև բուրժուական վաղուց կազմավորված բազմազգ պետությունների կողմից։ Այդ մասին վկայող բազմաթիվ փաստերից մեջ բերենք հետևյալ օրինակը։ Ձգտելով ստեղծել Կանադայում ապրող անգլիացիների ու ֆրանսիացիների արդարացի միություն, առաջադեմ կանադացիները ուշադրությամբ ուսումնասիրում են ազգային հարցի լուծման սովետական փորձը։ Այդ կապակցությամբ Կվեբեկ գավառի պրեմիերը արել է հետևյալ հայտարարությունը. «Սովետական Միությունը ապացուցել է,— ասել է նա,— որ ֆեդերալիզմը, այն ճիշտ կիրառելու դեպքում, կարող է արդյունավետ լինել և կարող է կանադացիների համար հետաքրքիր ու օգտավետ օրինակ հանդիսանալ մի այնպիսի ժամանակ, երբ մենք վերանայում ենք մեր սահմանադրությունը»։

Սովետական Միության փորձը ցույց է տվել, որ ազգերի զարգացման գործում սոցիալիստական պետականությունը ապահովել է բազմազգ ժողովրդական զանգվածների ակտիվ մասնակցությունը պետական ու հասարակական գործերին, լայն ասպարեզ է բացել բոլոր ազգերի աշխատավորների



զարգացման համար։ Պատմությունը ցույց տվեց, որ ոչ մի ազգ չի կարող բարեկամություն անել մյուսի հետ, եթե վիրավորվում է ազգային արժանապատվությունը։

ՍՍՀՄ փորձը ցույց է տալիս, որ սոցիալիզմը պաշտպանում է բոլոր ազգերի պատիվն ու արժանապատվությունը։ Սովետական ապրելակերպի համար բնորոշ գիծ է՝ բոլոր ժողովուրդների լեզվի, կենցաղի, առաջադիմական սովորությունների, ազգային արժանապատվության հարգելը։

Վլադիմիր Իլյիչ Լենինի ծննդյան 100-ամյակի նախապատրաստության մասին ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի 1968 թվականի օգոստոսի որոշման մեջ ասված է. «Լենինյան հանճարը տվեց ազգային հարցի տեսական ու գործնական լուծում։ Վ. Ի. Լենինը ընդգծում էր, որ անհրաժեշտ է ազատագրված ազգերի այնպիսի դաշինք, որ հիմնված լինի լիակատար վստահության, եղբայրական միասնության պարզ գիտակցման վրա՝ սոցիալիզմի ու կոմունիզմի հաղթանակի համար մղվող պայքարում։ ՍՍՀՄ ժողովուրդների անխախտ եղբայրության հաստատումը, մեր հայրենիքի սոցիալիստական հանրապետությունների տնտեսության ու կուլտուրայի բարգավաճումը, նրանց սերտ միասնությունը համոզիչ կերպով հաստատում են ազգային հարցի լուծման գործում լենինյան ուսմունքի և կուսակցության քաղաքականության ճշմարտությունը, պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարների հաղթանակը»[1]։

ՍՍՀՄ-ում ազգային հարցի լուծումը աշխարհի բոլոր ժողովուրդներին համոզիչ կերպով ցույց է տալիս, որ միայն սոցիալիզմի և կոմունիզմի պայմաններում է տեղի ունենում ազգերի ծաղկում, և նրանց ընդհանուր կենսական շահերը միավորված են մեկ ընտանիքում։ Սովետական բոլոր ազգերը և ազգությունները կուսակցության ղեկավարությամբ համատեղ ընթանում են դեպի կոմունիզմ։

[1] Տե՛ս «Правда», 10 августа 1968.

III

# ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ՄԵԾ ՈՒԺՆ Է

ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը սովետական հասարակության շարժիչ հզոր ուժերից մեկն է, որը բարերար ազդեցություն է ունենում սովետական բազմազգ պետության գործունեության բոլոր բնագավառների վրա, հսկայական չափով ներգործում է սովետական հասարակության արտադրողական ուժերի զարգացմանը, արագացնում է նրա կուլտուրական և գիտական առաջընթացը։

ՍՍՀՄ Սահմանադրությունը օրենքի ուժ է տալիս ժողովուրդների բարեկամության և համագործակցության գաղափարը։

«ՍՍՀՄ-ի քաղաքացիների իրավահավասարությունը տնտեսական, պետական, կուլտուրական ու հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում, անկախ նրանց ազգությունից ու ռասայից, անխախտ օրենք է»[1]։

Ժողովուրդների բարեկամության ամրապնդման նոր, վառ օրինակ է ՍՍՀՄ Գերագույն սովետի 1958 թվականի դեկտեմբերի 25-ի օրենքը[2], որը քրեական պատասխանատվություն է նախատեսում այն անձանց, որոնք կփորձեն բանավոր կամ գրավոր նացիոնալիստական ռասայական թշնամական ագիտացիա ու պրոպագանդա մղել և վնասել ժողովուրդների բարեկամության սովետական գաղափարախոսությանը։

[1] Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրություն (Հիմնական օրենք), Երևան, 1966, էջ 29։

[2] «Правда», 26 декабря 1958.



## 1. ՍՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Սովետական Միության ժողովուրդների անշահախնդիր բարեկամությունն ու սերտ համագործակցությունն ունեն իրենց անսասան, գրանիտյա հիմքը։ ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության հիմքը տնտեսության սոցիալիստական սիստեմն է և արտադրության միջոցների հանրային սեփականությունը, քաղաքական հիմքը՝ սովետական պետական կարգը, իսկ գաղափարական հիմքը՝ մարքս-լենինյան տեսությունը, պրոլետարական ինտերնացիոնալիզմը։

Ժողովուրդների բարեկամությունը հանդես է գալիս հասարակական կյանքի բոլոր բնագավառներում՝ տնտեսության, քաղաքականության և գաղափարական կյանքում։ Ժողովուրդների բարեկամությունն է ամրապնդում սովետական հասարակությունը, պետական կարգը, սովետական հասարակության բարոյա-քաղաքական միասնությունը, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։ ՍՍՀՄ ժողովուրդների լենինյան բարեկամության հիմքում ընկած է սովետական հայրենասիրությունը, որը ոգեշնչում և կոչ է անում սոցիալիստական մեծ հայրենիքի աշխատավորներին՝ միացյալ ջանքերով ապահովել կոմունիզմի հաղթանակը։

Սովետական ժողովուրդների բարեկամությունն ունի պատմական խոր արմատներ, բազմադարյան հարուստ պատմություն։ Մեր երկրի ժողովուրդների կյանքի և աշխատանքի օբյեկտիվ պայմանները նրանց միջև տակավին հնագույն անցյալում ստեղծեցին բարիդրացիական հարաբերություններ։

Պատմության տարբեր էտապներում նրանց վիճակվել է ձեռք-ձեռքի տված պայքարել արտաքին բռնակալների և ներքին հարստահարիչների դեմ։ Ազատության և ազգային անկախության համար մղած պայքարում ընդլայնվել և ամրապնդվել է եղբայրական համերաշխությունը և ծնունդ առել նրանց մարտական համագործակցությունը։ Սակայն սխալ է կարծել, թե ժողովուրդների իսկական, անշահախնդիր բարեկամությունն, իբրև հասարակության շարժիչ ուժ, ծագել է

մինչհոկտեմբերյան ժամանակաշրջանում։ Նման պնդումը վերացնում է այն որակական տարբերությունը, որ գոյություն ունի մի դեպքում՝ ժողովուրդների առանձին բարիդրացիական հարաբերությունների, փոխըմբռնումների և մյուս դեպքում՝ ժողովուրդների եղբայրական բարեկամության միջև։ Ժողովուրդների բարեկամությունը պատահական երևույթ չէ, այլ օրինաչափ, պատմականորեն ձևավորված հասարակական իրողություն։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը ստեղծեց ժողովուրդների իսկական բարեկամություն, որը սոցիալիզմի շինարարության պրոցեսում զարգանալով դարձավ սովետական հասարակության հզոր շարժիչ ուժերից մեկը։

Կոմունիստական կուսակցությունը միշտ բարձր է գնահատել ժողովուրդների առաջադիմական տրադիցիաները։ Ցարական Ռուսաստանի կազմի մեջ մտնող ժողովուրդները՝ ռուսները, ուկրաինացիները, բելոռուսները, հայերը, վրացիները, մյուս աշխատավորները վաղուց ի վեր ձգտել են ապրել բարեկամաբար և համերաշխ։ Սակայն շահագործող հասարակության պայմաններում, որ հիմնված էր մասնավոր սեփականության և մարդը մարդու շահագործելու հիմքի վրա, որտեղ գոյություն ուներ ազգային երկպառակություն՝ բնականաբար չէին կարող լինել ժողովուրդների այնպիսի բարեկամական հարաբերություններ, որոնք զարգանային ու դառնային հասարակության շարժիչ ուժ։

Սխալ է նաև այն պնդումը, թե իբր սոցիալիստական ազգերի համագործակցությունը չունի իր պատմական ակունքները։ Այսպիսի մոտեցումը արմատապես սխալ է, միակողմանի և անխուսափելիորեն հասցնում է պատմական փաստերի կեղծման, խանգարում է բացահայտելու «երկու Ռուսաստանի» հակասությունները, այն պայքարի գոյությունը, որ կար հետադիմական, հին Ռուսաստանի և նոր, հեղափոխական Ռուսաստանի միջև։ Այս հարցի պատմության հետ սերտորեն կապվում են Անդրկովկասի ժողովուրդների լավագույն ձգտումները և անսահման սերը նոր, հեղափոխական Ռուսաստանի նկատմամբ։ Այսպես, ռուս ժողովրդի հետ հայ ժողովրդի բարեկամության ու համագործակցության գաղա-



փարն է ընկած հայ մեծ դեմոկրատ-լուսավորիչ Խաչատուր Աբովյանի ստեղծագործությունների հիմքում։ «Օրհնվի էն սհաթը,— գրել է Խ. Աբովյանը,— որ ռուսի օրհնած ոտը հայոց լիս աշխարհը մտավ ու ղզլբաշի անիծած չար շունչը մեր երկրից հալածեց»[1]։ Խ. Աբովյանը ռուս ժողովրդի հետ եղբայրական բարեկամության ու համագործակցության մեջ էր տեսնում հայ ժողովրդի փրկության միակ ուղին։

Հայ հեղափոխական դեմոկրատ Միքայել Նալբանդյանը հայ ժողովրդի բախտը կապում էր ռուսական ազատագրական շարժման հետ, այն շարժման, որի նպատակն էր ստեղծել նոր, հեղափոխական Ռուսաստան։

Խիստ այժմեական են հնչում վրաց անվանի գրող Ա. Ծերեթելու՝ ժողովուրդների բարեկամության ու համագործակցության մասին հետևյալ խոսքերը. «Մենք բարձր ենք գնահատում եղբայրությունը, միավորումն ու բարեկամությունը Ռուսաստանի ժողովուրդների հետ։ Կա երիտասարդ Ռուսաստան, որի հետ մենք ուզում ենք ընթանալ ձեռք-ձեռքի տված՝ իրագործելու համար ո՛չ միայն ազգային, այլև համամարդկային իդեալները, որոնք կոչվում են եղբայրություն, միավորում, իրավահավասարություն»[2]։ Մեր հայրենիքի ժողովուրդների միջև գոյություն ունեցող պատմական կապերն ու բարիդրացիական հարաբերությունները, սկսած հին ժամանակներից, ամրապնդվում են և դրանով իսկ ամուր հող ստեղծում այդ ժողովուրդների հետագա մերձեցման ու համագործակցության։ Ժողովուրդների բարեկամության և համագործակցության նախահոկտեմբերյան ժամանակաշրջանի պատմությունը լավ պատկերացնելու և ճիշտ գնահատելու լավագույն աղբյուր են բուրժուական յուրաքանչյուր ազգի մեջ «երկու ազգերի» և կապիտալիզմի ժամանակաշրջանում ամեն մի ազգային կուլտուրայի ներսում երկու կուլտուրայի մասին լենինյան դրույթները։ Նրանք օգնում են բացահայտելու շահագործող պետությունների, այդ թվում նաև ցա-

[1] Խ. Աբովյան, Երկերի ժողովածու, հ. 2, 1948, էջ 158։

[2] Հայրենիքի մասին, ՍՍՀՄ գրողների ասույթների ժողովածու, 1944, Մոսկվա էջ 52։

րական Ռուսաստանի, երկու արմատական հակադիր տենդենցների զարգացումը ազգամիջյան հարաբերություններում՝ տենդենց, որ ժողովուրդներին անջատում է, և տենդենց, որ նրանց միավորում է։ Եթե անջատող տենդենցը տեղի է ունենում շահագործող կարգի և դասակարգի մեղքով, նրանց գաղութային քաղաքականության, ռասայական ատելության հետևանքով, ապա ժողովուրդների միավորման ու համագործակցության տենդենցը ծնում ու զարգացնում է ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական կապեր և հարաբերություններ՝ ուղղություն և ընթացք տալով շահագործողների դեմ մղվող համատեղ պայքարին։ Ազգերի ու ժողովուրդների հարաբերությունների հարցի մշակման ժամանակ կոմունիստական կուսակցությունը խստագույն կերպով հաշվի է առել այդ տենդենցները և նոր ձևով կազմակերպել Ռուսաստանի ժողովուրդների բարեկամությունն ու համագործակցությունը, իսկ դա բացառիկ կարևոր նշանակություն ունեցավ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի և սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում։ Այս մեծագույն նպատակի իրագործման մեջ մեծ է պրոլետարական ինտերնացիոնալիզմի նշանակությունը։ Պրոլետարական ինտերնացիոնալիզմը և ժողովուրդների բարեկամությունն ու համագործակցությունը հիմնված են ազգերի սուվերեն իրավունքները, ռասաների ու ազգությունների իրավահավասարությունը ճանաչելու, բոլոր մեծ ու փոքր ժողովուրդների իրավունքները հարգելու, սեփական ժողովրդին սիրելու, ազգային հպարտության զգացմունքների ճանաչման վրա։ Այս հիման վրա մեր երկրի ժողովուրդների ու ազգերի միջև ստեղծվեցին և զարգացան սոցիալիստական համագործակցության նոր հարաբերությունները։

Սովետական սոցիալիստական ազգերի համագործակցությունը, որի արմատական նախադրյալներն ստեղծեց Հոկտեմբերյան հեղափոխությունը, զարգանում է երեք պայմանների շնորհիվ։

Առաջին. տապալված է շահագործողների իշխանությունը, և մեր երկրում ստեղծվել է աշխատավորների իշխանությունը՝ սովետական պետությունը։ «Ամբողջ իշխանությունը






Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանը՝ սահմանված
ի նշանավորումն Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության
50-ամյակի



Մոսկվա: Կրեմլի համագումարների պալատը



Կրասնովոդսկի նավահանգիստ։ Ալթայի ցորենը Կասպից ծովով գնում է դեպի Կովկաս

Մի տեսարան Կրասնոյարսկի հիդրոէլեկտրակայանից



ՍՍՀՄ-ում պատկանում է քաղաքի և գյուղի աշխատավորներին՝ համայն աշխատավորների դեպուտատների սովետներին[1]։ Դրա շնորհիվ ժողովուրդների միջև ապահովված են բարեկամական, եղբայրական նոր հարաբերություններ, որոնց աչքի լույսի պես պահպանում և զարգացնում է Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը։

Երկրորդ. տնտեսության մեջ լրիվին ոչնչացված է շահագործողների ղեկավար դերը։ Ժողովրդական տնտեսության ղեկավար դերը գտնվում է աշխատավորների ձեռքում, վերացվել են մասնավոր սեփականությունը, մարդու շահագործումը մարդու կողմից։ ՍՍՀՄ սահմանադրության մեջ այդ կապակցությամբ ասված է. «ՍՍՀՄ-ի տնտեսական հիմքն են կազմում տնտեսության սոցիալիստական սիստեմը և արտադրության գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը, որոնք հաստատվել են տնտեսության կապիտալիստական սիստեմի լիկվիդացիայի, արտադրության գործիքների ու միջոցների մասնավոր սեփականության վերացման և մարդու կողմից մարդու շահագործման ոչնչացման հետևանքով»[2]։ Այդ հիման վրա ստեղծվել է նոր հասարակության կառուցման տնտեսական հիմքը, որը նոր բովանդակություն է տալիս ժողովուրդների և ազգերի հարաբերություններին, սոցիալիստական համագործակցությանը։

Երրորդ. մարքս-լենինյան գաղափարախոսությունը հաղթանակ տարավ բուրժուականի նկատմամբ։ Կոմունիստական կուսակցությունը ցարիզմի և կապիտալիզմի պայմաններում հալածվում և հետապնդվում էր։ Այժմ՝ սովետական պետության մեջ նա միակ ղեկավար կուսակցությունն է, որը հայրենիքի բախտը վերցրել է իր ձեռքը և ժողովուրդներին տանում է դեպի կոմունիզմ։ Դրա շնորհիվ ստեղծվեցին ժողովուրդների մարքս-լենինյան գաղափարախոսությամբ պայմանավորված նոր հարաբերություններ, որոնց հիման վրա անընդհատ զարգանում են սոցիալիստական ազգերի բարեկամությունը և համագործակցությունը։ Այդ համագործակցությունը իրա-

[1] Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրություն (Հիմնական օրենք), էջ 3։

[2] Նույն տեղը։



Կրասնովոդսկի նավահանգիստ։ Այստեղի ցորենը Կասպից ծովով գնում է դեպի Վոլգա



Մի տեսարան Կրասնոյարսկի հիդրոէլեկտրակայանից

ՍՍՀՄ-ում պատկանում է քաղաքի և գյուղի աշխատավորներին՝ հանձինս աշխատավորների դեպուտատների սովետների[1]։ Դրա շնորհիվ ժողովուրդների միջև ապահովված են քաղաքական, եղբայրական նոր հարաբերություններ, որոնց աչքի լույսի պես պահպանում և զարգացնում է Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը։

Երկրորդ. տնտեսության մեջ լիովին ոչնչացված է շահագործողների ղեկավար դերը։ Ժողովրդական տնտեսության ղեկավար դերը գտնվում է աշխատավորների ձեռքում, վերացվել են մասնավոր սեփականությունը, մարդու շահագործումը մարդու կողմից։ ՍՍՀՄ սահմանադրության մեջ այդ կապակցությամբ ասված է. «ՍՍՀՄ-ի տնտեսական հիմքն են կազմում տնտեսության սոցիալիստական սիստեմը և արտադրության գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը, որոնք հաստատվել են տնտեսության կապիտալիստական սիստեմի լիկվիդացիայի, արտադրության գործիքների ու միջոցների մասնավոր սեփականության վերացման և մարդու կողմից մարդու շահագործումը ոչնչացնելու հետևանքով»[2]։ Այդ հիման վրա ստեղծվել է նոր հասարակության կառուցման տնտեսական հիմքը, որը նոր բովանդակություն է տալիս ժողովուրդների և ազգերի հարաբերություններին, սոցիալիստական համագործակցությանը։

Երրորդ. մարքս-լենինյան գաղափարախոսությունը հաղթանակ տարավ բուրժուականի նկատմամբ։ Կոմունիստական կուսակցությունը ցարիզմի և կապիտալիզմի պայմաններում հալածվում և հետապնդվում էր։ Այժմ սովետական պետության մեջ նա միակ ղեկավար կուսակցությունն է, որը հայրենիքի բախտը վերցրել է իր ձեռքը և ժողովուրդներին տանում է դեպի կոմունիզմ։ Դրա շնորհիվ ստեղծվեցին ժողովուրդների մարքս-լենինյան գաղափարախոսությամբ պայմանավորված նոր հարաբերություններ, որոնց հիման վրա անընդհատ զարգանում են սոցիալիստական ազգերի բարեկամությունը և համագործակցությունը։ Այդ համագործակցությունը իրա-

[1] Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրություն (Հիմնական օրենք), էջ 3։

[2] Նույն տեղը։

կանացվում է, ամենից առաջ, տնտեսական բնագավառում։ ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության պլանները, որոնք արտացոլում են սովետական երկրի տնտեսության և կուլտուրական շինարարության հեռանկարները, ելնում են ՍՍՀ Միության ընդհանուր և յուրաքանչյուր սովետական հանրապետության շահերից։ Պետական պլաններում հաշվի են առնվում արտադրողական ուժերի շահավետ օգտագործման պահանջը և ազգային միութենական հանրապետությունների, ինքնավար մարզերի, ազգային օկրուգների համակողմանի զարգացումն ու ժողովրդական տնտեսության մասնագիտացումը, նրանց առանձնահատուկ շահերը։

Սովետական երկրի ժողովրդական տնտեսությունը միասնական, կապակցված համալիր է։ Սովետական էկոնոմիկայի բուռն աճը նախատեսում է համալիրային կարգով լուծել ո՛չ միայն առանձին հանրապետությունների, այլև ամբողջությամբ վերցրած՝ Սովետական Միության համար կարևոր նշանակություն ունեցող տնտեսական պրոբլեմներ։ Դա սոցիալիստական խոշոր արտադրության զարգացման օրինաչափ արդյունքն է, սոցիալիստական ազգերի հետագա մերձեցման օբյեկտիվ հիմքը։ Սրանից են բխում սովետական տնտեսության կապերի և փոխօգնության հետևողական խորացումը և ընդարձակումը։ Սովետական երկրի տնտեսական բոլոր պլանների հաջող կատարումը, հիդրոէլեկտրիկական ամեն մի կառույց, խոպան հողերի յուրացումը արդյունք են սոցիալիստական ազգերի համագործակցության և եղբայրության։ Միութենական հանրապետությունների տնտեսության զարգացումն ամուր հիմք է ստեղծում ժողովուրդների կուլտուրայի ծաղկման համար։ Ժողովուրդների համագործակցության շնորհիվ է՛լ ավելի են մեծանում բոլոր ազգերի ակտիվությունը և նրանց ավանդը կոմունիստական շինարարության ընդհանուր գործում։

«Սովետական հասարակության մեջ,— ասված է ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսներում,— հաստատվել են ազգերի ու ազգությունների հավասարության, բարեկամության ու համագործակցության հարաբերություններ, կայուն հիմքեր են ստեղծվել նրանց հետագա բարգավաճման ու մերձեցման համար»[1]։

## 2. ՍՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆ Է

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը կես դար շարունակ անդուլ կերպով ամրապնդել, հոգել, կատարելագործել է Սովետական Միության ժողովուրդների բարեկամությունն ու համագործակցությունը և դարձրել բազմազգ սովետական պետության անհաղթահարելի ու հզոր ուժը։ ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության մեծ ուժն ի հայտ է գալիս կոմունիստական շինարարության բոլոր բնագավառներում և մեծապես նպաստում է ինչպես ՍՍՀՄ առանձին հանրապետությունների, այնպես էլ ամբողջ երկրի տնտեսության ու կուլտուրայի անշեղ աճմանը։ Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը պրոլետարական ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների բարեկամության ու եղբայրության գաղափարների կենդանի մարմնավորումն է, որը ՍՍՀՄ բոլոր ժողովուրդներին դաստիարակելով հասարակական պարտքի բարձր գիտակցության, ջերմ հայրենասիրության ոգով, ամեն կերպ արագացնում է Սովետական Միության առաջընթացի տեմպերը։ ՍՍՀՄ-ի բոլոր հանրապետությունները դարձել են բարձր զարգացած արդյունաբերական երկրներ՝ կոլեկտիվ գյուղատնտեսության և առաջավոր սոցիալիստական կուլտուրայով։ Ժողովուրդների հերոսական աշխատանքով Սովետական Միությունը դարձավ հզոր, ինդուստրիալ տերություն։ Ստեղծվեցին արդյունաբերական նոր ճյուղեր, արագ կերպով զարգացան ավտոմոբիլային, ավիացիոն, տրակտորային, քիմիայի և արդյունաբերության շատ այլ ճյուղեր։ Տիտանական քայլերով է զարգացել սովետական ինդուստրիան։ Նրա ճյուղերից մեկը քիմիական արդյունաբերությունն է, որ ունի սինթետիկ կաուչուկի ու ամոնիակի, քիմիական թելերի, պլաստմասսաների

[1] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50 տարին. ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսներ, Երևան, 1967, էջ 52։

զարգացած արտադրություն։ Քիմիական արդյունաբերության հիմնական ճյուղերի արտադրության գծով ՍՍՀՄ-ը Եվրոպայում գրավում է առաջին տեղը, իսկ աշխարհում՝ երկրորդ, զիջելով միայն ԱՄՆ-ին։

Սովետական երկրում արտադրված մեքենաներն ու սարքավորումները հայտնի են դարձել ամբողջ աշխարհում։

Սովետական իշխանության տարիներին ստեղծվել է հայրենական մեքենաշինական և մետաղամշակման արդյունաբերության ավելի քան 100 ճյուղ, որոնց սարքավորումների շնորհիվ սովետական մարդը տիեզերքն է նվաճում։

Սովետական պետության կեսդարյա պատմության ընթացքում հուժկու զարգացում ապրեցին մետալուրգիան ու վառելիքային արդյունաբերությունը։ Հսկայական մասշտաբով աճում է չուգունի, գլանվածքի, քարածխի, նավթի, գազի, պողպատի արդյունաբերությունը։

Հայտնի է, որ պողպատը էկոնոմիկայում վճռական նշանակություն ունի։ Իզուր չէ, որ երբ ուզում են համեմատել տնտեսության զարգացման մակարդակը այս կամ այն երկրում, երբ փորձում են որոշել այս կամ այն պետության նյութական հնարավորությունները, նրա հզորությունը, առաջին հերթին հարցնում են՝ «Ինչքա՞ն է պողպատը»։ Որտեղ պողպատը շատ է, այնտեղ առկա է ինդուստրիայի ամեն մի այլ ճյուղի զարգացման գլխավոր պայմանը։

Սովետական երկրում 1967 թ. դեկտեմբերի վերջին ձուլվեց հարյուր միլիոն տոննա պողպատ։ Անտարակույս դա սովետական ժողովրդի վիթխարի նվաճումն է։ Պողպատի ձուլումը մեր երկրում ունի հետևյալ պատկերը. ամբողջ 1920 թվականին ձուլվել է 194 հազար տոննա, իսկ այժմ օրական ձուլվում է մոտավորապես 280 հազար տոննա[1]։

Երկաթահանքի հանույթի, կոքսի և պողպատի խողովակների արտադրության տեսակետից ՍՍՀՄ-ն աշխարհում գրավում է առաջին, իսկ չուգունի ձուլման և սև մետաղների գլանվածքի արտադրությամբ՝ երկրորդ տեղը[2]։

Քարածխի արդյունահանմամբ ՍՍՀՄ-ը աշխարհում բռնում է առաջին, իսկ նավթի և գազի արդյունահանմամբ՝ երկրորդ տեղը։

[1] «Правда», 26 декабря 1967.

[2] См. ВДНХ, павильон «Угольная промышленность».



Սովետական իշխանության տարիներին հսկայական թափով զարգացավ երկրի երկաթուղային, ջրային ու օդային տրանսպորտը։ Ստեղծվել են կապի նոր տեսակներ՝ ռադիոկապ, ռադիոհաղորդումներ, հեռուստատեսություն և այլն։

ՍՍՀՄ ժողովուրդների միասնական ընտանիքը առաջին հնգամյակը նշանավորեց մի շարք խոշոր կառուցումներով։ Շարք մտան Դնեպրի Վ. Ի. Լենինի անվան հիդրոէլեկտրակայանը, Կուզնեցկի և Մագնիտագորսկի հսկա կոմբինատները, Ստալինգրադի և Խարկովի տրակտորային գործարանները, Մոսկվայի և Գորկու ավտոգործարանները, որոնք բացառիկ նշանակություն ունեցան երկրի տնտեսության զարգացման համար։

Սովետական երկրի բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և մտավորականության հերոսական աշխատանքով առաջին հնգամյա պլանը կատարվեց ժամկետից շուտ։ Ժողովրդական տնտեսության առաջին հնգամյա պլանի կատարման շնորհիվ ՍՍՀՄ-ը ագրարային հետամնաց երկրից դարձավ կոլտնտեսային, ինդուստրիալ-սոցիալիստական պետություն։ Կառուցվեց սոցիալիզմի տնտեսական հիմքը, ծնունդ առան և շահագործման հանձնվեցին 1500 արդյունաբերական ձեռնարկություններ[1]։ Բանվորների և ծառայողների բանակը գրեթե կրկնապատկվեց։

ՍՍՀՄ բազմազգ ժողովուրդների միացյալ ջանքերով երկրորդ հնգամյակում կառուցվեցին Կրիվոյ Ռոգի, Նովո-Լիպեցկի և Նոր Տուլայի մետալուրգիական, Ուրալի և Կրամատորսկի ծանր մեքենաշինության, Ուրալի վագոնաշինական և Չելյաբինսկի տրակտորի գործարանները, Մոսկվայի, Լենինգրադի, Սեմիպալատինսկի, Բաքվի մսի խոշոր կոմբինատները և արդյունաբերական բազմաթիվ այլ ձեռնարկություններ։

Երկրորդ հնգամյակի տարիներին (1933—1937 թթ.) սովետական ժողովուրդը կենսագործեց ընդարձակ ծրագիր, որի քաղաքական հիմնական խնդիրներն էին՝ լիկվիդացնել կա-

[1] См. ВДНХ, павильон «Металлургия».

պիտալիստական տարրերին, վերացնել շահագործում ծնող բոլոր պատճառները, հաղթահարել կապիտալիզմի մնացուկները մարդկանց գիտակցության և տնտեսության մեջ։

Տնտեսական հիմնական խնդիրներն էին՝ ավարտել ժողովրդական տնտեսության վերակառուցումը, յուրացնել նոր տեխնիկան։ Հատուկ ուշադրություն դարձվեց միութենական և ինքնավար հանրապետությունների արդյունաբերության զարգացման վրա։

Երրորդ հնգամյակի ընթացքում շահագործման հանձնվեցին 3000 նոր ձեռնարկություններ։

ՍՍՀՄ ժողովուրդների սոցիալիստական համագործակցության հիման վրա երրորդ հնգամյակի տարիներին շարք մտան Ուգլիչի և Կամսամոլսկի հիդրոէլեկտրակայանները, Նովոտագիլսկի մետալուրգիական գործարանը, Ուրալի ալյումինի գործարանի առաջին հերթը, Լենինականի տեքստիլ կոմբինատը և բազմաթիվ այլ ձեռնարկություններ։

Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում սովետական հերոս ժողովուրդը կառուցեց Չելյաբինսկի մետալուրգիական և խողովակագլանվածքային, «Ամուրստալ» մետալուրգիական գործարանները, Նորիլսկի լեռնամետալուրգիական կոմբինատը, Բոգոսլավսկի ալյումինի, Երևանի էլեկտրամեքենաշինական, Ալթայի և Վլադիմիրի տրակտորային գործարանները, որոնք հսկայական նշանակություն ունեցան Հայրենական պատերազմի պատմական հաղթանակի գործում։ Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը հատուկ ուշադրություն դարձրին կապիտալ շինարարության վրա։ Այդ ժամանակաշրջանում կառուցվեցին մի շարք գործարաններ, դրանցից առավել խոշորագույն կառուցումներն էին Վոլգայի՝ Վ. Ի. Լենինի անվան, Իրկուտսկի, Վոլգայի՝ ՍՄԿԿ XXII համագումարի անվան հիդրոէլեկտրակայանները, աշխարհում առաջին ատոմային էլեկտրակայանը, Անդրկովկասի, Չերեպովեցի, Արևմտասիբիրական և Կարագանդայի մետալուրգիական, Իրկուտսկի և Կրասնոյարսկի ալյումինի գործարանները, Բրատսկի խոշոր հիդրոէլեկտրակայանը, մի շարք ջերմաէլեկտրակայաններ Սիբիրում, Ուրալում, Բելոռուսիայում, Ուզբեկստանում, Էստո-



նիայում, Հայաստանում և երկրի մյուս հանրապետություններում։ Ճիշտ կազմակերպելով ժողովրդական մասսաների աշխատանքային եռանդը և քաղաքական ակտիվությունը, մեծ աշխատանք ծավալվեց յոթնամյակի և կոմունիստական շինարարության հետագա տարիների ընթացքում։

Սովետական երկրի տնտեսական հզորությունը ապահովվեց շնորհիվ սոցիալիստական ինդուստրացման բարձր աճի։

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման[1]
հիմնական ցուցանիշները 1913—1967 թթ.
(տոկոսներով)

| | 1913 | 1940 | 1945 | 1950 | 1960 | 1965 | 1966 | 1967 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հասարակական համախառն արտադրանք | 100 | 510 | 423 | 821 | 2123 | 2902 | 3126 | 3366 |
| Ազգային եկամուտ | 100 | 535 | 445 | 877 | 2327 | 3192 | 3450 | 3685 |
| Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի արտադրական հիմնական ֆոնդեր | 100 | 264 | 226 | 326 | 838 | 1331 | 1438 | 1552 |
| Այդ թվում արդյունաբերության | 100 | 689 | 657 | 972 | 2925 | 4927 | 5380 | 5870 |
| Արդյունաբերության համախառն արտադրանքը | 100 | 769 | 705 | 1332 | 4032 | 6084 | 6613 | 7274 |
| Արտադրության միջոցների արտադրություն («Ա» խումբ) | 100 | 1340 | 1504 | 2746 | 8936 | 14156 | 15458 | 17035 |
| Սպառման առարկաների արտադրություն («Բ» խումբ) | 100 | 460 | 273 | 566 | 1498 | 2032 | 2183 | 2379 |
| Գյուղատնտեսության համախառն արտադրանքը | 100 | 141 | 86 | 140 | 224 | 252 | 274 | 276 |
| Տրանսպորտի բոլոր տեսակների բեռնաշրջանառություն | 100 | 387 | 297 | 566 | 1496 | 2193 | 2315 | 2522 |
| Երկաթուղային տրանսպորտի բեռնաշրջանառություն | 100 | 543 | 411 | 788 | 1968 | 2351 | 2637 | 2826 |
| Կապիտալ ներդրումներ | 100 | 555 | 523 | 1113 | 3665 | 4973 | 5342 | 5758 |

[1] СССР в цифрах в 1967 году, стр. 16.

| | 1913 | 1940 | 1945 | 1950 | 1960 | 1965 | 1966 | 1967 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բանվորների և ծառայողների թիվը ժողովրդական տնտեսության մեջ | 100 | 263 | 221 | 313 | 481 | 596 | 618 | 638 |
| Աշխատանքի արտադրողականությունը[1] արդյունաբերության մեջ | 100 | 376 | 427 | 545 | 1113 | 1396 | 1468 | 1571 |
| Գյուղատնտեսության մեջ | 100 | 193 | 131 | 209 | 347 | 396 | 436 | 440 |

ՍՍՀՄ արդյունաբերությունը մեկ շաբաթում թողարկում է ավելի շատ արտադրանք, քան մինչհեղափոխական Ռուսաստանի արդյունաբերությունը 1913 թվականին։

Այս թվերը կենդանի կերպով խոսում են սովետական եղբայրական ժողովուրդների հերոսական աշխատանքի մասին և ցույց տալիս ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության և համագործակցության մեծ ուժը, որը կոմունիստական շինարարության հաջողությունների լավագույն գրավականն է։

Վ. Ի. Լենինը բնութագրելով կոմունիզմը, ասել է. «Կոմունիզմը սովետական իշխանությունն է գումարած ամբողջ երկրի էլեկտրիֆիկացիան»։

Սովետական բազմազգ ժողովուրդն իր պայքարի և աշխատանքի անցած կես դարում առաջնորդվելով Վլադիմիր Իլյիչի պատգամներով, գործողության մեջ դրեց երկրի էլեկտրիֆիկացման լենինյան պլանը և այդ բնագավառում ձեռք բերեց հսկայական հաջողություններ։ Անցած հիսուն տարվա ընթացքում մեկը մյուսի ետևից կառուցվեցին հսկա հիդրոէլեկտրակայաններ, որոնց էլեկտրաէներգիայով կյանք առան երկրի բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ։

[1] Աղյուսակում բերված են աշխատանքի արտադրողականության տարեկան աճի ինդեքսները։ Աշխատանքային օրվա տևողության կրճատման հաշվառմամբ աշխատանքի ժամային արտադրողականությունը 1967 թ. 1913 թ. համեմատությամբ արդյունաբերության մեջ աճել է մոտավորապես 23 անգամ, ամբողջ գյուղատնտեսության մեջ՝ ավելի քան 5 անգամ։



կատարելով Վ. Ի. Լենինի պատգամը երկրի էլեկտրիֆիկացման մասին, Սովետական Միությունը դարձավ էներգետիկ հզոր բազա ունեցող պետություն։ Այսպես, եթե 1913 թվականին ցարական Ռուսաստանում արտադրվում էր ընդամենը երկու միլիարդ կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա, ապա 1967 թվականին ՍՍՀՄ-ում այն հասավ 589 միլիարդ կիլովատ-ժամի[1], իսկ 1970 թվականին կարտադրվի 850 միլիարդ կիլովատ-ժամ[2]։

Էլեկտրաէներգիայի արտադրության տեսակետից Սովետական Միությունը Եվրոպայում բռնում է առաջին, իսկ աշխարհում՝ երկրորդ տեղը։

Հսկայական չափով աճում է էլեկտրաէներգիայի գործածությունը ՍՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում։

Կենսագործելով լենինյան կոոպերատիվ պլանը, սովետական ժողովուրդը արմատապես հեղաշրջում կատարեց գյուղի կյանքում։ Գյուղում ստեղծվեցին խոշոր սոցիալիստական տնտեսություններ։

Այժմ ՍՍՀՄ-ում կան 36,8 հազար կոլտնտեսություն և 12,773 հազար սովխոզ[3]։ Սոցիալիստական գյուղատնտեսությունը զինված է զարգացած տեխնիկայով։ 1967 թվականին գյուղատնտեսությունն ուներ 1 միլիոն 660 հազար տրակտոր և 531 հազար հացահատիկահավաք կոմբայն, ավելի քան մեկ միլիոն բեռնատար ավտոմեքենա և ժամանակակից այլ տեխնիկա։ Ներկայումս կոլտնտեսություններում և սովխոզներում աշխատում են բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող 180 հազար գյուղատնտես, 159 հազար զոոտեխնիկ ու անասնաբույժ, 71 հազար ինժեներ և տեխնիկ։ Մեխանիզատորների թիվը հասնում է 3 միլիոն 200 հազարի։ 1967 թվականին ՍՍՀՄ-ի ցանքատարածությունները հասնում էին 206,8 միլիոն հեկտարի, 1913 թ. 118,2 միլիոն հեկտարի դիմաց[4]։

[1] СССР в цифрах в 1967 году, стр. 60.
[2] «Սովետական Հայաստան», 10 դեկտեմբերի 1967։
[3] СССР в цифрах в 1967 году, стр. 91, 93.
[4] «Սովետական Հայաստան», 10 դեկտեմբերի 1967 թ.։

Սովետական երկրում կատարվեց կուլտուրական հեղափոխություն։ Իսպառ վերացավ անգրագիտությունը, ստեղծվեց սովետական նոր մտավորականություն, ընդարձակվեց բարձրագույն և միջնակարգ ուսումնական հաստատությունների ցանցը։ ՍՍՀՄ-ի բարձրագույն ուսումնական հաստատությունները 3 անգամ ավելի շատ ինժեներների շրջանավարտներ են տալիս, քան ԱՄՆ-ը[1]։

Զգալի չափով բարձրացել է բնակչության բարեկեցությունը։ Սովետական իշխանության տարիներին բժիշկների թիվը ավելացել է 20 անգամ։

Ինդուստրացումը նյութական բազա ստեղծեց Սովետական Միության տնտեսական ինքնուրույնությունն ամրապնդելու, գյուղատնտեսությունը սոցիալիստական հիմքի վրա փոխադրելու և երկրի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը տեխնիկապես վերակառուցելու համար։ ՍՍՀՄ-ում ինդուստրացման ու կոլեկտիվացման քաղաքականությունը և կուլտուրական հեղափոխության հաղթանակը հսկայական նշանակություն ունեցան մեր երկրի հետագա առաջընթացի համար։

Ժողովրդական տնտեսության բնագավառում մեր երկրի ձեռք բերած հաջողությունները վառ կերպով ներկայացված են ՍՍՀՄ ԺՏՆ ցուցահանդեսում։ Այն զբաղեցնում է ավելի քան 200 հեկտար տարածություն։ Ցուցահանդեսի տաղավարներից բացի գործում են նաև կուլտուրայի տունը, կինոթատրոնները, բազմաթիվ խանութներ, ճաշարաններ և այլ հիմնարկներ։

Յուրաքանչյուր տարի ցուցահանդես են հաճախում 8 միլիոն մարդ, որից ավելի քան 200 հազարը՝ արտասահմանյան հյուրեր։

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսում 1968 թվականին ցուցադրվել են 100 հազար ցուցանմուշներ, որոնք ցույց են տալիս երկրի ժողովրդական տնտեսության նվաճումները։ Ցուցահանդեսը իր հերթին կազմակերպում է շարժական ճյուղային թեմատիկ ցուցահանդեսներ։ Միայն 1968 թվականին կազմակերպվել են 120 թեմա-

[1] «Սովետական Հայաստան», 10 դեկտեմբերի 1967 թ.։



տիկ ցուցահանդեսներ, որոնք նվիրված էին աշխատանքի գիտական կազմակերպման և արտադրության ղեկավարման, մեքենաների օգտագործման, էլեկտրաէներգիայի տնտեսման և ժողովրդական տնտեսության այլ հարցերին։ 1968 թվականին կազմակերպվել է 700 գիտատեխնիկական կոնֆերանս և սեմինար, որոնց մասնակցել են 100 հազար մասնագետներ։

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության ցուցահանդեսը հաճախորդներին ծանոթացնում է ժողովրդի ձեռք բերած նվաճումների հետ։ Սովետական մարդիկ ցուցահանդեսը դիտում են որպես առաջավոր փորձի ուսուցման դպրոց, ուր կենտրոնացված են ժողովրդական տնտեսության նվաճումները։ Սովետական Միության բոլոր մասերից հաճախում են ցուցահանդես, որպեսզի ծանոթանան գիտական հայտնագործությունների, տեխնիկայի նորությունների, աշխատանքի առաջավոր մեթոդների հետ։

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսը դրա հետ միասին մեծ ավանդ է ներդնում ժողովուրդների բարեկամության և համագործակցության զարգացման գործում։ Պատահական չէ, որ արտասահմանյան երկրների հյուրերը Մոսկվայի իրենց ուսումնասիրությունների ծրագրի մեջ հատուկ տեղ են հատկացնում ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսին։ Նրանք ձգտում են տեսնել աշխարհի ամենանշանավոր ցուցահանդեսը։

Ցուցահանդեսի «Ժողովուրդների բարեկամություն» հրապարակում փայլուն կերպով ցուցադրված է ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության մեծ ուժը, որը առատ աղբյուրի պես հորդում և կրկնապատկում է ժողովրդական տնտեսության հսկայական նվաճումները։

ՍՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակի նշանակությունը մեծ է։ Նա ցույց տվեց, որ սոցիալիզմն իր համար լայն ճանապարհ է հարթել, նրա հաղթանակը անհրաժեշտ է, որ ժողովուրդները սոցիալիզմին կարող են հասնել միայն սոցիալիստական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրա իրագործելու շնորհիվ։

Սովետական իշխանության կեսդարյա գոյությունը մեծա-

գույն վերափոխությունների արգասիք է։ Սոցիալիզմի հաղթանակը սովետական երկրի աշխատավորների համար ապահովեց սոցիալական-տնտեսական և կուլտուրական մեծագույն առաջադիմություն։ Մինչև հեղափոխությունը Սովետական Միության բնակչության երկու երրորդը կազմում էին մենատնտես գյուղացիները և արհեստավորները, բանվորները և ծառայողներն ընդամենը 17 տոկոս էին կազմում, իսկ շահագործող դասակարգը՝ բնակչության ավելի քան 16 տոկոսը[1]։ Այժմ ՍՍՀՄ բնակչության երեք քառորդը կազմում են բանվորներն ու ծառայողները, իսկ մոտ մեկ քառորդը՝ կոլտնտեսային գյուղացիությունը։ Սովետական Միության բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը և ժողովրդական մտավորականությունը, ընդհանուր նպատակով ու վեհ գաղափարներով միավորված և սերտորեն համախմբված իրենց հարազատ կոմունիստական կուսակցության շուրջը, վստահ քայլերով ընթանում են դեպի կոմունիզմ։

Սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման համար սովետական ժողովրդի ծավալած գործունեությունը անցավ հեղափոխության բոցերի, պատերազմի և խաղաղ շինարարության պայմաններում։ Ժողովուրդն իր լիակատար իշխանությունը իրականացնում է աշխատավորների դեպուտատների միջոցով։ Սովետական պետությունը կոմունիստական շինարարության գլխավոր գործոնն է։ Կոմունիզմի հիմնական սկզբունքը՝ «Յուրաքանչյուրից՝ ըստ իր ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ իր պահանջմունքների», հնարավոր է իրականացնել, երբ ստեղծվի նյութատեխնիկական բազա, բարձրացվի աշխատանքի արտադրողականությունը, նյութական ու հոգևոր բարիքների առատություն լինի, վերացվի քաղաքի և գյուղի, մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև եղած էական տարբերությունը։

Կուսակցության XXIII համագումարը սահմանեց կոմունիստական շինարարության հիմնական ուղղությունները։ Համագումարի որոշման մեջ նշված է, որ կոմունիստական շինարարության խնդիրների հաջող կատարման համար անհրաժեշտ է մոբիլիզացնել բոլոր աշխատավորների ուժերն ու եռանդը, արագացնել գիտատեխնիկական առաջադիմությունը։ «Կոմունիզմը կարող է կառուցվել,— ասված է Կենտկոմի թեզիսներում,— միայն սոցիալիզմի նվաճումների հիման վրա, նրա էկոնոմիկայի, սոցիալական կառուցվածքի, քաղաքական կազմակերպության և հոգևոր կյանքի հետագա զարգացման ու կատարելագործման հիման վրա»[1]։

[1] «Правда», 12 декабря 1967.



ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը կոմունիզմի համար մղվող պայքարի բոլոր հաջողությունների գլխավոր պայմաններից մեկն է, կոմունիզմ կառուցող սովետական հասարակության շարժիչ ուժը, այն հանդիսանում է սոցիալիստական հասարակության ժողովրդական լայն զանգվածների գործունեության հաջողության գլխավոր պայմաններից մեկը, որն ապահովում է ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների տնտեսության և կուլտուրայի հետագա զարգացումը։

Սովետական հասարակությունը նոր, սոցիալիստական հասարակություն է, որի մեջ ստեղծվել, ձևավորվել և գործում են տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացման նոր օրենքներ, ծնվում հասարակության առաջընթացի նոր ձգտումներ, հոգեկան և բարոյական սկզբունքներ ու նորմաներ։ Սոցիալիստական հասարակության շարժիչ ուժերից մեկը **սովետական ժողովրդի եղբայրական բարեկամությունը և համագործակցությունն է**։

Բուրժուական բազմազգ պետության մեջ գոյություն ունեն սոցիալական ու ազգային հակասություններ, որոնք ազգամիջյան ընդհարումների համար նոր առարկա են բացում։

Սովետական բազմազգ պետությունը միասնական և հզոր է, որը կոմունիզմի կառուցման համար միավորում է սոցիալիստական բոլոր ազգերին և արտահայտում աշխատավորների սոցիալական ու ազգային շահերը։

Կոմունիզմի կառուցման ընթացքում ժողովուրդների բարեկամությունը, որպես սոցիալիստական հասարակության շարժիչ ուժ, անխախտ միասնությամբ հանդես է գալիս հա-

[1] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50 տարին, էջ 41։

սարակության մյուս ուժերի բարոյա-քաղաքական և սովետական հայրենասիրության հետ միասին։

ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը չի կարող գոյություն ունենալ և զարգանալ, եթե ազգերի լայն զանգվածները բարոյա-քաղաքական տեսակետից միասնական չլինեն, եթե նրանք ոգեշնչված չլինեն սովետական հայրենասիրության վեհ գաղափարով։ Հասարակության բարոյա-քաղաքական միասնությունն իր հերթին չի կարող գոյություն ունենալ բազմազգ պետության պայմաններում, եթե այդ պետության ժողովուրդները տոգորված չեն հայրենասիրության և բարեկամության վեհ գաղափարներով, եթե նրանք համախմբված ու միասնական չեն։ Սովետական հասարակության այդ շարժիչ ուժերը վերջնականապես ձևավորվեցին և բուռն կերպով զարգացան սոցիալիզմի համար մղած պայքարում։ Նրանք այժմ կոմունիստական շինարարության պրոցեսում արագ կերպով զարգանում և ամրապնդվում են։

Կոմունիզմի կառուցման պրոցեսում ծաղկում, ամրանում և միասնաբար գործում են ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը, բարոյա-քաղաքական միասնությունը և հայրենասիրությունը։

ՍՄԿԿ ծրագրում ասված է. «Այսուհետև ևս հետևողականորեն կիրառել ինտերնացիոնալիզմի սկզբունքները ազգային հարաբերությունների ասպարեզում. ամրապնդել ժողովուրդների բարեկամությունը՝ որպես սոցիալիզմի կարևորագույն նվաճումներից մեկը»[1]։

ՍՍՀՄ-ում կոմունիզմի կառուցման համար անհրաժեշտ է, որ բոլոր ազգերը և ազգությունները անդուլ կերպով աշխատեն հանուն Սովետական Միության ժողովուրդների լենինյան բարեկամության ու համագործակցության ըստ ամենայնի ամրապնդման, որ ավելի ու ավելի սերտ ու բազմազան դառնան նրանց տնտեսական, կուլտուրական ու հոգևոր կապերը։

Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIII համագումարին ներկայացված ՍՄԿԿ Կենտրոնական

[1] Սովետական Միության կոմունիստական կուսակցության ծրագիրը, էջ 139։



կոմիտեի հաշվետու զեկուցման և բանաձևի մեջ հատուկ ուժով նշված է ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության և համագործակցության հետագա զարգացման խիստ անհրաժեշտությունը կոմունիստական շինարարության ժամանակաշրջանում։ Այնտեղ ասված է, որ ՍՍՀՄ-ում կոմունիզմի կառուցման, բոլոր ազգերի ու ազգությունների հետագա ծաղկման ու բարգավաճման համար սովետական բոլոր մարդկանց այսուհետև էլ պետք է դաստիարակել պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարների ոգով, ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրության ու բարեկամության անխախտ հավատարմության ոգով։

Բազմազգ սովետական ժողովրդի բարեկամության և համագործակցության ամրապնդումը, սոցիալիստական երկրների եղբայրական ժողովուրդների, ամբողջ աշխարհի կոմունիստական կուսակցությունների ու աշխատավորների հետ նրա սերտ համագործակցությունը մեծագույն ավանդ են ՍՍՀՄ-ում կոմունիզմի կառուցման մեջ։

Կոմունիստական ծավալուն շինարարությունը ՍՍՀՄ-ում ազգային հարաբերությունների զարգացման մի նոր աստիճան է, որ տեղի է ունենում նրանց լիակատար միասնության իրագործումը։

Կոմունիզմի կառուցման հիման վրա ավելի ու ավելի մեծ չափով համակողմանիորեն կզարգանան ու իրար կմերձենան ազգերը տնտեսական, քաղաքական և հոգևոր շահերի լիակատար ընդհանրության, եղբայրական բարեկամության ու համագործակցության հիման վրա։ Սովետական ժողովուրդների լենինյան բարեկամությունը և սոցիալիստական համագործակցությունը կոմունիզմի համար մղվող պայքարի մեծ ուժն է։

## 3. ՌՈՒՍ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՍՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՈՒԺՆ Է

Ցարական ինքնակալության դեմ մղված պայքարում ամրապնդվեցին նախկին ռուսական կայսրության մեջ մտնող բոլոր ժողովուրդների եղբայրական բարեկամության կապերը։ Երկրի եղբայրական ժողովուրդների մարտական միասնությունը դարձավ անհաղթահարելի ուժ, երբ ամրապնդվեց մարքս-լենինյան գաղափարներով։ Բոլոր ազգերի պրոլետարների

միասնությունը վճռական դեր խաղաց ժողովուրդների սոցիալական ու ազգային ազատագրման գործում։

Ժողովուրդների անխախտ բարեկամությունը օգնեց սոցիալիստական տնտեսության խաղաղ շինարարության զարգացմանը, առաջ մղեց գիտությունն ու տեխնիկան, գրականությունը, արվեստը, ամրապնդեց Սովետական Միության տնտեսությունը և ռազմական հզորությունը, դիմացավ Հայրենական մեծ պատերազմի ամենադաժան փորձություններին։ ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական բարեկամությունն ամեն օր ամրապնդվում և անընդհատ զարգանում է։ Կոմունիստական շինարարության պրոցեսում բազմազան են դառնում սովետական ժողովուրդների բարեկամության ու համագործակցության կապերը։ Ռուս մեծ ժողովուրդը, լինելով ՍՍՀՄ-ի ժողովուրդների առաջատար ուժը, խոշոր ներդրում է կատարում սոցիալիստական ազգերի ու ազգությունների բարեկամության ու համագործակցության զարգացման գործում։

Ռուս մեծ ժողովրդի օգնությամբ ՍՍՀՄ բոլոր ժողովուրդները սոցիալիստական ազգերի եղբայրական ընտանիքում ձեռք բերեցին այն, հանուն ինչի դարեր շարունակ պայքարել էին նրանց լավագույն ներկայացուցիչները։ ՍՍՀՄ ժողովուրդները նվաճեցին ազատություն, ստեղծեցին իրենց ազգային սոցիալիստական պետականությունը։

Ռուս ժողովրդի ամենաակտիվ ու եռանդուն գործունեությամբ սովետական ժողովուրդների եղբայրական համագործակցությունը աճեց ու ամրապնդվեց սոցիալիզմի կառուցման տարիներին։

Ռուս ժողովուրդը պատմական զարգացման դժվարին ուղի է անցել։ Նա իր ամբողջ զարգացման ընթացքում հանդես է եկել որպես երկրի տարբեր ժողովուրդների եղբայր ու պաշտպան։ Ռուս ժողովուրդը վայելում է սովետական ժողովուրդների սերը, համակրանքը, նվաճել է նրանց վստահությունը, ունի մեծ հեղինակություն։ Նա բոլոր մյուս ժողովուրդների հետ միասին պայքար է մղել արտաքին և ներքին թշնամիների դեմ, և այդ պայքարում ծնվել ու զարգացել է նրանց եղբայրական բարեկամությունը։ Ցարական ինքնակալությունը, կալվածատերերը և կապիտալիստները ճնշում ու շահա-



գործում էին աշխատավորներին և խեղդում ժողովրդի նախաձեռնությունը, եռանդն ու ուժերը։ Ռուս ժողովուրդը սակայն երբեք չի ընկճվել, երբեք ցած չի դրել պայքարի դրոշը և համախմբելով ու կազմակերպելով երկրի ժողովուրդների պայքարը, հաղթանակով է դուրս եկել այդ փորձություններից։ Արտաքին և ներքին թշնամիների դեմ մղած պայքարում ամրապնդվել են ռուս ժողովրդի ազատատենչ ոգին ու կամքը, ավելի են զարգացել նրա հրաշալի հատկությունները, որոնք մեծապես նպաստել են ժողովուրդների բարեկամության զարգացմանը։ Ռուս ժողովուրդը իր շուրջը համախմբեց երկրի բոլոր ժողովուրդներին՝ մեծ հոգատարություն ցուցաբերելով նրանց նկատմամբ։ Պատմությանը հայտնի են բազմաթիվ փաստեր ու օրինակներ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես ռուս ժողովուրդը թշնամիների դեմ մղած իր հերոսական, անձնազոհ պայքարով օգնել է եղբայրական ժողովուրդներին։ Ռուս մեծ ժողովրդի ծառայությունը երկրի ժողովուրդների առաջ այն է, որ նա կալվածատերերի և կապիտալիստների դեմ Ռուսաստանում առաջինը բարձրացրեց հեղափոխական պայքարի դրոշը։ Հեղափոխական մեծ տրադիցիաներ ունեցող ռուսական բանվոր դասակարգին վիճակվեց դառնալ Ռուսաստանի բոլոր ազգերի հեղափոխական մասսաների ղեկավար ուժը, միջազգային հեղափոխական շարժման ավանգարդը։ Մտնելով քաղաքական ասպարեզ, Ռուսաստանի բանվոր դասակարգը հեղափոխական շարժման մեջ ներդրեց հսկայական եռանդ և ցուցաբերեց անսահման նվիրվածություն աշխատավորների ազատագրության գործի նկատմամբ։

Ռուս ժողովուրդը ամբողջ աշխատավորներին տվեց մեծ Լենինին՝ Մարքսի հանճարեղ ուսմունքը շարունակողին։ Մեկ դար առաջ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը հրատարակեցին «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», որի մեջ հռչակվեց այն ճշմարիտ միտքը, որ անդասակարգ հասարակություն ստեղծելու գործի հիմքում ընկած է պրոլետարիատի դասակարգային համառ պայքարը բուրժուազիայի դեմ։

Միջազգային պրոլետարիատի մեծ առաջնորդ և ուսուցիչ Վ. Ի. Լենինը գիտական կոմունիզմի մարքսիստական ուսմունքը զարգացրեց և հանճարեղ կերպով կենսագործեց

պրակտիկայում: Վ. Ի. Լենինը ստեղծեց նոր տիպի, հեղափոխական կուսակցություն, որի ղեկավարությամբ մարդկային պատմության մեջ առաջին անգամ Ռուսաստանում հաղթանակեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը: Սոցիալիստական հեղափոխության հաղթանակի շնորհիվ Ռուսաստանում ստեղծվեց սովետական իշխանություն, որը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ձեռնամուխ եղավ սոցիալիզմի կառուցման գործին:

Մեծ են Վ. Ի. Լենինի ծառայությունները ամբողջ աշխարհի մարդկության առաջ: Վ. Ի. Լենինը ուրվագծեց կոմունիստական կարգի հիմքերը, որը և հանդիսացավ համաշխարհային պատմության նոր էտապի էությունը: «Լենինիզմի հետ են կապված քսաներորդ դարի ամենաակնառու հեղափոխական մեծագործությունները՝ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, որը նշանավորեց մարդկության պատմության նոր դարաշրջանի սկիզբը, սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ստեղծումը, կապիտալիզմի դեմ բանվոր դասակարգի, աշխատավորների տարած վիթխարի ազատագրական մարտերն ու հաղթանակները:

Լենինի անունը դարձել է պրոլետարական հեղափոխությունների, սոցիալիզմի և առաջադիմության խորհրդանիշը, աշխարհի կոմունիստական վերափոխման խորհրդանիշը:

Կոմունիզմի հաղթանակի համար մղվող պայքարում մենք մշտապես ուժ ու ոգևորություն ենք քաղում լենինյան գաղափարներից: Կոմունիստական կուսակցությունը, սովետական ժողովուրդը, բոլոր երկրների աշխատավորները Իլյիչի նկատմամբ արտահայտում են անսահման սիրո ու հարգանքի զգացումներ, նրան են ուղղում իրենց լավագույն խոհերն ու ձգտումները»[1]:

Ռուս ժողովուրդը, համախմբված կոմունիստական կուսակցության և սովետական իշխանության շուրջը, հաղթահարեց նոր հասարակարգի կառուցման դժվարությունները:

Ռուս ժողովուրդը կարևոր դեր խաղաց քաղաքացիական կռիվների տարիներին օտարերկրյա զավթիչներին և սպի-

[1] «Правда», 10 августа 1968.



տակգվարդիականներին ջախջախելու գործում: Վ. Ի. Լենինը ընդգծել է, որ քաղաքացիական կռիվների հաղթանակը ամենից առաջ ռուս բանվորների և գյուղացիների ծառայության արդյունքն է, որոնք կրծքով պաշտպանեցին Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նվաճումները, ժողովուրդների եղբայրական բարեկամությունը: Քաղաքացիական կռիվների ընթացքում սոցիալիստական հայրենիքի պաշտպանության համար ռուս ժողովրդի հետ միասին պայքարեցին երկրի մյուս բոլոր ժողովուրդները: Նրանք իրենց ուժերը միավորեցին ռուս ժողովրդի հերոսական պայքարի մեջ և ապահովեցին բոլոր ազգերի ու ազգությունների անկախությունը, պետականությունը և նոր սոցիալիստական հասարակարգի կառուցումը: Ռուս ժողովուրդը իր ամբողջ պատմության ընթացքում միշտ էլ բարձր է պահել ժողովուրդների բարեկամության և եղբայրության դրոշը: Նա ակտիվ մասնակցություն ունեցավ սովետական բազմազգ պետության՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության ստեղծման գործին:

ՍՍՀՄ-ի ստեղծման և նրանում բոլոր ժողովուրդներին միավորելու, նոր սոցիալիստական կյանքի կերտման համար մղված պայքարում ռուս ժողովուրդը բացառիկ կազմակերպվածությամբ ապահովեց իր առաջատար դերը: Նա մեծ դեր խաղաց սովետական մյուս ժողովուրդների պետականության, անտեսության և կուլտուրայի զարգացման գործում: Սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում ռուս ժողովրդի ջանասիրությամբ էլ ավելի ամրապնդվեցին ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական բարեկամությունը, համագործակցությունը և փոխըմբռնումը: Սովետական բոլոր ժողովուրդների հետ միասին ռուս մեծ ժողովուրդը իր ավանդը մուծեց տնտեսապես ու կուլտուրապես հետամնաց երկրամասերը ծաղկող ինդուստրիալ-ագրարային հանրապետություններ դարձնելու գործում: Սոցիալիստական շինարարության բոլոր տեղամասերում ռուսական բանվոր դասակարգը միշտ գրավել է առաջավոր դիրք: Ազգային հանրապետությունների ինդուստրացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման և կուլտուրական հեղափոխության գործում ռուս ժողովուրդը հանդես է եկել

որպես ՍՍՀՄ ժողովուրդների առաջատար ուժ։ Ռուսաստանյան Ֆեդերացիան ակտիվ մասնակցություն է ունեցել ազգային հանրապետություններում, մարզերում և օկրուգներում ծավալվող սոցիալիստական շինարարական աշխատանքներին։ ՍՍՀՄ բոլոր ժողովուրդներն ամենուրեք զգում են ռուս ժողովրդի անկեղծ սերն ու հարգանքը, եղբայրական մեծ օգնությունը։ ՍՍՀՄ ժողովուրդների համատեղ ստեղծագործական աշխատանքի մեջ անընդհատ զարգանում են սոցիալիստական ազգերի ու ազգությունների բարեկամությունն ու համագործակցությունը։

Անցյալում ճնշված ժողովուրդներին ռուս ժողովրդի կողմից ցույց տրվող օգնությունը ունի ո՛չ միայն տնտեսական-կուլտուրական, այլև քաղաքական մեծ նշանակություն։ Նման անկեղծ վերաբերմունքի մեջ փայլուն կերպով դրսևորվում է պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքը, որն աշխատավորների մեջ արմատավորում է կոմունիստական կուսակցությունը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-րդ տարեդարձի առթիվ հանրագումարի բերվեցին սովետական բազմազգ ժողովուրդների անցած փառահեղ ճանապարհի հոյակապ արդյունքները, որոնց մեջ ռուս ժողովրդի ավանդը և նրա անշահախնդիր օգնությունը սոցիալիստական ազգերին ու ազգություններին մեծ է[1]։

Սովետական Միության բոլոր ժողովուրդները հատուկ ուժով և ջերմ սիրով ընդգծում են լենինյան ազգային քաղաքականության իրագործման ասպարեզում այն մեծ դերը, որ պատկանում է ռուսական բանվոր դասակարգին, ռուս ժողովրդին։

Ուկրաինական Սովետական Սոցիալիստական Հանրապետության ստեղծման հիսնամյակի առթիվ 1967 թ. դեկտեմբերի 23-ին Կիևում գումարված հանդիսավոր նիստում արտահայտվեց ուկրաինական ժողովրդի կամքը, երբ հայտարարվեց, որ սովետական իշխանության համար մղած պայքարում Ուկրաինայի բանվոր դասակարգը, աշխատավորները

[1] «Правда», 30 декабря 1967.



հենվում էին ռուս բանվոր դասակարգի և աշխատավոր ժողովրդի եղբայրական աջակցության ու օգնության վրա, որ ռուս ժողովրդի և սովետական երկրի բոլոր ժողովուրդների եղբայրական փոխօգնությունը Ուկրաինայի աշխատավորներին հնարավորություն տվեց կարճ ժամանակամիջոցում վերականգնելու ավերակների վերածված և արյունաքամ եղած ուկրաինական երկիրը։

Ռուս ժողովրդի անկեղծ բարեկամությունը թանկ է գնահատում բելոռուս ժողովուրդը։ Նա կես դարի ընթացքում իր երկիրը դարձրեց ինդուստրիալ-կոլտնտեսային հզոր հանրապետություն ռուս ժողովրդի և մյուս միութենական հանրապետությունների ժողովուրդների հետ ձեռք-ձեռքի տված։

Սովետական Ադրբեջանի պատվիրակությունը Կրեմլի Սովետների համագումարի պալատում արտահայտեց իր ժողովրդի սերը ռուս մեծ ժողովրդի նկատմամբ։ Ժամանակակից Ադրբեջանը,— նշեց պատվիրակությունը,— ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների և առաջին հերթին Ռուսաստանյան Ֆեդերացիայի օգնությամբ դարձավ սոցիալիզմի փայլուն խորհրդանիշը արևելքում։

Ղազախ ժողովուրդը առանձին սիրով արտահայտեց ռուս ժողովրդի նկատմամբ իր հարգանքը և նվիրվածությունը։ «Գիտակցելով,— նշում են Ղազախական ՍՍՀ աշխատավորները,— ազատ ու երջանիկ կյանքի համար մղվող պայքարում կենսականորեն անհրաժեշտ ռուս մեծ ժողովրդի օգնությունը և եղբայրական բոլոր ժողովուրդների դաշինքի հսկայական նշանակությունը, մենք այն պահպանում ենք աչքի լույսի պես»[1]։

Ղազախ ժողովուրդը, հետադարձ հայացք ձգելով իր անցած ուղու վրա, ամբողջ աշխարհի առաջ հպարտությամբ հայտարարեց, որ Ղազախական Սովետական Սոցիալիստական Հանրապետության աշխատավորներն իրենց այսօրվա երջանիկ կյանքի, հոյակապ հաջողությունների համար պարտական են լենինյան ազգային քաղաքականությանը, եղբայ-

[1] «Правда», 30 декабря 1967.

րական բոլոր ժողովուրդներին, առաջին հերթին՝ ռուս մեծ ժողովրդի անշահախնդիր օգնությանը։

1967 թվականի նոյեմբերի 3-ին Մեծ Հոկտեմբերի պանծալի հիսունամյակին նվիրված հանդիսավոր նիստում Սովետական Վրաստանի պատվիրակությունն ասաց. «Ռուս մեծ ժողովուրդը սովետական բոլոր ժողովուրդների սերտ միությունում առաջատար ուժն է այն մեծ ընտանիքի, որի մեջ միավորված են ՍՍՀՄ բոլոր ժողովուրդները և պայքարում են կոմունիզմի հաղթանակի համար»[1]։

Արևելքի ժողովուրդները այսպիսի մի ասացվածք ունեն. «Ջինջ է աղբյուրի ջուրը, գեղեցիկ է վարդի գույնը, ամուր է պողպատը։ Բայց ջրից ավելի ջինջ, ծաղիկներից ավելի գեղեցիկ, պողպատից ավելի ամուր է ժողովուրդների բարեկամությունը»։ Ադրբեջանական ժողովուրդը դրան ավելացնում է, թե այժմ այդ բարեկամությունը ամուր է, քան երբևէ, որի առաջատար ուժը ռուս մեծ ժողովուրդն է։

Լիտվական ՍՍՀ աշխատավորներն իրենց ազգային տոնի օրը հանրագումարի բերելով երկրի էկոնոմիկայի ու կուլտուրայի բնագավառի խոշոր հաջողությունները, անսահման սիրով դիմեցին ռուս մեծ ժողովրդին և հայտնեցին շնորհակալություն՝ ցույց տված եղբայրական օգնության համար։

Ոգևորված պատմական հաջողություններով և պայծառ հեռանկարներով, Մոլդավական ՍՍՀ աշխատավորներն ասում են. «Շնորհակալություն քեզ, իմաստուն կուսակցություն, շնորհակալություն ձեզ, եղբայր ժողովուրդներ, շնորհակալություն քեզ, ռուս մեծ ժողովուրդ»[2]։

Ռուս ժողովրդի մեծ ծառայությունների կապակցությամբ Լատվիական ՍՍՀ աշխատավորները ընդգծում են, որ սոցիալիստական ազգերի հզոր ընտանիքի լիիրավ անդամների մեջ ռուս ժողովուրդը միշտ առաջինն է պրոլետարական ինտերնացիոնալիզմի օրինակ ցույց տալիս։ Նա միշտ օգնել է եղբայրական բոլոր ժողովուրդների էկոնոմիկայի ու կուլտուրայի զարգացմանը և այժմ էլ շարունակում է իր անշահախնդիր օգնությունը։ Նա ՍՍՀՄ ժողովուրդների լենինյան բա-

[1] «Правда», 30 декабря 1967.

[2] Նույն տեղը։



րեկամության ամրապնդման և զարգացման առաջատար ուժն է։

Կիրգիզական ժողովուրդը դեռևս մեր հայրենիքի հեռավոր անցյալում իր ազատագրումը տեսնում էր ռուս մեծ ժողովրդի ազատագրական պայքարի հաղթանակի մեջ։ Մեծ Հոկտեմբերի 50-ամյակի պատմական օրը նա իր երախտագիտության խոսքը ուղղեց ռուս ժողովրդին։ Կիրգիզական ժողովուրդը սրտանց շնորհակալություն հայտնեց Հոկտեմբերյան հեղափոխության հերոս ռուս մեծ ժողովրդին։ Ռուս ժողովուրդը, նրա հերոսական բանվոր դասակարգը լենինյան կուսակցության ղեկավարությամբ առաջինն իր շուրջը համախմբեց բոլոր ժողովուրդներին։ Ռուս ժողովուրդը,— ասում են կիրգիզները,— նրա հերոսական բանվոր դասակարգը հանդիսացան այն ուժը, որը մեկ եղբայրական միասնական բազմազգ սոցիալիստական ընտանիքի մեջ միավորեց մեր երկրի ժողովուրդներին։ Ահա թե ինչու կիրգիզական ժողովուրդն ամբողջ սրտով ռուս մեծ ժողովրդին և ՍՍՀՄ բոլոր եղբայրական ժողովուրդներին իր շնորհակալական խոսքն է ուղղում, նա «չոնռահմատ» է հայտնում բարեկամության և աջակցության, անշահախնդիր օգնության համար։

Տաջիկ ժողովրդի կյանքում հրաշք է կատարվել։ Նա դուրս է եկել խավարից և աղքատությունից։ Նրա երկիրը սովետական իշխանության տարիներին դարձել է քաղաքակիրթ և տնտեսապես զարգացած հանրապետություն։ Հենց այդ հրաշքի համար տաջիկ ժողովուրդը երախտապարտ է սովետական պետությանը։ Տաջիկները մաքուր սրտով ասում են. «Շնորհակալություն քեզ, մեծ Լենինի ստեղծած կուսակցություն, այն բանի համար, որ մեզ դարձրիր այնպիսին, ինչպիսին կանք այսօր, շնորհակալություն քեզ, հարազատ սովետական իշխանություն, մեզ պարգևած կյանքի համար, շնորհակալություն քեզ, ռուս մեծ ժողովուրդ, քո մատուցած եղբայրական օգնության համար»[1]։

Հայ ժողովուրդը դարեր շարունակ բարեկամական կապերի մեջ է գտնվել ռուս մեծ ժողովրդի հետ։ Նրա առաջավոր

[1] «Правда», 30 декабря 1967.

մարդիկ ռուս ժողովրդի բախտի հետ են կապել հայ բազմաչարչար ժողովրդի բախտը: Իր այսօրվա նոր կյանքի, պետականության, զարգացած տնտեսության և կուլտուրայի համար նա մեծապես պարտական է ռուս ժողովրդին: «Մեր սրբազան պարտքն է,— ասում են հայերը,— անընդհատ ամրապնդել ժողովուրդների եղբայրական բարեկամությունը, սիրել և մեծարել մեր ավագ եղբորը՝ ռուս մեծ ժողովրդին»[1]:

Թուրքմենական ժողովուրդը հեղափոխությունից առաջ գտնվում էր ֆեոդալական հասարակարգի փուլում: Սովետական հասարակարգի շնորհիվ, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ, նա ձեռք բերեց սեփական պետականություն, վերացրեց իր տնտեսական ու կուլտուրական հետամնացությունը և հասավ տնտեսության ու կուլտուրայի բարձր սոցիալիստական ձևերին: Այդ բոլորի համար նա իր անկեղծ շնորհակալությունն է հայտնում ռուս ժողովրդին:

Էստոնական ժողովուրդը հպարտանում է էկոնոմիկայի և կուլտուրայի բնագավառում ձեռք բերած իր հաջողություններով, որոնք արդյունք են Սովետական Միության ժողովուրդների, առաջին հերթին ռուս մեծ ժողովրդի, օգնության: «Ռուս մեծ ժողովրդին,— ասում են էստոնական ՍՍՀ աշխատավորները,— լենինյան ազգային քաղաքականության իրագործման ասպարեզում մեծ դեր է պատկանում, որի համար մենք նրան պարտական ենք»[2]:

Հեղափոխական ու մարտական ավանդույթների փառքով պսակված ռուսական բանվոր դասակարգը, ռուս մեծ ժողովուրդը անգնահատելի ծառայություններ ունի սոցիալիստական հայրենիքի պատմության մեջ, ժողովուրդների եղբայրական բարեկամության զարգացման գործում, որի համար սոցիալիստական ազգերի մեծ ընտանիքի լիիրավ անդամներն իրենց անկեղծ շնորհակալությունն են հայտնում իրենց ավագ եղբորը: Կոմունիստական շինարարության բոլոր բնագավառներում ռուս ժողովուրդը հանդես է գալիս որպես Սովետական Միության բազմազգ ժողովուրդների բարեկամությունը ցեմենտող ուժ: Ռուս ժողովուրդը ՍՍՀՄ ժողովուրդների ընտանիքի իրավահավասար անդամն է, որին, Սովետական Միության բոլոր ժողովուրդների անկեղծ խոստովանությամբ, մեծ դեր է պատկանում լենինյան ազգային քաղաքականության կենսագործման ասպարեզում և որի նկատմամբ բոլոր ժողովուրդները տածում են հարգանք, սեր և անկեղծ երախտագիտություն:

[1] «Правда», 30 декабря 1967.
[2] Նույն տեղը:



### 4. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԳԻՏԱԿՑԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԳՈՎ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼԸ ԿՈՄՈՒՆԻԶՄԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՐԵՎՈՐ ՊԱՅՄԱՆ Է

Սովետական բազմազգ պետության կեսդարյա գոյության ընթացքում հսկայական վերափոխություններ կատարվեցին մեր երկրի տնտեսական և կուլտուրական կյանքում:

Կոմունիզմի կառուցման ասպարեզում սովետների երկրի ձեռք բերած հսկայական հաջողությունները, կոմունիստական կուսակցության ու ժողովրդի միաձույլ միասնությունը, բանվոր դասակարգի և գյուղացիության լենինյան անխախտ դաշինքը, սովետական բոլոր ժողովուրդների եղբայրական բարեկամությունը, մարքսիզմ-լենինիզմի հաղթանակը այն բարենպաստ պայմաններն են, որոնց շնորհիվ կոփվեց սովետական մարդու բնավորությունը:

Կոմունիստական շինարարության արդի էտապում գիտական աշխարհայացքի ձևավորումը կուսակցության հերթական կարևորագույն խնդիրներից մեկն է: «Սոցիալիզմի և կոմունիստական հասարակարգի կառուցման պայմաններում,— ասված է ՍՄԿԿ ծրագրում,— երբ տարերային տնտեսական զարգացումը իր տեղը զիջել է արտադրության և ամբողջ հասարակական կյանքի գիտակցական կազմակերպմանը, երբ տեսությունը ամեն օր կենսագործվում է պրակտիկայում, առաջնակարգ նշանակություն է ստանում սովետական հասարակության բոլոր աշխատավորների գիտական աշխարհայացքի ձևավորումը մարքսիզմ-լենինիզմի՝ որպես փիլիսոփայական, տնտեսագիտական և սոցիալ-քաղաքական հայացքների

մի ամբողջական և կուռ սիստեմի հիման վրա[1]: Այս հիմունքով սովետական երկրի ամբողջ բնակչությունը գիտական կոմունիզմի ոգով դաստիարակելը ստանում է առաջնակարգ նշանակություն, որովհետև համակողմանիորեն զարգացած աշխատավոր մարդը խորապես ըմբռնում է համաշխարհային զարգացման ընթացքն ու հեռանկարները, ճիշտ է հասկանում երկրի ներքին և միջազգային ասպարեզի իրադարձությունները: Կոմունիզմի ոգով դաստիարակված սովետական մարդը օժտված է աշխատանքային և հասարակական ու քաղաքական ակտիվությամբ, գործնական խնդիրների լուծման և դժվարությունները հաղթահարելու, խոսքի, գործի, մտքի և գործողության միասնության կամքով: Սովետական մարդկանց դաստիարակչական աշխատանքի կենտրոնում դրված է աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունք զարգացնելը: Կոմունիստական հասարակության անդամը պարտավոր է հարգել հանրօգուտ ամեն մի աշխատանք և լավագույն օրինակ ծառայել աճող սերնդի աշխատանքային դաստիարակությանը: Այդ շատ կարևոր է ամենից առաջ և գլխավորապես այն պատճառով, որ մարդկանց ապրելու ու զարգանալու համար անհրաժեշտ ամեն ինչ ստեղծվում է աշխատանքով: Ուրեմն, նշանակում է հասարակության բոլոր անդամների դաստիարակությունը պետք է ապահովի յուրաքանչյուր աշխատունակ մարդու ակտիվ մասնակցությունը այն միջոցների ստեղծման մեջ, որոնք անհրաժեշտ են մարդկանց կյանքի ու գործունեության համար, հասարակության բարօրության համար: Իսկ հասարակության այն անդամները, որոնք հասարակության բարօրության համար աշխատանք չեն կատարում, դառնում են ձրիակերներ:

Կոմունիստական դաստիարակության հիմնական խնդիրն է՝ դաստիարակել այնպիսի սերունդ, որի համար ըստ ընդունակության աշխատելը դառնա կենսական պահանջ:

Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIII համագումարը նշեց կոմունիստական հասարակության

[1] Սովետական Միության կոմունիստական կուսակցության ծրագիրը, էջ 141:



անդամների աշխատանքային դաստիարակության հիմնական խնդիրները:

Համագումարը ամենից առաջ կարևոր նշանակություն տվեց աշխատավորներին քաղաքական բարձր գիտակցականության և աշխատանքի ու հանրային սեփականության նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի ոգով դաստիարակելուն, որը շատ էական հատկանիշ է կոմունիզմ կառուցող ամեն մի մարդու համար:

Համագումարը հատուկ ուժով ընդգծեց աշխատավորներին սովետական հայրենասիրության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու և բուրժուական գաղափարախոսության դեմ անհաշտ պայքար մղելու կարևորությունը: Կուսակցական համագումարի այս որոշումները ցույց են տալիս, որ կոմունիստական հասարակության կառուցման համար անհրաժեշտ են գիտակից մարդիկ, որոնց կոմունիստական դաստիարակությունը պայմանավորված է աշխատանքով և հասարակական ակտիվ գործունեությամբ:

Համագումարի որոշումները միաժամանակ պահանջում են սովետական հասարակության աշխատավորների մեջ զարգացնել կոմունիստական բարոյականության հատկությունները և սկզբունքները, իսկ դրանց շնորհիվ հասարակական կյանքում,— սովորեցնում է մարքսիզմ-լենինիզմը,— ընդլայնվում է բարոյական գործոնի ազդեցության ոլորտը և համապատասխանորեն նվազում է մարդկանց փոխհարաբերությունների վարչական կարգավորման նշանակությունը: Կոմունիստական բարոյականությունը ներառնում է համամարդկային այն հիմնական բարոյական նորմաները, որոնք ժողովրդական զանգվածների կողմից մշակվել և զարգացել են մարդկային պատմության ընթացքում: Կուսակցությունը ուշադրություն է դարձնում բանվոր դասակարգի հեղափոխական բարոյականության սկզբունքներով աշխատավորներին դաստիարակելու հարցի վրա:

Կոմունիստական բարոյականության բովանդակությունն անընդհատ հարստանում է նոր սկզբունքներով:

Կոմունիզմ կառուցողի բարոյական կոդեքսը իր մեջ բովանդակում է հետևյալ բարոյական սկզբունքները.

«— Հավատարմություն կոմունիզմի գործին, սեր դեպի սոցիալիստական հայրենիքը, դեպի սոցիալիզմի երկրները.

— Բարեխիղճ աշխատանք հասարակության բարօրության համար, ով չաշխատի, նա չի ուտի.

— Յուրաքանչյուրի հոգատարություն՝ հասարակական ունեցվածքը պահպանելու և բազմապատկելու նկատմամբ.

— Հասարակական պարտքի բարձր գիտակցում, անհանդուրժողականություն հասարակական շահերի խախտումների նկատմամբ.

— Կոլեկտիվիզմ և ընկերական փոխօգնություն, մեկը՝ բոլորի համար, բոլորը՝ մեկի համար.

— Մարդասիրական հարաբերություններ և փոխադարձ հարգանք մարդկանց միջև՝ մարդը մարդուն բարեկամ է, ընկեր և եղբայր.

— Ազնվություն և ճշմարտասիրություն, բարոյական մաքրություն, պարզություն և համեստություն հասարակական և անձնական կյանքում.

— Փոխադարձ հարգանք ընտանիքում, հոգատարություն երեխաների դաստիարակության նկատմամբ.

— Անհաշտություն անարդարության, պորտաբուծության, անազնվության, կարիերիզմի, շահամոլության նկատմամբ.

— ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների բարեկամություն և եղբայրություն, անհանդուրժողականություն ազգային և ռասայական անբարյացակամության նկատմամբ.

— Անհաշտություն կոմունիզմի, խաղաղության և ժողովուրդների ազատության գործի թշնամիների նկատմամբ.

— Եղբայրական համերաշխություն բոլոր երկրների աշխատավորների, բոլոր ժողովուրդների հետ»[1]։

Բարձր գնահատելով ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունն ու եղբայրությունը, կոմունիստական կուսակցությունը է՛լ ավելի սերտ, է՛լ ավելի միաձույլ դարձրեց նրանց մեծ և անխախտ սոցիալիստական ընտանիքը։ Ժողովուրդների բա-

[1] Սովետական Միության կոմունիստական կուսակցության ծրագիրը, էջ 144։



րեկամության հետագա զարգացման համար սովետական պետությունը ստեղծեց բարենպաստ պայմաններ։

Կոմունիստական շինարարության պայմաններում ավելի են ընդարձակվում սոցիալիստական ազգերի համագործակցությունը և փոխըմբռնումը, որը հնարավորություն է տալիս ավելի արագ ու կազմակերպված իրագործել պետական, տնտեսական և կուլտուրական խնդիրները, որոնք բացառիկ նշանակություն ունեն սովետական մարդկանց գիտակցականության բարձրացման և կոմունիստական դաստիարակության համար։

ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության, ինչպես և սովետական հասարակության մյուս շարժիչ ուժերի ամրապնդումը տեղի չէր ունենում ինքնահոսով։ Նա արագ կերպով զարգացավ կոմունիստական կուսակցության և սովետական պետության կողմից ձեռնարկված կազմակերպչական ու դաստիարակչական աշխատանքի շնորհիվ։ ՍՍՀՄ ժողովուրդները հպարտանում են, որ իրենք ապրում և աշխատում են սոցիալիզմի երկրում, ուր չկան ճնշում և շահագործում, աղքատություն, հարկադրանք ու կամայականություն, որոնք իշխում են կապիտալի աշխարհում։ ՍՍՀՄ ժողովուրդները հպարտանում են աշխարհի ամենաառաջավոր, դեմոկրատական սովետական հասարակական և պետական կարգով։ Նրանք հպարտանում են նրանով, որ մարդկության պատմության մեջ առաջին անգամ Ռուսաստանում ջարդվեց կապիտալիստական ստրկության շղթան և ստեղծվեց ազատ աշխարհ, բացվեց մարդկության պատմության նոր՝ կոմունիզմի դարաշրջանը։ Նրանք հպարտանում են, որ Սովետական Միությունը խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի հզոր ուժն է։

Սովետական ժողովուրդը հպարտանում է սոցիալիստական էկոնոմիկայով, կուլտուրայով, գիտությամբ, արվեստով, որոնք նպաստավոր պայմաններ են ստեղծում մարդկանց կոմունիստական դաստիարակության և ժողովուրդների լենինյան բարեկամության հետագա զարգացման համար։

Սովետական հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի ոգով մեր երկրի քաղաքացիների դաստիարակումը է՛լ ավելի է ամրակուռ դարձնում ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությու-

նը։ Սովետական մարդկանց այդ գաղափարականությունն ընդարձակում և ամրապնդում է Սովետական Միության բարեկամական կապերը սոցիալիստական երկրների հետ, ուժեղացնում է ամբողջ աշխարհի աշխատավորների համերաշխությունը։

ՍՍՀՄ ժողովուրդները անկեղծորեն հարգում են բոլոր ժողովուրդների հայրենասիրական զգացումները։ Սովետական երկրի աշխատավորները, սիրելով իրենց սոցիալիստական հայրենիքը, ոչ մի դեպքում այն չեն հակադրում աշխատավորների միջազգային համերաշխությանը, ամեն կերպ զարգացնում և ընդարձակում են ինտերնացիոնալ կապերը։

Պրոլետարական ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության հետագա զարգացումը հսկայական չափով նպաստում է ամբողջ աշխարհում խաղաղություն պահպանելու համար մղվող պայքարին, որը արմատապես համապատասխանում է կոմունիստական շինարարության շահերին։

Սովետական ազգերի աշխատավորական զանգվածները կոմունիստական շինարարությունը դիտում են որպես իրենց սրբազան գործը։ Կոմունիզմ կառուցող մարտիկների շարքերը որքան կուռ են դառնում, որքան բարձրանում է բանվորների, կոլտնտեսականների, մտավորականության գիտակցականությունը, որքան լավ հիմքերի վրա է դրվում բոլոր ազգերի աշխատավորների կոմունիստական դաստիարակությունը, այնքան ամուր, միասնական է լինում ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը, Սովետական Միությունն այնքան արագորեն է գնում դեպի կոմունիզմ։

Ահա թե ինչու աշխատավորների կոմունիստական դաստիարակությունը և ժողովուրդների բարեկամության հետագա ամրապնդումը հանդիսանում են կոմունիստական կուսակցության և սովետական պետության կարևորագույն խնդիրը։ Այս խնդիրը կարևոր է այն առումով, որ ներկայումս համաշխարհային ասպարեզում գաղափարական պայքարը ընդունել է սուր բնույթ։ Եվ դա հասկանալի է։ Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների ժողովուրդները կոմունիստական շինարարության ասպարեզում որքան շատ հաջողություններ են ձեռք բերում, այնքան խորանում է կապիտալիզ-



մի արդի ճգնաժամը, այնքան նուրբ ձևեր են ընդունում կոմունիզմի դեմ իմպերիալիստների պայքարի մեթոդները։

Հաշվի առնելով այս բոլոր հանգամանքները, կոմունիստական կուսակցությունն աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության գործի կազմակերպման ժամանակ հատուկ ուժով ընդգծում է նաև խորթ բարքերի և ավանդների ազդեցության դեմ պայքարի կարևորությունը և դնում մարդկանց գիտակցության ու վարքագծի մեջ եղած բացասական երևույթները հաղթահարելու խնդիրը։

ՍՍՀՄ բազմազգ ժողովուրդները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ կոմունիզմ են կառուցում մարքս-լենինյան գաղափարախոսության հաղթական դրոշով։ Մարքս-լենինյան գաղափարախոսությունը դարձել է սոցիալիստական զարգացման հզոր շարժիչ ուժ, սովետական մարդկանց համախմբվածության կարևոր գործոն։ Նա կոմունիստական շինարարության գործում սովետական ազգերի ու ազգությունների հասարակական-քաղաքական և աշխատանքային ակտիվության աղբյուրն է։

## 5. ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱԶԳԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ

Համաժողովրդական սոցիալիստական մշակույթը կոմունիստական շինարարության պրոցեսում հանդես է եկել որպես հզոր ուժ, որպես ՍՍՀՄ ժողովուրդների աշխատանքային ու քաղաքական ստեղծագործական ակտիվության լայնագույն արտահայտություն, սովետական ազգերի համագործակցության կարևոր գործոն։ ՍՍՀՄ-ում սոցիալիզմի լիակատար և վերջնական հաղթանակը աշխատավորների ստեղծագործական ունակությունների զարգացման համար լայն պայմաններ ստեղծեց։ Սովետական մարդու կերպարը կոմունիստական շինարարության պրոցեսում հանդես է գալիս նրա բարձր գաղափարականության և աշխատանքի նկատմամբ վերաբերմունքի մեջ։ Կոմունիզմ կառուցող մարդը խոր հավատ ունի ապագայի նկատմամբ։ Այդ վառ կերպով արտա-

ծավալված է Սովետական Միության ամենամասսայական շարժման՝ սոցիալիստական մրցության մեջ։

Վ. Ի. Լենինը «Ինչպես կազմակերպել մրցությունը» հոդվածում ընդգծել է, որ «սոցիալիզմը ո՛չ միայն չի մարում մրցությունը, այլև, ընդհակառակը, առաջին է հնարավորություն ստեղծում իրոք լայնորեն կիրառելու այն, իրոք մասսայական չափով, իրոք աշխատավորների մեծամասնությունը ներգրավելու այնպիսի աշխատանքի ասպարեզը, որտեղ նրանք կարող են երևան բերել իրենց, ծավալել իրենց ընդունակությունները, դրսևորել տաղանդներ, որոնք ժողովրդի մեջ անսպառ աղբյուր են և որոնց կապիտալիզմը ճզմել, ճնշել, խեղդել է հազարներով և միլիոններով։ Այժմ, երբ իշխանության գլուխ է անցել սոցիալիստական կառավարությունը, մեր խնդիրն է կազմակերպել մրցությունը»[1]։

Ամփոփելով և ընդհանրացնելով սովետական իշխանության առաջին տարիների փորձը, Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ սոցիալիստական մրցությունն այն կարևորագույն ձևն է, որը աշխատավորներին մասսայական շարժումով ընդգրկում է նոր հասարակության կառուցման մեջ։ Համաժողովրդական սոցիալիստական մրցությունը կոմունիստական շինարարության ասպարեզում մի մեթոդ է, որը արտահայտում է միլիոնավոր մասսաների ստեղծագործական ակտիվությունը և հեղափոխական թափը։ Նա հսկայական նշանակություն ունի նոր մարդու ձևավորման և հին աշխարհայացքի հաղթահարման գործում։ Սոցիալիստական մրցության մեջ բացահայտված է այն կենսական ուժը, որը կարևոր գործոն է հասարակության վերափոխման գործում։ Սոցիալիստական մրցությունը համաժողովրդական շարժում է։ Նա առաջ է եկել աշխատավորների անմիջական նախաձեռնությամբ։ Սոցիալիստական մրցությունը զարկ է տալիս մարդկանց բազմակողմանի զարգացմանը, գյուտարարների և ռացիոնալիզատորների շարժմանը։

Սոցիալիստական մրցությունը դարձել է սովետական ազգերի ու ազգությունների համագործակցության կարևոր գոր-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 493—494։





Ուկրաինական ՍՍՀ Դոնեցկի մարզում մեծ համբավ է վայելում «Շախտաստրոյանտրացիտ» տրեստի № 3 վարչության Նիկոլայ Սոկոլովի բրիգադը։
Նկարում — Ածխահանները հանքահոր իջնելուց առաջ։
Առաջին պլանում՝ Նիկոլայ Սոկոլովը

Օդեսայի առևտրական նավահանգստում խարիսխ են գցում աշխարհի գրեթե բոլոր երկրների նավերը





Սումգաիթի սինթետիկ կաուչուկի գործարանի արտադրամասերից մեկը



ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի «Ժողովուրդների բարեկամության» շատրվանը



Ինչպես մեր երկրի, այնպես էլ մի շարք արտասահմանյան երկրների դաշտերում աշխատում են «Բելառուս» մակնիշի տրակտորները, որ թողարկվում են Մինսկի տրակտորային գործարանի կողմից։

Նկարում — «Բելառուս» մակնիշի տրակտորները գործարանի բակում



Ուկրաինացի բարեկամները դիտում են Արտաշատի շրջանի Այգեզարդ գյուղի Փարիզյան կոմունայի անվան կոլտնտեսության եգիպտացորենի պլանտացիան

Չեչենա-Ինգուշական ԻԽՍՀ։ Գրոզնի քաղաքի Վ. Ի. Լենինի անվան հրապարակը



ծոն։ Նա հսկայական չափով օգնում է տնտեսական և կուլտուրական խնդիրների հաջող լուծմանը, զարգացնում է ժողովուրդների համագործակցությունը։ Կոմունիստական շինարարության տարիներին սոցիալիստական մրցությունը մտել է իր զարգացման նոր փուլը։ Սովետական երկրի աշխատավորները միմյանց ընկերական օգնություն ցույց տալու և իրար հետ համագործակցելու նպատակով ծավալում են համաժողովրդական սոցիալիստական մրցություն։ Այժմ միմյանց հետ մրցում են ո՛չ միայն գործարանների, ֆաբրիկաների, հանքահորերի, հիդրոկայանների կոլեկտիվներն ու բանվորները, ինժեներա-տեխնիկական անձնակազմը, այլև առանձին քաղաքներ, մարզեր, երկրամասեր, միութենական հանրապետություններ։ Այսպես, ժողովրդական տնտեսության և կուլտուրայի բնագավառի հրատապ խնդիրները կատարելու նպատակով սոցիալիստական մրցության մեջ են մտել Ուկրաինայի ու Ադրբեջանի, Վրաստանի ու Ուզբեկստանի, Մոլդավիայի ու Հայաստանի, Թուրքմենիայի և Լատվիայի աշխատավորները։ Սոցիալիստական մրցությունը հանրապետություններում համաժողովրդական բնույթ է ընդունել։ Ուկրաինան, Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը յուրաքանչյուր տարվա վերջում հանրագումարի են բերում սոցիալիստական մրցության արդյունքները։

1966 թվականի նոյեմբերի 11-ին Երևանում տեղի ունեցավ Ուկրաինական ՍՍՀ-ի, Վրացական ՍՍՀ-ի, Ադրբեջանական ՍՍՀ-ի, Հայկական ՍՍՀ-ի բարեկամական երեկոն՝ նվիրված եղբայրական հանրապետությունների մայրաքաղաքների սոցիալիստական մրցությանը։ Ավելի քան տասը տարի է անցել այն օրից, երբ մրցության մեջ մտան Կիևի, Երևանի, Բաքվի և Թբիլիսիի աշխատավորները։ Ամփոփելով սոցիալիստական մրցության պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման արդյունքները, պարզվեց, որ Երևանի շինարարության ընդլայնմանը զուգընթաց մեծապես աճել է նրա տնտեսությունը, նոր մակարդակի է հասել գիտության ու կուլտուրայի զարգացումը։

Սոցիալիստական մրցությունն ու եղբայրական փոխօգնությունը նպաստեցին Երևանի արդյունաբերության հետագա

զարգացմանը: 1966 թվականին Երևանի շուրջ 200 արդյունաբերական ձեռնարկություն տարեկան տալիս էր 856 միլիոն ռուբլու արտադրանք, գրեթե կրկնակի ավել, քան 1956 թվականին: Ամփոփելով սոցիալիստական պարտավորության կատարման արդյունքները, Երևան քաղաքի աշխատավորների պատվիրակությունը միաժամանակ նշեց, որ Ուկրաինայի մրցակիցները ակտիվ մասնակցություն են ունեցել Երևանի ջերմաէլեկտրակայանի՝ ժամկետից [illegible] շինարարությանը: Ջերմաէլեկտրակայանը բարձր որակով կառուցվեց ռուս, ուկրաինացի, վրացի, հայ, ադրբեջանցի, բելոռուս բանվորների և ինժեներների համատեղ աշխատանքի շնորհիվ, դրա համար էլ այն անվանվեց բարեկամական կառույց:

«Մենք,— ասացին Երևանի աշխատավորների ներկայացուցիչները,— երբեք չենք մոռանա այն օգնությունը, որ Ռուսաստանը, Ուկրաինան, Ադրբեջանը, Բելոռուսիան, Վրաստանը և մյուս եղբայրական հանրապետությունները Հայաստանին ցույց են տալիս Արփա-Սևան թունելի կառուցման գործում»[1]: Սոցիալիստական մրցության ընթացքում Երևանի գիտնականները զբաղվեցին Ուկրաինայի, Տաջիկստանի, Թուրքմենիայի, ՌՍՖՍՀ-ի Կրասնոյարսկի երկրամասի հանքային հարստությունների կոմպլեքսային օգտագործման հարցերով: Բարեկամության երեկոյում հանդես եկան Կիևի աշխատավորների ներկայացուցիչները: Նրանք ասացին, որ Երևանի և Կիևի աշխատավորների մրցությունը փորձի սիստեմատիկ փոխանակում է եղբայրական փոխօգնության ժողովրդա-տնտեսական խնդիրների լուծման գործում, որտեղ ամրապնդվող բարեկամական սերտ կապ է ձեռնարկությունների, կազմակերպությունների, գիտական հիմնարկների և ուսումնական հաստատությունների կոլեկտիվների միջև: Սոցիալիստական մրցության համաժողովրդական մասշտաբի մասին է վկայում նաև այն, որ Լատվիայի 185 ձեռնարկություն մրցում է Հայկական ՍՍՀ բազմաթիվ գործարանների ու ֆաբրիկաների հետ, իսկ Լատվիայի 98 արտադրական

[1] «Սովետական Հայաստան», 12 նոյեմբերի 1966:



ձեռնարկություն մրցության կապեր ունի ՌՍՖՍՀ, Ուկրաինայի, Բելոռուսիայի և Վրաստանի աշխատավորների հետ[1]:

Սովետական ժողովրդի համագործակցությունը և փոխադարձ օգնությունը փայլուն կերպով դրսևորված են Դոնբասի և Կուզբասի հանքափորների ավանդական սոցիալիստական մրցության, Ղազախստանի և Կարագանդայի ածխահատներին ցույց տրված նրանց եղբայրական օգնության մեջ: Եղբայրական սերտ բարեկամություն է հաստատվել Դոնբասի և Ռուսթավիի մետալուրգների միջև: Նրանք եղբայրաբար օգնում են միմյանց և այդ հիման վրա ձեռք բերում նորանոր հաջողություններ:

Սովետական Վրաստանի մետալուրգները վարպետություն են սովորել Դոնեցկի գործարաններում՝ հնագույն մետալուրգների մոտ: Սոցիալիստական մրցությունը լայն ծավալ է ստացել Թբիլիսիի և Ռիգայի արդյունաբերական ձեռնարկությունների բանվորական կոլեկտիվներում: Այստեղ ո՛չ միայն ստուգում և ընդհանրացնում են ստանձնած սոցիալիստական պարտավորությունների կատարման ընթացքը, այլև եղբայրաբար օգնում են իրար, յուրացնում գիտության և տեխնիկայի նորությունները: Սոցիալիստական մրցությունը Վրացական ՍՍՀ և Լատվիական ՍՍՀ ժողովուրդների համագործակցության զարգացման կարևոր գործոններից մեկն է, որի օգնությամբ այդ հանրապետությունների միջև սիստեմատիկաբար կատարվում է նաև առաջավոր փորձի փոխանակում, ներդրվում են գյուտարարական և ռացիոնալիզատորական արժեքավոր առաջարկություններ արտադրության մեջ և այլն:

Տաջիկական ՍՍՀ մայրաքաղաք Դուշանբեի և Թուրքմենական ՍՍՀ մայրաքաղաք Աշխաբադի աշխատավորների միջև տրադիցիոն մրցություն է սահմանվել, որը եղբայրական ժողովուրդների կոմունիստական դաստիարակության համար ունի կարևոր նշանակություն: Արտադրական ձեռնարկությունների փորձի փոխանակումը դարձել է երկու հանրապետությունների էկոնոմիկայի զարգացման համար գործնական նշանակություն ունեցող միջոց: Երկրի ժողովրդական տնտեսության համար

[1] «Советская Латвия», 18 августа 1966.

կարևոր նշանակություն ունեցավ հատկապես 1960 թ. հունիսին Կրիվոյ Ռոգում տեղի ունեցած տասը հանրապետությունների ներկայացուցիչների ընդարձակ խորհրդակցությունը, որը նվիրված էր Ուկրաինայի հանքափորների փորձի ուսումնասիրությանն ու տարածմանը։

«Պրավդա»-ն անդրադառնալով այդ խորհրդակցության աշխատանքներին, ընդգծեց, որ Ուկրաինայի ածխահանների փորձը հնարավորություն կտա եղբայրական հանրապետությունների աշխատավորներին տեխնիկան ավելի լավ և կազմակերպված ձևով օգտագործել, ավելի հարուստ դարձնել սոցիալիստական մրցությունը[1]։

Համաժողովրդական սոցիալիստական մրցությունը ընդգրկել է Սովետական Միության բոլոր արտադրական ձեռնարկությունները, կոլտնտեսություններն ու սովխոզները, մեծապես օգնում է կոմունիստական շինարարության կոնկրետ խնդիրների կատարմանը և ժողովուրդների համագործակցության հետագա զարգացմանը։ Սոցիալիստական մրցությունը որպես ազգերի ու ազգությունների համագործակցության կարևոր գործոններից մեկը, լայնորեն զարգանում է սովետական բանվոր դասակարգի անմիջական նախաձեռնությամբ։ Իր նվիրական աշխատանքով բանվոր դասակարգը օրինակ է հանդիսանում երկրի աշխատավորական զանգվածներին՝ նա ցույց է տալիս աշխատանքի կազմակերպման և համագործակցության այնպիսի օրինակներ, որոնցով ոգեշնչված՝ աշխատանքային նորանոր սխրագործություններ են կատարում նաև կոլտնտեսային գյուղացիությունը, մտավորականությունը, սովետական ամբողջ ժողովուրդը։

Գյուղատնտեսության արտադրությունը զարգացնելու համար սոցիալիստական մրցության մեջ են մտել Հայկական ՍՍՀ և Կիրգիզական ՍՍՀ գյուղատնտեսության աշխատողները։ Երկու եղբայրական հանրապետությունների գյուղատնտեսության աշխատողները պարտավորվեցին զգալիորեն ավելացնել գյուղատնտեսական մթերքների արտադրությունը,

[1] «Правда», 29 июля 1960.



ժամկետից շուտ կատարել գյուղատնտեսական մթերքների մթերումների ու գնումների պետական պլանները։

Կիրգիզական ՍՍՀ պատվիրակությունը եղավ Սովետական Հայաստանում և ծանոթացավ սոցիալիստական պարտավորության կատարման ընթացքին։ Եղբայրական ժողովրդի պատվիրակությունն իր դիտողությունների մեջ նշեց, որ Հայկական ՍՍՀ կոլտնտեսություններն ու սովխոզները բավարար չափով չեն օգտագործում անասնաբուծության հնարավորությունները։ Ընդունելով բարեկամական այդ դիտողությունը, Սովետական Հայաստանի կոլտնտեսականները հատուկ ուշադրություն դարձրին անասնաբուծության վրա և այդ բնագավառում ձեռք բերեցին լուրջ հաջողություններ։

Ավելի քան տասը տարի է, ինչ շարունակվում է այդ մրցությունը։ Այդ տարիների ընթացքում մրցակիցները կուտակել են աշխատանքի հարուստ փորձ, որը ուսանելի է եղբայրական մյուս հանրապետությունների գյուղատնտեսության աշխատողների համար։ Նրանց մրցությունը դուրս է եկել սոսկ մրցելու սահմաններից և դարձել եղբայրական համագործակցություն, որը բարերար ազդեցություն է ունենում գյուղատնտեսության մթերքների առատության համար մղվող պայքարի վրա։ Սովետական Կիրգիզիայում լայն ճանաչում է ստացել Սոցիալիստական աշխատանքի հայ հերոսների աշխատանքի փորձը։ Նրանց օրինակով բարձր բերքի համար ծավալված համաժողովրդական մրցության մեջ Կիրգիզիայում ծնվեցին և աճեցին սոցիալիստական դաշտերի շատ փառապանծ հերոսներ, որոնց սխրագործություններով իրավամբ հպարտանում են եղբայրական ժողովուրդները։

Սովետական Միության արդյունաբերության և գյուղատնտեսության առաջավորները մի մեծ բանակ են կազմում։ Այդ պանծալի բանակի մարտիկները օժտված են կոմունիզմի ժամանակաշրջանի մարդուն բնորոշ բոլոր հատկություններով՝ գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումներով զինվածություն, աշխատանքի և կոլեկտիվի նկատմամբ նվիրվածություն և այլն։ Սովետական երկրի այդ առաջավորները տեխնիկային տիրապետած մարդիկ են, նրանք մեծ վարպետությամբ տեխնիկան շարժման մեջ են դրել և այն կոմունիս-

տական շինարարության պրոցեսում մասսայաբար օգտագործում են ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում: Հայտնի է, որ երբ տեխնիկան գլխավորում են հմուտ և գործիմաց մարդիկ, այն կարող է և պետք է հրաշքներ գործի: Նրանք իրոք հրաշքներ են գործում: Կոմունիստական աշխատանքի կազմակերպման, սոցիալիստական մրցության ծավալման և ժողովուրդների համագործակցության գործում նրանք ցուցաբերում են խրախուսելի նախաձեռնություն: Համաժողովրդական սոցիալիստական մրցությունը հսկայական չափով օգնում է սովետական երկրի աշխատավորներին պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու գործին: Ռուս, ուկրաինացի, բելոռուս, ուզբեկ, ղազախ, վրացի, ադրբեջանցի, լատիշ, մոլդավ, հայ և մյուս ազգերի մարդիկ պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի ներքո, առանց ազգային խտրականության, եղբայրաբար օգնում են միմյանց, կազմակերպում սոցիալիստական մրցություն, որպեսզի էլ ավելի հզոր դառնա ՍՍՀՄ ժողովուրդների միասնական ընտանիքը, որպեսզի ամբողջ թափով առաջ ընթանա կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման գործը՝ բոլոր ազգերի ու ազգությունների վաղվա ավելի լավ, ավելի պայծառ օրվա համար: Պրոլետարական ինտերնացիոնալիզմի այս վեհ գաղափարն է, որ օրավուր ամրապնդում և ընդարձակում է ՍՍՀՄ ժողովուրդների սոցիալիստական համագործակցությունը:

Մոսկվայի և Լենինգրադի հերոսական բանվոր դասակարգի նախաձեռնությամբ սովետական բոլոր հանրապետություններում լայն թափ է ստացել հնգամյակը ժամկետից շուտ՝ մինչև 1970 թ. նոյեմբերի 7-ը կատարելու, Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակը արժանավայել նշանավորելու համար ծավալված սոցիալիստական մրցությունը: Սովետական Միության բոլոր ժողովուրդները, ռուս մեծ ժողովրդի օրինակով, աշխատանքային ու քաղաքական խանդավառությամբ կատարում և գերակատարում են ժողովրդական տնտեսության զարգացման պլանները: Ժամկետից շուտ կատարելով հնգամյա պլանը, սովետական ժողովուրդը առաջընթաց նոր



քայլ կկատարի կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման գործում:

Կոմունիզմ կառուցող սովետական ժողովուրդը մեծ սխրագործություններ է կատարում, որոնց մեջ առանձնահատուկ պարզությամբ երևան է գալիս սոցիալիստական ազգերի եղբայրական համագործակցության կենարար ուժը: Այսպես, ուկրաինական ժողովուրդը հարազատ երկրի բազմաթիվ հանրապետություններ, երկրամասեր, ազգային օկրուգներ, քաղաքներ և շատ բնակավայրեր է առաքում ածուխ, մետաղ, մեքենաներ, հաց և այլ արտադրանք: Սովետական Ուկրաինան իր հերթին մեքենաներ և հաստոցներ է ստանում Մոսկվայից, Լենինգրադից, Մինսկից, նավթ՝ Թաթարիայից և Բաշկիրիայից, ավտոմեքենաներ՝ Գորկուց, անտառանյութ՝ Կարելիայից, բամբակ՝ Միջին Ասիայի հանրապետություններից: Այս է սոցիալիստական համագործակցության փայլուն դրսևորումը, սրա մեջ է ՍՍՀՄ ժողովուրդների լենինյան բարեկամության վիթխարի ուժը:

Սովետական յուրաքանչյուր հանրապետություն պրոլետարական ինտերնացիոնալիզմի հաղթական դրոշի ներքո մաքուր սրտով իր նյութական ու հոգևոր արժեքները բաժանում է եղբայրական ժողովուրդներին, իսկ նրանք վերադարձնում են հարյուրապատիկը:

Սովետական Միության կոմունիստական կուսակցության ամենօրյա աշխատանքի շնորհիվ ՍՍՀՄ ժողովուրդները ապրում են եղբայրական միասնական մեծ գաղափարով՝ լիակատար ըմբռնելով նրա ուժն ու կարևորությունը: Սովետական յուրաքանչյուր հանրապետության և ամբողջ երկրի կողմից լուծվող խնդիրների ընդհանրության ըմբռնումը արդի էտապում մեծ է, ինչպես երբեք, իսկ դա խոշոր երաշխիք է կոմունիստական շինարարության նոր հաղթանակների համար: Սովետական ժողովրդի միասնական նպատակը ավելի ևս միաձուլում ու համախմբում է բոլոր ազգերին ու ազգություններին:

Սովետական հանրապետությունների աշխատավորները անկեղծորեն ուրախանում են միմյանց հաջողություններով և անհրաժեշտության դեպքում եղբայրական օգնության ձեռք

մեկնում իրար։ Այսպես, Բելոռուսիայի աշխատավորները չունեն մի այնպիսի գործ, որի հաջողությամբ անկեղծորեն չահագրգռված լինեն ռուսները ու ուկրաինացիները, ադրբեջանցիներն ու տաջիկները, վրացիներն ու ղազախները, հայերը, լատիշները և սովետական մյուս ժողովուրդները։

Սովետական Միության յուրաքանչյուր ժողովուրդ սոցիալիստական մրցության ընթացքում եղբայրական հանրապետության հոգսերն իր սրտին նույնքան մոտ է ընդունում, ինչպես իր սեփականը, իսկ դա արդյունք է սովետական մարդու կոմունիստական դաստիարակության։ Սովետական մարդու այդ նոր հատկությունն այժմ դրսևորվում է կոմունիստական շինարարության բոլոր բնագավառներում, և նա ավելի հզոր է դարձնում իր երկիրը, որն ստեղծված է նրա բոլոր ժողովուրդների եղբայրության, բարեկամության ու համագործակցության հիմունքով, սոցիալ-տնտեսական կարգի, քաղաքական սիստեմի ընդհանրության և միասնական սոցիալիստական գաղափարախոսության հիման վրա։

Սովետական երկրի եղբայրական ժողովուրդների համագործակցությունը շարունակում է աճել և ամրապնդվել կոմունիստական շինարարության ընթացքում։ Սոցիալիստական ամեն մի կառույց, որը կառուցվում է Սովետական Միության բազմազգ աշխատավորների միացյալ ջանքերով, դարձել է ազգերի միասնական ընտանիքի հետագա ամրապնդման երաշխիքը։ Կոմունիստական կուսակցության կողմից կոփված ժողովուրդների եղբայրությունը և սոցիալիստական համագործակցությունը, միասնական ընտանիքի խոր զգացմունքը դարձել են սովետական հասարակարգի ամրության երաշխիքը։

Սոցիալիստական և կոմունիստական շինարարության կես դարի փորձը համոզիչ կերպով ցույց է տալիս, թե հեղափոխությունը ինչպիսի՛ հսկայական եռանդ, ինքնուրույնություն և նախաձեռնություն է առաջ բերել ժողովրդի մեջ։

Աշխատավորական զանգվածների կենդանի ստեղծագործությունը, երկրին ավելի շատ և բարձր որակով արտադրանք տալու ձգտումը հանդիսանում են սոցիալիստական մրցության վառ արտահայտությունը և կոմունիզմի նյութատեխնիկական



բազայի ստեղծման հզոր գործոններից մեկը։ Կյանքն ամբողջապես հաստատեց Վ. Ի. Լենինի հանճարեղ կանխատեսությունն այն մասին, որ սոցիալիզմը ո՛չ միայն չի մարում մրցությունը, այլև ավելի է մասսայական դարձնում և ծավալում աշխատավորների նախաձեռնությունը։ Մրցության մասին լենինյան գաղափարը և սկզբունքները դարձել են մասսաների սեփականությունը։ Ներկա պայմաններում սոցիալիստական մրցությունը աշխատավորների ակտիվ և կազմակերպված պայքարն է՝ տնտեսական բարձր ցուցանիշների, նոր տեխնիկան արտադրության մեջ ներդնելու, աշխատանքի արտադրողականության բարձրացման, միջոցների խնայողության համար։ Տնտեսական նոր ռեֆորմը ավելի լայն ուղիներ է բացում մասսաների նախաձեռնության աճման համար և ուղղված է արտադրության շահավետությունն անընդհատ բարձրացնելու նպատակին։ Արտադրական ձեռնարկության պլանն այժմ նախատեսում է նաև այնպիսի կարևոր ցուցանիշ, որպիսին է արտադրանքի իրացումը, որից կախված է պարգևատրումների ֆոնդի չափը[1]։ Այս հանգամանքը բարձրացնում է յուրաքանչյուր մրցողի շահագրգռվածությունն արտադրանքի որակը բարձրացնելու գործում։

Սոցիալիստական մրցությունն անընդհատ ծավալվում է։ Այսպես, եթե 1964 թվականին մրցողների շարքում կային ավելի քան 30 միլիոն բանվորներ, ինժեներա-տեխնիկական աշխատողներ ու ծառայողներ, ապա 1967 թվականին դրանց թիվն ավելացավ և հասավ 65 միլիոնի։ ՍՍՀՄ արհեստակցական միությունների անմիջական նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ սոցիալիստական մրցությունը ծավալվեց հատկապես արտադրանքի որակի համար։ Մրցության որակական նոր վառ վկայությունն են կոմունիստական աշխատանքի շարժման զարգացման հաջողությունները, մի շարժում, որն այժմ միավորում է ավելի քան 35 միլիոն մարդ[2]։

Սոցիալիստական մրցության որակական կատարելագործման համար ՍՍՀՄ արհեստակցական միությունները հանդես

[1] Տե՛ս «Правда», 6 января 1968.

[2] Նույն տեղը։

են բերում նորանոր նախաձեռնություններ, որոնց շնորհիվ միավորվում են արտադրական բազում կոլեկտիվներ։

Սովետական արհմիությունները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, ամբողջ սովետական ժողովրդի հետ միասին, զգալիորեն ակտիվացնում են իրենց գործունեությունը սոցիալիստական մրցության կազմակերպման և ծավալման գործում։

Սոցիալիստական մրցության լենինյան դրոշը ավելի ու ավելի բարձր է ծածանվում սովետական երկրի վրա, աշխատանքային նորանոր սխրագործություններով ոգեշնչում է ժողովրդին կոմունիզմի հաղթանակի գործում։

Սոցիալիստական մրցության լենինյան գաղափարը և սկզբունքները սովետական ժողովրդի ստեղծագործական աշխատանքի համար փառահեղ ուղի են բացել։

## 6. ԱԶԳԵՐԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալիզմի կառուցման ընթացքում սովետական երկրի տնտեսության բուռն զարգացման զուգընթաց ստեղծվեց և ծաղկեց նաև սոցիալիստական կուլտուրան։

Սոցիալիզմի լիակատար ու վերջնական հաղթանակը լայն հնարավորություններ և հեռանկարներ բացեց ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների կուլտուրայի համակողմանի զարգացման համար։ Սոցիալիզմի հաղթանակը հնարավորություն ընձեռեց ո՛չ միայն հասնելու տնտեսական բարգավաճման, այլև հսկայական չափով զարգացնելու ու հարստացնելու ազգային կուլտուրաների գանձարանը։

Սովետական իշխանության տարիներին չտեսնված ծաղկման հասան սովետական ժողովուրդների գրականությունը, երաժշտությունը, կերպարվեստը, թատրոնը։ Դրան մեծապես նպաստեցին կուլտուրայի ու արվեստի նվաճումների փոխանակումը, պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարները, որոնք ՍՍՀՄ բազմազգ ժողովուրդների հարաբերությունների ամուր հիմքն են։



ՍՄԿԿ XXIII համագումարում նշվեց, որ ՍՍՀՄ-ում չկա ոչ մի հանրապետություն, որը ամենայն իրավամբ չհպարտանա գրականության ու արվեստի այս կամ այն բնագավառում ունեցած փայլուն նվաճումներով։ Այսպես օրինակ, ուկրաինական արդի գրական լեզվով տպագրված առաջին գրքի՝ Ի. Կոտլյարևսկու նշանավոր «Энеиды»-ի հրապարակման ժամանակից (1798 թ.) մինչև 1916 թվականը լույս է տեսել շուրջ տասը հազար գիրք, իսկ սովետական իշխանության հիսուն տարվա ընթացքում հրատարակվել է 240 հազար՝ երեք միլիոն երկու հարյուր հիսունհինգ հազար տպաքանակով[1]։

Սովետական և արտասահմանյան երկրների միլիոնավոր ընթերցողներին մատչելի են դարձել Տարաս Շևչենկոյի, Իվան Ֆրանկոյի, Լեսյա Ուկրաինկայի և ուկրաինական գրականության մյուս կլասիկների երկերը։ Առանց նրանց ստեղծագործությունների անհնար է պատկերացնել համաշխարհային գրականությունը։

Զարգանում են ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների արվեստը և գրականությունը։

1967 թվականին ՍՍՀՄ-ում կար 124 հազար մասսայական գրադարան կամ 14 անգամ ավելի, քան 1914 թվականին։ Գրադարանների գրքային ֆոնդը այդ ժամանակաշրջանում աճել է 117 անգամ։ Այժմ յուրաքանչյուր 100 բնակչին ընկնում է 471 գիրք և ամսագիր, 6 անգամ ավելի, քան 1914 թվականին։

ՍՍՀՄ-ում գործում է ավելի քան 40 կինոստուդիա։ Ամբողջ աշխարհի գիտնականների մեկ քառորդը բաժին է ընկնում ՍՍՀՄ-ին։

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան ունի 194 գիտական հաստատություն։ Գիտությունների ակադեմիաներ ունեն բոլոր միութենական հանրապետությունները[2]։

Միութենական հանրապետությունների գիտությունների ակադեմիաներն ունեն 320 գիտական հիմնարկներ, որ աշխա-

[1] «Правда», 22 декабря 1967.

[2] ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի գործունեության մանրամասնությունները շարադրված են **Г. А. Князев, А. В. Кольцов**. Краткий очерк истории Академии наук СССР աշխատությունում, М.—Л., 1964.

տում է շուրջ 80 հազար մարդ[1]։ Յուրաքանչյուր ակադեմիա ունի զարգացման ընդհանուր շատ գծեր, բայց բնութագրվում է նաև իր ինքնուրույնությամբ։ Այդ պայմանավորված է ազգային առանձնահատկություններով, հանրապետության յուրահատուկ պայմաններով, տնտեսությամբ։ Այսպես, օրինակ, Ադրբեջանական ՍՍՀ գիտությունների ակադեմիան իր գիտնականների հիմնական ուժերը կենտրոնացրել է նավթի հանույթի և վերամշակման հետ կապված կոմպլեքս հարցերի ուսումնասիրության և լուծման վրա։

Ղազախական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի աշխատողները հիմնականում հետազոտում են հանքային ռեսուրսները։

Ուկրաինական ՍՍՀ գիտնականները լուրջ հաջողություններ են ձեռք բերել կիբեռնետիկայի բնագավառում։ Ուզբեկստանում հսկայական աշխատանք է կատարված կենսաբանական և քիմիական գիտությունների բնագավառում։

Վերջին տարիներս միութենական հանրապետությունների միջև ամրապնդվել են ո՛չ միայն տնտեսական կապերը, այլև զգալիորեն ընդլայնվել է բազմազան համագործակցությունը կուլտուրայի, գիտության ասպարեզում։ Խրախուսելի ավանդույթ են դարձել Ուկրաինայի, Հայաստանի, Մոլդավիայի, Վրաստանի, Ադրբեջանի պատմաբանների համատեղ գիտական նստաշրջանները, որոնք նշանակալից դեր խաղացին սոցիալիստական ազգերի կուլտուրական համագործակցության բնագավառում։

Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի հնագետները ստեղծել են «Անդրկովկասի հնագիտական ատլաս»-ը, պատմաբանները հրատարակել են Անդրկովկասի կոմունիստական կուսակցության պատմության, Անդրկովկասում սովետական իշխանության հաստատման վերաբերյալ աշխատություններ[2], որոնք ժողովուրդների կուլտուրական համագործակցության լավագույն օրինակներ են։

[1] «Коммунист», 18 января 1968, Ереван.

[2] История Коммунистической организации Закавказья, 1967, Тбилиси.



ՍՍՀՄ-ում հաղթանակեց կուլտուրական հեղափոխությունը, որ օրինաչափ երևույթ էր։ Կուլտուրական հեղափոխությունը սովետական ժողովրդի կյանքում առաջ բերեց մեծ փոփոխություններ։ Բավական է ասել, որ երկրի 767 բուհերում սովորում է 4123 հազար ուսանող, գրեթե 33 անգամ շատ, քան Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին և երեք ու կես անգամ ավելի, քան այժմ Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և ԳՖՀ-ն միասին վերցրած։ Սովետական երկրում ներկայումս 20 միլիոն քաղաքացիներ ունեն բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն։

Եթե ցարական Ռուսաստանում հանրակրթական դպրոցներում սովորում էին ինն և կես միլիոն երեխաներ, դպրոցներում սովորող երեխաների քանակը 1968 թվականին ավելի քան 48 միլիոն է, որոնց սովորեցնում և դաստիարակում են 2,5 միլիոն ուսուցիչներ[1]։

Կուլտուրական հեղափոխությունը հսկայական արդյունքներ է տվել ցարական Ռուսաստանի նախկին ազգային ծայրամասերի տերիտորիաներում։ Բազմաթիվ փոքր ժողովուրդներ մինչև հեղափոխությունը չունեին գիր ու գրականություն։ Կուլտուրական հեղափոխության մեծագույն արդյունքներից մեկն էլ այն է, որ մերձենալով սովետական հասարակության սոցիալական տարբեր խմբերը, չքանում է ֆիզիկական և մտավոր աշխատանքի միջև գոյություն ունեցող էական տարբերությունը։ Հաղթանակած սոցիալիզմի պայմաններում ժողովուրդները հանդես են գալիս իրենց սոցիալիստական կուլտուրայով և մարդկային նոր հարաբերություններով։

Ժողովուրդների բարեկամության հետագա զարգացման համար բազմազան գործունեություն են ծավալում Սովետական Միության ստեղծագործական միությունները և կազմակերպությունները։ ՍՍՀՄ ճարտարապետների, ժուռնալիստների, կինեմատոգրաֆիայի, կոմպոզիտորների, գրողների, նկարիչների միությունները և միութենական հանրապետությունների նրանց բաժանմունքներն ու թատերական ընկերությունները բացառիկ ջանասիրությամբ գործում են հանուն սովետական

[1] «Известия», 21 января 1968.

կուլտուրայի համակողմանի զարգացման, հանուն ժողովուրդների համագործակցության ընդարձակման։

Սովետական երկրում հրատարակվում է մոտ 8 հազար անուն թերթ, ավելի քան 4 հազար անուն ամսագիր։ Սովետական իշխանության տարիներին հրատարակվել է 31 միլիարդ կան իշխան գիրք՝ 140 տարբեր լեզուներով, այդ թվում ՍՍՀՄ 89 ժողովուրդների լեզուներով[1]։ Սովետական գրականության ու արվեստի հաջողությունները մեծ են, որոնք ամենից առաջ արդյունք են այն բանի, որ սոցիալիստական կուլտուրան հանդիսանում է կոմունիստական շինարարության անբաժանելի մասը։ Սովետական ժողովրդի կուլտուրան ճանաչում է գտել աշխարհի բոլոր մայրցամաքներում։ Սովետական երկրի գրականության ու արվեստի գաղափարական հարուստ բովանդակությունը, հումանիստական ոգին, իդեալները, գեղարվեստական բարձր արժանիքները նրանց հռչակ են բերել ամբողջ աշխարհում,— գրում է «Պրավդա» թերթը։ Սովետական առաջավոր կուլտուրան համակողմանիորեն զարգանում է արդի համաշխարհային առաջադիմական ուժերի հետ սերտ համագործակցության մեջ։ Այդ համագործակցությունում սովետական բազմազգ գրականության ու արվեստի ներկայացուցիչները միաժամանակ հանդես են գալիս որպես ժողովուրդների բարեկամության, խաղաղության ու դեմոկրատիայի, ազգային ու սոցիալական ազատագրության վեհ գաղափարների մարտնչողներ։ ՍՍՀՄ բազմազգ ժողովուրդները ավելի մեծ հետաքրքրություն են հանդես բերում ինչպես համաշխարհային կուլտուրայի, այնպես և ՍՍՀՄ ազգերի գեղարվեստական արժեքների նկատմամբ։ Դրա լավագույն ապացույցներից մեկն այն է, որ սովետական հանրապետություններում մեծ ժողովրդականություն են վայելում սոցիալիստական ազգերի ճարտարապետությունը և գրականությունը, որոնք՝ սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում և կոմունիստական շինարարության պրոցեսում, փոխադարձ ազդեցություն են ունենում և հարստացնում Սովետա-

[1] Թերթերի և գրքերի հրատարակությունների վերաբերյալ տվյալները վերցված են «Печать СССР за 50 лет» աշխատությունից, որը լույս է տեսել ռուսերեն լեզվով, Մոսկվայում 1967 թ.։



կան Միության ազգերի ու ազգությունների՝ բովանդակությամբ սոցիալիստական, ձևով ազգային կուլտուրան, նրանց ստեղծագործական ու գաղափարական ընդհանրությունը, պրոլետարական ինտերնացիոնալիզմի վեհ գաղափարը։

Վերջապես, ուշագրավ է նաև այն, որ վերջին տարիներս միութենական հանրապետություններում, մարզերում և ազգային օկրուգներում ավանդաբար անց են կացվում եղբայրական ժողովուրդների կուլտուրաների տասնօրյակներ։ Այսպես, Հայաստանում կազմակերպվեցին ռուսական երաժշտության շաբաթը, ուկրաինական գրականության ու արվեստի տասնօրյակը, սիբիրցիները 1966 թվականի ամռանը մեծ հանդիսավորությամբ ընդունեցին Էստոնիայի արվեստի վարպետներին։ Ուզբեկստանում, Մոլդավիայում, Ադրբեջանում, Լիտվայում, Էստոնիայում և միութենական մյուս հանրապետություններում և ազգային օկրուգներում տեղի ունեցան եղբայրական ժողովուրդների գրականության և արվեստի շաբաթներ։

Ուլյանովսկում մեծ հաջողությամբ անցան լենինական կուլտուրայի օրերը, որ վերածվեց երկու եղբայրական ժողովուրդների բարեկամության ցույցի։

Սովետական Կիրգիզիայում ավանդաբար ընդունում են եղբայրական հանրապետությունների արվեստի և գրականության ներկայացուցիչների տաղանդավոր կոլեկտիվներին, որոնց ելույթներն անցնում են մեծ հաջողությամբ։ Կիրգիզներն իրենց սրտին հարազատ համարեցին և ջերմորեն ընդունեցին ռուսների, ուկրաինացիների, բելոռուսների, էստոնացիների, ղազախների և ՍՍՀՄ մյուս ազգերի երաժշտությունը։

Վերջին մի քանի տարում Ուզբեկստանում, Ղազախստանում, Լիտվայում, Լատվիայում, Էստոնիայում, Վրաստանում, Հայաստանում տեղի ունեցան ուկրաինական արվեստի և գրականության տասնօրյակներ։ Տաղանդավոր ուկրաինական ժողովրդի արվեստի գործիչները եղբայրական հանրապետությունների քաղաքներում և գյուղերում մեծ վարպետությամբ ցուցադրեցին այն հաջողությունները, որոնք ձեռք են բերվել սոցիալիստական կուլտուրայի բնագավառում։ Ուկրաինական արվեստն իր ժողովրդայնությամբ և ինտերնացիոնալ գաղափարներով ամենալայն չափով տարածվում է ո՛չ միայն ՍՍՀՄ

*ժողովուրդների շրջանում, այլև արտասահմանյան երկրնե-րում: Հենց այդ մասին են խոսում ուկրաինական արվեստի փայլուն հաջողությունները Հարավսլավիայում, Բուլղարիայում, Բելգիայում և արտասահմանյան ուրիշ երկրներում, որտեղ հանդիսատեսներն ու արվեստագետները բարձր գնահատեցին ուկրաինացի եղբայրների սոցիալիստական հարուստ ար-վեստը:*

*Սովետական պետության գոյության ընթացքում ուկ-րաինական ժողովրդի սոցիալիստական կուլտուրայի զարգաց-մանը նպաստել են ՍՍՀՄ ժողովուրդների կուլտուրաների փո-խազդեցությունը, ինտերնացիոնալ գաղափարների խոր ազ-դեցությունը: Ուկրաինական կուլտուրան ծաղկում է ոչ թե կղզիացած ձևով, այլ սովետական երկրի բոլոր ազգերի ու ազ-գությունների կուլտուրաների հետ սերտ համագործակցության մեջ:*

*ՍՍՀՄ ժողովուրդների արվեստի և գրականության տասն-օրյակներ տեղի ունեցան մեր հայրենիքի մայրաքաղաք Մոսկ-վայում: Կոմունիստական շինարարության պրոցեսում հոգևոր կուլտուրայի ասպարեզում կատարվող այս միջոցառումները ունեն հսկայական նշանակություն: Նրանք հարստացնում են ՍՍՀՄ ազգերի ու ազգությունների կուլտուրան և ծանոթացնում աշխատավորական լայն զանգվածներին այն հաջողություննե-րի հետ, որոնք ձեռք են բերվել այդ բնագավառում: Այդ մի-ջոցառումները ապացույց են հանդիսանում սովետական բազմ-ազգ ժողովուրդների ազգային կուլտուրայի հետագա ծաղկ-մանը և սովետական կուլտուրայի լավագույն նվաճումները ներդնում ՍՍՀՄ ժողովրդի հոգևոր կյանքում՝ հարստացնելով ամբողջ աշխարհի մարդկության առաջադիմական կուլտուրա-յի գանձարանը: Այսպիսի միջոցառումները կուլտուրայի բնագավառում նաև ապահովում են սովետական ազգերի ու ազգությունների սերտ եղբայրական համագործակցությունն ու փոխադարձ օգնությունը: ՍՍՀՄ-ում սոցիալիզմի լիակա-տար ու վերջնական հաղթանակը վերացրեց մեր երկրի բոլոր ժողովուրդների հոգևոր հետամնացությունը և լայն ճանապարհ բացեց մարդկային մտածողության ու ստեղծագործության տի-տանական ուժի զարգացման համար: Սովետական մարդկանց*



*հոգևոր և քաղաքական աճը ցույց տվեց, որ սոցիալիստական ու կոմունիստական շինարարության ժամանակաշրջաններում ոչ թե ազգերն ու նրանց լեզուները, սովորույթներն ու ա-վանդությունները քայքայվում են, ինչպես ասում են կոմունիզ-մի թշնամիները, այլ վերափոխվում, կատարելագործ-վում և մերձենում են միմյանց, և ամեն մի ազգի կուլտուրա-կան գանձարանը հարստանում է ինտերնացիոնալ բնույթի նոր ստեղծագործություններով: Իսկ այդպիսի պայմաններում, ան-շուշտ, ազատորեն զարգանում են ժողովուրդների բարեկամու-թյունն ու փոխօգնությունը:*

*Ազգային կուլտուրաների եղբայրական համագործակցու-թյունը գնալով ընդարձակվում է: Այն ընդգրկում է ավելի լայն մասշտաբներ: Եթե մինչև վերջին տարիները ազգային կուլ-տուրաների համագործակցությունը տեղի էր ունենում միայն միութենական հանրապետություններում, ապա այժմ՝ կոմու-նիստական շինարարության տարիներին, սովորություն է դար-ձել նաև սոցիալիստական երկրների գրականության ու ար-վեստի տասնօրյակների կազմակերպումը Սովետական Միու-թյան հանրապետություններում և մարզերում: Սոցիալիս-տական երկրների արվեստի և գրականության տասնօրյակների կազմակերպումը ՍՍՀՄ-ում դառնում է ավանդույթ և իր վրա բևեռում լայն հասարակայնության ուշադրությունը: Այն դրս-ևորվում է որպես ժողովուրդների եղբայրական բարեկամության և սոցիալիստական համագործակցության կատարելագործված և արդյունավետ ձևերից մեկը կուլտուրայի բնագավառում:*

*Հունգարիայի կուլտուրայի վարպետները մեծ հաջողություն ունեցան Ուկրաինայում: Նրանք իրենց ժողովրդի արվեստը ծանոթացրին Սովետական Ուկրաինայի աշխատավորներին: Հունգարական արվեստի ներկայացուցիչները միաժամանակ մոտիկից ծանոթացան Սովետական Ուկրաինայի արվեստին և գրականությանը: Դրա հետ միասին երկու ժողովուրդների կուլ-տուրաների միջև ստեղծվեց սերտ համագործակցություն, որը կոմունիստական շինարարության պրոցեսում ավելի ևս կա-տարելագործվում և ընդարձակվում է:*

*Մոնղոլական կուլտուրայի օրերը Բելոռուսիայում վերած-*

վեցին եղբայրական ժողովուրդների բարեկամության ցույցի և վճռական նշանակություն ունեցան նրանց փոխհարստացման ու մերձեցման, նրանց ինտերնացիոնալ կապի ամրապնդման համար։

1966 թ. ամռանը Ուզբեկստանում հանդես եկան Բուլղարիայի կուլտուրայի գործիչները։ Ուզբեկ ժողովուրդը մեծ խանդավառությամբ ընդունեց Բուլղարիայի արվեստի գործիչներին և նրանց միջոցով իր անկեղծ սերն ու հարգանքը արտահայտեց բուլղար ժողովրդի նկատմամբ, այն աշխատավորական ժողովրդի նկատմամբ, որը բազմազան կապերով սերտ միասնության մեջ է գտնվում ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների հետ։ Բուլղարիայի բանվոր դասակարգը, աշխատավոր գյուղացիությունը և ժողովրդական մտավորականությունը անչափ բարձր են գնահատում Սովետական Միության բարեկամությունը և ամեն կերպ ամրապնդում ու զարգացնում են այն, գիտակցելով, որ նոր կյանքի համար այդ բարեկամությունն ու համագործակցությունն ունեն վճռական նշանակություն։

Բուլղարիայի կուլտուրայի օրերը Ուզբեկստանում և ՍՍՀՄ մյուս հանրապետություններում բուլղար բարեկամներին պարզորոշ ցույց տվեցին, որ սովետական երկրում պաշտպանվում են յուրաքանչյուր ժողովրդի առաջադիմական տրադիցիաները, դրանք դառնում են սովետական երկրի բանվորների, կոլտնտեսականների և մտավորականության սեփականությունը, որ կոմունիստական շինարարության ընթացքում զարգանում են ազգերի միասնական հեղափոխական տրադիցիաները, որոնք կարևոր նշանակություն ունեն կոմունիզմ կառուցողների ինտերնացիոնալ դաստիարակության համար։

1966 թվականի սեպտեմբեր ամսին Սովետական Հայաստանում արտակարգ հանդիսավորությամբ տեղի ունեցավ չեխոսլովակյան կուլտուրայի տասնօրյակը։ Հայաստան էին եկել չեխոսլովակյան ժողովրդի պատվիրակները։ Նրանք Սովետական Հայաստանում բազմաթիվ քաղաքների, բանվորական ավանների, գործարանների, կոլտնտեսությունների աշխատավորներին, մտավորականությանը, ուսանողներին ո՛չ միայն հաղորդեցին իրենց ազգային կուլտուրան, այլև մոտիկից ծանոթացան Հայկական ՍՍՀ էկոնոմիկայի և արվեստի վիթխա-



րի հաջողություններին։ Նրանք Հայաստանի օրինակով ականատես եղան Սովետական Միության կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության հաղթանակին։ Նրանք տեսան, թե ինչպես ծաղկում է Սովետական Հայաստանը, զարգանում են նրա էկոնոմիկան, գիտությունն ու ազգային կուլտուրան։

Սովետական Հայաստանի աշխատավորներն անկեղծորեն ուրախացան եղբայրական Չեխոսլովակիայի կուլտուրայի վիթխարի նվաճումներով։ Ողջունելով իրենց չեխ ու սլովակ եղբայրներին, հայ ժողովրդի որդիները միաժամանակ ընդգծեցին, որ սովետական մարդիկ խոր սեր են տածում դեպի չեխոսլովակյան ժողովուրդը։ Դա անկեղծ զգացում է։ Պատմական ամեն փորձությունն է՛լ ավելի է ամրապնդել ազատատենչ ժողովուրդների բարեկամությունը։ Բրատիսլավայի գեղատեսիլ բարձունքի վրա ստեղծվեց եղբայրական գերեզմանը, Սլավին լեռան կատարին չեխոսլովակյան երախտագետ ժողովուրդը սովետական ազատարար ռազմիկների գերեզմանի վրա փառավոր մի հուշարձան կանգնեցրեց, որի վրա գրված է.

Ընկեր, բարեկամ և հարազատ.
Դու, որ այստեղ ես պառկած,
Քեզնից վանիր ցավն ու տանջանքը,
Թող քո կաթիլ արցունքը չհիշեցնի
Մեր գերեզմանի մասին։

Մարդուն արժանավայել
Կյանքի համար,
Քո պայծառ, երջանիկ հայրենիքի համար
Մենք մեր կյանքը տվեցինք[1]։

Սոցիալիստական Չեխոսլովակիայի տնտեսության և կուլտուրայի նվաճումներին, նրա հերոս մարդկանց նոր կյանքին նվիրված և հայերեն լեզվով հրատարակվեց մի շարք գրքեր՝ 250 հազար օրինակ ընդհանուր տպաքանակով։

---

1 «Սովետական Հայաստան», 18 սեպտեմբերի 1966։

Հայաստանում չեխոսլովակյան կուլտուրայի տասնօրյակի հանդիսավոր բացման մասնակիցները Չեխոսլովակիայի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեին հղած իրենց նամակում գրել են. «Հայ ժողովրդին հայտնի են իրենց ազատության և անկախության համար Չեխոսլովակիայի ժողովուրդների պայքարի հերոսական պատմությունը, նրանց անձնազոհ աշխատանքը հանուն սոցիալիզմի կառուցման, որ իր վառ արտացոլումն է գտել գրականության և արվեստի չեխական ու սլովակյան գործիչների ստեղծագործություններում, գործիչներ, որոնք երգել են խաղաղության, բարեկամության, եղբայրության գաղափարները:

... Հայաստանում բացվող չեխոսլովակյան կուլտուրայի տասնօրյակը հանդիսանում է ժողովուրդների բարեկամության և եղբայրության լենինյան գաղափարների հաղթանակի նոր դրսևորումը, գաղափարներ, որոնցով ղեկավարվում է սոցիալիստական համագործակցության երկրների քաղաքականությունը»[1]:

Չեխոսլովակիայի կուլտուրայի տասնօրյակը դարձավ Սովետական Միության և Չեխոսլովակիայի մեծ, անխախտ բարեկամության և համագործակցության հետագա զարգացման լավագույն երաշխիքներից մեկը: Նույն թվականի հոկտեմբերին տեղի ունեցավ Սովետական Հայաստանի կուլտուրայի տասնօրյակը Չեխոսլովակիայում: Այդ կապակցությամբ նոր քայլեր կատարվեցին եղբայրական ժողովուրդների կուլտուրաների համագործակցության զարգացման ուղղությամբ: Պրագայում շքեղ հրատարակությամբ լույս տեսան հայ ժողովրդի մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարին» և նրա արձակ երկերը: Չեխ ժողովուրդը հատուկ սեր է տածում հայ ժողովրդի, նրա սոցիալիստական կուլտուրայի նկատմամբ: Տարբեր ժամանակներում Չեխոսլովակիայում թարգմանվել և լույս են տեսել Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն, Եղիշե Չարենցի «Հատընտիր»-ը, Նար-Դոսի, Բակունցի, Նաիրի Զարյանի և ուրիշների առանձին ստեղծագործությունները:

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», 18 սեպտեմբերի 1966:



Հայաստանում չեխոսլովակյան կուլտուրայի տասնօրյակը էլ ավելի նպաստեց այդ ժողովուրդների փոխադարձ ճանաչմանը, փոխըմբռնմանը և եղբայրական սիրո դրսևորմանը: Հայաստանում չեխոսլովակյան կուլտուրայի տասնօրյակը լուրջ ավանդ էր ժողովուրդների բարեկամության և եղբայրության հետագա զարգացման համար:

Սոցիալիստական երկրների կուլտուրաների տասնօրյակներ տեղի ունեցան Վրաստանում, Ադրբեջանում, Լատվիայում, Կիրգիզիայում, Տաջիկստանում, սովետական մյուս հանրապետություններում, ուր աշխատավորները մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին եղբայրական ժողովուրդների սոցիալիստական կուլտուրաների նկատմամբ: Սոցիալիստական կուլտուրան իր էությամբ ինտերնացիոնալ է: Սովետական մարդիկ ամբողջ հոգով ողջունում են իրենց բարեկամների ստեղծագործական ամեն մի հաջողություն: ՍՍՀՄ-ում և սոցիալիստական մյուս երկրներում հաճախակի կազմակերպվում են միջազգային կոնֆերանսներ և ցուցահանդեսներ, անց են կացվում բարեկամության միամսյակներ, գրքերի ու կինոնկարների շաբաթներ, երաժշտական ֆեստիվալներ, թատերական կոլեկտիվների ելույթներ: Սիստեմատիկաբար հրավիրվում են միջազգային համագումարներ, տեղի են ունենում գիտության ու արվեստի գործիչների պատվիրակությունների փոխանակում, գիտական աշխատողների գործուղումներ և այլն: Այդ բոլորը նպաստում են սոցիալիստական կուլտուրայի զարգացմանը: Կուլտուրական համագործակցությունը սոցիալիստական երկրների ժողովուրդների բարեկամության և միասնության ամրապնդման միջոց է: Արվեստի և գրականության տասնօրյակները մեծապես նպաստեցին ազգերի կուլտուրական գանձարանը հարստացնելու գործին: Նրանք վճռական նշանակություն ունեցան ՍՍՀՄ ժողովուրդների՝ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի զարգացման, նրանց հետագա փոխհարստացման և մերձեցման գործում: Կուլտուրայի տասնօրյակների կազմակերպումը նպաստեց ժողովուրդների բարեկամության, խաղաղության ու դեմոկրատիայի գաղափարների տարածմանը ամբողջ աշխարհում:

ՍՍՀՄ ժողովուրդների գրականության և արվեստի գործիչները հարստացնում են սոցիալիստական ազգերի համար ընդհանուր ինտերնացիոնալ կուլտուրան և դրանով իսկ օգնում կոմունիստական կուսակցությանը, սովետական մարդկանց՝ պայքարելու նացիոնալիզմի և շովինիզմի ամեն մի արտահայտության, ազգային սահմանափակության դեմ։

ՍՄԿԿ ծրագրում ասված է, թե որքան սերտ լինի ազգերի շփումը և որքան բարձր լինի համաժողովրդական խնդիրների ըմբռնումը, այնքան հաջողությամբ կհաղթահարվեն տեղայնության և ազգային եսամոլության դրսևորումները։ ՍՄԿԿ-ն իր առջև խնդիր է դրել՝ «հասնել ՍՍՀՄ ժողովուրդների սոցիալիստական կուլտուրայի հետագա բազմակողմանի ծաղկման։ Կոմունիստական շինարարության լայն թափը և կոմունիզմի գաղափարախոսության նոր հաղթանակները հարստացնում են ՍՍՀՄ ժողովուրդների՝ բովանդակությամբ սոցիալիստական, ձևով ազգային կուլտուրան։ Ամրապնդվում է ազգերի և ազգությունների գաղափարական միասնությունը, նրանց կուլտուրաների մերձեցումը»[1]։

Կոմունիստական կուսակցությունը առանձնակի աշխատանք է կատարում սովետական բոլոր ժողովուրդների ընդհանուր ինտերնացիոնալ կուլտուրան զարգացնելու համար։ Կուսակցության այդ վիթխարի աշխատանքի շնորհիվ կոմունիստական շինարարության ընթացքում հաջողությամբ կենսագործվում են ինտերնացիոնալիզմի սկզբունքները ազգային հարաբերությունների ասպարեզում։ Կուսակցության նման գործունեության շնորհիվ այժմ ավելի է ամրապնդվել ժողովուրդների բարեկամությունը, որը սոցիալիզմի կարևորագույն արդյունքներից մեկն է և որի հետագա զարգացումը համաժողովրդական գործ է, ունի համապետական խոշոր նշանակություն։

Ժողովուրդների սոցիալիստական կուլտուրաների զարգացման ասպարեզում մեծ է ռուսական կուլտուրայի դերը։ Ռուսական առաջավոր կուլտուրան հագեցած է հայրենասիրության, արիության, բարեկամության, ազատության և անկախության

[1] ՍՄԿԿ ծրագիրը, էջ 137—138։



վեհ գաղափարներով։ Ռուս գրականության ու արվեստի գաղափարական հարուստ բովանդակությունը, հումանիստական ոգին, ազնիվ իդեալները, գեղարվեստական բարձր արժեքները իրենց ազդեցությունն են ունենում ՍՍՀՄ և սոցիալիստական երկրների կուլտուրաների բազմակողմանի ծաղկման վրա։ Հատկապես մեծ է ռուսաց լեզվի դերը սոցիալիստական ազգերի կուլտուրայի զարգացման գործում։ Այդ լեզվով են գրված մեծ Լենինի հանճարեղ ստեղծագործությունները։ Նույն այդ լեզվով ստեղծվում են ռուսական գեղարվեստական գրականություն, գիտական-փիլիսոփայական աշխատություններ, որոնք համաշխարհային կուլտուրայի պատմության մեջ են մտնում որպես նրա գոհարներից մեկը։

Ռուսաց լեզուն ռուս ժողովրդի հզոր, ճշմարիտ, ազատ և հարուստ լեզուն է։ Ռուսաց լեզուն աչքի է ընկնում իր գեղեցկությամբ, արտակարգ արտահայտչականությամբ, ամրությամբ, բարեհնչությամբ, հարուստ բովանդակությամբ և անսահման բազմազան նրբերանգներով։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից շատ առաջ Վ. Ի. Լենինը մերկացրեց լիբերալների քաղաքականությունը ժողովրդական կրթության ասպարեզում, նշելով, որ մեր կուսակցությունն ամենից առաջ ցանկանում է, որպեսզի առանց ազգերի տարբերության բոլոր ճնշված դասակարգերի միջև հաստատվեն ավելի սերտ հարաբերություններ ու եղբայրական միասնություն, որպեսզի Ռուսաստանի յուրաքանչյուր բնակիչ հնարավորություն ունենա ազատ, առանց հարկադրանքի սովորել ռուսական մեծ ու հզոր լեզուն։ Սակայն ինքնակալության պայմաններում անհնար էր այդ, որովհետև ծայրամասերում հարկադրաբար կիրառվում էր ցարիզմի՝ ռուսականացման քաղաքականությունը։ Դեռևս այդ ժամանակ Վ. Ի. Լենինը նշեց, որ ցարիզմը տապալելուց հետո ռուսաց լեզուն կդառնա բոլոր ժողովուրդների սիրելին։ Եվ իսկապես, Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո Սովետական Միության ժողովուրդների համար ռուսաց լեզուն ո՛չ միայն դարձավ սիրելի, այլև նրանց շփման և համագործակցության հզոր միջոցը։ Նա դարձավ բոլոր դեմոկրատական առաջադիմական մարդկանց սիրելի լեզուն, երկրագնդի բոլոր

ժողովուրդների խաղաղության ու աշխատանքի, ազատության և իրավահավասարության, եղբայրության և երջանկության արտահայտիչը:

Սովետական Միության ազգային հանրապետությունների գեղարվեստական գրականության թարգմանությունը ռուսերեն լեզվով հնարավորություն է ստեղծում, որ ազգային գրողների երկերը դուրս գան իրենց հանրապետության շրջանակներից և դառնան միլիոնավոր մարդկանց սեփականությունը: Ռուսաց լեզվի միջոցով ազգային հանրապետությունների շատ գրողների գեղարվեստական գործերը մատչելի են դառնում ո՛չ միայն ՍՍՀՄ ժողովուրդներին, այլև աշխարհի առաջադեմ մարդկանց:

Կոմունիստական շինարարության պրոցեսում ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների լեզուները զարգանում և միմյանց հարստացնում ու լրացնում են:

Մայրենի լեզվի հետ մեկտեղ,— ասված է ՍՄԿԿ ծրագրում,— ռուսաց լեզուն կամովին սովորելը դրական նշանակություն ունի ազգերի և ազգությունների համար, քանի որ նա նպաստում է փորձի փոխանակմանը և այն բանին, որ յուրաքանչյուր ժողովուրդ հաղորդակից է լինում ՍՍՀՄ մյուս բոլոր ժողովուրդների գիտության ու կուլտուրայի նվաճումներին և համաշխարհային կուլտուրային: Արդի պայմաններում ռուսաց լեզուն փաստորեն դարձել է ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների ազգամիջյան հաղորդակցման և համագործակցության ընդհանուր լեզու:

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը էլ ավելի է ամրապնդում ՍՍՀՄ ժողովուրդների տնտեսական և կուլտուրական կապերը, նրանց եղբայրական բարեկամությունն ու սոցիալիստական համագործակցությունը: Դրա շնորհիվ լիապես արդյունավետ են դառնում նյութական և հոգևոր հարստությունների փոխանակումը ազգերի ու ազգությունների միջև, լայն պայմաններ են ստեղծվում ազգերի սոցիալական միասնությունը ամրացնելու, կուլտուրայի, բարոյականության ու կենցաղի կոմունիստական ընդհանուր գծերի զարգացման համար, դրան զուգընթաց արտակարգ կեր-



պով ամրանում են նրանց փոխադարձ վստահությունը և եղբայրական բարեկամությունը:

Ազգերի ու ազգությունների սոցիալիստական կուլտուրաների համագործակցության զարգացման ու հարստացման համար կարևոր նշանակություն են ստացել նաև կուլտուրայի և գիտության առանձին գործիչների մեծարումն ու նրանց գործունեության նշումը ՍՍՀՄ-ում և համաշխարհային մասշտաբով: Այդ առումով բացառիկ նշանակություն ունեցան «Ասք Իգորի ճակատամարտի մասին», «Կալևալայի» ու «Մանասի», «Նարտերի», «Սասունցի Դավթի» և ժողովրդական հանճարի ուրիշ շատ ստեղծագործությունների լայն պրոպագանդան: Այդ անմահ ստեղծագործությունները սովետական մարդկանց հոգևոր կյանքի մեջ են մտնում որպես լավագույն ժառանգություններ:

Սովետական ժողովուրդը թանկ է գնահատում Նավոյիի ու Նիզամիի, Պուշկինի ու Շևչենկոյի, Սայաթ-Նովայի ու Դոնելայտիսի անմահ ստեղծագործությունները, որոնք համաշխարհային դասական գրականության անմահ գործերից են և որոնցով այժմ դաստիարակվում են միլիոնավոր մարդիկ:

1962 թվականին նշվեց հայ գրերի ստեղծող և հայկական մատենագրության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը: Դա հայ գրի համաժողովրդական տոնն էր, որը նշեցին Սովետական Միության բոլոր ժողովուրդները, և այն վերածվեց ժողովուրդների բարեկամության մեծ ցույցի: Բոլոր ժողովուրդները նշեցին Մեսրոպ Մաշտոցի հսկայական ծառայությունները հայ մշակույթի բնագավառում:

1962 թ. Սովետական Միությունում նշվեց ադրբեջանական գրող, լուսավորիչ Միրզա Ֆաթալի Ախունդովի ծննդյան 150-ամյակը, որը մեծապես նպաստեց ժողովուրդների կուլտուրաների մերձեցմանը և հարստացմանը:

Սովետական երկրի բոլոր ժողովուրդները և ամբողջ առաջադեմ մարդկությունը 1966 թ. աշնանը մեծ հանդիսավորությամբ տոնեցին վրաց ժողովրդի մեծ զավակ Շոթա Ռուսթավելու ծննդյան 800-ամյակը: Նշելով այդ մեծ տոնը, ցույց տվեցին Ռուսթավելու ստեղծագործությունների, մասնավորապես նրա «Ընձենավորը» անմահ պոեմի հսկայական նշանա-

կությունը, ընդգծվեց միջնադարյան խավարամտության գաղափարախոսության ժամանակաշրջանում նրա հումանիզմի ու մարդասիրության արգասավոր գաղափարների վեհությունը, սիրո ու բարեկամության անկեղծ զգացմունքները[1]։

Հռչակավոր գեղանկարիչ Մարտիրոս Սարյանը գրել է. «Սատեղծելով իր մշակույթը, ամեն մի ժողովուրդ իր ավանդն է ներդնում համամարդկային կուլտուրայի մեջ, հարստացնում է այն։ Յուրաքանչյուր ազգային կուլտուրայի ինքնատիպությունն ու բովանդակությունը անբաժանելի է եղբայրական ժողովուրդների կուլտուրաներից և համայն մարդկության առաջադիմական կուլտուրայից։ Ռուսաստանի և Ուկրաինայի, Վրաստանի և Ադրբեջանի արվեստի վարպետները այցելում են մեր հանրապետություն ո՛չ միայն որպես հյուրեր։ Նրանց արվեստը նույնպես դարձել է մեր ժողովրդի սեփականությունը»[2]։

Սովետական պետության ու կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ համաշխարհային ասպարեզ են մտնում ՍՍՀՄ ժողովուրդների արվեստի ու գրականության անմահ երկերը, որոնք վիթխարի ազդեցություն ունեն ազգերի ու ազգությունների բնավորության լավագույն գծերի զարգացման, նրանց հայրենասիրության ու բարեկամության ամրապնդման վրա։

Ազգերի ու ազգությունների սոցիալիստական կուլտուրան կոմունիստական շինարարության պրոցեսում է՛լ ավելի կըզարգանա և կնպաստի Սովետական Միության ու սոցիալիստական ճամբարի բոլոր երկրների ժողովուրդների եղբայրական բարեկամության ամրապնդմանը։

Սովետական կուլտուրան ՍՍՀՄ բոլոր բազմազգ ժողովուրդների սեփականությունն է, քանի որ ամեն մի ժողովուրդ իր ավանդն է ներդնում նրա գանձարանը։

Սովետական բազմազգ ժողովուրդների կուլտուրական համագործակցությունը հիմնված է ՍՍՀՄ ազգերի ու ազգությունների աշխատավորների տնտեսական ու քաղաքական միասնության վրա։

[1] «Заря Востока», сентябрь 1966, Тбилиси.

[2] «Правда», 11 сентября 1967.



Գիտական կոմունիզմի հիմնադիրներ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ում գրել են. «Հին տեղական և ազգային կղզիացության և սեփական արտադրության արդյունքների հաշվին գոյությունը պահպանելուն փոխարինելու են գալիս ազգերի փոխադարձ համակողմանի կապն ու համակողմանի կախումը։ Սա հավասարապես վերաբերում է ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր արտադրությանը։ Առանձին ազգերի հոգևոր գործունեության արգասիքը դառնում է ընդհանուր սեփականություն։ Ազգային միակողմանիությունն ու սահմանափակությունն ավելի ու ավելի անհնար են դառնում...»[1]։

Սովետական կուլտուրան ունի ընդհանուր բովանդակություն, իսկ յուրաքանչյուր ազգային կուլտուրա՝ իր ազգային առանձնահատկությունները և ձևը։

Կոմունիստական շինարարության պրոցեսում տեղի է ունենում ազգերի ու ազգությունների սոցիալիստական համագործակցության բուռն զարգացում և ազգային ձևերի ու առանձնահատկությունների հետագա կատարելագործում։

Բուրժուական գաղափարախոսները հարձակվում են սոցիալիստական կուլտուրայի վրա։ Նրանք դեռևս սովետական իշխանության արշալույսին շաղակրատում էին «քաղաքակրթության վտանգի» և «բոլշևիկների բարբարոսության» մասին։ Սոցիալիստական շինարարության հետագա տարիներին բուրժուական գաղափարախոսները սկսեցին աղմկել սոցիալիստական երկրների «կուլտուրայի անկման» մասին, իսկ այժմ ստիպված են ընդունել, որ Մոսկվայում Շեքսպիրի ստեղծագործություններն ավելի հաճախակի են ցուցադրվում, քան Լոնդոնում։ Բուրժուական գաղափարախոսները հարկադրված են ընդունել, որ սոցիալիզմի երկրներն աշխարհին տվել են գիտության ու արվեստի այնպիսի համաստեղություն, որը արագացնում է համաշխարհային կուլտուրայի զարգացումը։

Սոցիալիստական կուլտուրան զարգանում է բուրժուական գաղափարախոսության դեմ մղվող պայքարում, մարդկանց

[1] Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Կոմունիստական կուսակցության մանիֆեստ, Երևան, 1966, էջ 35։

գիտակցության միջից կապիտալիզմի մնացուկների վերացման պայմաններում։ Այդ անհաշտ պայքարն ընդգրկել է միջազգային ասպարեզը։ Իմպերիալիզմի «կուլտուրագետները» ամեն կերպ ձգտում են իրենց հետադիմական գաղափարախոսությունը տարածել սոցիալիստական երկրներում և այդ նպատակով առաջադրել են սոցիալիստական կուլտուրայի այսպես կոչված «լիբերալացման» լոզունգը։ Բուրժուազիայի գաղափարական դիվերսիաները գրականության, արվեստի և գիտության բնագավառներում ձախողվում են։

XX դարը մարքսիզմ-լենինիզմի հաղթանակների դարն է, սոցիալիստական կուլտուրայի բուռն զարգացման ժամանակաշրջանը։

## 7. ՍՄԿԿ-Ն ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ ԵՎ ՈԳԵՇՆՉՈՂՆ Է

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունն անցել է մեծ ու դժվարին ճանապարհ։ Իր շարքերի լենինյան միասնության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարների կենսագործման համար մղած պայքարում նրան վիճակվել է հաղթահարել բազում դժվարություններ։ Վ. Ի. Լենինը մարքսիստական նոր տիպի կուսակցության ստեղծման համար մղած պայքարում միշտ ընդգծել է, որ կուսակցությունն ամուր է, երբ նա կառուցված է պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներով, երբ ամենասերտ կապերով կապված է ժողովրդական մասսաների հետ։ Վ. Ի. Լենինը հենց այդ սկզբունքներով ստեղծեց, կոփեց և ամրապնդեց կոմունիստական կուսակցությունը, որը կարողացավ համախմբել համառուսաստանյան պրոլետարիատին և գլխավորել նրա հերոսական պայքարը։ Կոմունիստական կուսակցությունը պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի շուրջը համախմբեց տարբեր ազգերի աշխատավորներին և ապահովեց սոցիալիստական հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում։

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը պրոլետարական ինտերնացիոնալիզմի ու ժողովուրդների եղ-



բայրական բարեկամության կենդանի մարմնավորումն է։ ՍՄԿԿ շարքերում այժմ ներկայացված են Սովետական Միության 131 ազգերի ու ազգությունների լավագույն որդիները և դուստրերը։

Սովետական Միության կոմունիստական կուսակցության շարքերում ներկայումս կա 13 միլիոն 180 հազար կոմունիստ, որոնք սովետական երկրի շատ ժողովուրդների ու ազգությունների ներկայացուցիչներն են։ «Նրանցից յուրաքանչյուրը իր սոցիալիստական ազգի զավակն է, բայց միևնույն ժամանակ նա կուսակցության զավակն է, նրա մարտիկը, նա ինտերնացիոնալիստ կոմունիստ է, որի համար հավասարապես թանկ են, հարազատ ու հասկանալի ինչպես իր ժողովրդի, այնպես էլ Սովետական Միության ամեն մի այլ ժողովրդի շահերը»[1]։ Այդ հանգամանքը էլ ավելի է հզոր դարձնում ՍՄԿԿ-ն, բազմազգ սովետական պետությունը, ՍՍՀՄ ժողովուրդների լենինյան բարեկամությունը։

Սովետական Միությունում չկա շատ թե քիչ նշանակալից տեղամաս, ուր չլինի կուսակցական սկզբնական կազմակերպություն։ ՍՄԿԿ-ն իր մեջ է առնում 14 միութենական կոմունիստական կուսակցություն, 7 երկրամասային և 133 մարզային կուսակցական կազմակերպություն, որոնցից 28 ինքնավար հանրապետության և 10 ազգային օկրուգների՝ կուսակցական կազմակերպություն, որոնց բոլոր կոմունիստները, անկախ իրենց ազգային պատկանելությունից, կոչված են անդուլ կերպով աշխատելու, որպեսզի էլ ավելի ամրապնդվի ու զարգանա ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը։

Յուրաքանչյուր ազգային կոմունիստական կուսակցություն իր հանրապետության տնտեսությանն ու կուլտուրայի զարգացմանը, ժողովրդի գաղափարական դաստիարակությանն ուղղություն տվող ուժն է։ Բոլոր ազգային կոմունիստական կուսակցություններն ունեն մեկ ընդհանուր ծրագիր՝ ՍՍՀՄ-ում կառուցել կոմունիզմ։ «Մենք հպարտանում ենք,— ասված է ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ,— որ մեր կուսակցության բոլոր ազգային ջոկատները, ինչպես գետերի ջր-

---

[1] ՍՄԿԿ XXIII համագումարի նյութերը, էջ 141։

րերը հզոր օվկիանոսում, միաձուլվում են Սովետական Միության կոմունիստական կուսակցության՝ կամքով միասնական, նպատակով միասնական, գաղափարախոսությամբ միասնական համախումբ լենինյանների միության մեջ»[1]։

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունն իր ամբողջ գործունեության մեջ ղեկավարվում է մարքսիզմ-լենինիզմի վեհ ուսմունքով, որի մեջ կարևոր նշանակություն է տրված ժողովուրդների բարեկամությանն ու համագործակցությանը։ Կոմունիստական կուսակցությունն իրականացնում է տնտեսական, քաղաքական ու կուլտուրական շինարարության կարևորագույն խնդիրներ, որոնց կենսագործումն ապահովում է բոլոր ժողովուրդների համատեղ աշխատանքը, փոխադարձ աջակցությունը, եղբայրական բարեկամությունը և սոցիալիստական համագործակցությունը։

Կոմունիստական կուսակցությունը համախմբեց բոլոր ժողովուրդներին՝ հանուն հայրենիքի ազատության և երջանկության, հանուն Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի։

Այդ պատմական հաղթանակի համար բանվորների ու գյուղացիների թափած արյամբ ընդմիշտ սրբագործվեցին Սովետական Միության բազմազգ ժողովուրդների լենինյան բարեկամությունը, համագործակցությունը, անխախտ դաշինքը։

Քաղաքացիական կռիվների և օտարերկրյա ինտերվենցիայի տարիներին Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ կոմունիստական կուսակցությունը կազմակերպեց սովետական ժողովրդի հերոսական պայքարը, որտեղ վճռվում էր երիտասարդ սովետական պետության բախտը։

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ սովետական երկրի հերոս ժողովուրդը անխախտ միասնությամբ հաղթահարելով վիթխարի դժվարությունները ու զրկանքները (սով, հիվանդություններ, ավերվածություն), ջախջախեց ներքին և արտաքին հակահեղափոխության միացյալ ուժերը։

Սոցիալիստական և ազգային ազատագրության, սովետական իշխանության հաղթանակի համար ժողովուրդների մղած

---

[1] ՍՄԿԿ XXIII համագումարի նյութերը, էջ 141։



պայքարի բովում մեծ Լենինի կոմունիստական կուսակցության իմաստուն ղեկավարությամբ կոփվեց ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը և դարձավ ամրակուռ, որի հանդեպ սարսափելի չեն ո՛չ ներքին, ո՛չ էլ արտաքին թշնամիները։

Սովետական մարդկանց անսահման ուրախություն է պատճառում, երբ այսօր ամբողջ աշխարհն է տեսնում ՍՍՀՄ ժողովուրդների սոցիալիստական համագործակցության պտուղները, լենինյան ամենահաղթ գաղափարների շնորհիվ զարգացող բարեկամության անպարտելի ուժը։

Կենսագործելով սոցիալիզմի կառուցման լենինյան պլանը, կոմունիստական կուսակցությունը սովետական երկրի բոլոր ժողովուրդների ուժերը մոբիլիզացրեց՝ վերականգնելու ժողովրդական տնտեսությունը։ Այդ մեծագույն աշխատանքի ընթացքում ավելի ու ավելի ամրապնդվեց ՍՍՀՄ ժողովուրդների լենինյան բարեկամությունը, ծավալվեց սոցիալիստական համագործակցությունը։ Ժողովուրդների միացյալ ջանքերով, բարեկամության և համագործակցության հիման վրա ՍՍՀՄ-ում ստեղծվեց և արագորեն զարգացավ սոցիալիստական ինդուստրիան։ Արդյունաբերության բուռն զարգացումը արմատապես փոխեց ՍՍՀՄ քարտեզը, ստեղծեց ինդուստրիալ նոր բնանկար։ Երևան եկան հազարավոր ձեռնարկություններ, սոցիալիստական նոր քաղաքներ։ Սովետական իշխանության տարիներին Սովետական Միության հողագործությունը զինվեց ժամանակակից տրակտորներով, կոմբայններով և այլ մեքենաներով։

Ֆաշիստական զավթիչների դեմ մղած մարտերում կոփվեց սովետական հայրենասերների մարտական բարեկամությունը։ Ռուսները, ուկրաինացիները, բելոռուսները, Կովկասի և Միջին Ասիայի ազգերը, սովետական ամբողջ ժողովուրդը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ հանդես եկան միասնաբար։ Թշնամին իր վրա զգաց ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների ցասման ողջ ուժը։ Սովետական հողի ազատագրման համար մղված պայքարում է՛լ ավելի ամրապնդվեց ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական բարեկամությունը։ Նրանց սոցիալիստական համագործակցությամբ, սովետական երկրի բոլոր հանրապետությունների եղբայրական լայն աջակցությամբ ու

վիթխարի եռանդով կոմունիստական կուսակցության ղեկավար և ուղղություն տվող գործունեության շնորհիվ ո՛չ միայն վերականգնվեց ինչ ավերված էր պատերազմի ընթացքում, այլև է՛լ ավելի արագ զարգացավ երկրի տնտեսությունը։ Ժողովուրդների բարեկամությունն ու համագործակցությունը վիթխարի նշանակություն ունեցան ժողովրդական տնտեսության վերականգնման գործում։ Ժողովուրդների միացյալ ջանքերով մոխրակույտերից վեր բարձրացան Ստալինգրադը, Կիևը, Մինսկը, Խարկովը, Նովգորոդը, Պսկովը, Վիտեբսկը, Վորոնեժը, Սևաստոպոլը և բազմաթիվ այլ քաղաքներ ու գյուղեր։

Սովետական Միության կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ է՛լ ավելի ամրապնդվեց և զարգացավ սովետական հասարակական և պետական կարգը, ամրացավ ՍՍՀՄ բանվորների, կոլտնտեսականների, մտավորականների սոցիալ-քաղաքական, գաղափարական միասնությունը, առավել սերտ և միաձույլ դարձան սովետական երկրի բազմազգ ժողովուրդների բարեկամությունը, համագործակցությունը և նրանց համախմբվածությունը կոմունիստական կուսակցության շուրջը։ ՍՍՀՄ ժողովուրդների լենինյան բարեկամության և սոցիալիստական համագործակցության ամբողջ պատմությունը անխզելիորեն կապված է Սովետական Միության կոմունիստական կուսակցության անվան հետ։ Վ. Ի. Լենինը բազմիցս ընդգծել է, որ ՍՍՀՄ ժողովուրդների բախտի համար կենսականորեն անհրաժեշտ են սովետական երկրի աշխատավորների եղբայրական միասնությունն ու բարեկամությունը։

Կոմունիստական կուսակցությունն իր ամբողջ գործունեության ընթացքում սրբությամբ կատարել և կատարում է մեծ Լենինի այդ իմաստուն ցուցումը և անընդհատ զարգացնում է ՍՍՀՄ ժողովուրդների լենինյան բարեկամությունն ու կատարելագործում նրանց սոցիալիստական համագործակցությունը։

ՍՄԿԿ-ն ստեղծագործ կուսակցություն է։ Նա իր մեծագործ աշխատանքով կազմակերպում է մեր երկրի ժողովուրդների աշխատանքային ու քաղաքական ակտիվությունը։

Կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանը բնութագրվում է,— ասված է ՍՄԿԿ ծրագրում,— կոմունիստական կուսակ-





Վրացական ՍՍՀ։ Թեյատերևի բերքահավաքը «Սաքարթվելո» թեյահավաք մեքենայով

Կարա-Կումի ջրանցքը, որ կառուցվել է ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների միացյալ ջանքերով







Ուզբեկական ՍՍՀ: Տաշքենդի մարզի Ակկուրղանի շրջանի «Ակալտար» բամբակամթերման կայանում

ՌՍՖՍՀ: Նովգորոդի «Սադկո» երիտասարդական ինքնագործ անսամբլը գոյություն ունի շուրջ երկու տարի, բայց արդեն մեծ ժողովրդականություն է վայելում: Նրա ծրագրում մեծ տեղ են գրավում ՍՍՀՄ տարբեր ժողովուրդների երգերն ու պարերը



Մոլդավական ՍՍՀ վաստակավոր արտիստուհի Մարիա Բիեշուն Չիո-Չիո-Սանի դերում






«Արտաշատ» թերթի և Ուկրաինական ՍՍՀ Խերսոնի մարզի Վիսոկոպոլյեի «Բուդիվնիկ կոմունիզմու» լրագրի փոխ-էջերը՝ նվիրված երկու շրջանների միացությանը

ցության, որպես սովետական հասարակության ղեկավար և ուղղության ավագ ուժի, դերի ու նշանակության հետագա աճումը: Սովետական հասարակության շարժիչ ուժերից մեկը լինելով ժողովուրդների լենինյան բարեկամությունը, կուսակցությունը հատուկ ուշադրություն է դարձնում նրա հետագա համակողմանի զարգացման վրա, ապահովում է ժողովրդական զանգվածների գիտակցական ու նպատակասլաց գործունեությունը, նրա համագործակցությունը և փոխօգնությունը:

Կոմունիստական կուսակցությունն իր ամբողջ գործունեության ընթացքում սերտորեն կապված է աշխատավորական զանգվածների հետ և վայելում է ժողովրդի անսահման սերն ու համակրանքը: «Կուսակցությունը մեր դարաշրջանի հեղափոխական մեծ վերափոխությունները կատարող սովետական ժողովրդի միտքն է, պատիվը և խիղճը»,— ասված է ՍՄԿԿ ծրագրում: Կոմունիստական շինարարության ժամանակաշրջանում էլ ավելի է ընդարձակվում և ամրապնդվում կուսակցության և ժողովրդի կապը, որի հիման վրա բարձրանում են մասսաների ստեղծագործական ակտիվությունը և համախմբվածությունը:

Կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում կուսակցությունը անընդհատ կատարելագործում է իր գործունեության ձևերն ու մեթոդները, որոնց հիման վրա ավելի են աճում ու ծավալվում են ժողովուրդների բարեկամությունը և համագործակցությունը: Ժողովուրդը կոմունիզմի կառուցման վճռական ուժն է, որին գլխավորում է կուսակցությունը, իսկ նա իր գործունեության իմաստը տեսնում է ժողովրդին ծառայելու մեջ, ժողովուրդների բարեկամությունը ամրապնդելու և զարգացնելու մեջ:

Մարքսիզմ-լենինիզմը սովորեցնում է, որ ժողովրդի և կուսակցության սերտ կապերի հետագա ընդլայնումն ու խորացումն իրենց հերթին զարգացնում են ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը որպես կոմունիզմի կառուցման անհրաժեշտ պայման և վճռող ուժ: Պատմությունը կերտում է ժողովուրդը, իսկ նա ստեղծագործական լայն թափ է առնում կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ: ՍՄԿԿ XXIII համագումարի պատմական որոշումները և կուսակցության ծրագի-

րը կենսագործելու համար ամենից առաջ անհրաժեշտ է ամբողջ սովետական ժողովրդին է՛լ ավելի համախմբել ՍՄԿԿ շուրջը, է՛լ ավելի ամրապնդել և զարգացնել ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների լենինյան բարեկամությունը կուսակցության ամենօրյա ղեկավարությամբ։ Սրանք այն խիստ կարևոր պայմաններն են, որոնք կոմունիստական շինարարության մեջ ապահովում են ՍՍՀՄ բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության, մտավորականության անձնվեր աշխատանքը և հզոր թափով զարգացնում միլիոնների սոցիալիստական մրցությունը տնտեսական ու կուլտուրական շինարարության ասպարեզում։

Սովետական յուրաքանչյուր ընտանիք զգում է կոմունիստական կուսակցության մշտական հոգատարությունը իր բարեկեցության բարձրացման, կուլտուրայի բարգավաճման և մարդու ստեղծագործական ձիրքերի բազմապատկման նկատմամբ։ Կոմունիստական հասարակարգի կառուցման խնդիրները ուրվագծված են ՍՄԿԿ նոր ծրագրում, որի անշեղ կենսագործումը սովետական մարդիկ դիտում են որպես իրենց կյանքի մեծագույն նպատակը։ Կոմունիզմի կառուցումը համաժողովրդական գործ է, այն պահանջում է բանվորների, կոլտնտեսականների, մտավորականների ջանքերի միասնություն, սովետական բազմազգ ժողովուրդների սերտ միություն, եղբայրական բարեկամություն, ժողովուրդների անշահախնդիր փոխօգնություն, սոցիալիստական համագործակցություն, որոնց կազմակերպիչը և ոգեշնչողը Սովետական Միության կոմունիստական կուսակցությունն է։ ՍՄԿԿ-ն անցել է փառահեղ ուղի, որի ընթացքում նա իր ստեղծագործական աշխատանքով, մարքս-լենինյան անհաղթ ուսմունքով դաստիարակել և դաստիարակում է սովետական ժողովրդին, որը միլիոնավոր թելերով կապված է իր հարազատ կուսակցության հետ, այն կուսակցության, որը հավատարմորեն կատարելով մեծ Լենինի պատգամները, ՍՍՀՄ-ում կառուցեց սոցիալիզմ, և այսօր էլ կազմակերպում և գլխավորում է ժողովուրդների լենինյան բարեկամությունը և սոցիալիստական համագործակցության զարգացման մեծ գործը։

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունն



իր ամբողջ գործունեությամբ, իր վեհ գաղափարներով ժողովուրդների բարեկամության, եղբայրության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարների կենդանի մարմնացումն է։ Իր բոլոր գործերով նա հիանալի օրինակ է ամբողջ աշխարհի կոմունիստական ու բանվորական կուսակցությունների համար՝ նա ցույց է տալիս, թե ինչպես սովետական երկրի քաղաքական, տնտեսական ու կուլտուրական զարգացման յուրաքանչյուր պրոբլեմ լուծելիս հաշվի են առնում բոլոր ժողովուրդների շահերն ու ազգային առանձնահատկությունները, թե ինչպես հսկայական ջանք է գործադրվում սովետական մարդկանց պրոլետարական ինտերնացիոնալիզմի, ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրության ու բարեկամության անխախտ հավատարմության ոգով դաստիարակելու համար։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ սովետական բազմազգ ժողովուրդը քաղաքական ու աշխատանքային բարձր ակտիվության պայմաններում, եղբայրական ամուր բարեկամական կապերով և ընդհանուր ջանքերով առաջ է մղում երկրի անառիկությունը, գիտությունը և կուլտուրան։

Սովետական ժողովուրդը, բոլոր ազգերն ու ազգությունները իրենց հարազատ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ հանրագումարի բերեցին անցած 50 տարվա պայքարի ու աշխատանքի հոյակապ արդյունքները և իբրև կարևոր ցուցանիշ նշեցին նաև ՍՍՀՄ ժողովուրդների անխախտ բարեկամությունը որպես սովետական հասարակարգի հզոր շարժիչ ուժ, որպես մեր երկրի համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող հաղթանակների կենսարար աղբյուր, որի բոլոր ջոկատները՝ ազգերն ու ազգությունները, ինչպես աղբյուրի ու գետի ջրեր հզոր օվկիանոսում, միաձուլված են միասնական մեծ ընտանիքի մեջ։

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը Մեծ Հոկտեմբերի 50-ամյակի առթիվ հայտարարեց, որ սովետական իշխանության գոյության հիսուն տարում ազգային հարցի լուծման սովետական փորձը համաշխարհային ճանաչում է ստացել, որ այսուհետև ևս է՛լ ավելի բարձր կծածանվի ժողովուրդների բարեկամության դրոշը, է՛լ ավելի կամրապնդվի սոցիալիստական մեծ հայրենիքի միասնությունը։

## 8. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

*Ժողովուրդների բարեկամության ամրապնդումն ու հետագա զարգացումը միշտ էլ եղել են կուսակցական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում։ Կուսակցության Կենտրոնական կոմիտեն երկրի զարգացման բոլոր ժամանակաշրջաններում հատուկ հոգատարություն է հանդես բերել ժողովուրդների բարեկամության ու համագործակցության նկատմամբ։*

*ՍՄԿԿ XXIII համագումարը բոլոր կուսակցական կազմակերպություններին պարտավորեցրեց՝ այսուհետև ևս անշեղորեն իրագործել ինտերնացիոնալիզմի սկզբունքներն ազգային հարաբերությունների ասպարեզում, ամրապնդել ժողովուրդների բարեկամությունը որպես սոցիալիզմի կարևորագույն նվաճումներից մեկը։*

*ՍՄԿԿ XXIII համագումարի և կուսակցության ծրագրի պահանջները կատարելու և ժողովուրդների բարեկամությունն էլ ավելի ամրապնդելու նպատակով կուսակցական կազմակերպությունները բեղմնավոր գործունեություն ծավալեցին և հասան մեծ արդյունքների։ Կուսակցական կազմակերպությունները գաղափարական աշխատանքի ասպարեզում լուրջ միջոցառումներ ձեռնարկեցին, որոնք մեծապես օգնեցին աշխատավորներին պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարներով դաստիարակելու գործին, պայքար ծավալեցին նացիոնալիզմի ու շովինիզմի դրսևորումների և մնացուկների դեմ։ Կուսակցական կազմակերպությունների դաստիարակչական աշխատանքի հիմքում ընկած է այն սկզբունքը, որ նացիոնալիզմի դրսևորումների վերացումը համապատասխանում է ՍՍՀՄ բոլոր ազգերի ու ազգությունների շահերին։*

*Կուսակցական կազմակերպությունները լուրջ աշխատանք են կատարում աշխատավորներին դաստիարակելու այն սկզբունքով,* որ «յուրաքանչյուր սովետական հանրապետություն կարող է այսուհետև էլ ծաղկել ու ամրապնդվել միայն ՍՍՀՄ



եղբայրական սոցիալիստական ազգերի մեծ ընտանիքում»[1], *միայն ժողովուրդների բարեկամության ու համագործակցության հետագա զարգացման պայմաններում։ Կուսակցական կազմակերպությունները, մարզային և քաղաքային կոմիտեները, միութենական հանրապետությունների կենտրոնական կոմիտեներն իրենց նիստերում և պլենումներում հաճախակի քննարկում են աշխատավորների կոմունիստական դաստիարակության հարցերը, ժողովուրդների բարեկամության և համագործակցության հետագա զարգացման, աշխատավորներին ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու և գաղափարական աշխատանքի այլ խնդիրներ։ Այդ տեսակետից ուշագրավ է հատկապես Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի, Սվերդլովսկի, Թբիլիսիի, Երևանի, Տաշքենդի և մի շարք այլ քաղաքային կուսակցական կոմիտեների գործունեությունը։*

*ՍՄԿԿ Մոսկվայի քաղաքային կոմիտեի բյուրոյի նիստերում և պլենումներում համակողմանիորեն քննության է առնվում աշխատավորներին մարքսիզմ-լենինիզմի ոգով դաստիարակելու ուղղությամբ քաղաքային շրջկոմների, սկզբնական կազմակերպությունների գործունեությունը։ ՍՄԿԿ Մոսկվայի քաղաքային կոմիտեի որոշումների մեջ*[2] *ընդգծված են կուսակցական և սովետական ղեկավար աշխատողների տեսական մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը, ժողովուրդների բարեկամության և համագործակցության զարգացման ուղղությամբ կատարելիք աշխատանքները։*

*Մոսկվայի կուսակցական սկզբնական կազմակերպությունների գաղափարական աշխատանքի փորձը և համագործակցության ու բարեկամության ամրապնդման ուղղությամբ ձեռնարկած միջոցառումները օրինակ են ծառայում երկրի մյուս կազմակերպությունների համար։*

*ՍՄԿԿ Լենինգրադի քաղաքային կոմիտեն մի քանի անգամ*

---

[1] *Սովետական Միության կոմունիստական կուսակցության ծրագիրը*, էջ 139։

[2] Очерки истории Московской организации КПСС, М., 1966, стр. 685—690, 693—699

անդրադարձել է բազմազգ ուսանող երիտասարդության շըր-
ջանում դաստիարակչական աշխատանքները և ժողովուրդնե-
րի բարեկամության լենինյան գաղափարախոսության պրո-
պագանդման ավելի բազմազան, ավելի մասսայական ձևով
կազմակերպելու հարցին[1]։

Ժողովուրդների բարեկամության սովետական գաղափա-
րախոսության պրոպագանդայի և աշխատավորների կոմունիս-
տական դաստիարակության ասպարեզում աշխատանքի ուսու-
նելի փորձ ունեն Վրաստանի կոմունիստական կուսակցության
Կենտրոնական կոմիտեն, շրջկոմները, քաղկոմները և սկզբ-
նական կազմակերպությունները[2]։ Ելնելով ՍՄԿԿ XXIII հա-
մագումարի որոշումներից և ՍՄԿԿ ծրագրի պահանջներից,
Վրաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական
կոմիտեն բյուրոյի նիստերում և պլենումներում հատուկ ուշա-
դրություն է դարձնում ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության
և համագործակցության զարգացման վրա, կազմակերպում է
ժողովուրդների բարեկամությանը նվիրված երեկույթներ, հրա-
տարակում է մեծ քանակությամբ պատմա-քաղաքական գրա-
կանություն, հրավիրում է զանազան խորհրդակցություններ,
որը բարձր մակարդակով քննարկվում և այնուհետև կյանքում
կենսագործվում են պրոլետարական ինտերնացիոնալիզմի
սկզբունքները։ Վրաստանի կոմունիստական կուսակցության
Կենտրոնական կոմիտեն աշխատավորների ինտերնացիոնալ
դաստիարակության մասին հաճախակի հանդես է գալիս հաշ-
վետվությամբ։ 1960 թ. հունվարի 26-ին տեղի ունեցավ ՎԿԿ
XX համագումարը, որտեղ դրվեցին կուսակցական կազմակեր-
պությունների խնդիրները ազգային կադրերի ընտրության և
նրանց մարքս-լենինյան դաստիարակության բնագավառում։
Համագումարը հանրապետության կուսակցական կազմակեր-
պություններին հանձնարարեց կադրերի ընտրության գործում
հաշվի առնել հանրապետության բնակչության բազմազգ կազ-

[1] «Ленинградская правда», 24 июня 1966.

[2] Վրաստանի կուսակցական կազմակերպությունների աշխատանքի փոր-
ձին է նվիրված Ն. Չոճիաշվիլի «Работа партийной организации
в области партийной пропаганды (между XX и XXII съездами КПСС)»
աշխատությունը, որը լույս է տեսել Թբիլիսիում, 1963 թվականին։



մը և աշխատավորների շրջանում ամեն կերպ ամրապնդել ժո-
ղովուրդների բարեկամության և համագործակցության սովե-
տական գաղափարախոսության պրոպագանդան[1]։

Անդրկովկասի սովետական հանրապետությունները տնտե-
սական և կուլտուրական համագործակցության լավագույն ա-
վանդություն են ստեղծել, որը հսկայական չափով նպաստում
է ժողովուրդների բարեկամության հետագա զարգացման գոր-
ծին։ Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի համատեղ ջան-
քերով լուծվեցին այնպիսի կարևոր պրոբլեմներ, ինչպիսիք
են՝ Անդրկովկասի միասնական էներգետիկ սիստեմի ստեղ-
ծումը, երկաթուղիների ու խճուղիների շինարարությունը,
ջրատնտեսական խոշոր օբյեկտների կառուցումը։ Անդրկով-
կասի սովետական հանրապետությունների նման համագոր-
ծակցությունը մեծապես օգնում է երկրամասում կոմունիս-
տական շինարարության խնդիրների արագ լուծմանը և ժողո-
վուրդների բարեկամության հետագա զարգացմանը։

Անդրկովկասի ժողովուրդների սերտ եղբայրական բարե-
կամությունը սկիզբ է առել խոր անցյալում[2], որի վրա երկրա-
մասի կուսակցական կազմակերպությունները միշտ էլ հա-
տուկ ուշադրություն են դարձրել։ 1964 թվականի մարտին
Բաքվում, իսկ հաջորդ տարիներին նաև Թբիլիսիում և Երևա-
նում տեղի ունեցան Անդրկովկասի ժողովուրդների ուսումնա-
կան հաստատությունների դասախոսների, գիտությունների
հանրապետական ակադեմիաների, կուսակցական և կոմերի-
տական աշխատողների սեմինար պարապմունքներ, գիտական
սեմինարներ և խորհրդակցություններ, որտեղ կարևոր տեղ
գրավեցին ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության և համա-

[1] Резолюция XX съезда КП Грузии по отчётному докладу Центрального Комитета. (Принято единогласно 26 января 1960 г.). Изд. ЦК КП Грузии, 1960, Тбилиси.

[2] Այդ հարցի մասին, մանավանդ վերջին տարիներս, հրապարակ-
վեցին մի շարք աշխատություններ։ Ուշադրության արժանի են՝ Ա. Արզու-
մանյանի «Մի էջ Անդրկովկասի պատմությունից», Երևան, 1956, Զ. [illegible]
[illegible] «[illegible]», 1959, Ս. Ալոյանի «Հայ և ադրբե-
ջանական ժողովուրդների դարավոր բարեկամությունը», Երևան, 1961,
**Теймураз Джафарли**, «Страницы великой дружбы», Баку, 1961, «Летопись дружбы», Тбилиси, 1961 и др.

գործակցության հարցերը։ Այդ միջոցառումների մասին ընդարձակ հաղորդագրություններ և գիտական հոդվածներ տպագրվեցին երկրամասի պարբերական մամուլում[1]։ Այնտեղ ասված է, որ Անդրկովկասի ժողովուրդները իրենց բարեկամությունը կռել ու կոփել են ազատության, նոր կյանքի կառուցման համատեղ պայքարի բովում։ Անդրկովկասի բազմազգ ժողովուրդները սովետական երկրի բոլոր ժողովուրդների հետ միասնական ընտանիքում իրականացնում են կոմունիստական շինարարության հոյակապ խնդիրները։

Սովետական Միության ժողովուրդների բարեկամությունը ամուր է պողպատի նման։ Նա ուժի հզոր աղբյուր է դարձել կոմունիստական հասարակարգի կառուցման համար մղվող պայքարում։

Ժողովուրդների լենինյան բարեկամության գաղափարների պրոպագանդայի, ինտերնացիոնալ համագործակցության ընդարձակման և աշխատավորների կոմունիստական դաստիարակության բնագավառում աշխատանքի հարուստ փորձ են կուտակել Ուզբեկստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն, նրա մարզային, քաղաքային, շրջանային և սկզբնական կազմակերպությունները[2]։ Սովետական Ուզբեկստանը բազմազգ հանրապետություն է։ Այստեղ բնակվում են ուզբեկներ, ռուսներ, հայեր, թուրքմեններ, հրեաներ, ուկրաինացիներ, ադրբեջանցիներ և այլ ազգերի աշխատավորներ։ Հաշվի առնելով հանրապետության այս բազմազգ կազմը, կուսակցական կազմակերպությունն իր գործունեության ընթացքում հատուկ ուշադրություն է դարձնում բոլոր ազգերի աշխատավորների կոմունիստական դաստիարակության և ժողովուրդների բարեկամության լենինյան գաղափարների պրոպագանդայի վրա։ Կուսակցական կոմիտեների և սկզբնական կազմակերպությունների ժողովներում, աշխատա-

[1] «Заря Востока» (Тбилиси), «Бакинский рабочий», «Коммунист» (Ереван), «Սովետական Հայաստան», «Սովետական Վրաստան», «Կոմունիստ» (Բաքու) (1964, 1965, 1966, 1967 թթ.)։

[2] Очерки истории Коммунистической партии Узбекистана, Ташкент, 1964, стр. 545—549.



վորական զանգվածների հավաքույթներում զրույցներ և դասախոսություններ են լսվում պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքների և ՍՍՀՄ ժողովուրդների անխախտ բարեկամության մասին։ Ուզբեկստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն ուշի-ուշով հետևում և ուղղություն է տալիս հանրապետության պարբերական մամուլին, պատմա-քաղաքական և գեղարվեստական գրականությանը։ Այդ աշխատանքը տալիս է իր գոհացուցիչ արդյունքները։ ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության մասին Ուզբեկստանում հրատարակվել են գեղարվեստական գրքեր, պատմվածքներ, ցուցադրվել են կինոնկարներ։ Այդ տեսակետից ուշագրավ է Շ. Ռ. Ռաշիդովի «Բարեկամության դրոշը» գիրքը[1], որի մեջ հեղինակը գեղարվեստական խոսքի մեծ վարպետությամբ տվել է ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության նշանակությունը կոմունիստական շինարարության համար։ Նա գրքում պատմում է սովետական մարդու ստեղծագործ աշխատանքի մասին, այն մասին, թե ինչպես ինտերնացիոնալ ու կոմունիստական շինարարության տարիներին արմատապես վերափոխվել են Միջին Ասիայի հանրապետությունները։

Ժողովուրդների բարեկամության և համագործակցության զարգացումը դրված է Ուկրաինայի կոմունիստական կուսակցության և նրա տեղական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում[2]։ Այդ ուղղությամբ ուշագրավ աշխատանք և արժեքավոր նախաձեռնություն է հանդես բերում մասնավորապես Կիևի մարզի կուսակցական կազմակերպությունը։ Կիևի աշխատավորներն ամենալայն կապերով կապված են եղբայրական ժողովուրդների հետ։ Այստեղ ամենաբարձր գիտակցականությամբ դրված է փոխօգնության և համագործակցության խնդիրը։ Քաղաքի բազմաթիվ գործարանների, ֆաբրիկաների, շինարարական տեղամասերի, ուսումնական և գիտական հաստատությունների կոլեկտիվներ եղբայրական կապեր են հաստատել ՍՍՀՄ միութենական հանրապետություն-

[1] **Ш. Р. Рашидов**, Знамя дружбы, М., 1967, стр. 35—46, 78—96.

[2] Очерки истории Коммунистической партии Украины, Киев, 1964, стр. 714—716.

ների քաղաքների և աշխատավորական կոլեկտիվների հետ։ Լինում են փոխադարձ այցելություններ, փորձի փոխանակում, ցույց է տրվում փոխօգնություն։ Կուսակցական կազմակերպությունները հմուտ կերպով դրանք զուգակցում են ժողովուրդների բարեկամության և քաղաքական աշխատանքների հետ։ Կիևի պետական համալսարանում հաճախակի հավաքվում են եղբայրական հանրապետությունների համալսարանների պրոֆեսորները, դոցենտները և համատեղ նիստերում քննարկում գիտական արդիական խնդիրներ, որոնք իրենց բարերար ազդեցությունն են ունենում աշխատավորների լենինյան բարեկամության ոգով դաստիարակելու վրա։ Կիևի բարձրագույն ուսումնական հաստատությունների կուսակցական կազմակերպությունները խրախուսելի աշխատանք են կատարում սովորող երիտասարդության պրոլետարական ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության ոգով դաստիարակելու գործում։ Կուսակցական կազմակերպությունների անմիջական նախաձեռնությամբ հրավիրվում են ուսանողական գիտական կոնֆերանսներ, բարեկամության երեկույթներ, որոնք անցնում են գաղափարական բարձր մակարդակով։

Ուկրաինայի, Բելոռուսիայի, Ադրբեջանի, Լատվիայի, Մոլդավիայի, Տաջիկստանի, Էստոնիայի և միութենական մյուս հանրապետությունների կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ «Գիտելիք» ընկերությունը մեծ աշխատանք է կատարում ժողովուրդների բարեկամության զարգացման ուղղությամբ[1]։ ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության և համագործակցության մասին կազմակերպելով զրույցներ, դասախոսություններ, հրատարակելով հարուստ գրականություն։ Գրեթե բոլոր միութենական հանրապետություններում հրատարակվել են հանրամատչելի գրքեր սովետական ազգերի ու ազգությունների անտեսության, կուլտուրայի և գիտության զարգացման վերաբերյալ։ Լվովում (Ուկր. ՍՍՀ),

[1] Այդ մասին արժեքավոր նյութեր կան **И. И. Шкадаревич.** Пропаганда идей дружбы народов и социалистического интернационализма աշխատությունում, որը հրատարակել է «Գիտելիք» ընկերությունը 1962 թ., ռուսերեն լեզվով, Մոսկվայում։



Իջևանում (Հայկ. ՍՍՀ), Սումգաիթում (Ադրբ. ՍՍՀ) և այլ քաղաքներում արդեն մի քանի տարի է, ինչ գործում են ժողովուրդների բարեկամության համալսարանները, ուր աշխատավորների առջև հանդես են գալիս հանրապետությունների բարձրորակ դասախոսները։

Արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունները կուսակցական կոմիտեների ղեկավարությամբ առանձնահատուկ ուշադրություն են դարձնում երիտասարդության սովետական ժողովրդի, կոմունիստական կուսակցության հեղափոխական, աշխատանքային ու մարտական ավանդույթներով դաստիարակելու և ժողովուրդների բարեկամության ու սոցիալիստական հայրենիքի նկատմամբ նվիրվածության ցուցաբերելու, նրանց գաղափարական խոր համոզվածությունն ապահովելու ուղղությամբ։

Վ. Ի. Լենինը խոսելով արհմիությունների հերթական խնդիրների մասին, ընդգծել է նրանց հսկայական դերը երկրի ժողովրդական տնտեսության զարգացման և աշխատավորների կոմունիստական դաստիարակության գործում։ Արհմիությունները կոմունիստական կուսակցության ակտիվ օգնականն են, նրա քաղաքականության անշեղ կիրառողը, մասսաների փորձված կազմակերպիչը։ Արհմիությունները կոմունիզմի դպրոցն են։ Նա իր աշխատանքը կառուցելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքների վրա, կոմունիստական կուսակցությանը օգնում է համախմբելու բոլոր ազգությունների աշխատավորներին, ամրապնդելու ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական բարեկամությունը և համագործակցությունը։

1968 թվականի փետրվարի 27-ին Մոսկվայում կայացավ ՍՍՀՄ արհեստակցական միությունների XIV համագումարը, որը մշակեց սովետական արհմիությունների խնդիրները կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանում։ Արհեստակցական միությունների 86 միլիոնանոց բանակի առջև համագումարը որպես հրատապ խնդիր դրեց՝ բարձր պահել պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը, զարգացնել բարեկամությունն աշխարհի բոլոր երկրների աշխատավորների հետ, այսուհետև էլ հետևողականորեն հանդես գալ հանուն միջազգային բանվորական շարժման միասնության։

ՍՍՀՄ արհեստակցական միությունների XIV համագումարին ուղղած ողջույնի մեջ ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն նշել է, որ կոմունիստական կուսակցության XXIII համագումարը սահմանեց կոմունիստական շինարարության արդի էտապի տնտեսական ու սոցիալ-քաղաքական խնդիրները, որոնց կենսագործման համար ՍՄԿԿ անմիջական ղեկավարությամբ ակտիվ գործունեություն են ծավալում ՍՍՀՄ արհեստակցական միությունները ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում, կազմակերպում են ամբողջ սովետական ժողովրդի ստեղծարար եռանդն ու աշխատանքային ակտիվությունը: Սովետական արհեստակցական միություններն ակտիվորեն պաշտպանում են արդյունաբերության ու գյուղատնտեսության աշխատողների հայրենասիրական նախաձեռնությունները արտադրության տնտեսական արդյունավետությունը բարձրացնելու համար, տեխնիկական կատարելագործելու, արտադրության և կառավարման գիտական կազմակերպումը ամրապնդելու հիման վրա հանրային աշխատանքի արտադրողականության հետագա աճի համար: Մոսկվայի, Լենինգրադի, Սվերդլովսկի, Կիևի, Բաքվի, Նովոսիբիրսկի և երկրի մյուս արդյունաբերական կենտրոնների արհեստակցական միությունների նախաձեռնությամբ հայրենասիրական այդ շարժումը լայնորեն ծավալվել է, և հաջողությամբ կատարվում են հնգամյակի պլանները: Սովետական արհեստակցական միություններն արդի պայմաններում ավելի ու ավելի մեծ աշխատանք են կատարում աշխատավորների կոմունիստական դաստիարակության բնագավառում: Նրանց գործունեությունը ծավալվում է աշխատավորական զանգվածների կոմունիստական գիտակցականությունը բարձրացնելու, նրանց սովետական հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի ոգով, աշխատանքի ու հանրային սեփականության նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի ոգով դաստիարակելու ասպարեզում[1], Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, ամբողջ սովետական ժողովրդի հետ միասին, արհմիությունները ըն-

1 ՍՍՀՄ արհեստակցական միությունների XIV համագումարի բանաձևը («Ս. Հ.», 28 փետրվարի 1968 թ.).



գայլիորեն ակտիվացրել են իրենց գործունեությունը արտադրության ոլորտում և մեծ ավանդ են մուծել սովետական հայրենիքի տնտեսության, գիտության ու կուլտուրայի զարգացման և սովետական մարդկանց կենսամակարդակի բարձրացման գործում: Հենց այդ մասին է վկայում այն փաստը, որ Սովետական Միության ձեռնարկությունների, կառույցների, կոլտնտեսությունների, սովխոզների և հիմնարկների հազարից ավելի կոլեկտիվներ պարգևատրվեցին ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության, ՍՍՀՄ Մինիստրների սովետի և ՀԱՄԿԽ-ի հուշադրոշներով:

Ժողովրդական տնտեսության, գիտության և կուլտուրայի զարգացման գործում ձեռք բերած հաջողությունների համար միայն անցած չորս տարում ավելի քան 704 հազար[1] մարդ պարգևատրվել է Սովետական Միության շքանշաններով ու մեդալներով, նրանցից 3.606-ին[2] շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում:

Արհեստակցական միությունները որպես դաստիարակության կազմակերպություն իրենց պարտքն են համարում կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ այսուհետև էլ լայն աշխատանք կատարել բազմակողմանիորեն զարգացած նոր մարդու ձևավորման, տնտեսական, սոցիալական, քաղաքական և հոգևոր կյանքի զարգացման համար:

Արդի ժամանակաշրջանում հասարակական կյանքում աճում է արհմիությունների դերը, որոնք որպես մասսայական ինքնագործ հասարակական կազմակերպություններ գնալով ավելի լավ և լիակատար չափով են կենսագործում կոմունիզմի դպրոցի իրենց ֆունկցիան: Այդ կապակցությամբ ՍՄԿԿ XXIII համագումարի բանաձևում ասված է. «Համագումարը գտնում է, որ պետք է ուժեղացնել արհմիությունների դերը ժողովրդական տնտեսության զարգացման խնդիրների լուծման գործում, ապահովել նրանց ավելի ակտիվ մասնակցությունը պետական պլանների մշակմանը և արտադրության կառավարմանը»[3]:

1 «Правда», 28 февраля 1968.
2 «Սովետական Հայաստան», 28 փետրվարի 1965:
3 ՍՄԿԿ XXIII համագումարի նյութերը, էջ 312:

Լենինյան կոմերիտմիությունն իր շարքերում միավորում է ավելի քան 23 միլիոն պատանիներ և աղջիկներ, որոնք ակտիվ մասնակցություն են ունենում կոմունիզմի կառուցմանը։ ՍՄԿԿ-ն կոմերիտմիությունը համարում է սովետական երիտասարդության մարտական առաջապահը, իր հուսալի ռեզերվը։

Լենինյան կոմերիտմիությունը ՍՄԿԿ ղեկավարությամբ ակտիվ մասնակցություն է ունենում սովետական երկրի հասարակական ու քաղաքական կյանքի, էլեկտրակայանների ու երկաթուղային մագիստրալների, գործարանների ու ֆաբրիկաների, քաղաքների կառուցման գործին, խոպան հողերի նվաճմանը, տեխնիկայի յուրացման պատմական գործին։

ՍՄԿԿ-ն բարձր է գնահատում երիտասարդության ստեղծագործական ուժերը, որոնք ի սպաս են դրված ՍՍՀՄ բազմազգ ժողովուրդների բարեկամության և համագործակցության զարգացմանը։

Լենինյան կոմերիտմիությունը կազմակերպում է երիտասարդության եռանդը, ծավալում ֆիզկուլտուրան և սպորտը։ Ինչպես ՍՍՀՄ-ում, այնպես էլ աշխարհի բազմաթիվ երկրներում տեղի են ունենում սպորտային մրցություններ, ֆեստիվալներ և համաշխարհային զանազան փառատոներ, որոնք ժողովուրդների երիտասարդ որդիների ու դուստրերի համերաշխության և փոխըմբռնման համար կարևոր միջոցներ են հանդիսանում։ Այդ տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունեցավ 1968 թվականի օգոստոս ամսին Սոֆիայում տեղի ունեցած իններորդ համաշխարհային փառատոնը։

ՍՍՀՄ ներկայացուցիչները Սոֆիայի հանդիպման ընթացքում իրենց հայրենիքը փառաբանեցին փայլուն հաջողություններով։ Տասը օր աշխարհի գրեթե հարյուր լեզուներով իններորդ համաշխարհային փառատոնի ընթացքում հնչում էին պայքարի, արիության, միասնության և բարեկամության երգեր։ Աշխարհի ժողովուրդների երիտասարդ պատվիրակներին միավորեց մի ազնիվ գաղափար՝ «համերաշխություն, խաղաղություն և բարեկամություն»։

Փառատոնի մասնակիցները մեծ ոգևորությամբ ընդունե-



ցին համայն աշխարհի երիտասարդությանը և ուսանողությանը ուղղված դիմումը, որի մեջ ասված է. «Մենք ցուցադրեցինք ԳՖՀ-ում նացիզմի վերածնման դեմ, Եվրոպայի անվտանգության ապահովման համար երիտասարդ սերնդի պայքարի ուժը։

— Մենք գործողությունների միասնության կոչ ենք անում հանուն Վիետնամի ժողովրդի հաղթանակի, հանուն ազատության, անկախության ու խաղաղության, հանուն դեմոկրատիայի և առաջադիմության համար մղվող պայքարում»[1]։

1968 թվականի օգոստոսի 1-ին իններորդ համաշխարհային փառատոնում հայտարարված էր Բուլղարիայի ժողովրդի ու երիտասարդության հետ բարեկամության օր։ Այդ օրը հազարավոր պատանիներ ու աղջիկներ մեկնեցին Բուլղարիայի հեղափոխական ու ժողովրդական տրադիցիաների հետ կապված վայրերը։ Սովետական Միության պատվիրակները ամբողջ հոգով ողջունեցին բուլղար բարեկամներին և նշեցին, որ սովետական ու բուլղար ժողովուրդների գլխավոր նվաճումներից մեկը տարիների փորձություններով ձեռք բերված և համատեղ թափած արյամբ ամրապնդված մեծ բարեկամությունն է։ Մենք թանկ ենք գնահատում այդ սուրբ բարեկամությունը ու «երբեք ո՛չ ոքի թույլ չենք տա սասանել այն»։

Երիտասարդական միջոցառումները մեծապես նպաստում են ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը և զարգացմանը։

Ժողովուրդների բարեկամությունը մարդկային ամենաբարձր զգացումն է, որը աշխատանքում, հասարակական ու անձնական կյանքում, նյութական ու հոգևոր կուլտուրայի բոլոր բնագավառներում ճիշտ ուղղություն է տալիս ո՛չ միայն առանձին մարդկանց, այլև ամբողջ ժողովուրդների, դասակարգերի, սոցիալական խմբերի, ազգերի ու ազգությունների հիմնական հարաբերություններին։

---

[1] «Ավանգարդ», 10 օգոստոսի 1965։

## ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՆԴԸ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

*Կոմունիստական հասարակարգի կառուցումը դարձել է Սովետական Միության բոլոր ազգերի գործնական խնդիրը: Սովետական հանրապետությունները էկոնոմիկայի և կուլտուրայի բնագավառում խոշոր հաջողություններ են ձեռք բերել: Զարգացել է նրանց սերտ համագործակցությունը կյանքի բոլոր բնագավառներում, կատարելագործվել են ազգային պետականության ձևերը: Կոմունիստական շինարարության պայմաններում ընդլայնվում են միութենական և ինքնավար հանրապետությունների իրավունքները: Միութենական հանրապետությունների միջև ներկայումս գոյություն ունի ավելի սերտ կապ, փոխօգնություն, համախմբվածություն և անկեղծ հարգանք միմյանց նկատմամբ, քան երբևէ:*

*Ավելի ու ավելի արդյունավետ է դառնում նյութական ու հոգևոր հարստությունների փոխանակումը ազգերի միջև: Անընդհատ* աճում է յուրաքանչյուր հանրապետության ավանդը կոմունիստական շինարարության ընդհանուր գործում: *Այդ կենդանի և ակնառու կերպով երևում է յուրաքանչյուր սովետական հանրապետության տնտեսական և կուլտուրական կյանքում:*





Տալլինի այս բացօթյա բեմահարթակում անցկացվող երգի տոներին մասնակցում է ավելի քան 30 հազար մարդ: Առաջին պլանում նշանավոր կոմպոզիտոր և խմբավար Գուստավ Էռնեսաքսը երգչախմբի անդամների հետ

Տաջիկական ՍՍՀ կառավարական տունը





Ժողովուրդների բարեկամությունը տաջիկական ժողովրդի երգերի գլխավոր թեմաներից է: Տաջիկստանի պրոֆմիությունների կենտրոնական կոմիտեի երգի-պարի անսամբլը ելույթի ժամանակ



Արամ Խաչատրյանի «Սպարտակ» բալետի պրեմիերան Տաշքենդի օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում: Էգինայի դերում՝ ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Գ. Իզմայլովան

# Ռուսաստանի ՍՖՍՀ



Հարազատ Մոսկվայի համայնապատկեր

## 1. ՌՈՒՍ ՄԵԾ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՇԱՐՔՈՒՄ

*Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունը ՍՍՀՄ ժողովուրդների մեծ ընտանիքի լիիրավ անդամն է, որը սոցիալիստական ազգերի ու ազգությունների համագործակցության և բարեկամության զարգացման գործում վճռական դեր է խաղում։ ՍՍՀՄ ժողովուրդները ռուս ժողովրդին համարում են ավագ եղբայր։*

*ՌՍՖՍՀ-ն Սովետական Միության ամենախոշոր և արդյունաբերական տեսակետից առավել զարգացած հանրապետությունն է, որը անշահախնդիր կերպով օգնում է բոլոր ժողովուրդներին։ ՌՍՖՍՀ տերիտորիան հավասար է 17,1 միլիոն քառակուսի կիլոմետրի, որը կազմում է Սովետական Միության ամբողջ տարածության ավելի քան $^3/_4$ մասը։*

*ՌՍՖՍՀ-ն ունի ընդարձակ սահմաններ՝ Բալթիկ ծովից մինչև Խաղաղ օվկիանոս, Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի կղզիներից մինչև Սև ծով[1]։*

*Ռուսաստանյան ֆեդերացիայի տերիտորիայում ապրում է 127 միլիոն 911 հազար մարդ։ ՌՍՖՍՀ-ում ապրում են շուրջ հարյուր ազգություններ։ Հանրապետության բնակչության ավելի քան $^4/_5$-ը ռուսներ են։ ՌՍՖՍՀ-ում ռուսների հետ ձեռք-ձեռքի տված, որպես հավասարներ, կոմունիզմ կառուցողների միևնույն շարքերում քայլում են թաթարներ, բաշկիրներ, չուվաշներ, յակուտներ, օսեր, էվենկներ, կալմիկներ և այլ ժողովուրդներ, որոնք ունեն իրենց ազգային ինքնավարությունը։*

*Վ. Ի. Լենինը տալով նախահեղափոխական Ռուսաստանի բնութագրությունը, նշել է. «Այնպիսի վայրենի երկիր, որտեղ ժողովրդական մասսաները այնքան կողոպտված լինեն կրթության, լույսի և գիտության իմաստով,— այդպիսի երկիր Եվրոպայում չի մնացել և ոչ մի հատ, բացի Ռուսաստանից»[2]։*

*Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո Սովետական Ռուսաստանը հասավ սոցիալ-տնտեսա-*

---

[1] **О. И. Чистяков,** Формирование РСФСР как федеративного государства (1917—1922 гг.). «Вопросы истории», № 8, 1968, стр. 3—17.

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 19, էջ 153։

կան և կուլտուրական բարգավաճմանը։ Սովետական իշխանության հիսուն տարում Ռուսաստանյան ֆեդերացիայի աշխատավորների անձնվեր աշխատանքի արդյունքները փառահեղ են, որոնք ուրախություն են պատճառում սովետական մարդկանց։ ՌՍՖՍՀ-ում ստեղծվեց խոշոր սոցիալիստական արդյունաբերություն։ Ստեղծվեցին և մեծ զարգացում ստացան ծանր արդյունաբերության այնպիսի ճյուղեր, որպիսիք գոյություն չունեին ցարական Ռուսաստանում։ Զարգացան հատկապես ավտոմոբիլաշինությունը, ավիացիոն արդյունաբերությունը, տրակտորաշինությունը, հաստոցաշինությունը, սարքաշինությունը, ալյումինի, քիմիական արդյունաբերությունը։

Առաջին հնգամյակի տարիներին ՌՍՖՍՀ-ում շահագործման հանձնվեցին ծանր արդյունաբերության մի շարք գործարաններ, որոնք արմատապես փոխեցին հանրապետության դեմքը։

Երկրորդ հնգամյակում ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ուղղությամբ խոշոր աշխատանք կատարվեց։ Այդ ժամանակաշրջանում շահագործման հանձնվեցին 2900 արդյունաբերական նոր ձեռնարկություններ։ Հատուկ ուշադրություն դարձվեց ինքնավար հանրապետությունների, մարզերի և ազգային օկրուգների տնտեսության զարգացման վրա։ Երկրորդ հնգամյակի տարիներին Բաշկիրական, Թաթարական, Կարելական, Չուվաշական Ինքնավար Հանրապետություններում ստեղծվեցին խոշոր ձեռնարկություններ։

ՌՍՖՍՀ արդյունաբերության արտադրանքը 1913 թվականի համեմատությամբ աճեց ավելի քան 6 անգամ, իսկ 1940 թվականին ՌՍՖՍՀ արդյունաբերության արտադրանքը 8,7 անգամ գերազանցեց նախահեղափոխական Ռուսաստանի արդյունաբերական արտադրանքը։

Հայրենական պատերազմի ընթացքում հսկայական վնաս կրեց ՌՍՖՍՀ էկոնոմիկան։

Ռուսաստանյան ֆեդերացիայի մի շարք մարզեր հիտլերականները օկուպացրին և լրիվ կամ կիսով չափ ոչնչացրին 12150 արդյունաբերական ձեռնարկություն, 13 հազար կիլո-



մետր երկաթուղային գիծ, թալանեցին ու ավերեցին 52813 կոլտնտեսություն, 862 սովխոզ, 1334 մեքենատրակտորային կայան և բազմաթիվ ուսումնական, գիտական, կուլտուրական այլ հիմնարկներ[1]։

Ետպատերազմյան հնգամյակի ընթացքում ո՛չ միայն վերականգնվեց պատերազմի պատճառով քայքայված ժողովրդական տնտեսությունը, այլև գերազանցեց նախապատերազմյան մակարդակը 70 տոկոսով։

Ետպատերազմյան տարիներին ՌՍՖՍՀ աշխատավորները ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում ձեռք բերեցին խոշոր հաջողություններ։

Յոթնամյակի ընթացքում բուռն կերպով զարգացավ հանրապետության տնտեսությունը։ Ներկայումս Ռուսաստանյան ֆեդերացիան վստահ քայլերով առաջ է ընթանում դեպի կոմունիզմ։ Մեծ է նրա տեսակարար կշիռը սովետական երկրի ժողովրդական տնտեսության բոլոր ասպարեզներում։

Սովետական Միությունում 1966 թվականին մշակված էլեկտրաէներգիայի արտադրության 66, նավթի հանույթի 82, ածխի, բամբակեղեն գործվածքի մշակման 85 տոկոսը բաժին ընկավ Ռուսաստանյան ֆեդերացիային[2]։ Ցարական ամբողջ կայսրությունում հաշվվում էր 666 քաղաք, իսկ սովետական իշխանության հիսուն տարում ՌՍՖՍՀ քարտեզի վրա, բացի եղածներից, երևան եկան 583 ժամանակակից քաղաքաշինության սկզբունքներով զարգացած, բարեկարգ արդյունաբերական նոր քաղաքներ, ուր սոցիալիստական ազգերին ու ազգություններին պատկանող աշխատավորները համերաշխ կերպով ապրում ու աշխատում են և կոմունիստական շինարարության մեջ ներդնում են իրենց արժանի ավանդը։ Սովետական մարդիկ իրենց հերոսական աշխատանքով կառուցեցին Կոմսոմոլսկ, Միրնի, Բրատսկ, Անգարսկ, Սեվերոդվինսկ, Վոլժսկ, Կասպիյսկ և շատ ուրիշ քաղաքներ, որոնցից յուրաքանչյուրն իր առանձնահատուկ տեղը և նշանակությունն ու-

[1] Народное хозяйство РСФСР, статистический сборник, М., 1967, стр. 26.

[2] «Правда», 21 декабря 1967.

նի Սովետական Ռուսաստանի արդյունաբերական հզորության մեջ։ Նոր քաղաքների կառուցման հետ միասին մեծ աշխատանք է կատարվում ռուսական հին, պատմական նշանակություն ունեցող քաղաքների բարեկարգման ուղղությամբ։ Սովետական մարդկանց ստեղծագործ աշխատանքով անճանաչելի են դարձել Մոսկվա, Լենինգրադ, Իրկուտսկ, Խաբարովսկ, Վլադիվոստոկ, Գորկի քաղաքները։ ՌՍՖՍՀ-ն հզոր արդյունաբերական, զարգացած գյուղատնտեսական և առաջավոր կուլտուրայի ու գիտության երկիր է։

ՌՍՖՍՀ-ի խոշոր արդյունաբերության կարևոր ճյուղերից է քիմիական արդյունաբերությունը։ Հանրապետությունը դարձել է «մեծ քիմիայի» երկիր։ Ռուսաստանյան ֆեդերացիայի քիմիական արդյունաբերությունը առաջատար տեղ է գրավում Սովետական Միության քիմիական արտադրանքի թողարկման բնագավառում։ Վառելիքի և նավթի արդյունաբերությունը խոշոր նշանակություն ունի հանրապետության տնտեսության մեջ։ Ետպատերազմյան տարիներին նավթի հանույթը ՌՍՖՍՀ-ում աճել է 23 անգամ[1]։ Սովետական իշխանության օրոք հիմք դրվեց գազի արդյունաբերությանը, որ տարեցտարի զարգանում է։ ՌՍՖՍՀ-ում գործող գազամուղներից նշանավոր են Հյուսիսային Կովկաս—Մոսկվա—Լենինգրադ, Շեբելինկա—Բելգորոդ—Բրյանսկ գազամուղները, որոնք ժողովուրդների բարեկամության ամրապնդման կարևոր գործոններից են։

ՌՍՖՍՀ-ում արագ կերպով զարգանում է մեքենաշինությունը, որի նշանակությունը կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման գործում մեծ է։ Ռուսաստանյան ֆեդերացիան Սովետական Միության մեքենաշինության հիմնական բազան է, որը արդյունաբերության, գյուղատնտեսության ու տրանսպորտի համար թողարկում է զանազան մեքենաներ և հաստոցներ։ Սովետական երկրում և նրա սահմաններից դուրս մեծ փառքի են արժանացել ՌՍՖՍՀ-ի հաստոցաշինությունը, տրակտորաշինությունը, ինքնաթիռաշինությունը և արդյունաբերության բազմաթիվ այլ ճյուղեր, որոնք կոմունիստական շինարարության նոր հաջողությունների երաշխիքն

[1] Յա. Ն. Զաքան, Ռուսաստանյան ֆեդերացիան 50 տարում, Երևան, 1967, էջ 17։



են։ Աշխատանքի փառքի պսակով են զարդարված Ուրալմաշի, Մոսկվայի, Գորկու, Յարոսլավլի, Ուրալի և Ուլյանովսկի ավտոգործարանները, Նիժնի Տագիլի վագոնաշինական, Վոլգոգրադի և Չելյաբինսկի տրակտորային գործարանները, Դոնի Ռոստովի գյուղատնտեսական մեքենաշինության, Մոսկվայի գնդառանցքակալների, Գորկու ֆրեզերային հաստոցների, Սարատովի կոմբայնի, Սվերդլովսկի քիմիական և բազմաթիվ ուրիշ գործարանների բանվորական կոլեկտիվները։

Ռուսաստանյան ֆեդերացիան նշանավոր է նաև նրանով, որ նրանում է հիմնականում կենտրոնացված Սովետական Միությունում թողարկվող շոգեքարշների, կաթսաների, դիզելների, գեներատորների, հացահատիկային կոմբայնների, թեթև ավտոմոբիլների և այլ մեքենաների արտադրությունը։

Սովետական իշխանության տարիներին Ռուսաստանյան ֆեդերացիայի արևելյան շրջաններում սև մետալուրգիան արագ զարգացավ։ Ամբողջ երկրում հայտնի են դարձել Ուրալ-Կուզնեցկի կոմբինատը, Մագնիտոգորսկի, Նիժնի Տագիլի և Կուզնեցկի մետալուրգիական գործարանները։ Մագնիտոգորսկի կոմբինատը 1967 թվականին տվել է երկու անգամ ավելի մետաղ, քան նախահեղափոխական Ռուսաստանի բոլոր ձեռնարկությունները միասին վերցրած։

Հսկայական չափով զարգացել է ածխարդյունաբերությունը, որի բաժինը կազմում է քարածխի համամիութենական հանույթի 57 տոկոսը։

Ռուսաստանյան ֆեդերացիայի զարգացած արդյունաբերական ճյուղերից է շինանյութերի արդյունաբերությունը, որը արտադրում է աղյուս, բնական քար, կիր, գիպս, ցեմենտ, կղմինդր, բլոկներ, հավաքովի երկաթբետոնե կառուցվածքներ ու մանրամասնիկներ և այլն։

ՌՍՖՍՀ-ում լայն զարգացում է ստացել սննդի և թեթև արդյունաբերությունը։ Հանրապետությունում այժմ արտադրվում են ռադիոընդունիչներ, սառնարաններ և ժողովրդական սպառման այլ ապրանքներ[1]։

[1] РСФСР в цифрах в 1967 году, М., 1967, стр. 46.

ՌՍՖՍՀ-ում որակական տեղաշարժ է կատարվել արտադրության կազմակերպման և տեխնոլոգիական կառուցվածքի բնագավառում։ Արդյունաբերության բոլոր ճյուղերում արմատավորվում է նոր տեխնիկան, որը հսկայական չափով բարձրացնում է մեքենայացման ու ավտոմատացման մակարդակը, արտադրանքի որակը։

ՌՍՖՍՀ ինդուստրիալ հզորությունը պատկերացնելու համար բավական է նշել, որ եթե մինչև հեղափոխությունը Ռուսաստանը ներկա Ռուսաստանյան ֆեդերացիայի սահմաններում տարեկան ձուլել է ընդամենը 1,8 միլիոն տոննա պողպատ, 1,3 միլիոն տոննա չուգուն, ապա 1966 թվականին Սովետական Ռուսաստանում պողպատի ձուլումը հասավ 52, իսկ չուգունինը՝ 32,5 միլիոն տոննայի[1]։

Սովետական պետության հիմնադիր Վ. Ի. Լենինը ամենաառաջնահերթ խնդիր էր դրել՝ Ռուսաստանը դարձնել համատարած էլեկտրիֆիկացիայի երկիր։ Կոմունիստական կուսակցությունը, սովետական պետությունը, մեր երկրի բազմազգ ժողովուրդները ոչ մի ջանք ու եռանդ չխնայեցին Ռուսաստանյան ֆեդերացիայի էլեկտրիֆիկացման համար։ Այժմ Վ. Ի. Լենինի առաջադրած խնդիրը իրականություն է դարձել։ ՌՍՖՍՀ-ում ստեղծվել է հզոր էներգետիկա, որը բացառիկ կարևորություն ունի կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման գործում։ Ռուսաստանյան ֆեդերացիան այժմ մի քանի անգամ ավել էլեկտրաէներգիա է արտադրում, քան ցարական Ռուսաստանն ամբողջությամբ վերցրած։

Հնգամյակների տարիներին կառուցվեցին բազմաթիվ էլեկտրակայաններ։ ՌՍՖՍՀ-ում մեծ մասշտաբով կառուցվում են հիդրոէլեկտրակայաններ, որոնք է՛լ ավելի հզոր կդարձնեն հանրապետության էներգետիկ բազան, իսկ այդ խիստ անհրաժեշտ է կոմունիզմի նյութատեխնիկական պայմանների ընդարձակման համար։ Այդ իմաստով հատուկ նշանակություն կունենա Ենիսեյի վիթխարի էներգետիկ ռեսուրսների կոմպլեքսային իրացումը։

Հիդրոէլեկտրակայանների կառուցմանը զուգընթաց հան-

[1] «Советская Россия», 12 октября 1967.



րապետությունում մեծ ուշադրություն է դարձվում ջերմաէլեկտրակայանների շինարարության վրա։ Ջերմաէլեկտրակայաններից շատերը կառուցվել և կառուցվում են հանրապետության քարածխի, բնական գազի և մազութի օգտագործման բազայի վրա, որը ավելի էժան է, քան մյուս ռեսուրսները։

Ռուսաստանյան ֆեդերացիայում համագործակցված մեծ աշխատանք է կատարվում ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում։ Մեծ հռչակ են վայելում Օբնինսկի, Բելոյարսկի, Նովի Վորոնեժի ատոմային էլեկտրակայանները, որոնք հարստացնում են ՍՍՀՄ էներգետիկ ռեսուրսները և նոր հեռանկարներ ստեղծում կոմունիզմի նյութատեխնիկական բազայի զարգացման համար։ ՌՍՖՍՀ-ում առաջընթաց տեմպերով է զարգանում էլեկտրաէներգիայի արտադրությունը, իսկ դրա շնորհիվ հանրապետությունում հսկայական քայլ կատարվեց էլեկտրիֆիկացման լենինյան պլանի կենսագործման, ինչպես և արդյունաբերության բոլոր ճյուղերի արագ զարգացման ուղղությամբ։ Սովետական հասարակարգի հետագա ամրապնդման և զարգացման գործում օրավուր աճում է ՌՍՖՍՀ աշխատավորների ավանդը։

Հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքը նախահեղափոխական շրջանի համեմատությամբ խիստ ավելացել է։ Այժմ հինգ օրում արտադրվում է այնքան արտադրանք, որքան ամբողջ տարվա ընթացքում արտադրում էր ցարական Ռուսաստանի արդյունաբերությունը[1]։ ՌՍՖՍՀ-ն առաջատար տեղ է գրավում արդյունաբերական արտադրանքի համամիութենական արտադրության մեջ։ Հանրապետության տերիտորիայում գտնվող արդյունաբերական ձեռնարկությունները թողարկում են Սովետական Միության արտադրանքի ամբողջ արտադրության երկու երրորդը։ Մեծ անուն է հանել Մոսկվայի, Լենինգրադի, Նովոսիբիրսկի, Սվերդլովսկի, Դոնի Ռոստովի, Վոլգոգրադի, Օմսկի, Ռյազանի և

[1] «Правда», 21 декабря 1967.

Սովետական Ռուսաստանի բազմաթիվ այլ քաղաքների արդյունաբերական արտադրանքը[1]:

Ներկայումս ՌՍՖՍՀ աշխատավորության մեծ մասը անցել է հնգօրյա աշխատանքային շաբաթի, որը լավ պայմաններ է ստեղծում աշխատավորների հանգստի և նրանց հոգևոր զարգացման համար:

Արդյունաբերությունից հետո գյուղատնտեսությունն է առաջատար տեղ գրավում հանրապետության տնտեսության մեջ: Գյուղատնտեսությունը տալիս է ՌՍՖՍՀ համախառն արտադրանքի 13,3 տոկոսը: Հանրապետության գյուղատնտեսության մեջ (ներառյալ անտառային տնտեսությունը) զբաղված է բնակչության շուրջ մեկ քառորդը[2]: Ռուսաստանյան ֆեդերացիայի գյուղատնտեսության տեսակարար կշիռը գյուղատնտեսական արտադրանքի համամիութենական արտադրության մեջ մեծ է: ՌՍՖՍՀ տերիտորիայում են գտնվում ՍՍՀՄ բոլոր սովխոզների 54 տոկոսը, կոլտնտեսությունների 44 տոկոսը, ցանքատարածությունների 59 տոկոսը: Ռուսաստանյան ֆեդերացիան տալիս է հացահատիկի համամիութենական արտադրության 58 տոկոսը, կարտոֆիլի 56 տոկոսը, բանջարեղենի 47 տոկոսը, երկրի խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի 52 տոկոսը, խոզերի 50 տոկոսը, ոչխարների և այծերի 45 տոկոսը: Հանրապետության կոլտնտեսություններն ու սովխոզները տալիս են մսի համամիութենական արտադրության 54 տոկոսը, բրդի 48 տոկոսը, ձվի 58 տոկոսը[3]:

ՌՍՖՍՀ գյուղատնտեսությունը զինված է առաջավոր տեխնիկայով, որի շնորհիվ և զգալի չափով մեքենայացված են գյուղատնտեսական աշխատանքները: Հանրապետության գյուղատնտեսության էլեկտրիֆիկացման ուղղությամբ զգալի աշխատանք է կատարված: Հսկայական չափով փոխվել է գյուղի դեմքը, աստիճանաբար վերանում են քաղաքի և գյուղի միջև գոյություն ունեցող տարբերությունները: Այժմ ռուսական գյուղում գլխավոր դեմքը դարձել են մեխանիզատորնե-

[1] «Московская правда», 11 декабря 1968.

[2] РСФСР в цифрах в 1967 году, М., 1968, стр. 83.

[3] «Правда», 20 декабря 1968.



րը, գյուղատնտեսները, զոոտեխնիկները: Գյուղում առաջ է եկել և անընդհատ կերպով զարգանում է նոր մտավորականություն, որը ոչ մի ջանք ու եռանդ չի խնայում կոմունիստական շինարարությունն առաջ մղելու համար:

Ռուսաստանյան ֆեդերացիայի բազմաթիվ ազգերի ու ազգությունների աշխատավորների հաջողությունները մեծ են նաև կապիտալ շինարարության, ժողովրդի բարեկեցության, կրթության, գիտության, կուլտուրական շինարարության և ժողովրդական տնտեսության մյուս բնագավառներում:

Սովետական իշխանության տարիներին ՌՍՖՍՀ-ն անցել է կուլտուրական շինարարության մեծ ուղի և դարձել է համատարած գրագիտության երկիր, ունի բարձր զարգացած ժողովրդական կրթության սիստեմ, գիտություն և կուլտուրա: ՌՍՖՍՀ-ում են գտնվում Սովետական Միության խոշոր բուհերը: Ռուսաստանյան ֆեդերացիայի 167 քաղաքներում ներկայումս գործում են բարձրագույն ուսումնական հաստատություններ, ուր սովորում են 2470 հազար ուսանողներ:

Հայրենական գիտության զարգացման տեսակետից ՌՍՖՍՀ-ն Սովետական Միությունում առաջատար տեղ է գրավում: Մոսկվայում է գտնվում ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիան, որը Ռուսաստանյան ֆեդերացիայում ունի չորս բաժանմունք և Սիբիրի գիտական նշանավոր կենտրոնը:

ՌՍՖՍՀ-ում են աշխատում նաև Վ. Ի. Լենինի անվան համամիութենական գյուղատնտեսական ակադեմիան, գեղարվեստական, բժշկական և մանկավարժական գիտությունների ակադեմիաները, ՌՍՖՍՀ կոմունալ տնտեսության ակադեմիան և գիտահետազոտական բազմաթիվ ինստիտուտներ: Մոսկվայից բացի, գիտական խոշոր կենտրոններ են դարձել Լենինգրադը, Նովոսիբիրսկը, Տոմսկը, Սվերդլովսկը, Գորկին, Կազանը, Վորոնեժը, Սարատովը, Իրկուտսկը և այլ քաղաքներ:

Սովետական իշխանության տարիներին հսկայական չափով ընդարձակվել է ժողովրդական կրթության ցանցը:

Հանրապետությունում գործում են ավելի քան 120 հազար հանրակրթական դպրոց, 2200 միջնակարգ մասնագիտական և 432 բարձրագույն ուսումնական հաստատություն: Այժմ ՌՍՖՍՀ-ում գործում են 10 հազար բանվորական, գյուղական

երիտասարդության հանրակրթական դպրոցներ[1], որպիսիք ցարական Ռուսաստանում բնավ չեն եղել։ Սիստեմատիկաբար ընդլայնվում է արհեստագործական-տեխնիկական ուսումնական հաստատությունների ցանցը, որը ժողովրդական տնտեսության համար պատրաստում է որակյալ կադրեր։

Սովետական իշխանության տարիներին ստեղծվել է թատրոնների, կինոթատրոնների, ակումբների, կուլտուրայի պալատների, գրադարանների լայն ցանց, որոնք ի սպաս են դրված կոմունիզմ կառուցող մարդկանց կուլտուրական սպասարկման գործին։ Հանրապետությունը հարուստ է օպերայի և բալետի, երաժշտական կոմեդիայի, դրամատիկական մանկական և պատանի հանդիսատեսի թատրոններով։

Ռուսաստանյան ֆեդերացիան մյուս հանրապետությունների համար օրինակ է ծառայում նաև ժողովրդական ինքնագործ արվեստի զարգացման բնագավառում։

Կուլտուրական հեղափոխության հաղթանակի շնորհիվ հանրապետության աշխատավորները լայնորեն օգտվում են գիտության համաշխարհային նվաճումներից և այն ի սպաս դնում կոմունիստական հասարակարգի կառուցման մեծ գործին։

ՌՍՖՍՀ-ում զգալի չափով աճել է ժողովրդի բարեկեցությունը։

Ռուսաստանյան ֆեդերացիայի քաղաքներում և գյուղերում հսկայական չափով բարելավվել են բնակչության կուլտուր-կենցաղային պայմանները, նյութական մակարդակը։ ՌՍՖՍՀ-ում բնակչության բժշկական օգնությունը գտնվում է բարձր մակարդակի վրա։ Հանրապետության հիվանդանոցներում կա ավելի քան 120 հազար մահճակալ։ Ռուսաստանյան ֆեդերացիան բնակչության սպասարկման համար ավելի շատ բժիշկներ ունի, քան ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան։ Միայն 1966 թվականին ՌՍՖՍՀ առողջարաններում, հանգստյան տներում հանգստացել և բուժվել են 4,7 միլիոն մարդ, որից 3 միլիոնը ուղեգրեր ստացել են ձրի կամ վճարել են ուղեգրի արժեքի մեկ

[1] «Советская Россия», 20 декабря 1967.



երրորդ մասը[1]։ Այդ բոլոր հաջողությունների հետ միասին հետաքրքրական պատկեր են ներկայացնում ազգային հարաբերությունները, քանի որ Ռուսաստանյան ֆեդերացիան բազմազգ երկիր է։ ՌՍՖՍՀ կազմի մեջ մտնում են 16 ինքնավար հանրապետություն, 5 ինքնավար մարզ, 10 ազգային օկրուգ, 6 երկրամաս և 49 մարզ, ուր համերաշխ ապրում և աշխատում են 100 ազգեր և ազգություններ։

Ցարական Ռուսաստանում մի շարք փոքր ազգություններ, ինչպես, օրինակ, նենեցները, չուվաշները, յակուտները, էվենկները, կալմիկները թողնված էին անուշադրության, չունեին գիր ու գրականություն, զրկված էին տնտեսական ու քաղաքական ամենատարրական իրավունքներից։ Ցարիզմը նրանց գամել էր արհամարհանքի սյունին և այդ պատճառով նշված ազգությունները աստիճանաբար դադարում էին գոյություն ունենալուց։ Մեծ Հոկտեմբերը կործանումից փրկեց այդ ազգերին ու ազգություններին։

Կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ, սովետական իշխանության գոյության անցած տարիների ընթացքում փոքր ազգերը և ազգությունները տնտեսական ու կուլտուրական բարձր մակարդակի հասան, որի մասին կես դար առաջ երազել անգամ հնարավոր չէր։ Սոցիալիզմի լիակատար ու վերջնական հաղթանակի շնորհիվ տեղի ունեցավ ՌՍՖՍՀ-ում, ինչպես և սովետական երկրի մյուս հանրապետություններում ապրող ազգերի ծաղկում, ամրապնդվեց նրանց սովերենությունը։ Սովետական երկրում ազգերի զարգացումը կատարվում է ոչ թե ազգային երկպառակության, ազգային սահմանափակության ուղիներով, ինչպես այդ տեղի է ունենում կապիտալիստական հասարակարգում, այլ նրանց համագործակցության, փոխօգնության ու եղբայրական բարեկամության ուղիներով։ Դրա հաստատման համար սովետական երկրում կան բազում փաստեր և համոզիչ օրինակներ։ Այդպիսի լավագույն օրինակներից են Բաշկիրիան և Թաթարիան։ Հանրահայտ է, որ մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը նրանք

[1] «Огонёк», октябрь, 1967, № 43, стр. 6.

չունեին արդյունաբերություն, իսկ գյուղատնտեսությունը վարում էին նահապետական եղանակով, այդ պատճառով գյուղատնտեսությունը գտնվում էր ցածր մակարդակի վրա։ Աշխատավոր գյուղացիները ենթարկվում էին ամենածանր շահագործման։ Բաշկիրիայի և Թաթարիայի բնակչության ճնշող մեծամասնությունը անգրագետ էր, զուրկ կուլտուրական հիմնարկներից։ Այժմ բոլորովին փոխվել է դրանց տնտեսական ու կուլտուրական վիճակը։

Լենինյան ազգային քաղաքականության հաղթանակի շնորհիվ ՌՍՖՍՀ-ի ազգային հանրապետությունները, մարզերը և օկրուգները դարձել են ինդուստրիալ շրջաններ, ուր արագ կերպով զարգանում է նավթի, քիմիայի, մեքենաշինության, թեթև ու սննդի արդյունաբերությունը։ Այսպես, օրինակ՝ Թաթարիան նավթի հանույթով այժմ ՍՍՀՄ-ում գրավում է առաջին տեղը։ 1967 թվականին Բաշկիրիայի արդյունաբերական արտադրանքի ծավալը 1913 թվականի մակարդակի համեմատությամբ աճեց 352, իսկ Թաթարիայինը՝ 258 անգամ։ Այդ ազգերի կյանքում այս մեծագույն փոփոխությունները, զարգացման աներևակայելի թռիչքները տեղի ունեցան սոցիալիստական սիստեմի շնորհիվ, մի բան, որ անհնարին է բուրժուական աշխարհում։

Կուլտուրական հեղափոխության արդյունքները մեծ եղան նաև ՌՍՖՍՀ-ում բնակվող փոքր ազգերի և ազգությունների կյանքում։ Յակուտիայում յուրաքանչյուր 10 հազար մարդուն ընկնում է 48 ուսանող։ ՌՍՖՍՀ ազգային փոքրամասնությունները նույնպես ակտիվ մասնակցություն են ունենում երկրի հասարակական-քաղաքական կյանքին։ Չուկոտկայի դուստր Աննա Նուտետեգրինը ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության անդամ է, Չուկոտկայի օկրուգային սովետի գործադիր կոմիտեի նախագահ։ Նա գործնական մասնակցություն է ունենում երկրի տնտեսական, քաղաքական և կուլտուրական շինարարության աշխատանքներին։

Մեծ Հոկտեմբերը և սոցիալիզմի լիակատար ու վերջնական հաղթանակը արմատապես փոփոխություններ առաջ բերին Ռուսաստանյան ֆեդերացիայի բոլոր ազգերի ու ազգությունների հոգևոր կյանքում։



ՌՍՖՍՀ կազմի մեջ մտնող բոլոր ինքնավար հանրապետությունները, մարզերը և ազգային օկրուգներն ունեն իրենց պետականությունը։ Դեռևս սովետական իշխանության առաջին տարիներին ՍՄԿԿ-ն լրջորեն մտահոգվեց և արմատականորեն լուծեց փոքր ազգերի ու ազգությունների պետականության զարգացման հարցը, ապահովեց նրանց սուվերեն իրավունքները։ Սովետական իշխանության տարիներին բաշկիրները, բուրյաթները, կաբարդինները, կալմիկները, մորդվինները, չուվաշները, Դաղստանի և մյուս երկրամասերի աշխատավորները ձեռք բերեցին գիր ու գրականություն։ Դաղստանի Ինքնավար Հանրապետությունում ապրող ազգերի երեխաների ուսուցումն այժմ տարվում է ութ լեզվով։ Այս ամենը փոքր ազգերի նկատմամբ սովետական իշխանության տածած հարգանքի ու հոգատարության, ազգերի ինքնորոշման իրավունքի հետևողական կենսագործման և նրանց համակողմանի զարգացման համար ստեղծած բարենպաստ պայմանների վառ արտահայտությունն է։

Ինքնավար հանրապետությունների, մարզերի ու ազգային օկրուգների աշխատավորները, սերտ կերպով համախմբված ռուս ժողովրդի շուրջը, նրա անշահախնդիր օգնությամբ զարգացնում են իրենց տնտեսությունն ու կուլտուրան։

Ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում ձեռք բերված խոշոր հաջողությունների համար Լենինի շքանշանով պարգևատրվել են Բուրյաթական, Դաղստանի, Կաբարդա-Բալկարական, Կալմիկական, Կարելական, Կոմի, Մարիական, Մորդվական, Հյուսիս-Օսեթական, Թաթարական, Տուվայի, Ուդմուրտական, Չեչենա-Ինգուշական, Չուվաշական, Յակուտական Ինքնավար Հանրապետությունները, իսկ Բաշկիրիան 1969 թ. մարտին պարգևատրվեց նաև Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով։

ՍՄԿԿ լենինյան ազգային քաղաքականության հաղթանակի շնորհիվ խոշոր արդյունաբերական ու կուլտուրական կենտրոններ են դարձել Ուֆան, Ուլան-Ուդեն, Մախաչկալան, Նալչիկը, Էլիստան, Պետրոզավոդսկը, Սարանսկը, Օրջոնիկիձեն, Կազանը, Կըզըլը, Իժևսկը, Գրոզնին, Չեբոկսարին և այլ քա-

դարեր, որոնք անցյալում գտնվում էին զարգացման շատ ցածր մակարդակի վրա։

Ինքնավար հանրապետությունների, մարզերի ու օկրուգների ազատ և իրավահավասար ազգերը Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ միասին համատեղ ջանքերով կոմունիզմ են կառուցում։

ՌՍՖՍՀ-ում ապրում է 41 միլիոն մարդ, հանրապետության բնակչության գրեթե մեկ երրորդը։ Ռուսաստանյան ֆեդերացիայում բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորում է 5 միլիոն մարդ։ Առանց բացառության բարձրագույն ուսումնական հաստատություններ ունեն բոլոր մարզերը, երկրամասերը, ինքնավար հանրապետությունները։

ՌՍՖՍՀ-ում 22 ժողովուրդների լեզուներով գրքեր են լույս տեսնում, որոնցից մի քանիսը մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը նույնիսկ չունեին գիր ու գրականություն։ Բուռն կերպով զարգանում են Սովետական Ռուսաստանի գեղարվեստական գրականությունը, արվեստը, գիտությունը։

Այսպիսով, ՍՍՀՄ-ում սոցիալիզմի լիակատար և վերջնական հաղթանակի շնորհիվ ո՛չ միայն ապահովված է ազգերի ու ազգությունների քաղաքական իրավահավասարությունը, այլև արմատապես վերացված է հին հասարակարգից ժառանգված՝ նրանց տնտեսական և կուլտուրական անհավասարությունը։ ՌՍՖՍՀ-ում բնակվող բոլոր ազգերը և ազգությունները իրենց մեծ ավանդն են ներդնում ՍՍՀՄ ժողովուրդների լենինյան բարեկամության զարգացման և կոմունիստական շինարարության ընդհանուր գործում։

1967 թվականի դեկտեմբերի 19-ին Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունը պարգևատրվեց Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով։

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրում ասված է. «Հեղափոխական շարժմանը, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությանը Ռուսաստանի Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության աշխատավորների մատուցած ակնառու ծառայությունների և աշխարհում առաջին սոցիալիստական բազմազգ պետության՝ Սովետական



Սոցիալիստական Հանրապետությունների Միության ստեղծման ու ամրապնդման ասպարեզում ներդրած մեծ ավանդի, սովետական իշխանության նվաճումները պաշտպանելիս ցուցաբերած խիզախության և հերոսության ու կոմունիստական շինարարության գործում ձեռք բերած հաջողությունների համար Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունը պարգևատրել Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով»[1]։

1968 թ. հուլիսի 19-ին ՌՍՖՍՀ Գերագույն սովետի նստաշրջանում Ռուսաստանի ֆեդերացիային հանձնվեց Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանը։ Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով պարգևատրելը Ռուսաստանի աշխատավորների ակնառու ծառայությունների նոր, կոմունիստական հասարակարգ կառուցող ամբողջ սովետական ժողովրդի ընդհանուր գործում նրանց հսկայական ավանդի ճանաչումն է և գնահատականը։ Աշխատանքում և մարտում ցուցաբերած տոկունությունն ու համառությունը, արիությունն ու հերոսությունը, նրա արդարացիությունը, բարությունն ու զգայուն վերաբերմունքը, ուրիշներին օգնության շտապելու պատրաստակամությունը[2] ռուս ժողովրդի բնորոշ գծերն են, որոնք նրան արժանի փառք և ճանաչում են բերել ամբողջ աշխարհի ժողովուրդների մոտ։

Ռուսաստանի ֆեդերացիան հանդիսացավ ժողովուրդների հզոր համագործակցության, Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության նախատիպը, որը ոգեշնչեց և լենինյան մեծ ընտանիքի մեջ միավորեց բոլոր մեծ ու փոքր ազգերին։

Ռուսաստանի ֆեդերացիան լենինյան ազգային քաղաքականության, մեծ ու փոքր ժողովուրդների իրավահավասարության քաղաքականության հաղթանակի ակնառու օրինակն է։

Լենինի երկու շքանշանների հետ Հոկտեմբերյան հեղա-

---

[1] «Правда», 20 декабря 1967.

[2] «Ленинское знамя», 20 июня 1968.

փոխության նոր շքանշանը զարդարեց Ռուսաստանյան ֆեդերացիայի դրոշը։

«Պրավդա» թերթը արտահայտելով Սովետական Միության բոլոր ժողովուրդների սերը և նվիրվածությունը Սովետական Ռուսաստանի նկատմամբ, գրել է.

«Ռուսաստան խոսքը հատուկ զգացմունքով արտասանում են սովետական երկրի բոլոր անկյուններում։ Սովետական յուրաքանչյուր մարդ անսահման սիրով է կապված նրա հետ։ Ռուսաստանը մեծ Լենինի հայրենիքն է, հոկտեմբերի հայրենիքը, սովետների հայրենիքը։

Ռուսաստանը՝ այդ մեր պետության մայրաքաղաք Մոսկվան և հեղափոխության օրրան Լենինգրադն է, այդ հսկայական տարածություն է՝ Բալթիկայից մինչև Խաղաղ օվկիանոսը, ավելի քան հարյուր ազգերի ու ազգությունների հայրական տունն է, այն երկիրը, որը վերափոխվում է նրանց տաղանդներով և ստեղծագործ աշխատանքով, այդ ինդուստրիայի հսկաներ են, առատ ընդերքը, բարձր կուլտուրայի լույսը։

Ռուսաստանը՝ այդ ՍՍՀՄ եղբայրական իրավահավասար անդամների մեջ առաջինն է, որի նկատմամբ բոլոր ժողովուրդները արտահայտում են իրենց երախտագիտությունը, հարգանքը և սերը»[1]։

Ռուս ժողովուրդը արժանի է այդ մեծարմանը, որովհետև նա իր ամբողջ պատմության ընթացքում միշտ էլ բարձր է պահել ժողովուրդների ազատագրության և անկախության, համերաշխության և բարեկամության դրոշը։

Ռուս ժողովուրդը մեծ ծառայություններ ունի մյուս ժողովուրդների պետականության, տնտեսության և կուլտուրայի զարգացման գործում։ Սոցիալիստական շինարարության ժամանակաշրջանում հատուկ ուժով դրսևորվեցին ռուս ժողովրդի սերը, եղբայրական բարեկամությունը և անքակտելի կապերը Սովետական Միության բոլոր ազգերի ու ազգությունների նկատմամբ։ Սովետական իշխանության տարիներին ռուս ինժեներներն ու բանվորները անմիջականորեն

[1] «Правда», 21 декабря 1967.



մասնակցում էին ՍՍՀՄ բոլոր հանրապետությունների, մարզերի ու ազգային օկրուգների ինդուստրիայի ստեղծման մեծ գործին։

Այժմ կոմունիստական շինարարության պրոցեսում է՛լ ավելի են ամրապնդվում ռուս և Սովետական Միության մյուս ժողովուրդների լենինյան բարեկամությունն ու սոցիալիստական համագործակցությունը։ Ռուսաստանյան Ֆեդերացիայի և միութենական բոլոր հանրապետությունների տնտեսությունը և կուլտուրան սերտորեն կապված են միմյանց հետ։ ՌՍՖՍՀ-ն եղբայրական հանրապետություններին մատակարարում է ավտոմեքենաներ, գունավոր ու սև մետաղ, գյուղատնտեսական և հողափոր մեքենաներ, բազմազան սարքավորում, վառելիք և ժողովրդական սպառման բազմաթիվ այլ նյութեր։

Ռուս ժողովրդի ոգեշնչող աշխատանքը և անշահախնդիր օգնությունը երկրի մյուս ժողովուրդներին, Սովետական Միության բոլոր ազգերի ու ազգությունների սերտ, եղբայրական համագործակցությունը ավելացրին իրենց փայլուն պտուղները։ Բոլոր 15 միութենական հանրապետությունները դարձան ամեն տեսակետից բարձր զարգացած և բարգավաճող սուվերեն պետություններ, որոնք վստահորեն ընթանում են կոմունիզմի ուղիով։

Ռուսաստանյան ֆեդերացիային Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով պարգևատրելը, որպես համաժողովրդական տոն, նշեցին բոլոր սովետական հանրապետությունները, Սովետական Միության բոլոր ազգերն ու ազգությունները։ Այդ պարգևատրության առթիվ սովետական մարդիկ ամբողջ սրտով ողջունեցին ռուս ժողովրդին, որպես բոլոր ազգերի ու ազգությունների ավագ եղբոր, որը ՍՍՀՄ բոլոր եղբայրական ժողովուրդների հետ միասնական շարքում, հանուն մեծ հայրենիքի բարգավաճման, հանուն կոմունիզմի կառուցման ծավալում է ստեղծագործական լայն աշխատանք։

ՌՍՖՍՀ Գերագույն սովետի սեսիան 1968 թ. հուլիսի 19-ին ընդունելով Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանը, ընդգծեց. «Ռուս ժողովրդի, Ռուսաստանի ֆեդերա-

ցիայի բոլոր ժողովուրդների անունից մենք հանդիսավոր կերպով հայտարարում ենք, որ այսուհետև էլ կպահպանենք ու կզարգացնենք մեր երկրի ժողովուրդների անխախտ բարեկամությունը, կամրապնդենք սովետական սոցիալիստական հանրապետությունների միության միասնությունն ու հզորությունը։ **Դա ենք մենք համարում մեր բոլոր ներկա և գալիք հաղթանակների ամուր երաշխիքը»**[1]։

ՌՍՖՍՀ բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը և մտավորականությունը բարձր են գնահատում Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության դերը և նշանակությունը։

Ռուսաստանյան ֆեդերացիայի հերոսական բանվոր դասակարգը, կոլտնտեսային աշխատավորները, ժողովրդական տնտեսության բոլոր մասնագետները, գիտության և արվեստի գործիչներն իրենց առաջավոր փորձը հաղորդում են Ուկրաինայի, Բելոռուսիայի, Ուզբեկստանի, Ղազախստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Լիտվայի, Մոլդավիայի, Լատվիայի, Կիրգիզիայի, Տաջիկստանի, Հայաստանի, Թուրքմենիայի, Էստոնիայի աշխատավորներին։ Սովետական Միության բոլոր ժողովուրդները առանձնահատուկ նշում են Ռուսաստանյան ֆեդերացիայի աշխատավորների խոշոր ավանդը կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման և ժողովուրդների անխախտ բարեկամության ամրապնդման գործում։

ՌՍՖՍՀ պատմական հաջողությունները հսկայական նշանակություն ունեն սովետական պետության հզորությունն էլ ավելի ամրապնդելու, միութենական հանրապետությունների տնտեսական համագործակցությունը և բարեկամությունը համակողմանիորեն զարգացնելու, նրանց կուլտուրան հարստացնելու, սոցիալիստական ազգերին համախմբելու և կոմունիզմը կառուցելու համար։

[1] «Սովետական Հայաստան», 20 հուլիսի 1965։

# Ուկրաինական ՍՍՀ





Ուկրաինական ՍՍՀ մայրաքաղաք
Կիևի գլխավոր պողոտան՝ Կրեշչատիկը

## 2. ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Ուկրաինական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը Եվրոպայի խոշոր պետություններից մեկն է, որն ունի 603,7 հազար քառակուսի կիլոմետր տարածություն և 46 միլիոն 381 հազար բնակչություն։ Նրա տերիտորիան ավելի շատ է, քան Անգլիան և Իտալիան միասին վերցրած։

Սովետական Ուկրաինայի 50 տարին լրացավ 1967 թվականի դեկտեմբեր ամսին։ Ուկրաինական ժողովուրդը երկրի բոլոր ժողովուրդների հետ միասին պայքարել է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի համար և ռուս բանվորներից ու գյուղացիներից անմիջապես հետո առաջինը հաստատեց սովետական իշխանություն Ուկրաինայում[1]։ Իրականացավ ուկրաինական ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրության դարավոր երազանքը։ Մեծ Հոկտեմբերի հաղթանակի շնորհիվ Ուկրաինան ստացավ իր պետականությունը և թևակոխեց սոցիալիստական զարգացման ուղին։ Սովետական իշխանության հաղթանակի համար ուկրաինական ժողովրդի մղած պայքարի ամբողջ պատմությունը անխզելիորեն կապված է Վ. Ի. Լենինի անվան հետ։ Նա միշտ ընդգծել է ռուս և ուկրաինական աշխատավորների, երկրի բոլոր ժողովուրդների եղբայրական միասնության և բարեկամության կենարար ուժի նշանակությունը կոմունիստական հասարակարգի կառուցման համար։

1917 թվականի դեկտեմբերի 25-ին Խարկովում գումարվեց սովետների համաուկրաինական համագումար, ուր հռչակվեց Ուկրաինական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն։ Հասարակական և պետական կարգի բնագավառում ուկրաինական սովետական կառավարությունը ձեռնարկեց սոցիալիստական մի շարք միջոցառումներ։

---

1 Ուկրաինայում սովետական կարգերի հաստատման պատմությունն է նվիրված «Великая Октябрьская социалистическая революция на Украине» (сб. документов и материалов) փաստաթղթերի և նյութերի ժողովածուն, որը բաղկացած է երեք հատորից, լույս է տեսել Կիևում 1957 թվականին։

1919 թվականի մարտի 10-ին սովետների համաուկրաինական երրորդ համագումարն ընդունեց ՈՒՍՍՀ առաջին սահմանադրությունը։ Կենտգործկոմի նախագահ ընտրվեց Գ. Ի. Պետրովսկին։

Կոմունիստական կուսակցությունը կազմակերպեց և գլխավորեց սովետական ժողովրդի պայքարը իմպերիալիստական պետությունների և սպիտակգվարդիականների դեմ, հաջողությամբ ավարտեց քաղաքացիական կռիվները։ Քաղաքացիական կռիվներից հետո ուկրաինական ժողովուրդը անմիջապես ձեռնամուխ եղավ ժողովրդական տնտեսության վերականգնման աշխատանքներին։

Վ. Ի. Լենինը, կուսակցության Կենտկոմը հատուկ ուշադրություն դարձրին Ուկրաինայի արդյունաբերության, գյուղատնտեսության վերականգնման և զարգացման վրա։

Սովետական Ուկրաինան հանդես եկավ հայրենասիրական նախաձեռնությամբ։ 1922 թվականի դեկտեմբերի 13-ին սովետների համաուկրաինական համագումարը ուկրաինական ժողովրդի անունից դիմեց ՌՍՖՍՀ, ԲՍՍՀ և Անդրկովկասյան ֆեդերացիային՝ ստեղծել Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միություն։

1922 թվականի դեկտեմբերի 30-ին սովետների առաջին համագումարում ՈՒՍՍՀ-ն մտավ ՍՍՀՄ կազմի մեջ։ 1926 թվականին Սովետական Ուկրաինայի ժողովրդական տնտեսությունը հիմնականում վերականգնվել էր։ 1926—1929 թվականներին հանրապետությունում կառուցվեց 408 և վերակառուցվեց 421 արդյունաբերական ձեռնարկություն[1]։

Առաջին հնգամյա պլանի հաջող կատարման շնորհիվ ՈՒՍՍՀ-ում արդյունաբերության տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ աճեց և հասավ մինչև 72 տոկոսի։ Սովետական Ուկրաինան երկրորդ հնգամյակի տարիներին նոր հաջողություններ ձեռք բերեց, հատկապես մետալուրգիայի բնագավառում։

Սոցիալիզմի կառուցման շնորհիվ լուրջ փոփոխություն-

[1] Տե՛ս Украинская ССР в цифрах. Краткий статистический справочник, Киев, 1967, стр. 28.



ներ տեղի ունեցան Ուկրաինայում, որոնք ամրապնդվեցին ՈՒՍՍՀ սահմանադրությամբ 1937 թվականին։ Պատերազմի ընթացքում գերմանական ֆաշիստները Սովետական Ուկրաինային հսկայական վնաս հասցրին։ Սովետական ժողովրդի օգնությամբ լիկվիդացվեցին երկրին հասցրած վնասները։

Անցած ժամանակաշրջանում ուկրաինական ժողովուրդը խոշոր ավանդ ներդրեց կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման և ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում։ Այդ կապակցությամբ ՍՄԿԿ Կենտկոմը, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը և ՍՍՀՄ Մինիստրների սովետը Ուկրաինական Սովետական Սոցիալիստական Հանրապետության ստեղծման հիսնամյակի առթիվ գրել են. «Ուկրաինական ժողովուրդն արժանի ավանդ է ներդրել սովետական հանրապետությունների եղբայրական հարաբերությունների զարգացման գործում»[1]։ Ուկրաինական ժողովուրդը բարձր է գնահատում կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ կռած ժողովուրդների լենինյան բարեկամությունը և միշտ հենվել ու հենվում է Սովետական Միության ազգերի ու ազգությունների օգնության և աջակցության վրա։ Հենց այդ սկզբունքներն ու աշխարհայացքը ընդունելով իբրև գործողությունների ծրագիր և անշեղորեն կատարելով Վ. Ի. Լենինի ցուցումները, Ուկրաինայի կոմունիստական կուսակցությունը և ուկրաինական աշխատավոր ժողովուրդը մեծ նախաձեռնություն հանդես բերեցին Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության հիմնադրման և զարգացման գործում։

Ուկրաինական ժողովուրդը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ սրբությամբ կատարեց Վ. Ի. Լենինի ցուցումն այն մասին, որ միայն պրոլետարիատի միասնական գործողություններով և ինտերնացիոնալիզմի վեհ գաղափարներով հնարավոր է զարգացնել Սովետական Ուկրաինան։ Ուկրաինական սովետական պետությունն իր գոյության հիսուն տարում միշտ հանդես է եկել Սովետական Ռուսաս-

[1] «Правда», 24 декабря 1967.

տանի և երկրի բոլոր ժողովուրդների հետ անխախտ միասնությամբ։ Ուկրաինական ՍՍՀ-ն Սովետական Միության ասվերին և իրավահավասար անդամն է։ Նա վայելում է ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների անսահման սերն ու հարգանքը։ Դառնալով Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության լիիրավ անդամը, Սովետական Ուկրաինան եղբայրական բոլոր ժողովուրդների մեծ ընտանիքում ծավալեց ստեղծագործական խոշոր գործունեություն և այդ հիման վրա սոցիալիստական շինարարության ասպարեզում ձեռք բերեց հոյակապ հաղթանակներ։

Ուկրաինական ժողովուրդը միշտ էլ բարձր է գնահատել ժողովուրդների բարեկամությունը և համագործակցությունը, որի հիման վրա նա անցած տարիների ընթացքում արմատական փոփոխության է ենթարկել իր երկիրը, ձեռք բերել համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող հաջողություններ։ Կես դարի ընթացքում Սովետական Ուկրաինան դարձել է հզոր ինդուստրիալ-կոլտնտեսային տերություն։ Արդյունաբերության արտադրությունը 1913 թվականի համեմատությամբ աճել է 44 անգամ։ Սովետական Ուկրաինայում ստեղծվեցին արդյունաբերության բոլորովին նոր ճյուղեր։ Արագորեն զարգացավ ավիացիոն, ավտոմոբիլային, տրակտորային, պրիբորաշինարարական, ռադիոէլեկտրոնային, ալմաստի արդյունաբերությունը։ Ուկրաինական ՍՍՀ-ն այժմ արտադրում է հզոր տուրբիններ, էլեկտրաշարժիչներ, էլեկտրագնացքներ և ծովային խոշոր նավեր։ Մեքենաշինության և մետաղամշակման արդյունաբերությունը աճել է ավելի քան չորս հարյուր անգամ։ Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը Ուկրաինայում ձուլվել են 2,9 միլիոն տոննա չուգուն, 2,4 միլիոն տոննա պողպատ, թողարկվել է 2 միլիոն տոննա գլանվածք։ Իսկ 1966 թվականին Սովետական Ուկրաինան ձուլեց 35,2 միլիոն տոննա չուգուն, 40,5 միլիոն տոննա պողպատ և թողարկեց 32,4 միլիոն տոննա գլանվածք։ Երկրում ստեղծվել է էներգետիկայի հզոր բազա։ 1966 թվականին հանրապետությունում արտադրվեց 100



միլիոն կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա[1]։ Լայն ծավալ է ստացել նավթի և գազի արդյունաբերությունը։

Սովետական իշխանության տարիներին Ուկրաինայում կառուցվել են սոցիալիստական ինդուստրիայի այնպիսի հսկաներ, ինչպիսիք են՝ Դոնբասի և Խարկովի, Դնեպրոպետրովսկի և Կրիվոյ Ռոգի արդյունաբերական ձեռնարկությունները, ինչպես նաև հազարավոր գործարաններ ու ֆաբրիկաներ, հանքահորեր և ածխահորեր, Դնեպրի վրա՝ հզոր ամբարտակներ և հիդրոկայաններ։ Մոսկվայի, Լենինգրադի, Ուրալի հետ միասին միևնույն շարքում կանգնած են Խարկովի, Դոնբասի, Մերձդնեպրյան ավազանի գործարանները, որպես սոցիալիստական ինդուստրիայի առաջատարներ։

Կոմունիստական կուսակցության ամենօրյա հոգատարության շնորհիվ Ուկրաինան դարձավ սոցիալիստական հողագործության բարձր կուլտուրա ունեցող հանրապետություն։ Հսկայական չափով ավելացել է հացահատիկի, շաքարի ճակնդեղի, մսի, կաթի, ձվի արտադրությունը։

Հանրապետության գյուղատնտեսությունը զինված է մեքենաներով, որը հնարավորություն տվեց զարգացնելու հատկապես հացահատիկային կուլտուրան։ Այժմ Ուկրաինայում հացահատիկային կուլտուրան կրկնակի շատ բերք է ստանում, քան նախահեղափոխական առավել բերքատու տարիներին։

Սովետական Ուկրաինան ունի խիստ զարգացած կոլտնտեսություններ ու սովխոզներ, որոնք իրենց մեջ են միավորել երկրի աշխատավոր գյուղացիությանը։ Կոլտնտեսային գյուղացիությունը՝ ամուր դաշնակցած բանվոր դասակարգի հետ, կառուցում է նոր կյանք, ուր աշխատավորները ապրում են ազատ և երջանիկ։

ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական բարեկամությունը և համագործակցությունը բարերար ազդեցություն են գործել և բարենպաստ պայմաններ ստեղծել ուկրաինական կուլտուրայի և գիտության զարգացման վրա։ Միայն Հոկտեմբերյան-

[1] «Правда Украины», 29 декабря 1967, Киев.

յան սոցիալիստական մեծ հեղափոխության հոբելյանական տարում Սովետական Ուկրաինայում հրատարակվեց 3157 միլիոն ընդհանուր տպաքանակով գիրք։ Այժմ Ուկրաինական ՍՍՀ-ում լույս են տեսնում 2200 թերթ և հանդես։ Սովետական Միության բազմազգ ժողովուրդը հպարտանում է Ուկրաինայի ժամանակակից գեղարվեստական գրականությունով և զարգացած արվեստով։

Ուկրաինական ժողովրդի գրականությունն ու արվեստը շատ հարազատ են ՍՍՀՄ բոլոր ժողովուրդներին։ Նրանք անկեղծորեն սիրում են Ուկրաինայի գրականության և արվեստի վարպետներին։

Բարձրագույն կրթությունը լայն ծավալ է ստացել Սովետական Ուկրաինայում։ Հանրապետության 132 բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում է 739 հազար ուսանող։ Բավական է ասել, որ Ֆրանսիայում 10 հազար բնակչության ընկնում է 71 ուսանող, Անգլիայում՝ 5,8, Արևմտյան Գերմանիայում՝ դրանցից էլ քիչ, իսկ Սովետական Ուկրաինայում յուրաքանչյուր 10 հազարից 161 մարդ սովորում է բարձրագույն ուսումնական հաստատություններում։ Մարդկային հասարակության պատմությունը չգիտի բարձրագույն կրթության այնպիսի ժողովրդականություն, ինչպես ներկայումս գոյություն ունի Ուկրաինայում։

Ուկրաինական ժողովրդի ազգային կուլտուրան կարող է այսուհետև էլ ծաղկել և ամրապնդվել միայն ՍՍՀՄ եղբայրական սոցիալիստական ազգերի լենինյան մեծ ընտանիքում։

Ուկրաինական ժողովուրդը ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների եղբայրական բարեկամության և համագործակցության հիման վրա, սերտորեն համախմբված ՍՄԿԿ-ի շուրջը, իր անձնվեր աշխատանքով, սովետական երկրի բոլոր ազգերի ու ազգությունների հետ միասին, ընդհանուր ջանքերով զարգացնում է տնտեսական և կուլտուրական շինարարությունը։

Սովետական պետության կեսդարյա գոյության տարիներին ուկրաինական ժողովուրդը ՍՍՀՄ ժողովուրդների լենինյան ընտանիքում հսկայական չափով ընդարձակել է միջազգային հարաբերությունները։ Ուկրաինական ՍՍՀ-ն Միավոր-



ված ազգերի կազմակերպության և միջազգային մի շարք ինստիտուտների հիմնադիրներից է։ Ուկրաինական ժողովրդի ներկայացուցիչները միջազգային կազմակերպությունների ամբիոններից միշտ էլ պահանջել են ժողովուրդների միջև սահմանել բարեկամություն, հանդես են եկել ժողովուրդների ու ազգերի իրավունքները հարգելու և աշխարհում երկարատև խաղաղություն սահմանելու պահանջով։

Սովետական Միության տնտեսական արտաքին կապերի մեջ Սովետական Ուկրաինան գրավում է նշանակալից տեղ։ Ուկրաինական արդյունաբերության արտադրանքն արտահանվում է արտասահմանյան 88 երկրներ։ Սովետական Ուկրաինան ակտիվ մասնակցություն է ունենում Սովետական Միության կողմից արտասահմանյան երկրներում կատարվող կառուցումներին և շինարարությանը։

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1967 թվականի դեկտեմբերի 22-ի հրամանագրով Ուկրաինական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը պարգևատրվեց Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով։ Հրամանագրում ասված է. «Հեղափոխական շարժմանը, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությանը Ուկրաինական Սովետական Սոցիալիստական Հանրապետության աշխատավորների մատուցած ակնառու ծառայությունների և աշխարհում առաջին սոցիալիստական բազմազգ պետության՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության ստեղծման ու ամրապնդման գործում ներդրած մեծ ավանդի համար, սովետական իշխանության նվաճումները պաշտպանելիս ցուցաբերած արիության ու հերոսության և կոմունիստական շինարարության գործում ձեռք բերած հաջողությունների համար Ուկրաինական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը պարգևատրել Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով»[1]։

Սովետական Միության բոլոր ժողովուրդները ամբողջ սրտով ջերմորեն շնորհավորեցին եղբայրական Ուկրաինայի բոլոր աշխատավորներին։

[1] «Правда», 24 декабря 1967.

Այդ մեծ տոնի օրը ուկրաինական եղբայր ժողովրդին ողջույնի խոսքով դիմեցին տոնահանդեսներին մասնակից ՌՍՖՍՀ, Բելոռուսական ՍՍՀ, Ուզբեկական ՍՍՀ, Ադրբեջանական ՍՍՀ, Ղազախական ՍՍՀ, Վրացական ՍՍՀ, Լիտվական ՍՍՀ, Մոլդավական ՍՍՀ, Լատվիական ՍՍՀ, Կիրգիզական ՍՍՀ, Տաջիկական ՍՍՀ, Հայկական ՍՍՀ, Թուրքմենական ՍՍՀ, Էստոնական ՍՍՀ, ինչպես և հերոս քաղաքներ Մոսկվայի, Լենինգրադի, Վոլգոգրադի, Բրեստի աշխատավորների պատվիրակությունները։ Նրանք ցույց տվեցին, թե ինչպես սովետական երկրում Ուկրաինային հարգում և անկեղծորեն սիրում են։ Նրանք ցուցադրեցին Սովետական Միության բոլոր ազգերի ու ազգությունների սերը, հարգանքը և նվիրվածությունը ուկրաինական տաղանդավոր ժողովրդի նկատմամբ։ Նրանք փառաբանեցին ուկրաինական ժողովրդի խելքը, հմուտ ձեռքերը, անխոնջ աշխատանքն ու անսպառ եռանդը։

Ուկրաինական ժողովուրդն իր հերթին սիրում և հարգում է ՍՍՀՄ մյուս ժողովուրդներին։ Նա ոչ մի ջանք չի խնայում ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը և համագործակցությունը ամրապնդելու և զարգացնելու համար։ Ուկրաինական ժողովրդի պատմությունը հարուստ է բարեկամության հիանալի օրինակներով։ Ահա դրանցից մեկը։ Դարերի խորքից է գալիս ուկրաինական և հայ ժողովուրդների բարեկամությունը։ Այն անցել է պատմության փորձությունների բովով, բռնել ժամանակի քննությունն ու մշտապես ամրապնդվել։ Բայց երկու եղբայրական ժողովուրդների հարյուրամյակների պատմություն ունեցող բարեկամությունը պատմական տարբեր ժամանակաշրջաններում ունեցել է տարբեր բովանդակություն և արտահայտվել է տարբեր ձևերով։

Դարեր առաջ, երբ օտար բռնակալները շարունակ ասպատակում էին Հայաստանը, հրի ու սրի մատնում նրան, հայ ժողովրդի մի ստվար հատվածը ստիպված էր իր ձեռքը վերցնել գաղթականի ցուպը և ապաստան որոնել։ Եվ այդ դաժան ժամանակներում մի անգամ չէ, որ Կիևյան Ռուսիան եղբայրաբար ընդունել է հայ ժողովրդի հալածված ու ծեծ-



ված բյուրավոր զավակների[1]։ Մայր հայրենիքը կորցրած հազարավոր հայերի համար Ուկրաինան դարձավ երկրորդ հայրենիքը, որի անտեսական ու կուլտուրական զարգացման համար նրանք քիչ ջանք ու եռանդ չգործադրեցին։ Ուկրաինական ու հայ ժողովուրդների բարեկամությունը սրբագործվեց օտար նվաճողների դեմ համատեղ մղած ազատագրական կռիվներում ընկած զավակների թափած արյունով։

Սերտորեն համախմբված ռուսական պրոլետարիատի շուրջը, հայ և ուկրաինական աշխատավորական զանգվածները, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, փառավոր էջեր գրեցին ցարական ինքնակալության, կալվածատերերի ու կապիտալիստների դեմ սոցիալական ու ազգային ազատության համար մղած պայքարի տարեգրության մեջ։

Սակայն մարդու կողմից մարդու շահագործման, մասնավոր սեփականության վրա խարսխված հասարակարգի պայմաններում, որոնք մշտապես ծնում էին միջազգային հակասություններ, ժողովուրդների բարեկամական հարաբերությունները չէին կարող դառնալ հասարակության զարգացման օրինաչափություն, նրա շարժիչ ուժը։

Հոկտեմբերյան հեղափոխությունը և նրա ծնունդ սոցիալիզմի դարաշրջանը հիմք դրեցին նոր, սոցիալիստական ազգերի ձևավորմանը և զարգացմանը։

Կոմունիստական շինարարության ժամանակաշրջանում ուկրաինական և հայ ժողովուրդների, ինչպես և ՍՍՀՄ բոլոր ազգերի ու ազգությունների բարեկամությունը և սոցիալիստական համագործակցությունը ստացան նոր որակ, նոր իմաստ ու նոր բովանդակություն։

Հազարավոր կիլոմետրեր են բաժանում Հայաստանը Ուկրաինայից, բայց եղբայրական այդ երկու հանրապետությունների համագործակցությունը և փոխօգնությունը անընդհատ ծավալվում ու լայն թափ են ստանում։

[1] Այդ հարցին է նվիրված «Исторические связи и дружба украинского и армянского народов» (сборник материалов научной сессии), Ереван, 1961, էջ 9—263։

Ուկրաինական և հայ ժողովրդի համագործակցությունը կոմունիստական շինարարության տարիներին հարստացավ նոր փաստերով[1]։ Այսպես, Երևանի ավտոդողերի գործարանի կոլեկտիվը առանց կապիտալ ներդրումների և արտադրական լրացուցիչ կարողությունների շահագործման, ներքին ռեզերվների ու հնարավորությունների հաշվին, վերակառուցել գործարանը և 1961 թվականին հասնել յոթնամյակի վերջին տարվա՝ 1965 թվականի համար սահմանված մակարդակին։ Հայրենասիրական այս պարտավորությունը հեշտ չէր կատարել և պահանջում էր մեծ ջանքեր։ Սոցիալիստական պարտավորությունը կատարելու համար Երևանի ավտոդողերի գործարանի բանվորներին և ինժեներներին Լենինգրադի, Մոսկվայի, Յարոսլավլի, Վորոնեժի հետ միասին եղբայրական օգնության ձեռք մեկնեցին Սովետական Ուկրաինայի մի շարք քաղաքների արդյունաբերական ձեռնարկությունները։ Քիմիական մեքենաշինության Կիևի «Բոլշևիկ» գործարանը Երևան ուղարկեց չորս գլանանոց հզոր արագընթաց փայլարդիչ (կալանդր)՝ կորդի կոկման համար, որը հին ագրեգատի համեմատությամբ աշխատանքի արտադրողականությունը բարձրացրեց երեք անգամ և բարելավեց արտադրանքի որակը։

Ամբողջ երկրում տարածված է Ուկրաինական ՍՍՀ-ի գիտությունների ակադեմիայի Պատոնի անվան էլեկտրաեռակցման ինստիտուտի հռչակը՝ որպես տեխնիկական պրոգրեսի առաջամարտիկի։ Ինստիտուտը մեծ աջակցություն է ցույց տալիս Սովետական Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններին ու կառույցներին՝ էլեկտրաեռակցման նոր առաջավոր մեթոդները արտադրության մեջ արմատավորելու ուղղությամբ։

Եղբայրական Ուկրաինայի ավելի քան 30 մետաղագործական գործարաններից Երևանի Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինության գործարանի հասցեով ուղարկվում են զանազան տեսակի պողպատներ, չուգունի և պղնձի ձու-

[1] Исторические связи и дружба украинского и армянского народов (сборник материалов второй украинско-армянской научной сессии), Киев, 1965, стр. 9—181.





Ուկրաինական ՍՍՀ։ Մեծ ժողովրդականություն է վայելում Կիևի էլեկտրաճշգրիտ սարքերի գործարանի կուլտուրայի պալատի «Վեսնյանկա» ժողովրդական պարային խումբը։ Ուկրաինական հրակեզ պարերից բացի խմբի ծրագրում արժանի տեղ են գրավում նաև ՍՍՀՄ մյուս ժողովուրդների պարերը



Բամբակի բերքահավաքը Թուրքմենիայի դաշտերում

Մի տեսարան «Բարեկամության» նավթամուղի շինարարությունից



կածքներ ու խաղալիկներ, լատուն, էմալ և այլ նյութեր, որոնք հայ էլեկտրամեքենաշինարարների հմուտ ձեռքերում դառնում են շարժական էլեկտրակայաններ, գեներատորներ, էլեկտրաշարժիչներ, որոնց կարելի է հանդիպել ո՛չ միայն Սովետական Միության բոլոր հանրապետություններում, մարզերում և ազգային օկրուգներում, այլև աշխարհի բազմաթիվ երկրներում։

Ժողովուրդների փոխօգնությունը և սոցիալիստական համագործակցությունը արտահայտվում են բազմազան ձևերով։ Այսպես, Երևանի Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինության գործարանը արտադրանք է տալիս Սովետական Ուկրաինայի հարյուրավոր արտադրական ձեռնարկություններին։ Ամեն տարի ուղարկվում են շարժական էլեկտրակայաններ, որոնց կարիքը խիստ զգում է Ուկրաինայի ժողովրդական տնտեսությունը։

Ուկրաինայի և Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունները, կոլտնտեսությունները և գիտական հիմնարկները սերտ կապերով կապված են միմյանց հետ, փոխադարձաբար օգնելով մեկը մյուսին, սովորելով միմյանցից աշխատանքի առաջավոր փորձը, ծավալելով սոցիալիստական մրցությունը։ Ուկրաինայի և Հայաստանի գյուղի աշխատավորները ակտիվորեն մասնակցում են ՍՍՀՄ գյուղատնտեսության վերելքի համար մղվող համաժողովրդական պայքարին։ Դրա լավագույն արտահայտությունը Ուկրաինական ՍՍՀ Խերսոնի մարզի Վիսոկոպոլիեի և Հայկական ՍՍՀ Արտաշատի շրջանների միջև գոյություն ունեցող սերտ բարեկամությունն ու համագործակցությունն են և եղբայրական կապերը։ Արդեն տասնհինգ տարի է, որ սոցիալիստական գործարար մրցության մեջ են գտնվում երկու շրջանների աշխատավորները։ Այդ մրցությունը ծնվեց 1954 թվականին և այդ շրջանների համար հանդիսացավ ստեղծագործական մեծ աշխատանքի նոր ժամանակաշրջան։ Եղբայրական համագործակցությունն ու բարեկամությունն այն կենարար ուժն է, որ առաջ է մղում Վիսոկոպոլիեի և Արտաշատի շրջանների տնտեսությունն ու կուլտուրան, մեծապես նպաստում է աշխատավորների կոմունիստական դաստիարակությանը։ Ի-

բինք՝ այդ շրջանների աշխատավորները, բարձր են գնահատում եղբայրական կապերը։ Վիսոկոպոլիեի շրջանի Լենինի անվան կոլտնտեսության զոոտեխնիկ Թամարա Կոլինչենկոն լինելով Արտաշատում և մոտիկից ծանոթանալով շրջանի աշխատավորների ձեռք բերած հաջողություններին ու զգալով բարեկամական վերաբերմունքը, գրել է. «Այժմ ես զգում եմ, թե ինչքան զորավոր է մեր երկու շրջանների արդեն ավանդույթ դարձած սոցիալիստական մրցությունը, ինչքան ջերմ է ու անկեղծ և ինչքան ամուր է բարեկամությունը մեր միջև»[1]։

Վիսոկոպոլիեի և Արտաշատի աշխատավորների սոցիալիստական մրցության մեջ կարևոր տեղ է գրավում փոխադարձ օգնությունը։ Այսպես, երկար ժամանակ Արտաշատի շրջանի կոլտնտեսություններում իրեն զգացնել էր տալիս անասնապահության ցածր մթերատվությունը, որի պատճառներից մեկը կովերի ցեղայնության անբավարար վիճակն էր։ Իմանալով այդ, վիսոկոպոլցիները ուղարկեցին 1000 գլուխ երինջներ, որոնց միջոցով մի քանի տարում զգալիորեն բարելավվեց Արտաշատի կոլտնտեսությունների հանրային հոտը։

«Պարտքի տակ» չմնացին արտաշատցիները։ Դոնի և նրա վտակ Ինգուլեցի գեղատեսիլ ափերին, անծայրածիր տափաստանում ամուր բնակություն է հաստատել Արարատյան դաշտի մրգերի թագուհին՝ հայկական խաղողը։ Արտաշատի շրջանի ուղարկած տարբեր տեսակների խաղողի ավելի քան 10 միլիոն անկիններով հարստացան Վիսոկոպոլիեի շրջանի կոլտնտեսությունները։ Հայկական արևահամ խաղողը հատկապես մեծ չափերով տարածվել է «Ուկրաինա», «Պրավդա», «Լենինյան ուղի» և Շևչենկոյի ու Միչուրինի անվան կոլտնտեսություններում։ Խաղողի այդ այգիները աշխատավորները անվանել են «բարեկամության այգիներ»։ Փոխադարձ այցելություններ են կատարել մրցակից շրջանների կուլտուրայի տների երգի ու պարի անսամբլները, որոնց ելույթները վերածվել են երկու եղբայրական ժողովուրդների հավիտենական բարեկամության վառ ցույցի։

[1] «Արարատ», 30 մարտի 1962, Արտաշատ։



Արտաշատցիների և վիսոկոպոլցիների օրինակով եղբայրական բարեկամությունը և համագործակցությունը լայն ծավալ են ստացել մեր բազմաբովանդակ կյանքի բոլոր բնագավառներում։

Կոմունիստական շինարարության ընթացքում գնալով ամրապնդվում է մրցակիցների բարեկամությունը։ Հողի հազարավոր մարդիկ Սովետական Հայաստանում աշխատում են նշանավոր մեխանիզատոր, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս Ա. Գիտալովի, եգիպտացորենի բարձր բերքի ճանաչված վարպետ, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս Եվգենյա Դոլինյուկի, անվանի կթվորուհի, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս Մարիա Սավչենկոյի և Սովետական Ուկրաինայի բազմաթիվ լավագույն զավակների ու դուստրերի և արտադրության այլ նորարարների օրինակով։

Կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանում մեծ չափով աճել է կուլտուրական արժեքների փոխանակումը ժողովուրդների միջև։ Այդ բնագավառում արժե հիշել, ամենից առաջ, գեղարվեստական գրականության թարգմանությունը։ Դեռևս 1934 թ. պրոլետարական մեծ գրող Մաքսիմ Գորկին նշել է, որ «իդեալական կլինի, եթե Միության մեջ մտնող յուրաքանչյուր ազգության ամեն մի երկը թարգմանվի միության բոլոր ազգերի լեզուներով»[1]։ Այդ տեսակետից հսկայական աշխատանք է կատարված սովետական բոլոր հանրապետություններում։ Մեծ քանակությամբ ուկրաիներեն հրատարակվել են ռուս, բելոռուս, վրաց, լիտվական, հայ գրողների ստեղծագործությունները։

Միայն մեկ տասնամյակում (1954—1964 թթ.) ուկրաիներեն հրատարակվել են հայ գրողների 15 անուն գործ՝ շուրջ 100 հազար ընդհանուր տպաքանակով։ Ուկրաինացին ծանոթ է հայ անվանի գրողներ Ավ. Իսահակյանի և Ե. Չարենցի ընտիր երկերին, Ալ. Շիրվանզադեի «Քաոս», Ն. Զարյանի «Հացավան», Հր. Քոչարի «Մեծ տան զավակները», Գ. Սևունցի «Թեհրան», Աղավնու «Շիրակ» վեպերին և այլ գրողների ստեղծագործություններին։

[1] «Правда», 17 декабря 1934.

Ուկրաինական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Ա. Տոպչիենկոն գրել է «Հայկական էսքիզներ»՝ նվիրելով Սովետական Հայաստանին։ Կոմունիստական շինարարության պայմաններում գնալով ավելի լայն տարածում են գտնում կուլտուրական կապերը, ստեղծագործական փոխադարձ հյուրախաղերը։ Գիտական սերտ կապեր և համագործակցություն գոյություն ունեն գիտական հաստատությունների ու առանձին գիտնականների միջև։ Ուկրաինական գիտնականները հաճախակի հանդես են գալիս Անդրկովկասի հանրապետություններում և մասնակցում տեսական ու գործնական նշանակություն ունեցող հարցերի քննարկմանը և լուծմանը։ 1962 թ. հոկտեմբերին Թբիլիսիում կայացավ զոդման նոր տեխնիկայի արմատավորման հարցերին նվիրված անդրկովկասյան խորհրդակցություն, որը հրավիրել էին Վրացական, Ադրբեջանական, Հայկական սովետական հանրապետությունների գիտահետազոտական աշխատանքների կոորդինացման կոմիտեները և Ուկրաինական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Ե. Օ. Պատոնի անվան ինստիտուտի աշխատողները։ Գիտական կոնֆերանսում զեկուցումներով հանդես եկան Ուկրաինական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Բ. Ե. Պատոնը և մի շարք ուրիշ գիտնականներ։ Եղբայրական հանրապետությունների գիտնականների հանդիպումները և փոխադարձ օգնությունը կարևոր նշանակություն ունեցան ժողովրդական տնտեսության մեջ զոդման նոր տեխնիկայի արմատավորման համար։

Կոմունիստական շինարարության մեջ դժվար է որոշել, թե որտեղ է վերջանում մեկ ժողովրդի օգնությունն ու աջակցությունը և որտեղից է սկսվում մյուս ազգինը։

Ժողովրդի բարեկամությունը և համագործակցությունը վերածվել են հզոր ուժի, որը դարձել է սովետական մեծ հայրենիքի անսասանության, մարդկության ամենավեհ իդեալների, կոմունիստական հասարակարգի կառուցման կենսարար անկյունաքարերից մեկը, նրա հետագա առաջընթացի կարևորագույն պայմանը, որի համակողմանի զարգացման համար ոչ մի ջանք ու եռանդ չի խնայում ուկրաինական տաղանդավոր ժողովուրդը։

# Բելոռուսական ՍՍՀ





Բելոռուսական ՍՍՀ մայրաքաղաք Մինսկ։ Լենինի պողոտան և
Հաղթանակի հրապարակը

## 3. ԲԵԼՈՌՈՒՍԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՄԱՐ

Բելոռուսական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը ծնվեց ու զարգացավ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի շնորհիվ[1]։ Բելոռուս ժողովուրդը ռուս մեծ ժողովրդի, երկրի բոլոր ժողովուրդների հետ միասին պայքարել է Հոկտեմբերի հաղթանակի համար։ Բելոռուսական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը ստեղծվել է 1919 թվականի հունվարի 1-ին։ 1919 թվականի փետրվարի 2—3-ը Մինսկում գումարվեց Բելոռուսիայի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների սովետների առաջին համագումարը, որտեղ ընդունվեց ԲՍՍՀ առաջին սահմանադրությունը։ Համագումարում ընդունվեց նաև դեկլարացիա, ուր նշվում էր, որ եղբայրական ՌՍՖՍՀ հետ ստեղծել ֆեդերատիվ կապեր։ Համագումարը բելոռուսական ժողովրդի կյանքում կարևոր նշանակություն ունեցավ։ Համագումարը հռչակեց ԲՍՍՀ, որը Բելոռուսական պետության զարգացման հիմքը դրեց։ Բելոռուս ժողովուրդը ՌՍՖՍՀ, Ուկրաինայի և Անդրկովկասի աշխատավորների հետ հանդես եկավ սովետական հանրապետությունների պետական միավորման նախաձեռնությամբ։ Բելոռուս ժողովուրդը, դառնալով ՍՍՀՄ իրավահավասար անդամ, եղբայրական ժողովուրդների հետ միասնական շարքում անցավ պայքարի ու ստեղծագործական աշխատանքի պայծառ ուղի։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, սոցիալիզմի լիակատար ու վերջնական հաղթանակը շրջադարձային կետ հանդիսացան բելոռուս ժողովրդի պատմական ճակատագրում։ Կոմունիստական կուսակցության ղե-

[1] Այդ հարցի համակողմանի պատմությունը շարադրված է «Белоруссия», «Великая Октябрьская социалистическая революция в Белоруссии» աշխատություններում, որոնցից առաջինը լույս է տեսել մեկ հատորով, Մոսկվայում, 1967 թ., իսկ երկրորդը՝ երկու հատորով, Մինսկում, 1957 թվականին։

կամարությամբ բանելով սոցիալիստական հասարակարգի կառուցման ուղին, նա սոցիալիստական ազգերի եղբայրական ընտանիքում ձեռք բերեց իր ազգային սոցիալիստական պետականությունը, և բազմակողմանիորեն զարգացան նրա տնտեսությունն ու կուլտուրան։

Ժողովուրդների եղբայրական բարեկամությունը, սոցիալիստական համագործակցությունը բելոռուս ժողովրդի ձըգտումներին համահունչ ու բնական են, որովհետև սոցիալիստական և կոմունիստական շինարարության տարիներին նա սովետական երկրի բոլոր ժողովուրդներին տվեց մեծ նվաճումներ, որոնց շնորհիվ զարգացավ ու ամրապնդվեց սոցիալիստական հայրենիքը։ Սովետական Միության բոլոր ազգերի ու ազգությունների հետ բելոռուս ժողովուրդը վճռաբար հաղթահարեց մեծագույն դժվարությունները ու կառուցեց սոցիալիզմը։ Եվ այսօր, կոմունիստական ծավալուն շինարարության պրոցեսում, երբ ժողովրդի կողմից նվաճված ու ձեռք բերված հաղթանակի բարձունքներից նայում ես, առանձնապես հստակորեն է երևում, թե որքան բարդ ու դըժվարին խնդիրներ է լուծել բելոռուս ժողովուրդը։ ՍՍՀՄ բազմազգ ժողովուրդների մեծ հաղթանակները նոր եռանդ ու ոգևորություն են առաջ բերում և մոբիլիզացնում ժողովրդի բոլոր ուժերը կոմունիզմի կառուցման համար։ 8,8 միլիոն բելոռուս ժողովուրդը մեկ մարդու պես գիտակցում է բարեկամության ուժը և միավորելով իր տնտեսական ու հոգևոր կարողությունները, անում է ամեն բան, որպեսզի աճի ու զարգանա սովետական պետությունը։ Բելոռուսական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունն իր արժանի ավանդն է ներդնում ժողովուրդների լենինյան բարեկամության, սոցիալիստական հայրենիքի բոլոր աշխատավորներին պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարներին հավատարմության ոգով դաստիարակելու գործում։

ՍՍՀՄ ժողովուրդների Հայրենական պատերազմի ռազմաճակատներում, պարտիզանական միավորումներում և ընդհատակում բելոռուս ժողովրդի որդիներն ու դուստրերը է՛լ ավելի սերտորեն համախմբվեցին կոմունիստական կուսակցության շուրջը, սովետական երկրի եղբայրական ժողո-



վուրդների անխախտ միության ինտերնացիոնալիզմի դրոշի տակ և հերոսաբար պայքարեցին՝ հանուն հայրենիքի անկախության և ազատության։

Հայրենական պատերազմում բելոռուս ժողովուրդը է՛լ ավելի ամրապնդեց ժողովուրդների բարեկամությունը, ցուցաբերեց արիություն, ակտիվություն և անսահման նվիրվածություն սոցիալիզմին։ Անհրաժեշտ էր վերականգնել պատերազմի ավերածը։ Բելոռուս ժողովրդին պետք էր վիթխարի եռանդ, որպեսզի հաղթահարեր դժվարությունները և իրականացներ այդ։ Նրա այդ մեծագույն եռանդը ծնվեց սովետական ժողովուրդների լենինյան մեծ ընտանիքում։ Սովետական Բելոռուսիայի աշխատավորների աշխատանքային վիթխարի խանդավառությունը և եռանդին միավորվեց ՍՍՀՄ բոլոր հանրապետությունների եղբայրական լայն աջակցությունը, որի շնորհիվ և հնարավոր դարձավ ո՛չ միայն վերականգնել այն, ինչ ավերվել էր պատերազմի հետևանքով, այլև թևակոխել արագ զարգացման ուղին։ Սովետական ժողովրդի ազատ ընտանիքում Բելոռուսիան հասավ տնտեսական և կուլտուրական բարգավաճման։

Սովետական ժողովրդի օգնությամբ բելոռուսական բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը և մտավորականությունը անճանաչելիորեն փոխել են հանրապետության դեմքը։ Նա դարձել է սովետական երկրի զարգացած տնտեսական ու կուլտուրական շրջաններից մեկը, ուր կերտվում է նոր կյանք և որով հպարտանում են ՍՍՀՄ բոլոր ազգերն ու ազգությունները։

Հանրապետության արդյունաբերությունը ըստ էության ստեղծվել է սովետական իշխանության տարիներին։ Բելոռուսիան դարձել է առաջավոր արդյունաբերության հանրապետություն։ Արագ կերպով զարգացել են մեքենաշինությունը, ավտոմոբիլային, տրակտորային, ռադիոտեխնիկական, քիմիական, ճշգրիտ սարքաշինության արդյունաբերությունը։

Սովետական Բելոռուսիայի արդյունաբերությունը ժամկետից շուտ 1965 թվականի մարտ ամսին կատարեց յոթ-

նամյա պլանը։ Այդ ժամանակաշրջանում արդյունաբերության արտադրանքը աճեց 2,1 անգամ[1]։

Արդյունաբերության համախառն արտադրանքը 1913 թվականի համեմատությամբ 1966 թվականին աճել է 51 անգամ, իսկ 1940 թվականի համեմատությամբ՝ 7 անգամ։

Հանրապետության արդյունաբերության կարևորագույն արտադրանքը զգալի չափով աճել է։ Այդ հիանալի երևում է հետևյալ աղյուսակից[2].

| Արտադրանքի անվանումը | 1913 | 1940 | 1950 | 1966 |
|---|---|---|---|---|
| Էլեկտրաէներգիա (մլր. կ/ժամ) | 3 | 508 | 749 | 9525 |
| Տորֆ վառելիքային (մլն. տոննա) | 0,01 | 3,4 | 3,9 | 12,3 |
| Մետաղահատ հաստոցներ (հազ. հատ) | — | 6,0 | 4,8 | 25,3 |
| Բեռնատար ավտոմեքենաներ (հազ. հատ) | — | — | 2,4 | 23,0 |
| Տրակտորներ (հազար հատ) | — | — | 0,04 | 75,1 |
| Էլեկտրաշարժիչներ (հազար հատ) | — | 11,8 | 53,3 | 657,7 |
| Պարարտանյութ (պայմանական հազ. տոննա) | — | 13,2 | — | 2715 |
| Քիմիական մանրաթել (հազ. տոննա) | — | 2,6 | 2,2 | 33,2 |
| Ռադիոընդունիչներ և ռադիոլաներ (հազ. հատ) | — | 0,4 | 46,3 | 424 |
| Լայնահաղորդ հեռուստացույցներ (հազար հատ) | — | — | — | 332 |
| Հեծանիվներ (հազար հատ) | — | — | 70,0 | 449 |
| Ցեմենտ (հազար տոննա) | 33 | 200 | 341,7 | 1841 |
| Շինափայտ (միլիոն խոր. մ.) | 2,2 | 6.1 | 5,7 | 4,9* |
| Թուղթ (հազար տոննա) | 21 | 51,3 | 39,9 | 91,6 |
| Կոշիկներ (միլիոն զույգ) | — | 9,8 | 7,5 | 30,4 |
| Կանեփի գործվածքներ (միլիոն մետր) | 0,01 | 15,8 | 19.1 | 56,1 |
| Բրդյա գործվածքներ (մլն. մետր) | 0,04 | 0,3 | 1,4 | 21,2 |
| Շաքար-շաքարավազ (հազար տոննա) | — | — | — | 138 |

Սովետական Բելոռուսիայի արտադրանքի ներկա մակարդակը ցույց է տալիս, թե ինչպես արմատապես փոխվել է հանրապետության դեմքը և դարձել ՍՍՀՄ տնտեսության կարևորագույն բազաներից մեկը։ Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ 1965 թվականին ԲՍՍՀ բաժին է ընկել տրակտորների համամիութենական արտադրանքի 19,8 տոկոսը, մետաղ կտրող հաստոցների 12,9 տոկոսը, բեռնատար ավտոմեքենաների 6,1 տոկոսը, հեռուստացույցների 7,9 տո-

[1] «Советская Белоруссия», 6 марта 1966.

[2] СССР 1917—1967, стр. 517.

* Տվյալը 1965 թվականի է։



կոսը, ռադիոընդունիչների և ռադիոլաների 8 տոկոսը, կանեփի գործվածքների 11,8 տոկոսը, կաթի 6 տոկոսը, մսի՝ 5, կարտոֆիլի 14 տոկոսը[1]։ Իսկ ներկայումս սովետական երկրում թողարկվող յուրաքանչյուր հինգ տրակտորը և մետաղ կտրող ութ հաստոցը պատրաստվում են Բելոռուսիայում։ Հանրապետության արդյունաբերության արտադրանքն այժմ 73 անգամ շատ է, քան 1913 թվականին[2]։ Բելոռուսիայի ծանր ինդուստրիայի արտադրանքը լայն ճանաչում է գտել ո՛չ միայն սովետական հանրապետություններում, այլև արտասահմանյան բազմաթիվ երկրներում։

Կոմունիստական շինարարության ժամանակաշրջանում բելոռուս ժողովուրդը միլիոնավոր թելերով կապված է սովետական հանրապետությունների հետ։ Սովետական Բելոռուսիայի աշխատավորների ձեռքով պատրաստած հազարավոր արտադրանք առաքվում է Ղազախստան, Ուզբեկստան, Լիտվա, Լատվիա, Տաջիկստան և միութենական մյուս հանրապետությունները։ Սովետական ժողովուրդը բարձր է գնահատում Բելոռուսիայի մեքենաներն ու հաստոցները, թեթև և սննդի արդյունաբերության արտադրանքը։ Հսկայական չափով ընդարձակվում են գիտության ու տեխնիկայի նվաճումները, արտադրական փորձի փոխանակումը Բելոռուսիայի և սովետական մյուս հանրապետությունների միջև։ Նյութական ու հոգևոր այն արժեքները, որոնք Սովետական Բելոռուսիան մաքուր սրտով բաժանում է եղբայրական հանրապետություններին, վերջիններս նրան են վերադարձնում հարյուրապատիկը՝ այդ ամենը ընդհանուր ջանքերով գործադրելով կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման համար։ Բելոռուսական ՍՍՀ-ն լինելով Սովետական Միության ժողովուրդների մեծ ընտանիքի լիիրավ անդամը, ունենալով մեկ ընդհանուր նպատակ, ոչինչ չի խնայում այդ վեհ նպատակի՝ գիտական կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման համար։ Այդ նպատակով հանրապետության աշխատավորները հերոսական աշխատանք են կատա-

[1] Տե՛ս СССР 1917—1967, стр. 516.

[2] Народное хозяйство БССР, статист. сборник, Минск, 1967, стр. 38.

բում երկրի լրիվ էլեկտրիֆիկացման, տեխնիկայի զարգացման, հասարակական արտադրության կատարելագործման, արտադրական պրոցեսների կոմպլեքսային մեքենայացման, բնական, նյութական և աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման ուղղությամբ։

Սովետական Բելոռուսիան ունի զարգացած սոցիալիստական գյուղատնտեսություն։ Նրա գյուղատնտեսությունը զինված է ժամանակակից տրակտորներով, կոմբայններով և այլ մեքենաներով։ Սովետական իշխանության տարիներին աճել է Բելոռուսիայի գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան։ 1965 թվականին հանրապետության դաշտերում երկու անգամ ավելի տրակտորներ էին աշխատում, քան 1958 թվականին[1]։ Բելոռուսիայի գյուղատնտեսության առավել զարգացած ճյուղերից են անասնապահությունը և վուշի արտադրությունը։

Երկրի տնտեսության արագ զարգացման հետ միասին ծաղկել է բելոռուս ժողովրդի ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան։ Բելոռուսական ՍՍՀ խոշոր հաջողություններ ունի նաև գիտության, գրականության, արվեստի բնագավառներում։ Սովետական Բելոռուսիայում այժմ աշխատում են ավելի քան 450 հազար մասնագետներ[2], որը երկու անգամ շատ է, քան ուներ ամբողջ ցարական Ռուսաստանը։ Հանրապետությունն ունի 28 բարձրագույն ուսումնական հաստատություն, որտեղ սովորում են 130 հազար ուսանողներ[3]։

Տասը հազար բնակչությանը ընկնող ուսանողների քանակով Բելոռուսիան վաղուց անցել է Եվրոպայի ամենազարգացած երկրներից։ Հանրապետությունը 1966—1967 ուս. տարում ուներ 12.966 հանրակրթական դպրոց, ուր սովորում էին 1769 հազար աշակերտներ։ Դա կուլտուրական հեղափոխության մեծագույն հաղթանակներից մեկն է։

ԲՍՍՀ գիտությունների ակադեմիան իր գոյության ընթաց-

[1] Белорусская ССР в цифрах в 1965 году, краткий статистический сборник, Минск, 1966, стр. 46.

[2] «Советская Белоруссия», 6 декабря 1967, Минск.

[3] «Известия», 28 декабря 1968.



քում հսկայական աշխատանք է կատարել հայրենական գիտության զարգացման համար։ Հոկտեմբերյան հեղափոխությունը և ՍՍՀՄ-ում սոցիալիզմի լիակատար ու վերջնական հաղթանակը բելոռուս ժողովրդին այնպիսի մեծ բարիքներ են տվել, որի համար նա սերտորեն համախմբված է կոմունիստական կուսակցության շուրջը, համերաշխ գործում է ժողովուրդների եղբայրական բարեկամության և սոցիալիստական համագործակցության հետագա զարգացման համար։ Բելոռուս ժողովուրդը կոմունիստական շինարարության մեջ իր ամենօրյա գործունեությամբ սրբությամբ պահպանում է ժողովուրդների բարեկամությունը, որպես ՍՍՀՄ բոլոր հանրապետությունների ժողովրդական տնտեսության զարգացման կարևոր պայման։

Բելոռուսական ՍՍՀ արդյունաբերական ձեռնարկությունները, կոլտնտեսությունները, ուսումնական և գիտական հաստատությունները սերտ կապերով կապված են սովետական բոլոր հանրապետությունների հետ։ Նրանք սոցիալիստական մրցության և համագործակցության մեջ են ՌՍՖՍՀ, Ուկրաինական ՍՍՀ, Ադրբեջանական ՍՍՀ և սովետական երկրի մյուս ժողովուրդների ու ազգերի հետ, որոնք իրենց աշխատանքի փորձով օգնում են նրան։ Այս բոլորը արվում է հաշվի առնելով, որ կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը բոլոր ժողովուրդներից ու ազգերից պահանջում է սովետական հանրապետությունների էլ ավելի սերտ փոխադարձ կապ և օգնություն։

Բելոռուս ժողովուրդը, սերտորեն համախմբված իր հարազատ կոմունիստական կուսակցության շուրջը, ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում ընդարձակում է իր կապերը և համագործակցությունը, գիտակցելով, որ ինչքան սերտ լինի ազգերի շփումը և որքան բարձր լինի համաժողովրդական խնդիրների ըմբռնումը, այնքան հաջողությամբ կհաղթահարվեն տեղայնության և ազգային նեղմտության դրսևորումները, այնքան միաձույլ կլինի ՍՍՀՄ ժողովուրդների լենինյան բարեկամությունը։

Բելոռուս ժողովուրդը թանկ է գնահատում Մեծ Հոկտեմբերի հաղթանակով նվաճած ազատությունը և ժողովուրդների

բարեկամությունը՝ սովետական հասարակարգի շարժիչ ուժերից մեկը։ Կոմունիստական կուսակցության լենինյան ազգային իմաստուն քաղաքականության շնորհիվ, ժողովուրդների եղբայրական բարեկամության և համագործակցության հզոր ուժի հիման վրա զարգանում է Սովետական Բելոռուսիան։

Հեղափոխական տրադիցիաների, սոցիալիզմի կառուցման և կոմունիստական շինարարության գործում ձեռք բերած ակնառու հաջողությունների, ինչպես նաև ՍՍՀՄ-ի ստեղծման ու ամրապնդմանը մատուցած ծառայությունների համար 1968 թ. դեկտեմբերին Բելոռուսական ՍՍՀ-ն պարգևատրվեց Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով։

ՍՍՀՄ բոլոր ժողովուրդներն ամբողջ հոգով ուրախացան և ողջունեցին իրենց եղբորը այդ մեծ պարգևի առթիվ։

Բելոռուս ժողովուրդն ակտիվորեն պայքարում է կոմունիզմի կառուցման համար, հանուն ժողովուրդների եղբայրական բարեկամության հետագա ամրապնդման։

# ՈՒԶԲԵԿԱԿԱՆ ՍՍՀ





Ուզբեկական ՍՍՀ։ Նոր հրապարակ Տաշքենդում

## 4. ՈՒԶԲԵԿՍՏԱՆԸ ԿԱՆԳՆԱԾ Է ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ՀԵՐԹԱՓՈԽՈՒՄ

*Ուզբեկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության մեջ մտնում են Կարա-Կալպակյան ԻՍՍՀ և Տաշքենդի, Սիր-Դարյան, Անդիժանի, Ֆերգանայի, Սամարղանդի, Բուխարայի, Խորեզմի, Սուրխանդարինյան և Կաշկադարինյան մարզերը[1]։ Սովետական Ուզբեկստանի ազգաբնակչությունը կազմում է 11,2 միլիոն մարդ։ 1924 թվականին տեղի ունեցավ Թուրքեստանի ազգային-տերիտորիալ սահմանազատում, և կազմակերպվեցին Ուզբեկական ու Թուրքմենական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունները, որոնք մտան ՍՍՀՄ կազմի մեջ։ Այդ օրվանից ուզբեկ ժողովուրդը դարձավ ՍՍՀՄ ժողովուրդների մեծ ընտանիքի լիիրավ անդամ, և նրա կյանքում տեղի ունեցան արմատական փոփոխություններ։ Ուզբեկ ժողովուրդը պայքարի ու հաղթանակի փառահեղ ուղի է անցել։ 40—50 տարի առաջ բուրժուական մամուլը նշում էր, թե ուզբեկները որպեսզի ֆեոդալական հարաբերություններից կարողանան անցնել քաղաքակրթության, անհրաժեշտ է ո՛չ թե մեկ, այլ մի քանի հարյուրամյակ։ Իսկ այժմ այդ նույն բուրժուական մամուլը հարկադրված է խոստովանել, որ Սովետական Ուզբեկստանը դարձել է զարգացած արդյունաբերական, մեքենայացված գյուղատնտեսական ու առաջավոր կուլտուրայի երկիր։ Ամերիկայի բուրժուական «Կրիսչեն Սայենս մոնիտոր» թերթը 1967 թվականի հունիսին գրել է, որ Ուզբեկստանը «նույնպես տրակտորների ու գազամուղների երկրամաս է, այդ այն երկիրն է, որ կես դար առաջ կանայք կրում էին փարանջա, իսկ հիմա նրանք իրենց գրպանում ունեն ինժեների դիպլոմ»։ Այդ նույն թերթը այնուհետև ավելացնում է, որ «...ամենից ուժեղ տպավորություն թողել են ազգաբնակչության կյանքի նյութական ապահովվածությունը և կենցաղում տեղի ունեցած փոփոխությունները»։*

---

[1] Советский Союз. Узбекистан (Географическое описание в 22 томах), М., 1967, стр. 17—20.

Բուրժուական աշխարհի խոստովանությամբ ուզբեկական հողի վրա հրաշք է կատարվել: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը ուզբեկ ժողովրդին տվեց ազատություն և պետականություն: Ռուսաստանի հերոսական բանվոր դասակարգը, ռուս մեծ ժողովուրդը եղբայրական ձեռք մեկնեցին Ուզբեկստանի աշխատավորներին, նրանց ցույց տվեցին ռազմական, քաղաքական և տնտեսական անշահախնդիր օգնություն: Լենինյան ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ վերացվեց Ուզբեկստանի տնտեսական ու կուլտուրական հետամնացությունը: ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության ու համագործակցության կենարար ուժով առաջ գնաց սոցիալիզմի շինարարությունը, որի պրոցեսում դրսևորվեց նրանց ընդհանուր շահագրգռվածությունը սովետական բոլոր հանրապետությունների տնտեսական և կուլտուրական զարգացման գործում: Այսպես, Ուզբեկստանի հանրապետության բյուջեի մեջ միութենական ներդրումների աճի, ջրաշինարարական աշխատանքների համար հսկայական գումարներ տրամադրելու, ինչպես և մեծ քանակով տեխնիկա ու զանազան ապրանքներ մատակարարելու շնորհիվ Սովետական Ուզբեկստանը արագ կարողացավ լիկվիդացնել իր տնտեսական ու կուլտուրական հետամնացությունը: Ուզբեկստանը դուրս եկավ խավարից և կանգնեց քաղաքակիրթ երկրների շարքում, դարձավ մեքենաշինության, գունավոր մետալուրգիայի, քիմիայի, թեթև ու սննդի արդյունաբերության զարգացած երկրամաս:

Սովետական երկրի ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյակների տարիներին մեծ թափ առավ հանրապետության տնտեսությունը: Առաջին հնգամյակում շարք մտավ ավելի քան 300 արդյունաբերական ձեռնարկություն, երկրորդ հնգամյակում՝ 359, երրորդ հնգամյակի տարիներին՝ նույնքան արագությամբ զարգացավ հանրապետության արդյունաբերությունը: Իսկ Հայրենական պատերազմի տարիներին Սովետական Միության ժամանակավորապես օկուպացված շրջաններից մեծ թվով գործարաններ ու ֆաբրիկաներ էվակուացվեցին և տեղադրվեցին Ուզբեկստանում: Միաժամանակ հանրապետությունում կառուցվեց և



շահագործման հանձնվեց ավելի քան 90 արդյունաբերական նոր ձեռնարկություն[1]:

Չորրորդ և հինգերորդ հնգամյակների տարիներին հանրապետությունում արագ կերպով զարգացան հատկապես մեքենաշինությունը, քիմիական, վառելիքա-էներգետիկ արդյունաբերությունը: Հանրապետության ծանր արդյունաբերությունն արտադրում է պողպատ, ածուխ, նավթ, հանքային պարարտանյութեր, բամբակահավաք մեքենաներ, տրակտորներ, էքսկավատորներ, տեքստիլ մեքենաներ և այլն[2]: Արագ թափով զարգանում է գազի արդյունաբերությունը: Ուզբեկական ՍՍՀ տերիտորիայում հայտնաբերված են գազի 25 խոշոր նոր աղբյուրներ[3]:

Ուզբեկստանում մեկ օրում արտադրվում է 33,5 մլն կվտ-ժամ էլեկտրաէներգիա, 10 անգամ ավելի, քան 50 տարի առաջ[4]:

Նոր հնգամյակում մեծ հեռանկարներ են բացվում Սովետական Ուզբեկստանի արդյունաբերության հետագա զարգացման համար[5]: Ուզբեկ ժողովուրդը օրավուր նվաճում է նոր բնագծեր: Հանրապետության սոցիալիստական ազգերի լենինյան ընտանիքում, ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների եղբայրական օգնությամբ, կոմունիստական շինարարության ասպարեզում ձեռք են բերվում նորանոր հաջողություններ: Ուզբեկ ժողովուրդը կանգնած է կոմունիստական շինարարության հարվածային հերթափոխում:

Ուզբեկստանի աշխատավորները եռանդուն աշխատանք են ծավալում սոցիալիստական գյուղատնտեսության բնա-

---

1 Կ. Զ. Զագիխոյան, *Սովետական Ուզբեկստան*, 1967, էջ 18—19:

2 Краткий статистический сборник, Ташкент, 1966, стр. 14.

3 «Правда Востока», 22 октября 1967, Ташкент.

4 «Правда Востока», 24 октября 1967, Ташкент.

5 «Правда Востока», 26 октября 1968, Ташкент.

գավառում։ Հանրապետության գյուղատնտեսությունը ենթարկվել է էլեկտրիֆիկացման ու մեխանիզացման և այդ հիման վրա դարձել է Սովետական Միության բամբակագործության հիմնական բազան։

Ուզբեկստանը երկրին տալիս է տարեկան շուրջ 4 միլիոն տոննա «սպիտակ ոսկի»[1]։ Այդ մեծ հաղթանակ է բամբակագործության զարգացման ասպարեզում։ Բամբակը խոշոր նշանակություն ունի սովետական ժողովուրդների տնտեսության զարգացման գործում։ Բամբակի հաջող մշակումով ուզբեկ ժողովուրդը կատարում է իր ինտերնացիոնալ և հայրենասիրական պարտքը սովետական ժողովրդի նկատմամբ։ Բամբակագործության ասպարեզում խոշոր ավանդ են ներդրել Սոցիալիստական աշխատանքի եռակի հերոս Խամրակուլ Թուրսունկուլովը, որը 35 տարի ղեկավարեց բամբակագործական բարձր բերքատու կոլտնտեսության աշխատանքները, ինչպես և Խազարասպի շրջանի «Կոմունա» կոլտնտեսության բրիգադիր Կ. Զիմանյազովը, Դինաուի շրջանի Մարտի 8-ի անվան կոլտնտեսության կոլտնտեսական Ն. Ախմեդովը և ուրիշներ, որոնք հեկտարից ստացան 50 ցենտներ բամբակ[2]։

Մեծ նշանակություն տալով բամբակի արտադրությանը, սովետական կառավարությունը հսկայական միջոցներ է տրամադրում նրա հետագա զարգացման համար։ Բամբակի մշակումը հեշտացնելու նպատակով շատ աշխատանքներ մեքենայացման են ենթարկվել։ Հանրապետությունում ստեղծված է տրակտորների, ավտոմեքենաների, բամբակ հավաքող մեքենաների խոշոր պարկ, որը մեծապես հեշտացնում է կոլտնտեսականների աշխատանքը։ Վերջին տարիների ընթացքում հանրապետությունում տրակտոր-

[1] «Правда», 24 декабря 1967.

[2] Կ. Ց. Ցագիրյան, Սովետական Ուզբեկստան, էջ 28—29։



ների քանակը կրկնապատկվել է, իսկ բեռնատար ավտոմեքենաների քանակը նույն ժամանակաշրջանում ավելացել է երեք անգամ։

Գյուղատնտեսության մեքենայացման հետ զուգընթաց Ուզբեկստանում մեծ աշխատանք է կատարվում հողագործական կուլտուրան էլ ավելի բարձրացնելու ուղղությամբ[1]։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը Ուզբեկական ՍՍՀ-ին հսկայական օգնություն են ցույց տալիս նաև ոռոգման ցանցը ընդարձակելու համար։

Ներկայումս Ուզբեկստանում ստեղծագործական մեծ աշխատանք է կատարվում նոր հողերի իրացման համար։ Ընթացիկ հնգամյակում ուզբեկ ժողովուրդը իրացնելու է 150 հազար հեկտար նոր հող, որի շնորհիվ ընդարձակվելու է բամբակի մշակումը։ Այդ կապակցությամբ կատարվող աշխատանքներում կարևոր նշանակություն է ստանում նոր սովխոզների ստեղծումը։ Յուրաքանչյուր սովխոզի տրամադրվում է 10 հազար հեկտար հող, որտեղ մշակվելու է գլխավորապես բամբակ։ Նոր սովխոզների զբաղեցրած տերիտորիան նմանվում է փոքր քաղաքի։ Յուրաքանչյուր սովխոզ ունի երեք հազար բնակիչ, բնակելի հարմարավետ ու գեղեցիկ շենքեր, կոմունալ ձեռնարկություններ, մանկապարտեզներ, հիվանդանոցներ, առևտրական կետեր և այլ հարմարություններ։ Յուրաքանչյուր սովխոզի տերիտորիայում կառուցված են 450 տեղանոց ակումբներ, կինոյի, թատրոնի և գրադարանի համար շենքեր։ Սովխոզներում համերաշխ ապրում և աշխատում են տարբեր ազգերի աշխատավորներ։

Սովետական Ուզբեկստանը «սպիտակ ոսկուց» բացի երկրին տալիս է նաև գյուղատնտեսական արտադրանքի այլ տեսակներ։ Նշանակալից է մասնավորապես հացահատիկի, ծխախոտի, բանջարեղենի մշակումը։

[1] «Ташкентская правда», 8 марта 1962.

Սովետական Ուզբեկստանի գյուղատնտեսության աշխատողները նույնպես կանգնած են հարվածային հերթափոխում։ Ուզբեկստանի աշխատավորները սոցիալիստական գործարար մրցություն են ծավալում սովետական բամբակացան հանրապետությունների գյուղատնտեսության աշխատողների հետ և դրանով իսկ զարգացնում բարեկամության ու եղբայրական համագործակցության կապերը։ Ուզբեկստանի բամբակագործների աշխատանքի փորձը տարածվեց Ադրբեջանի, Թուրքմենստանի, Ղազախստանի, Տաջիկստանի, Կիրգիզիայի հանրապետությունների գյուղատնտեսության աշխատավորների շրջանում։

Սովետական Ուզբեկստանի տնտեսության հետ միասին զարգանում են նաև նրա կուլտուրան և գիտությունը[1]։

Հանրապետությունում գործում է 38 բարձրագույն ուսումնական հաստատություն, որ սովորում են 188 հազար երիտասարդներ։ Ուզբեկստանն ունի 170 գիտահետազոտական հիմնարկներ, որտեղ մշակվում են երկրի համար կենսական նշանակություն ունեցող պրոբլեմներ։

Ուզբեկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայում աշխատում են 45 ակադեմիկոս, 44 թղթակից-անդամ, 104 դոկտոր և գիտությունների 878 թեկնածու, որոնք ստեղծագործում են հանրապետության գիտահետազոտական հիմնարկներում[2]։

Յուրաքանչյուր ուզբեկ լավ գիտի, թե որոնք են այն աղբյուրները, որոնցից օգտվում է իր ծաղկող ու զարգացող երկիրը։ Այդ տասը աղբյուրներից մեկը ամենայն իրավամբ ուզբեկները համարում են ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը և համագործակցությունը։

Բարեկամության նկատմամբ անսահման նվիրվածության հրաշալի օրինակներ են բերված Շ. Ռ. Ռաշիդովի «Բարեկամության դրոշ» գրքում, ուր գրված է, թե հարցասերները մեկ իմաստուն մարդու հարցրել են.

[1] Այս հարցի մանրամասնությունները տե՛ս **З. Рахимбабаева**, Расцвет культуры в Узбекистане, Ташкент, 1964, **У. Арифов**, Наука Советского Узбекистана, Ташкент, 1964.

[2] «Правда Востока», 6 ноября 1968.



— Ոսկուց թանկ ի՞նչ կարող է լինել։

— Բարեկամությո՛ւնը,— պատասխանել է իմաստունը։

— Իսկ երկաթից ավելի ամուր ի՞նչ գոյություն ունի։

— Բարեկամությո՛ւնը,— նորից ասել է իմաստուն մարդը։

— Իսկ փոթորկից ուժեղ ի՞նչ կարող է լինել։

Իմաստունը բացականչել է.— Բարեկամությո՛ւնը[1]։

Ուզբեկ ժողովուրդը գովերգում և բարձր է գնահատում ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը, որի զարգացման վրա կոմունիստական կուսակցությունը բացառիկ ուշադրություն է դարձնում։

Կանգնած լինելով կոմունիստական շինարարության հարվածային հերթափոխում, ուզբեկ ժողովուրդը բնավ աչքաթող չի անում միջազգային կյանքի կենսական հարցերը։ Ուզբեկ ժողովրդի ներկայացուցիչները միջազգային կոնգրեսներում և կոնֆերանսներում հանդես են գալիս հանուն ժողովուրդների խաղաղության և բարեկամության։

Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների համաշխարհային կոնֆերանսում, որը տեղի ունեցավ Տաշքենդում, ուզբեկ ժողովուրդը, արտահայտելով ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների կամքը, միաբան ասաց. «Մեր գիրքը բոլորին հասկանալի է, և մենք նպատակ չունենք վիճաբանելու։ Մեր կոնֆերանսի ամբիոնը պետք է լինի միասնության ամբիոն, այլ ոչ թե բաժանման»[2]։

Տաշքենդի կոնֆերանսը հռչակեց բարեկամության և ազատության սկզբունքները։ Այդ սկզբունքները պաշտպանում են բոլոր ազատասեր ժողովուրդները։ «Տաշքենդի ոգին,— գրել է Մաջեմուտ Դիոպը[3],— դա կոչ է, այն կշրջագայի Ասիայի և Աֆրիկայի երկրներով, ինչպես նաև կտարածվի ամբողջ աշխարհով մեկ»[4]։

[1] **Ш. Р. Рашидов**, Знамя дружбы, М., 1967, стр. 88.

[2] **Ш. Р. Рашидов**, Знамя дружбы, стр. 168—169.

[3] Մաջեմուտ Դիոպը սենեգալցի գրող է։ Նա 1958 թվականին Ասիայի և Աֆրիկայի գրողների Տաշքենդի կոնֆերանսում, որին մասնակցում էին 50 երկրների պատվիրակներ, «Սև Աֆրիկայի» գրական հասարակության անունից հանդես եկավ ճառով։

[4] «Правда Востока», 24 декабря 1958, Ташкент.

Հնդկաստանի պրեմիեր-մինիստր Ինդիրա Գանդին ասաց, որ Տաշքենդի Դեկլարացիան մեծ գոհունակությամբ ընդունվեց ամբողջ աշխարհում[1]։ Իսկ Պակիստանի կառավարության ներկայացուցիչ Գուլյամ Ձարուկը նշեց, որ Տաշքենդի հանդիպումը մեծ նշանակություն ունի խաղաղության ամրապնդման համար ամբողջ աշխարհում[2]։

1966 թ. ապրիլի 26-ի գիշերը բարեկամության և եղբայրության խորհրդանիշ Տաշքենդին ահավոր դժբախտություն պատահեց, տեղի ունեցավ երկրաշարժ։ Այդ օրը ուզբեկ ժողովուրդը կրկին անգամ պարզորեն տեսավ ու զգաց, թե որքան ջինջ, գեղեցիկ ու ամուր է սովետական ժողովրդի բարեկամությունը։ Սովետական միլիոնավոր մարդիկ, տաշքենդցիներին օգնելու համար, Խաղաղ օվկիանոսից մինչև Կարպատները ոտքի ելան։ Հեռագրեր և հեռախոսներ Տաշքենդ էին հասցնում բարեկամների անկեղծ ցանկությունը՝ այդ դժվարին պահին օգնության գալու մասին։ Մեր հայրենիքի բոլոր ծայրերից Տաշքենդ եկող հեռագրերում ասված էր. «Թանկագին տաշքենդցինե՛ր, մենք ձեզ հետ ենք»։ Դեռ շարունակվում էր երկրաշարժը, երբ կուսակցության ու կառավարության ղեկավարները և կառավարական հանձնաժողովը մեկնեցին Ուզբեկստան։ Իսկ մի քանի օրից հետո ամբողջ երկիրը, սովետական եղբայրական բոլոր հանրապետությունները օգնության եկան Տաշքենդին և սկսեցին քաղաքի վերակառուցման աշխատանքները։ Դա սովետական ժողովրդի բարեկամության և հզորության անկեղծ վկայությունն էր ուզբեկ ժողովրդի նկատմամբ։

ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների սովետը 1967 թ. մայիսի 7-ին և հունիսի 14-ին որոշումներ ընդունեցին Տաշքենդում տեղի ունեցած երկրաշարժի հետևանքների վերացման գործում Սովետական Ուզբեկստանին ցույց տրվող օգնության մասին։ Այդ հիման վրա սկսվեց նոր Տաշքենդի շինարարությունը, որը կատարվեց համամիութենական մասշտաբով և վերածվեց հսկայական ժողովրդական պաթոսի։

[1] «Правда Востока», 24 декабря 1958.

[2] Նույն տեղը։



Տաշքենդին եղբայրական օգնության եկան հերոս քաղաքներ Մոսկվան, Լենինգրադը, սովետական բոլոր 15 իրավահավասար հանրապետությունները։

«Բարեկամության և եղբայրության անցագրով,— գրել են շինարարները,— բոլոր ծայրերից դեպի ձեր քաղաքն ուղևորվեցին հսկայական օգնություն և օժանդակություն։ Ձեր քաղաքն են եկել Մոսկվայի, Լենինգրադի, միութենական բոլոր հանրապետությունների շինարարական ջոկատները։ Դա մեր ժողովրդի ջերմ համերաշխության կենդանի և պարզ դրսևորումն է, դա հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի իսկական ոգին է. մենք հավաստիացնում ենք Ձեզ, թանկագին տաշքենդցինե՛ր, որ ձեզ հետ միասին կկառուցենք գեղեցիկ քաղաք, դյուցազն քաղաք Տաշքենդ»[1]։ Իրենց միջոցներով, շինանյութերով և ուժերով Տաշքենդում խոշոր աշխատանք կատարեցին սովետական բոլոր ժողովուրդները։

Ընդամենը մեկ տարվա ընթացքում կատարվեց շինարարական այնպիսի աշխատանք, որպիսին հնարավոր չէր կատարել մի քանի տասնամյակներում, եթե չլինեին ժողովուրդների միասնությունը և բարեկամությունը։ Մեծ հոկտեմբերի 50-ամյակի նախօրյակին Մոսկվայի, Լենինգրադի և եղբայրական բոլոր հանրապետությունների շինարարները իրենց զեկուցագրերում հաղորդեցին, թե Տաշքենդում տիտանական ինչպիսի շինարարական աշխատանք է կատարված և ինչ պետք է կատարվի առաջիկայում։ Այդ զեկուցագրերը ուրախացնում են սովետական մարդկանց։ Տաշքենդում կատարված և կատարվող շինարարական աշխատանքները խոսում են ՍՍՀՄ ժողովուրդների միասնական ընտանիքի մեծ ուժի մասին, եղբայրության և բարեկամության մասին։

Կոմունիստական շինարարության բոլոր բնագավառներում այսպես են դրսևորվում սոցիալիստական հասարակության ինտերնացիոնալ սկզբունքները։

Տաշքենդում ընթացիկ հնգամյակի տարիներին կառուցվելու են 6 միլիոն քառակուսի մետր բնակարաններ, ինչպես և մեծ քանակությամբ կուլտ-կենցաղային և վարչական շեն-

[1] «Правда Востока», 12 мая 1966.

քեր։ Այդ նշանակում է՝ գրեթե այնքան բնակելի տարածություն պետք է տրվի տաշքենդցիներին, որքան քաղաքը ֆոնդ ուներ մինչև երկրաշարժը։

Ուզբեկստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի երրորդ պլենումը 1966 թվականին նամակ հրապարակեց, որի մեջ ասված է. «Արտահայտելով Ուզբեկստանի կոմունիստների և բոլոր աշխատավորների մտքերն ու զգացմունքները, պլենումը իր խոր երախտագիտությունն ու սրտանց շնորհակալությունն է հայտնում ՍՄԿԿ լենինյան Կենտկոմի և նրա քաղաքական բյուրոյին, հարազատ սովետական կառավարությանը, ՍՍՀՄ-ի բոլոր եղբայրական հանրապետությունների կուսակցական կազմակերպություններին և աշխատավորներին՝ հսկայական և անգնահատելի օգնության ու օժանդակության համար, որոնք անհապաղ ցուցաբերվեցին հանրապետությանը և նրա մայրաքաղաքին, կործանարար երկրաշարժից առաջացած մեծագույն դժվարությունների հաղթահարման գործում»[1]։

Այդ ողջ ուզբեկ ժողովրդի անկեղծ երախտագիտությունն է, այն ժողովրդի, որի համար շատ թանկ են ժողովուրդների բարեկամությունը, պրոլետարական ինտերնացիոնալիզմի և սովետական հայրենասիրության վեհ գաղափարները, որոնք նրան միշտ ոգեշնչել են արիության և նոր սխրագործությունների կոմունիզմի կառուցման գործում։

Իր երկրում տեղի ունեցած մեծագույն փոփոխությունների, զարգացած անտեսության ու կուլտուրայի, ուրախ և առատ կյանքի մասին ուզբեկ ժողովուրդն ասում է.

— Մենք երջանիկ ենք, որ ապրում ենք այնպիսի երկրում, ուր և՛ ուրախությունը, և՛ վիշտը բաժանում ենք մեր հայրենիքի բոլոր ժողովուրդների հետ։

Եվ այդ տեղի է ունենում այն պատճառով, որ ՍՍՀՄ բոլոր ժողովուրդները մեկ ընտանիքի իրավահավասար անդամներն են, որ նրանք գնում են մեկ ճանապարհով՝ կոմունիզմի կառուցման ուղիով։

Այդ տեղի է ունենում այն պատճառով, որ ՍՍՀՄ-ում

[1] «Правда Востока», 28 июня 1966։



սոցիալիզմի լիակատար ու վերջնական հաղթանակը է՛լ ավելի ամրապնդեց սովետական ժողովուրդների բարեկամությունը, որի գաղափարախոսությունը մարքսիզմ-լենինիզմի գիտական տեսությունն է, որը լիովին համապատասխանում է բոլոր աշխատավորների շահերին։

Վերջապես, այդ տեղի ունեցավ և այն պատճառով, որ Սովետական Միության բոլոր ազգերը և ազգությունները ունեն մարդկային համակեցության սոցիալիստական սկզբունքներ և նորմաներ, որոնք տասնամյակների ընթացքում մասսայական մասշտաբներով կիրառվելու հսկայական փորձ ունեն, որը այժմ կոմունիզմի շինարարության տարիներին ստեղծագործաբար օգտագործվում է մյուս ժողովուրդների կողմից։ Այդ օրինակով իսկ սովետական ժողովուրդը ցույց տվեց կոմունիստական բարձր գիտակցականություն, սեր ու հարգանք իր ուզբեկ եղբոր նկատմամբ, նվիրվածություն հանրային շահի նկատմամբ, որոնք դարձան կոմունիստական հասարակարգի մարդու անկապտելի հատկությունները։

Ահա թե ինչու, ինչպես ուզբեկները, այնպես և սովետական բոլոր ժողովուրդները երջանիկ են, որ ապրում և աշխատում են ՍՍՀՄ-ում, ուր բոլոր ազգերը և ազգությունները իրավահավասար են, ազատ և սուվերեն։

ՍՍՀՄ ժողովուրդների համերաշխ ընտանիքում օրավուր զարգանում է հարվածային հերթափոխում կանգնած Ուզբեկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը, որը և ուրախություն է պատճառում սովետական մարդկանց։



Ղազախական ՍՍՀ։ Կառավարական տունը Ալմա-Աթայում

# Ղազախական ՍՍՀ



## 5. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԿԵՆԱՐԱՐ ՈՒԺԸ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԲԱՐԳԱՎԱՃՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆ Է

Ղազախստանը լայնածավալ երկրամաս է, որի տերիտորիան 5 անգամ գերազանցում է Ֆրանսիայի, 17 անգամ՝ Ճապոնիայի, 9 անգամ՝ Իտալիայի, 11 անգամ Անգլիայի տերիտորիային։ Նրա ընդհանուր տերիտորիան կազմում է 2715,1 հազար կմ², որի վրա բնակվում է 12,6 միլիոն ազգաբնակչություն[1]։ Ղազախստանը ցարական Ռուսաստանի հետամնաց ծայրամաս էր, ուր ազգաբնակչությունը գերազանցապես անասնապահությամբ էր զբաղվում, իսկ մի մասը քոչվոր կյանք վարում։ Ներկայիս Ղազախստանի տերիտորիայի վրա բնակվող նախկին ցեղերն ապրում էին կիսանահապետական-կիսաֆեոդալական հարաբերությունների պայմաններում։

Ղազախ ժողովուրդն իր իսկական ազատությունն ու պետականությունը ձեռք բերեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության շնորհիվ։ Նա ռուս մեծ ժողովրդի և Սովետական Միության մյուս ժողովուրդների անշահախնդիր օգնության շնորհիվ հետամնացությունից և աղքատությունից հսկայական թռիչք կատարեց դեպի առաջադիմության ու կուլտուրայի ծաղկումը, դեպի քաղաքակրթությունը։ Սովետական հասարակարգի պայմաններում Ղազախստանը դարձավ առաջավոր ինդուստրիայի, մեքենայացված գյուղատնտեսության և զարգացած կուլտուրայի ու գիտության հանրապետություն։

Ղազախական (Կիրգիզական) Ինքնավար Սոցիալիստական Սովետական Հանրապետության կազմավորելու վերաբերյալ 1920 թվականի օգոստոսի 26-ին հրապարակվեց Համառուսական Կենտգործկոմի և ՌՍՖՍՀ Ժողկոմխորհի դեկրետը, որը ստորագրել էին Վ. Ի. Լենինը և Մ. Ի. Կալինինը։ 1920 թ. հոկտեմբերին տեղի ունեցավ խորհուրդների սահմանադիր համագումարը, որն ընդունեց հանրապետու-

[1] Տ. Ա. Նայզագարին, Ղազախական ՍՍՀ էկոնոմիկայի և կուլտուրայի վերելքը, Ե., 1967, էջ 4։



թյան իրավունքների Դեկլարացիա և հռչակեց Ղազախական ԻՍՍՀ կազմավորումը։ Դեկլարացիայում ասված էր, որ Ղազախական ԻՍՍՀ[1] որպես ինքնավար անդամ մտնում է ազատ Սովետական Հանրապետությունների Ֆեդերատիվ Միության մեջ՝ միավորված ՌՍՖՍՀ-ի մեջ»[2]։ Ղազախական ԻՍՍՀ-ն ՌՍՖՍՀ կազմում մնաց մինչև 1936 թվականը։ 1936 թվականին կազմավորվեց Ղազախական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը և նույն թվականին նա մտավ ՍՍՀՄ կազմի մեջ[3], որպես լիիրավ անդամներից մեկը, որպես ազատ ու զարգացող միութենական հանրապետություն, որով նոր հեռանկարներ բացվեցին ժողովրդի համակողմանի զարգացման համար։

Հնգամյակների տարիներին ստեղծվեց Սովետական Ղազախստանի արդյունաբերությունը[4]։ Առաջին հնգամյակի տարիներին սովետական պետությունը Ղազախստանի տնտեսության մեջ ներդրեց մեկ ու կես միլիոն ռուբլի և կառուցեց մի շարք խոշոր գործարաններ և Թուրքեստան-Սիբիր երկաթուղին, որը բացառիկ կարևոր նշանակություն ունեցավ Ղազախստանի տնտեսության զարգացման համար։ Թուրքսիբի շինարարությանը մասնակցեցին Սովետական Միության բոլոր հանրապետությունները։ Թուրքսիբը հատուկ նշանակություն ունեցավ ՍՍՀՄ ժողովուրդների համագործակցության և բարեկամության զարգացման գործում։ Երկրորդ հնգամյակում բուռն կերպով զարգացավ Ղազախստանի արդյունաբերությու-

[1] См. Образование Казахской АССР. Сборник документов и материалов, Алма-Ата, 1957, стр. 102.

[2] См. Учредительный съезд Советов Киргизской (Казахской) АССР, с 4—12 октября 1920, Алма-Ата, стр. 203.

[3] **У. Д. Исаев.** Преобразование Казахстана в союзную республику и задачи советских органов. «Народное хозяйство Казахстана», Алма-Ата, 1936, № 11—12, стр. 32.

[4] **Л. И. Мирзоян.** На борьбу за дальнейший подъём народного хозяйства и культурного строительства Казахстана. Речь на IX Всеказахстанском съезде Советов, Алма-Ата, М., 1935, стр. 22—24.

նի։ Այդ տարիներին[1] Սովետական Միության բոլոր ժողովուրդների եղբայրական օգնությամբ կառուցվեցին Բալխաշի պղնձաձուլական գործարանը, Սեմիպալատինսկի մսի կոմբինատը, ձկան պահածոների կոմբինատը և այլն։

Ստեղծվեցին նաև թեթև և սննդի արդյունաբերության շատ ձեռնարկություններ, որոնք հարստացրին Սովետական Միության տնտեսությունը։

Երրորդ հնգամյակի տարիներին զգալի չափով զարգացան վառելիքի արդյունաբերությունը և գունավոր մետալուրգիան։ Գործարկվեցին մի շարք նոր հանքեր և Կարագանդայի հսկայական ածխահանքը։

Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում[2] Էմբայի վրա հայտնաբերվեցին և շահագործման հանձնվեցին մի շարք նոր նավթահանքեր։ ՌՍՖՍՀ-ն և եղբայրական բոլոր հանրապետությունները քայլ առ քայլ օգնեցին Ղազախստանին, և դրա հիման վրա նա հսկայական մասշտաբով զարգացրեց արդյունաբերությունը։ Սովետական ժողովուրդը Ղազախստանին օգնեց և շարունակում է օգնել ինժեներա-տեխնիկական կադրերով և այլ մասնագետներով։ Մոսկվայի բանվոր դասակարգը վերցրեց Սովետական Ղազախստանի արդյունաբերության շեֆությունը և իր հարուստ փորձով օգնեց ու հմտությամբ առաջ մղեց հանրապետության արդյունաբերությունը, որն այսօր իր արժանի ավանդն է ներդնում կոմունիստական շինարարության ընդհանուր գործում։ Ղազախստանի արդյունաբերությանն ընկերական գործարար օգնություն ցույց տվեցին Լենինգրադի բանվորները։ Ղազախստանի աշխատավորներին ուղղված նամակում Լենինգրադի բանվորները գրում էին, որ աճող ու զարգացող եղբայրական ղազախ ժողովրդի արդյունաբերության ամենօրյա գործնական օգնություն ցույց տալը Սովետական Միու-

[1] См. **У. Д. Исаев**, О втором пятилетнем плане Казахстана, Доклад на казахстанской конференции РКП(б), Алма-Ата, 1934.

[2] См. Казахстан в первый год Отечественной войны против немецко-фашистских захватчиков. Сборник статей, Алма-Ата, 1943, стр. 302.



թյան ինդուստրիալ կենտրոնի՝ պրոլետարական Լենինգրադի, պատվի գործն է, ինտերնացիոնալ պարտքը։

Սովետական Ուկրաինայի հերոսական բանվոր դասակարգի առաջավոր ջոկատներից մեկը՝ Դոնբասի լեռնագործները, հսկայական օգնություն ցույց տվեցին ղազախ եղբայրներին։ «Մեզ հարկավոր է ձեր փորձը, ձեր օգնությունը»,— գրում էին Կարագանդայի հանքափորները։

Դոնբասի լեռնագործները ամենաջերմ և սիրալիր վերաբերմունք ցուցաբերեցին Կարագանդայի հանքափորների նկատմամբ։ Շուտով Կարագանդա եկան Դոնբասի փորձված հանքաբանվորներ և իրենց հարուստ տեխնիկան և աշխատանքային փորձը հաղորդեցին ղազախ եղբայրներին ու նրանց սովորեցրին ածուխ մեքենաներով արդյունահանելու եղանակը։

Սովետական Ղազախստանի արդյունաբերության զարգացմանը օգնեցին Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի, Ուզբեկստանի և միութենական մյուս հանրապետությունների աշխատավորները։

Ղազախ ժողովուրդը երախտագիտությամբ ասում է, առանց ռուս մեծ ժողովրդի և Սովետական Միության բոլոր ազգերի ու ազգությունների եղբայրական օգնության հնարավոր չէր այդքան արագ կերպով վերացնել Ղազախստանի տնտեսական ու կուլտուրական դարավոր հետամնացությունը, որ ժառանգություն էր մնացել անցյալից։

Հետպատերազմյան ժամանակաշրջանում ևս Ղազախստանը առատորեն ստացավ ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների եղբայրական օգնությունը և աջակցությունը։ Հանրահայտ է, որ Ղազախստանի Չիմկենտի բամբակագործական կոմբինատը Սովետական Միության համար տնտեսական խոշոր նշանակություն ունի։ Դրա արագ կառուցումը խիստ կարևոր էր և անհետաձգելի։ Իսկ դրա համար պահանջվում էր համակողմանի օգնություն։ Առանց հապաղման առաջին հերթին օգնության եկան երեք եղբայրները՝ Ռուսաստանյան Ֆեդերացիան, Սովետական Ուզբեկստանը և Հայկական Հանրապետությունը։ Նրանք իրենց ղազախ եղբայրներին օգնեցին շինանյութերով, սարքավորումներով և ինժեներատեխնիկական

կայքերում։ Եղբայրական օգնությունը տվեց իր հոյակապ արդյունքները։

1959—1968 թվականներին բուռն կերպով զարգացավ Ղազախստանի ծանր արդյունաբերությունը։ Այդ ժամանակաշրջանում կառուցվեցին 730 արդյունաբերական խոշոր ձեռնարկություններ։

Այդ տարիները հանրապետության համար բնորոշ էին նաև այն բանով, որ Ղազախստանի արդյունաբերության համախառն արտադրանքն ավելի արագ տեմպերով աճեց, քան Միության մեջ՝ ամբողջությամբ վերցրած։ Տնտեսական պոտենցիալն ավելացավ 2,1 անգամ։

Սովետական Ղազախստանը իրավամբ անվանում են երկրի հարուստ շտեմարան։ Հանրապետության ընդերքը պարունակում է Մենդելեևի պարբերական աղյուսակի գրեթե բոլոր տարրերը։ Պղնձի, կապարի, ցինկի, կադմիումի, արծաթի, նիկելի, բոքսիտների, մոլիբդենի, վոլֆրամի, երկաթի, քրոմիտների, ֆոսֆորիտների հետախուզված պաշարներով Ղազախստանը երկրում գրավում է առաջատար տեղերից մեկը։ Այն երկրամասը, ուր դեռ համեմատաբար վերջերս ներմուծում էին նավթ, մեխ, այժմ իր արտադրանքը արտահանում է աշխարհի ավելի քան 70 երկրներ։ Հանրապետությունում գործում են 24 հազարից ավելի արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք թողարկում են 116 անգամ ավելի արդյունաբերական արտադրանք, քան 1913 թվականին։

Ժամանակակից Ղազախստանի ինդուստրիալ դեմքը որոշում են ամբողջ երկրին հայտնի այնպիսի հսկաներ, ինչպիսիք են Ուստ-Կամենոգորսկի Վ. Ի. Լենինի անվան կապարցինկի կոմբինատը, Սոկոլովսկ-Սարբայի հանքահարստացուցիչ, Բալխաշի լեռնամետալուրգիական, Կարաթաուի լեռնաքիմիական կոմբինատները, Ալմա-Աթայի ծանր մեքենաշինության գործարանը, Ղազախստանի Մագնիտկան և շատ այլ ձեռնարկություններ։ Այս նոր գործարաններն ու ֆաբրիկաները կառուցվեցին բոլոր ազգերի աշխատավորների միացյալ ջանքերով։ Ձեռնարկությունների շինարարական հրապարակներում, գործարանների և ֆաբրիկաների ցեխե-



րում կողք-կողքի աշխատում են տարբեր ազգությունների ներկայացուցիչներ[1], որոնք տոգորված են սովետական մարդու ինտերնացիոնալ գաղափարներով և աշխատանքում ցուցաբերում են քաջություն ու արիություն։ Կոմունիստական շինարարության պրոցեսում անընդհատ ընդարձակվում է Սովետական Ղազախստանի տնտեսական և կուլտուրական համագործակցությունը ՍՍՀՄ բազմաթիվ շրջանների ու հանրապետությունների հետ։ Ղազախստանը տնտեսական լայն կապեր ունի մասնավորապես Մոսկվա, Լենինգրադ, Սվերդլովսկ քաղաքների և Ուկրաինայի, Բելոռուսիայի, Լատվիայի, Էստոնիայի, Լիտվայի, Ուզբեկստանի, Հայաստանի և մի շարք մարզերի հետ[2]։

Ղազախստանը եղբայրական հանրապետություններից ստանում է տրանսֆորմատորներ, էլեկտրաշարժիչներ, կոմպրեսորներ, կաբելային պիտույքներ, պոմպեր և բազմաթիվ ուրիշ ապրանքներ։ Սովետական հանրապետությունները սիրով ու բարձր որակով են կատարում Ղազախստանի պատվերները։ Եղբայրական հանրապետություններն իրենց սրբազան պարտքն են համարում ամեն կերպ օգնել Ղազախստանի գործարաններին ու ֆաբրիկաներին՝ դրա մեջ արտահայտելով իրենց սերը ղազախ ժողովրդի նկատմամբ։

Սովետական Ղազախստանն իր հերթին ո՛չ միայն Սովետական Միության հանրապետություններ, այլև արտասահմանյան շատ երկրներ է ուղարկում սև և գունավոր մետալուրգիայի, քիմիական արդյունաբերության արտադրանք, հաստոցներ և մեքենաներ, ածուխ, նավթ, հացահատիկ, բամբակ, բուրդ և գյուղատնտեսության այլ արտադրանքներ։ Միայն արտասահմանյան երկրների համար Սովետական Ղազախստանը պատրաստում է արտադրանքի մի քանի հարյուր տեսակ և մատակարարում Եվրոպայի, Ասիայի ու Աֆրիկայի ավելի քան հիսունհինգ երկրների։

Սովետական Ղազախստանը մեկ օրում արտադրում է 53 մլն կիլովատտ-ժամ էլեկտրաէներգիա։ Այժմ Ղազախստանում շա-

[1] «Казахстанская правда», 22 ноября 1966, Алма-Ата.

[2] В созвездии братских республик, Алма-Ата, 1961.

դուն ու պղնձաը է ձուլվում ավելի շատ, քան Ֆինլանդիայում, Դանիայում և նույնքան, որքան Հոլանդիայում:

Սոցիալիզմի լիակատար ու վերջնական հաղթանակի շնորհիվ Ղազախստանն աներևակայելի քայլերով առաջ է գնացել և հասել զարգացման այնպիսի բարձրության, որ ներկայումս մասնակցում է Հնդկաստանի, Միացյալ Արաբական Հանրապետության արդյունաբերական գիգանտների կառուցումներին:

Սովետական Ղազախստանի նվաճումներն արդյունաբերության ասպարեզում արդյունք են ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության և համագործակցության կենարար ուժի, կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության հաղթանակի:

Այսպիսով, սովետական իշխանության տարիներին Ղազախստանը դարձել է ինդուստրիալ-կոլտնտեսային երկիր: Այժմ Ղազախստանն ունի առաջավոր տեխնիկայով զինված մեքենաշինություն, նավթամշակման, քիմիայի, հաստոց մետաղների, թեթև և սննդի արդյունաբերություն, որոնք արագ թափով զարգանում են: Հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ արդյունաբերության տեսակարար կշիռը հսկայական չափով բարձրացել է: Սակայն ղազախ ժողովուրդը այդ նվաճումներով չի բավարարվում: Հենվելով ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական օգնության, համագործակցության և բարեկամության կենարար ուժի վրա, առատորեն օգտվելով նրա աղբյուրներից, նոր հնգամյակում նա ժողովրդական տնտեսության մեջ կներդնի 16,2 միլիարդ ռուբլի և կհասնի նորանոր հաջողությունների:

Սովետական իշխանության տարիներին արմատապես փոխվել է Ղազախստանի գյուղատնտեսությունը: Անցյալում հետամնաց Ղազախստանն այժմ ունի հազարավոր կոլտնտեսություններ և սովխոզներ, որոնք զինված են ժամանա-



կակից տեխնիկայով: Գյուղատնտեսական աշխատանքի հիմնական մասը կատարվում է մեքենաների միջոցով: Խամ ու խոպան հողերի յուրացումն ամբողջ ժողովրդի բարեկամության ուժերով նոր էջ բացեց Ղազախստանի գյուղատնտեսության զարգացման համար: Խամ ու խոպան հողերի յուրացման հետևանքով Սովետական Ղազախստանի ցանքատարածությունը հսկայական չափով ավելացավ:

Ղազախստանը դարձել է երկրի խոշորագույն շտեմարանը: Հանրապետության կոլտնտեսությունների և սովխոզների դաշտերում աշխատում են գրեթե 200 հազար տրակտոր, 100 հազարից ավելի կոմբայն և շատ այլ տեխնիկա: Ցանքատարածությունները հասել են գրեթե 30 մլն հեկտարի: Վերջին 12 տարում պետությունը ամեն տարի միջին հաշվով ստացել է 616 միլիոն փութ ղազախական հացահատիկ:

Սովետական Ղազախստանի գյուղատնտեսությունը տալիս է Սովետական Միության հացահատիկի ութերորդ մասը: Նա տալիս է նաև բրդի պետական մթերումների շուրջ 25 և կարակուլի 30 տոկոսը: Ղազախստանը Սովետական Միության հացահատիկային և անասնապահական կարևոր շրջաններից մեկն է: Հանրապետությունում սիստեմատիկաբար բարելավվում են ժողովրդի նյութական բարեկեցությունը և կենցաղը:

Ֆրանսիական «ЭХО» թերթի գրականագետ Էմիլ Սերվան Շրեյբերը, լինելով Սովետական Ղազախստանում, մոտիկից ծանոթացավ ժողովրդի կյանքին: «Կոլտնտեսությունն այցելելիս,— գրում է նա — ես մտա առաջին պատահած տունը: Այդ տունը ուներ կենտրոնական ջեռուցում, ջրմուղ, հեռուստացույց, ռադիո, գորգեր: Այս ամենը վկայում են Ղազախստանի ժողովրդի կենցաղի զգալի առաջադիմության մա-

ախ։ Ես կցանկանայի, որպեսզի Ֆրանսիայի գյուղացիները էլ այդպես ապրեին»[1]։

Սովետական Ղազախստանի աշխատավորների կյանքում հսկայական առաջադիմություն է տեղի ունեցել, որի մասին խոսում են նաև արտասահմանյան երկրներից որպես տուրիստներ այցելած մարդիկ։

«Այն ամենը,— գրում են գերմանական կինոօպերատորներ Աննելի և Անդրե Տորնդայկները,— ինչ որ մենք այսօր տեսանք կոլտնտեսություններում և սովխոզներում, ցնցեց մեզ։ Մարդկանց մենք տեսանք բոլորովին այլ արտաքին տեսքով և ներքին բովանդակությամբ, քան առաջներում, լայն գիտակցումով, որոնք կարողանում են պետականորեն մտածել»[2]։

Կուլտուրական հեղափոխությունը հաղթանակել է Սովետական Ղազախստանում։ Ցարիզմի տիրապետության ժամանակաշրջանում Ղազախստանում եթե ազգաբնակչության միայն 2 տոկոսն էր գրագետ, ապա սոցիալիզմի պայմաններում այն դարձել է համատարած գրագիտության երկիր։ Ավելի քան 10,5 հազար հանրակրթական դպրոցներում սովորում են երկու միլիոն վեց հարյուր քսաներկու հազար աշակերտներ։

Մինչև սովետական իշխանությունը Ղազախստանում չկար և ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն, իսկ ներկայումս հանրապետությունում գործում են 43 բուհեր, ուր սովորում է 176 հազար ուսանող։

Ներկայումս Ղազախստանում աշխատում են ավելի քան 80 հազար բժիշկներ և միջին բուժաշխատողներ։ Հանրապետությունում 10 հազար բնակչին ընկնում է այնքան բժիշկ, որքան ԱՄՆ-ում և գրեթե 10 անգամ ավելի, քան Հնդկաստանում և 20 անգամ ավելի, քան Պակիստանում[3]։

Սովետական Ղազախստանում զարգանում են գիտություն, արվեստ և գրականություն։ Ավելի քան քսան տարի է,

[1] «Слово зарубежных друзей о Советском Казахстане», 1967, стр. 28, Алма-Ата.

[2] «Советская культура», 12 ноября 1963.

[3] «Казахстанская правда», 30 декабря 1967.



ինչ գործում է Ղազախական ՍՍՀ գիտությունների ակադեմիան։ Հանրապետության գիտահետազոտական հաստատություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում աշխատում են շուրջ 20 հազար գիտական աշխատողներ, որոնցից երեք հազարը ունեն գիտության դոկտորի և թեկնածուի գիտական աստիճան, որոնցից 1/3-ը ղազախներ են։

Սովետական Միության ժողովուրդների եղբայրական մեծ ընտանիքում զարգանում են ղազախական գեղարվեստական գրականությունը և արվեստը։ Նրանք կոմունիստական շինարարության պրոցեսում հսկայական դեր են խաղում աշխատավորներին ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու բնագավառում։

Սովետական Միության բազմազգ ժողովուրդների բարեկամությունը և համագործակցությունը ղազախական գրողների ստեղծագործությունների աղբյուրն է։

Ղազախական ժողովրդի ազգային օպերան և դրամատիկական թատրոնը ցուցադրում են ո՛չ միայն ազգային, ռուսական, ՍՍՀՄ ժողովուրդների, այլև համաշխարհային կլասիկների պիեսներն ու ստեղծագործությունները։

Ղազախական «Աբայ» օպերան մեծ անուն է հանել։ Նա համաշխարհային արվեստի լավագույն ստեղծագործությունների շարքին է պատկանում, որով ղազախական ժողովուրդը հպարտանալու իրավունք ունի։ Ղազախական կինոն ազգային կուլտուրայի մեծագույն աճի հրաշալի օրինակն է։ «Դուք չեք կարող երևակայել,— գրում է ԳՖՀ «Քիմիական ինդուստրիա» ամսագրի խմբագիր Ա. Մեացերը,— թե ինչպիսի ուժեղ տպավորություն գործեց ինձ վրա Ալմա-Աթայի կինոստուդիան հաճախելը։ «Ձիարշավորդ աղջիկը» կինոֆիլմը, որ սիրով ցույց տվեցին ինձ, վկայում է ղազախական կինեմատոգրաֆիայի բարձր մակարդակի մասին»[1]։

[1] «Казахстанская правда», 25 октября 1957.

Սովետական մարդկանց քաջ հայտնի են Ա. Կաստեևի, Ա. Չերկասկիի, Կ. Թելժանովի և շատ ուրիշների ստեղծագործությունները, որոնք հայրենական սոցիալիստական կուլտուրայի զարգացման գործում կարևոր ավանդ են։

Սովետական Ղազախստանը բուռն ծաղկման շրջան է ապրում, որի հետագա զարգացման համար կոմունիստական կուսակցությունը և սովետական պետությունը ստեղծել են բոլոր պայմանները։ Ղազախ ժողովուրդը գիտակցում է, որ իր այսօրվա հրաշալի կյանքը և վաղվա է՛լ ավելի պայծառ ապագան, նրա խոշոր հաջողությունները լենինյան ազգային քաղաքականության հաղթանակի լավագույն ապացույցն են և ուրախություն են պատճառում ՍՍՀՄ բոլոր ժողովուրդներին։

Հանրապետությունում ապրում և ձեռք-ձեռքի տված աշխատում են բազմաթիվ ազգությունների ներկայացուցիչներ։ Եվ այն ամենը, ինչին որ հասել է Ղազախստանը, նրա ամբողջ նյութական ու հոգևոր հարստությունը կոմունիստական կուսակցության կողմից ղեկավարվող այդ միլիոնավոր բազմազգ կոլեկտիվի միասնական նպատակների, միասնական կամքի ու աշխատանքի արգասիքն են։

Ղազախստանի տափաստանների վերափոխման գործում խոշոր ավանդ են ներդնում Սովետական Միության բոլոր ժողովուրդները։

Լեռնային աղբյուրի պես հստակ ու զուլալ է ժողովուրդների բարեկամությունը, որից ղազախները ուժ են քաղում։ Ղազախ բանաստեղծ Աբդրա Մաուլենովը գրել է.

Տոնահանդես է այսօր մեր
հողում,
Դրկախառնվել են եղբայրների պես
Ալմա-Աթան իմ՝ կանաչ,
զվարթանում
Եվ քո Երևանը՝ արծաթաթույր։
Արարատն է միախառնվում իմ
Իրտիշը,
Եվ բարեկամության շունչ
ավելանում
Գետերի նման խառն են ձուլվում
Իմ ղազախները և քո հայերը[1]։

ՍՍՀՄ բազմազգ ժողովուրդների բարեկամության կենարար ուժը Ղազախստանի բարգավաճման աղբյուրն է՝ ի սպաս դրված կոմունիստական շինարարության ընդհանուր գործին։ Ղազախական ժողովուրդը Սովետական Միության ժողովուրդների մեծ ընտանիքի լիիրավ անդամն է ու կոմունիզմի կառուցման ակտիվ շինարարը։

Սովետական եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում, որ հաստատված են իրավահավասարություն, եղբայրական բարեկամություն ու սոցիալիստական փոխօգնություն, ղազախ ժողովուրդը հաջողությամբ զարգացնում է իր տնտեսությունն ու կուլտուրան և խիզախ քայլերով գնում է դեպի լուսավոր ապագան, կոմունիստական շինարարության ընթացքում ձեռք բերում նորանոր հաջողություններ։

[1] «Սովետական Հայաստան», 2 հոկտեմբերի 1968։



Վրացական ՍՍՀ կառավարական տունը Թբիլիսիի Ռուսթավելու պողոտայում

# Վրաստան ՍՍՀ

## 6. ՎՐԱՑ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Սովետական Վրաստանի տերիտորիան տարբերվում է բնակլիմայական բազմազան պայմաններով, որոնք նպաստել են հարուստ բուսական ու կենդանական աշխարհի առաջացմանը[1]։ Վրաստանը հարուստ է հատկապես հանքային ջրերի ու ցեխերի աղբյուրներով, որոնք լայնորեն օգտագործվում են ժողովրդի համար։ Նրա տերիտորիան կազմում է 67,7 հազար քառակուսի կմ, բնակչությունը՝ 4,6 միլիոն մարդ[2]։

Վրաց ժողովուրդը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ 1921 թվականի փետրվարի 25-ին վերջ տվեց շահագործողների ծանր լծին և երկրում հաստատեց սովետական իշխանություն։ 1922 թվականի մարտ ամսին ստեղծվեց Անդրկովկասյան Ֆեդերացիան, որի կազմում էին Վրաստանը, Հայաստանը և Ադրբեջանը։ Անդրկովկասյան Ֆեդերացիան եղբայրական ժողովուրդների համախմբման, երկրամասի տնտեսության և կուլտուրայի զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ։ 1936 թվականի դեկտեմբերին Վրաստանը մտավ ՍՍՀՄ կազմի մեջ որպես ինքնուրույն միութենական հանրապետություն։ Վրացական Սովետական Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ մտնում են Աբխազական ԻՍՍՀ, Աջարական ԻՍՍՀ, Հարավ-Օսեթական ԻՄ։ Վրաց ժողովուրդը բարձր է գնահատում ՍՍՀՄ ժողովուրդների լենինյան մեծ ընտանիքի նշանակությունը և ոչ մի ջանք չի խնայում նրա հետագա զարգացման համար։ Սովետական Վրաստանի աշխատավորներն իրենց ինդուստրիալ-կոլտնտեսային հանրապետության հաջողությունները վերագրում են Սովետական Միության ժողովուրդների եղբայրական բարեկամությանն ու համագործակցությանը, որոնք կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ անընդհատ ամրապնդվում և զարգանում են։

---

[1] Советский Союз. Грузия (Географическое описание в 22 томах), М., 1967, стр. 21—60.

[2] СССР в цифрах в 1967 г., М., 1968, стр. 7.



Սովետական իշխանության առաջին իսկ օրերից Վ. Ի. Լենինը ուրվագծեց Անդրկովկասի հանրապետությունների զարգացման ուղին։ Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի լեռնականների հանրապետության կոմունիստներին ուղղված 1921 թվականի ապրիլի 14-ի նամակում Վ. Ի. Լենինը նշեց, որ երկրամասի աշխատավորների տնտեսական ու կուլտուրական շինարարության կազմակերպման կարևորագույն պայմաններից մեկը ժողովուրդների բարեկամության և համագործակցության զարգացումն է, որի համար Անդրկովկասի ժողովուրդները մեծ փորձ ունեն։ Հենվելով բարեկամության լավագույն ավանդույթների վրա, որոնցով հարուստ է Անդրկովկասի ժողովուրդների պատմությունը, վրաց տաղանդավոր ժողովուրդը հերոսական գործունեություն ծավալեց երկրի ընդերքում թաքնված բնական հարստությունները, հիդրոէներգիայի հսկայական պաշարները, արգավանդ հողերը և բարեբեր կլիման արդյունավետ ձևով օգտագործելու համար։ 1922 թվականի մայիսին Վրաստանի սովետների 1-ին համագումարը ընդունեց սահմանադրություն։ Այնուհետև ՌՍՖՍՀ և Վրաստանի միջև կնքվեցին պայմանագրեր, բայց դրանք չէին բավարարում ժողովրդի աճող, ազգային պետական շինարարության պահանջները։ Այդ պատճառով Անդրկովկասում լայն շարժում սկսվեց ՍՍՀՄ ստեղծելու համար, որին ակտիվ մասնակցություն ունեցան Վրաստանի աշխատավորները։ Վրացական ՍՍՀ-ը Սովետական Միության բոլոր ժողովուրդներից ստացավ անշահախնդիր օգնություն և այդ հիման վրա նա եղբայրական մեծ ընտանիքում, պատմական կարճ ժամանակամիջոցում ցարական Ռուսաստանի կիսագաղութային, տնտեսական հետամնաց վիճակից դուրս եկավ ու դարձավ զարգացած արդյունաբերական, մեքենայացված գյուղատնտեսության և զարգացած կուլտուրայի հանրապետություն։ Վրաց ժողովուրդն իր հարազատ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, ՍՍՀՄ ժողովուրդների օգնությամբ ամենից առաջ ստեղծեց էներգետիկ հզոր բազա։ Վրաստանը հարուստ է սպիտակ ածխով։ Հայտնի է, որ այստեղ կան լեռնային բազմաթիվ գետեր ու գետակներ, որոնք սկիզբ են

տանում Կովկասյան լեռնաշղթայից ու Հարավ-վրացական լեռնանցքի բարձունքներից և ունեն հիդրոէներգիայի մեծ պաշարներ։ Ժողովրդի սանձազերծ աշխատանքով ստեղծվել է էլեկտրաէներգիայի հզոր արտադրություն։ Ներկայումս հանրապետության էլեկտրաէներգիայի հզորությունը կազմում է ավելի քան 274 հազար կվտ[1]։

Սովետական իշխանության տարիներին արդյունաբերությունը հասավ զարգացման բարձր մակարդակի։ Սովետական Վրաստանը ավելի ու ավելի մեծ մասնակցություն է ունենում արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի ընդհանուր-միութենական փոխանակմանը։

Հանրապետությունում ստեղծվեցին արդյունաբերության նոր ճյուղեր, որոնք փոխեցին երկրի տնտեսության դեմքը։ Հանրապետության ինդուստրիայի առաջատար ճյուղերի շարքին են պատկանում մեքենաշինությունը, սև մետալուրգիան, էլեկտրատեխնիկական, գործիքաշինության, քիմիական, թեթև և սննդի արդյունաբերությունը[2]։

Ածխարդյունաբերությունը զարգացել է գլխավորապես Տղիբուլիում, Տկվարչելիում, Ախալցխայում։ Այս վայրերի հանքերում հսկայական աշխատանք է կատարվել կատարելագործված մեքենաներով ու մեխանիզմներով աշխատանքը հեշտացնելու ուղղությամբ։ Այդ հանգամանքը հնարավորություն տվեց զգալիորեն բարձրացնել ածխի հանույթը։

Ճիաթուրիի հանքավայրը հարուստ է մանգանով, որն իր որակով աշխարհում լավագույնն է համարվում, իսկ ընդհանուր պաշարներով Սովետական Միությունում, Նիկոպոլից հետո, գրավում է երկրորդ տեղը[3] և ունի տնտեսական հսկայական նշանակություն։ Սովետական կառավարությունը կապիտալ մեծ ներդրումներ կատարելու շնորհիվ կարողացավ բարձրացնել մանգանի արդյունահանումը։ Ձեռնարկված

[1] «Заря Востока», 25 февраля 1969.

[2] «Заря Востока», 30 декабря 1968.

[3] Մ. Կ. Կախնաձյան և Բ. Ա. Խուտա, Սովետական Վրաստանի արդյունաբերական և գյուղատնտեսական զարգացումը, 1966, էջ 6։



կոնկրետ միջոցառումների հիման վրա 1968 թվականին արդյունահանվել է մի քանի միլիոն տոննա մանգան։

Ժողովրդական տնտեսության այս ճյուղի զարգացմանը մեծապես նպաստեցին ժողովուրդների բարեկամությունը և համագործակցությունը։ Ճիաթուրիի լեռնագործներն ավելի քան երկու տասնամյակ եղբայրական սերտ կապեր են հաստատել Ուկրաինական ՍՍՀ Նիկոպոլի լեռնագործների հետ։ Այստեղ գոյություն ունեն ավանդական սոցիալիստական գործարար մրցություն, աշխատանքի փորձի սիստեմատիկ փոխանակում, տեխնիկայի ու գիտության նվաճումների սիստեմատիկ պրոպագանդա, որոնց շնորհիվ հսկայական չափով բարձրանում է աշխատանքի արտադրողականությունը և մեծանում տնտեսական արդյունավետությունը։ Երկու եղբայրական հանրապետությունների մանգանի ավազանների աշխատավորները խոշոր հաջողություններ են ձեռք բերել ո՛չ միայն արտադրության բնագավառում, այլև ինտերնացիոնալ դաստիարակության և ժողովուրդների բարեկամության զարգացման գործում։

Վրաց ժողովուրդը եղբայրական հանրապետությունների օգնությամբ կարճ ժամանակամիջոցում կառուցեց Ռուսթավի քաղաքը և Ռուսթավիի՝ Անդրկովկասյան մետալուրգիական գործարանը։ Այն կարևոր նշանակություն ունի ո՛չ միայն Անդրկովկասի սովետական հանրապետությունների, այլև ամբողջ սովետական երկրի տնտեսության համար։ Ռուսթավիի գործարանը թողարկում է հազարավոր տոննա պողպատ, չուգուն, գլանվածք, խողովակներ, որոնք ուղարկվում են սովետական երկրի բազմաթիվ հանրապետություններ և արտասահմանյան երկրներ։ Ռուսթավիի մետալուրգիական գործարանում աշխատում են վրացիներ, հայեր, ռուսներ, ադրբեջանցիներ և այլ ազգերի ներկայացուցիչներ։ Այն իր արտադրանքով կոմունիստական շինարարության գործում վճռական դեր է խաղում և արագացնում կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման գործը։ ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության և համագործակցության զարգացման գործում կարևոր դեր ունի Վրաստանի մեքենաշինությունը, որը թեև նոր է ստեղծվել, բայց զգալի տեսակա-

բար կշիռ ունի հանրապետության տնտեսության մեջ։ Վրաստանի մեքենաշինական և մետաղամշակման գործարանները հիմնականում գտնվում են Թբիլիսիում, Քութայիսում, Բաթումում և այլ քաղաքներում։ Այդ գործարանների բանվորական կոլեկտիվները բազմազգ են։ Այսպես օրինակ՝ Քութայիսի ավտոմոբիլային գործարանում աշխատում են բազմաթիվ ազգերի պատկանող բանվորներ, որոնք իրենց համերաշխ կոլեկտիվի միասնական ջանքերով թողարկում են բարձրորակ բեռնատար ավտոմեքենաներ։ Դրանց արտադրությունը Սովետական Վրաստանին հազարավոր թելերով կապել է եղբայրական հանրապետությունների հետ։ Վրաստանի արդյունաբերության արտադրանքի բազմաթիվ տեսակներ արտահանվում են նաև Եվրոպայի, Ասիայի և Հարավային Ամերիկայի մի շարք երկրներ։ Այդ տեսակետից ուշադրության արժանի է էլեկտրատեխնիկական և գործիքաշինության արդյունաբերության ձեռնարկությունների արտադրանքը, որը համաժողովրդական փառք է ձեռք բերել։

Արագորեն զարգանում է Վրաստանի քիմիական արդյունաբերությունը։ Հանրապետության քիմիական արդյունաբերության համախառն արտադրանքը ավելացավ 50 տոկոսով[1]։ Դրա հետ միասին յուրացվեցին արտադրանքի նոր տեսակներ, որոնք խիստ անհրաժեշտ են սովետական երկրի ժողովրդական տնտեսության համար։ Սովետական Վրաստանի քիմիական արդյունաբերության միջոցով տնտեսական ու գիտական կապեր են ստեղծվել ո՛չ միայն ՍՍՀՄ ժողովուրդների, այլև Մոնղոլիայի, Կորեայի, Բուլղարիայի և սոցիալիզմի մյուս երկրների ժողովուրդների միջև։

Ժողովուրդների միջև տնտեսական կապերի ստեղծման գործում կարևոր նշանակություն ունի Վրաստանի թեթև արդյունաբերությունը, որն ունի մեծաթիվ ձեռնարկություններ։ ՍՍՀՄ-ում և նրա սահմաններից դուրս ժողովրդակա-

[1] Տե՛ս «Սովետական Վրաստան», 18 սեպտեմբերի 1967, Թբիլիսի։



նության են վայելում Վրաստանի բրդեղենը, մետաքսը, կաշվե կոշկեղենի արտադրությունը։

Վրաստանը հայտնի է նաև սննդի արդյունաբերության համբավոր հարուստ ավանդներով։ Սննդի արդյունաբերությունն իր արտադրության ծավալով հանրապետության մեջ գրավում է առաջին տեղը։ Սովետական Վրաստանը տալիս է ՍՍՀՄ-ում արտադրվող թեյի 95 տոկոսը, գինու՝ 13, շամպայն գինու 16 տոկոսը[1]։ Արդյունաբերության արտադրանքն իր տեխնիկական ու շահագործողական ցուցիչներով գտնվում է համաշխարհային լավագույն ստանդարտների մակարդակի վրա։ Այսպիսով, Սովետական Վրաստանը հսկայական քայլեր է կատարել արդյունաբերության զարգացման բնագավառում։ Վրաստանը բնակչության մեկ շնչի հաշվով արտադրում է 2,6 անգամ շատ չուգուն, 1,5 անգամ շատ պողպատ, քան Իտալիան, 8,5 անգամ շատ էլեկտրաէներգիա, քան Թուրքիան և 20 անգամ շատ, քան Իրանը[2]։ Վրացական ՍՍՀ արդյունաբերության մեջ ծավալվում է սոցիալիստական մրցությունը։ Վրաստանի բանվորները սոցիալիստական մրցության մեջ են եղբայրական Ուկրաինայի, Ադրբեջանի, Հայաստանի և մյուս հանրապետությունների համապատասխան ձեռնարկությունների բանվորների հետ։ Մրցության ընթացքում տեղի են ունենում նաև փորձի փոխանակում և բարեկամական կապերի ընդարձակում։

Վրաստանի աշխատավորները ՍՍՀՄ ժողովուրդների օգնությամբ մեծ աշխատանք են կատարել գյուղատնտեսության զարգացման գործում։ Զգալի չափով բարելավվել է հողերի ոռոգման աշխատանքը։ Սովետական Վրաստանի գյուղատնտեսության արտադրության մեջ կարևոր տեղ են գրավում թեյը, խաղողը, ցիտրուսները, հատապտուղները, ծխախոտը, շերամապահությունը, մեղվաբուծությունը և անասնապահությունը։ Թեյը Վրաստանի հարստությունն ու պարծանքն է։ Օտարերկրյա հյուրերը հիացմունքով և զարմանքով են նայում Վրաստանի թեյի պլանտացիաներին։

[1] «Заря Востока», 25 февраля 1969, Тбилиси.

[2] «Սովետական Վրաստան», 25 փետրվարի, 1969։

Վրացական «Սաքարթվելո» թեյահավաք մեքենան առաջինն է աշխարհում։ Թեյի պլանտացիաները Վրաստանում կազմում են 64 հազար հեկտար։

Վրաց ժողովուրդը դեռևս հնագույն ժամանակներից սկըսած՝ բարեկամական սերտ կապեր է ունեցել երկրի շատ ժողովուրդների հետ։ Վրաց գրողների, երաժիշտների և նկարիչների ստեղծագործությունների կարևոր թեմաներից են ժողովուրդների բարեկամությունը և համագործակցությունը։ Կովկասյան ժողովուրդների բարեկամությունը և համերաշխությունը եղել է նաև գիտնականների ավագ սերնդի ուշադրության կենտրոնում։ Նրանք ողջունել են կուսակցության ազգային քաղաքականությունը։ Դեռևս ռուսական առաջին հեղափոխության տարիներին Ն. Յա. Մառը հանդես եկավ ընդդեմ ազգայնամոլության և ողջունեց այն ուժերը, որը ճանապարհ է բացում կովկասյան ազգերի մերձեցման ու համերաշխության համար։ «Նման կովկասյան եղբայրություններ»[1] հոդվածում նա ընդգծում է, որ վաղ թե ուշ տեղի է ունենալու կովկասյան ժողովուրդների իսկական եղբայրացում։ «Կովկասի ժողովուրդների ճակատագրերը,—նշում է Ն. Յա. Մառը,— սերտորեն կապված են ո՛չ միայն միմյանց հետ, այլև բոլոր դրացի ժողովուրդների ճակատագրի հետ՝ անկախ նրանց ազգություններից։ Ն. Յա. Մառը իր հետազոտություններով ցույց տվեց հայկական, վրացական և ադրբեջանական կուլտուրաների փոխհարաբերությունները և նշեց, որ նրանք «միմյանց հետ սերտ շփման մեջ, անխզելի կապի մեջ գտնվելով, ձեռք-ձեռքի տված երկար ժամանակ ընթացել են միասին, ուրախանալով միասին, տանելով բոլոր ձախորդությունները միասին»[2]։

Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին բուրժուական «Բաքու» թերթը Կովկասի ժողովուրդների համերաշխու-

[1] Տե՛ս Из гурийских наблюдений и впечатлений (по поводу Бакинских событий), СПБ, 1905, стр. 26—27.

[2] «Приазовский край», 15 января 1917 (№ 15).



թյունը համարում էր «անիրագործելի երազ»[1]։ Սակայն դուրս եկան բուրժուական գաղափարախոսների հաշիվները։ Մեծ Հոկտեմբերը ստեղծեց ժողովուրդների իսկական, եղբայրական բարեկամություն։ Վրաց ժողովուրդը, ինչպես ասել է նշանավոր գրող Ա. Ծերեթելին, սերտ բարեկամական կապերի մեջ է մյուս ժողովուրդների հետ և նրանց զարգացման հնարավորությունները նոր պայմաններ են ստեղծում նաև Վրաստանի համար։ «Բարեկամներ» բանաստեղծության մեջ վրաց պոետը դիմելով հայ ականավոր դրամատուրգ Գ. Սունդուկյանին, գրել է.

Առանց ազգի խտրության ես
Բարիքներ եմ մաղթում նրան,
Ով որ մարդ է ճշմարտապես
Արեգակի լույսի նման[2]։

Վրաց ժողովուրդը միշտ էլ հատուկ ուշադրություն է դարձրել ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը՝ նրա մեջ տեսնելով նաև իր բարգավաճման ուժը[3]։ Անդրկովկասի ժողովուրդների միասնության, համագործակցության սկզբունքները նոր բովանդակություն ստացան սոցիալիզմի պայմաններում։ Վրաց ժողովուրդը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ աչքի լույսի պես պահպանում է ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը և ակտիվորեն պայքարում նրա զարգացման համար։ Վրաստանի աշխատավորները, եղբայրական ժողովուրդների հետ, նրանց փոխօգնության ու միասնության կենսական ուժով առաջ են մղում կոմունիստական շինարարությունը, որի պրոցեսում համակողմանիորեն զարգանում են բոլոր ազգերի ու ազգությունների տնտեսությունը և կուլտուրան։ Վրաց ժողովրդի գրականությունը, արվեստը և գիտությունն իրենց ինտերնա-

[1] Газ. «Баку», 1916, № 225.

[2] «Տեղեկագիր» ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի, Երևան, 1950, № 8, էջ 74։

[3] Տե՛ս Летопись дружбы грузинского и русского народов с древних времен до наших дней, Тбилиси, 1961.

ցիտնալ բովանդակությամբ ակտիվ օգնություն են ցույց տալիս ՍՍՀՄ բազմազգ ժողովուրդների բարեկամության և համագործակցության զարգացմանը։ Ուշագրավ է վրացական սովետական գրականության վարպետներ Կ. Գամսախուրդիայի, Ի. Աբաշիձեի, Ս. Չիկովանիի, Ա. Միրցխուլավայի, Ս. Շանշիաշվիլու, Գր. Աբաշիձեի և ուրիշների համակողմանի գործունեությունը Սովետական Միության ազգերի ու ազգությունների սոցիալիստական կուլտուրայի բարեկամության ու համագործակցության ամրապնդման գործում։ Վրացական սովետական գրականությունն աճում ու զարգանում է ՍՍՀՄ ժողովուրդների մեծ ընտանիքում, եղբայրական բոլոր ազգերի գրականության հետ սերտ համագործակցության պայմաններում։ Վրաց գիտնականները մաթեմատիկայի, ֆիզիոլոգիայի, լեզվաբանության, պատմության, արվեստագիտության, ազգագրության, տնտեսագիտության բնագավառներում աշխատում են համագործակցված։ Նրանք համաշխարհային և միջազգային կոնգրեսներում հաճախ ներկայացնում են սովետական գիտությունը և ցույց տալիս, թե ինչպես ՍՍՀՄ ժողովուրդների համերաշխ ընտանիքում ծաղկում են վրաց ժողովրդի գիտությունն ու կուլտուրան։ Վրաստանը ունի 18 բարձրագույն ուսումնական հաստատություն, որ սովորում են 81 հազար ուսանողներ[1]։ Հանրապետությունում գործում է 170 գիտահետազոտական ինստիտուտ, որտեղ գիտնականներն իրենց բեղմնավոր աշխատանքով հարստացնում են հայրենական գիտությունը։ Ամբողջ աշխարհում հայտնի է ակադեմիկոս Ն. Ի. Մուսխելիշվիլին իր մաթեմատիկական դպրոցի նոր ուղղությամբ։ Սովետական Վրաստանի գիտության ու կուլտուրայի զարգացումը ակնառու կերպով ցույց է տալիս, որ ինչքան սերտ և համագործակցված լինի ՍՍՀՄ ազգերի ու ազգությունների շփումը, այնքան ամրակուռ կլինի սովետական երկրի ժողովուրդների բարեկամությունը։ Կոմունիստական կուսակցությունը խոշոր աշխատանք է կատարում, որպեսզի կոմունիստական շինարարության պրոցեսում էլ ավելի բազմակողմանիորեն զարգանան ժողովրդի կուլ-

[1] СССР 1917—1967, стр. 23.



տուրան և գիտությունը։ Այդ բանին մեծապես նպաստում են վրաց ժողովրդի օրգանական կապերը և սոցիալիստական համագործակցությունը ՍՍՀՄ բոլոր ազգերի ու ազգությունների հետ։ Այդ առումով ուշագրավ են տնտեսական և կուլտուրական այն կապերը, որոնք վաղուց ի վեր ստեղծվել են Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի բազմազգ աշխատավորների միջև։ Անդրկովկասյան հանրապետությունները սիստեմատիկ կերպով Երևանում, Բաքվում, Թբիլիսիում կազմակերպում են գրական գիտաժողովներ, երաժշտական տասնօրյակներ, ցուցահանդեսներ, գիտական սեսիաներ և բազմաթիվ այլ միջոցառումներ, որոնք աշխատավորների կոմունիստական դաստիարակության և նրանց սոցիալիստական կուլտուրայի փոխադարձ շփման համար էական նշանակություն ունեն։ Կոմունիստական շինարարության ընթացքում կուլտուրական նման ձեռնարկումները զարգացնում են Անդրկովկասի ժողովուրդների հոգևոր կապերի ընդհանուր գծերը։

Անդրկովկասի հանրապետություններում ավանդություն են դարձել թատրոնների, երաժշտական կոլեկտիվների հանդիպումները և գեղարվեստական գրքերի հրատարակությունը։ Վրացական ՍՍՀ-ում հայ, ադրբեջանական, ուկրաինական, ռուսական գրականության լավագույն ներկայացուցիչները դարձել են հարազատ։ Նրանց գործերը թարգմանվում են վրացերեն լեզվով, բանվորների, կոլտնտեսականների, մտավորականության, երիտասարդության շրջաններում ընթերցվում և դառնում են աշխատավորների սեփականությունը։

Անդրկովկասի սովետական հանրապետություններում լայն կերպով զարգանում են արտադրողական ուժերը, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, սոցիալիստական կուլտուրան ու գիտությունը, աճում են ազգային կադրերը, և այդ բոլորը ամրապնդում են ժողովուրդների համագործակցությունը, աճում է յուրաքանչյուրի ավանդը կոմունիզմի կառուցման գործում։

Տնտեսության և կուլտուրայի բնագավառում ձեռք բերած հաջողությունների համար Վրացական ՍՍՀ-ը 1965 թվականի դեկտեմբերի 29-ին պարգևատրվեց Լենինի երկրորդ շքանշ-

*շանով։ Սովետական Վրաստանը համամիութենական համբավ է ձեռք բերել իր հանքային ջրերի, Սև ծովի ափերի մեղմ կլիմայի և այնպիսի առողջարանների շնորհիվ, ինչպիսիք են՝ Բորժոմին, Ծխալտուբոն, Սաիրմեն, Քոբուլեթին և այլն։ Բուռն կերպով աճում են Քութայիսը, Սուխումին, Բաթումը, Փոթին, Ցխինվալին, Գորին և մյուս քաղաքները։*

*Մեծ ուշադրություն է նվիրվում Վրացական ՍՍՀ մայրաքաղաք, հնամենի Թբիլիսիի զարգացմանը, որը սովետական իշխանության տարիներին դարձել է ժամանակակից բարեկարգ քաղաք։*

*Վրաց տաղանդավոր ժողովուրդն իր անսպառ ուժը ի սպաս է դրել կոմունիստական շինարարության մեծ գործին և ակտիվ գործունեություն է ծավալում ՍՍՀՄ ժողովուրդների միասնության և բարեկամության հետագա ամրապնդման համար։*

# Ադրբեջանական ՍՍՀ





Տեսարան Ադրբեջանական ՍՍՀ մայրաքաղաք Բաքվից

## 7. ՏԱՊԱԼՎՈՒՄ Է ԷՆՎԵՐԱՏՐԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՆ

*Անդրկովկասի ժողովուրդների բարեկամությունը դարերի պատմություն ունի։ Նա կոփվել է օտար և տեղական ճնշողների դեմ ժողովուրդների սոցիալական ու ազգային ազատագրության համար մղած համատեղ պայքարում։ Ժողովուրդների բարեկամության համար բեղմնավոր գործունեություն է ծավալել Բաքվի բազմազգ պրոլետարիատի ինտերնացիոնալ բնույթը, որը դարձավ Անդրկովկասի աշխատավորների հեղափոխական պայքարի դարբնոցը։ Հենց այստեղ անցել ու կոփվել լենինյան գվարդիայի մի փաղանգ մարտիկներ։ Բաքվի հերոսական պրոլետարիատի ինտերնացիոնալ շարքերում, նրա պայքարի բովում անցել են նշանավոր հեղափոխականներ Ստ. Շահումյանը, Ի. Ստալինը, Ս. Սպանդարյանը, Մ. Ազիզբեկովը, Բ. Կնունյանցը, Ա. Ջափարիձեն, Ս. Օրջոնիկիձեն, Կամոն, Խանլարը, Ա. Մյասնիկյանը, Ա. Միկոյանը, Ն. Նարիմանովը և շատ ուրիշներ, որոնք հսկայական գործունեություն ծավալեցին Անդրկովկասի ժողովուրդների համերաշխությունը և բարեկամությունը ամրապնդելու, լենինյան գաղափարները իրականացնելու համար։*

*Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո Բաքվի պրոլետարիատն առաջինը բարձրացրեց հեղափոխության դրոշը։ Բաքվի անմահ կոմիսարները, աշխատավորների ազատության գործին իրենց պայծառ կյանքը նվիրելով, Անդրկովկասի ժողովուրդների դարավոր բարեկամության մի նոր, անմահ ջահ վառեցին։*

*1920 թ. ապրիլին Ադրբեջանի բանվորները և աշխատավոր գյուղացիները, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, տապալեցին մուսավաթական կարգերը և երկրում հաստատեցին սովետական իշխանությունը։*

*Սովետական կարգի հաղթանակը Ադրբեջանում խոշոր նշանակություն ունեցավ ո՛չ միայն ադրբեջանական, այլև*

Անդրկովկասի մյուս ժողովուրդների ճակատագրի համար։ Պրոլետարական մեծ բանաստեղծ Վ. Մայակովսկին գրել է.

Ամպերը
ծավալվում էր որը-որին։
Պրոլետարիատի լուսամուտները
Թափվում էին
զնգոցով ցածանն։
Եվ տաշինը Արևելքում,
բարիկադների վրա
Հոկտեմբերի,
բարձրացավ Ադրբեջանը։

Ադրբեջանական ժողովուրդը բեղմնավոր գործունեություն ծավալեց երկրի արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման համար[1]։ Նա Հայրենական պատերազմի ահեղ տարիներին և կոմունիստական շինարարության ժամանակաշրջանում հերոսաբար ցույց տվեց ժողովուրդների եղբայրական միասնության, անխախտ բարեկամության և անմահ Լենինի մեծ գործին անսահմանորեն նվիրվածության հրաշալի օրինակ։ Կոմունիզմի կառուցումը դարձել է ինչպես ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների, այնպես և նրա ընտանիքի լիիրավ անդամներից մեկի՝ Սովետական Ադրբեջանի ժողովրդի անմիջական գործը։ Ադրբեջանը բոլորում է սովետական կարգերի հաստատման հիսուն տարին։ Անցած ժամանակաշրջանում նա ՍՍՀՄ եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում փայլուն հաջողություններ է ձեռք բերել տնտեսության և կուլտուրայի բնագավառում։ Ադրբեջանական Սովետական Սոցիալիստական Հանրապետության զարգացման արդի մակարդակը, նրա տնտեսության, կուլտուրայի, գիտության հսկա վերելքը վկայություն են այն բանի, որ ադրբեջանական ժողովրդի կյանքում տեղի է ունեցել արմատական հեղաշրջում։

Ադրբեջանը՝ ցարական Ռուսաստանի ծայրամասերից և

¹ Տե՛ս **П. А. Азизбекова,** Руководство В. И. Ленина социалистическим строительством в Азербайджане (1920—1923), Баку, 1960.



հետամնացներից մեկը, որ գտնվում էր խավարի ու տգիտության մեջ[1], անցած հիսուն տարում ժողովրդական զանգվածների միասնական ջանքերով դարձել է զարգացած տնտեսության, արվեստի, գրականության և գիտության հանրապետություն։ Սովետական Ադրբեջանը հրաշալի օրինակ է հանդիսանում ո՛չ միայն Արևելքի երկրների, այլև եվրոպական շատ պետությունների համար։ Մի՞թե դրա լավագույն օրինակը չէ Սովետական Ադրբեջանի ժամանակակից արդյունաբերությունը։ Ադրբեջանի արդյունաբերության համար բնորոշ են նավթի վերամշակման մեջ նորագույն տեխնիկայի մասսայական կիրառությունը, մեծ քիմիայի, մեքենաշինության, մետաղամշակման, մետալուրգիայի, էլեկտրատեխնիկական և արդյունաբերական բազմաթիվ այլ հարուստ ու զարգացած ճյուղերի հսկա վերելքը։

Սովետական Ադրբեջանի գլխավոր հարստությունը «սև ոսկին» է՝ նավթը։ Նրա հիմնական ֆոնդերը կազմում են Ադրբեջանական Սովետական Սոցիալիստական Հանրապետության ինդուստրիալ ֆոնդերի 61,9 տոկոսը[2]։

Սովետական իշխանության տարիներին Ադրբեջանում զարգացավ նավթամշակման արդյունաբերությունը։ Նոր Բաքվի նավթաքիմիական գործարանը արտադրում է հեղուկ գազ, որը հանդիսանում է Սումգաիթի սինթետիկ կաուչուկի գործարանի հումքը։ Նավթահանքերում և նավթամշակման գործարաններում աշխատում են սոցիալիստական աշխատանքի բազմաթիվ ներկայացուցիչներ։ Նրանք արտադրության նորարարներ են, որ համերաշխ և եղբայրաբար աշխատում են հայրենիքի արդյունաբերության զարգացման համար։ Ահա անվանի հերոս վարպետներ Աղա Նեյմաթուլլան և Ալեքսեյ Օրլովը, որոնք սերտ համագործակցությամբ մշակեցին և կենսագործեցին հորատման արագացրած մեթոդը, որը լայնորեն տարածվել է Սովետական Միության նավթային բոլոր շրջաններում։ Այսպես, Սովետական Ադրբեջանի նավ-

¹ Տե՛ս **И. А. Гусейнов,** Победа советской власти в Азербайджане, Баку, 1960.

² Տե՛ս «Бакинский рабочий», 30 декабря 1967.

Ըահանքերում և նավթամշակման գործարաններում նույնպես հետևողականորեն կոփվում և ամրապնդվում է ՍՍՀՄ ժողովուրդների լենինյան բարեկամությունը։

Ադրբեջանի բանվոր դասակարգը բարեկամության և համագործակցության փայլուն ավանդույթներ է ստեղծել[1], որոնք մեծապես նպաստում են սովետական հայրենիքի ժողովուրդների եղբայրական բարեկամության անխորտակելի ուժի հզորացմանը։

Ժողովրդական տնտեսության շահերը պահանջում էին Ադրբեջանում արագ կերպով զարգացնել քիմիական արդյունաբերությունը, սակայն կային լուրջ դժվարություններ։ Հիմնական դժվարություններից մեկը այն էր, որ հանրապետությունում չկային համապատասխան մասնագիտական կադրերը։ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախաձեռնությամբ Ադրբեջանում ստեղծվեցին գիտահետազոտական ինստիտուտներ, որտեղ պատրաստվեցին մասնագետներ և որակյալ բանվորական կադրեր։ Սովետական Միության բոլոր ժողովուրդները այդ գործում ևս իրենց եղբայրական օգնությունը ցույց տվեցին Ադրբեջանին, որի հիման վրա խոշոր թռիչք կատարեց Ադրբեջանի քիմիական արդյունաբերությունը։ Նա այժմ վճռական դեր է խաղում ՍՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության զարգացման մեջ։

Քիմիական և մետալուրգիական արդյունաբերության զարգացման հետևանքով սոցիալիստական շինարարության վերջին տարիներին ստեղծվեց և աճեց Սումգաիթը՝ մետաղի ու քիմիայի քաղաքը[2]։ Նոր սոցիալիստական քաղաքն ունի բազմազգ բնակչություն։ Այստեղ աշխատում են ադրբեջանցիներ, հայեր, ռուսներ, վրացիներ, ուկրաինացիներ, բելոռուսներ և այլ ազգերի ներկայացուցիչներ։ Սումգաիթը իսկական ինտերնացիոնալ քաղաք է։ Բոլոր ազգերի ու ազգությունների մարդիկ ունեն մեկ ընդհանուր նպատակ՝ կառուցել կոմունիզմը, է՛լ ավելի ամրապնդել ժողովուրդների բարեկամությունը և համագործակցությունը։

[1] Տե՛ս **А. Мамедов,** Рабочий класс Азербайджана в первой пятилетке (1928—1932), Баку, 1961.

[2] Տե՛ս **З. Дулаева,** Из истории нового социалистического города Азербайджана — Сумгаита, Баку, 1961.



Ադրբեջանական ՍՍՀ-ն հարուստ է էներգետիկ բազայով։ Հենց այդ մասին է վկայում այն փաստը, որ Սովետական Ադրբեջանում տարեկան արտադրվում է այնքան էլեկտրաէներգիա, որքան արտադրում էր մինչհեղափոխական Ռուսաստանը հինգ տարվա ընթացքում։

Սովետական Ադրբեջանն իր հարուստ էլեկտրաէներգիայով օգնում է եղբայրական հանրապետությունների ժողովրդական տնտեսություններին։ Ստեղծված է Անդրկովկասյան էլեկտրաէներգիայի միացյալ ցանց, որը լավագույն վկայությունն է եղբայրական ժողովուրդների սոցիալիստական համագործակցության։ Հանրապետության էներգետիկ բազան շարունակում է ընդլայնվել։ Նոր էլեկտրակայանները կօգնեն զգալիորեն բարելավելու ո՛չ միայն Ադրբեջանի, այլև Անդրկովկասի էլեկտրաէներգիայի բալանսը։ Այդ կարող է տեղի ունենալ միայն սովետական երկրում, ուր չկան ազգամիջյան կռիվներ, ուր բոլոր ժողովուրդներն ունեն մեկ ընդհանուր շահ և նպատակ, որը իրականացվում է բոլոր ժողովուրդների ընդհանուր ուժերով։ Ադրբեջանական ժողովուրդը մեքենաշինության և մետաղամշակման արդյունաբերության արտադրանքով է՛լ ավելի է ընդլայնում ժողովուրդների համագործակցությունը։ Մեքենաշինական ձեռնարկությունները բազմազան ու բարդ սարքավորում են թողարկում ո՛չ միայն հանրապետության, այլև Սովետական Միության մյուս նավթաբեր շրջանների նավթային արդյունաբերության համար։

Ադրբեջանում ինդուստրիայի զարգացմանը զուգընթաց աճում է նաև ժողովրդական սպառման ապրանքների, ինչպես և թեթև ու սննդի արդյունաբերությունը։

ՍՍՀՄ ժողովուրդների օգնությամբ վերջին տարիներին զարգացավ մասնավորապես տեքստիլ, կաշվի-կոշիկի արդյունաբերությունը։ Խոշոր հաջողություններով Ադրբեջանի աշխատավորներն իրենց ավանդն են ներդնում սովետական ամբողջ ժողովրդի բարեկամության զարգացման և կոմունիստական շինարարության ընդհանուր գործում։

Մեծագույն փոփոխություններ են տեղի ունեցել Ադրբեջանի գյուղատնտեսության մեջ[1]։ Բամբակի մշակման հետ միասին հանրապետության գյուղատնտեսության աշխատողները մշակում են թեյ, ծխախոտ և մերձարևադարձային բազմաթիվ կուլտուրաներ, որոնք թեև նոր են, բայց արդեն արդյունավետ են դարձել ժողովրդական տնտեսության համար։ Հանրապետության դաշտերում աշխատում են ավելի քան ութսուն հազար տրակտորներ, կոմբայններ և գյուղատնտեսական այլ մեքենաներ։ Ադրբեջանի գյուղատնտեսության բնագավառի աշխատողները բարձր բերք ստանալու նպատակով սոցիալիստական մրցության մեջ են մտել Հայաստանի, Վրաստանի, Ուկրաինայի և Միջին Ասիայի սովետական հանրապետությունների աշխատավորների հետ, և, իբրև կանոն, նրանք փոխադարձաբար աշխատանքները սիստեմատիկորեն ստուգում և փորձի փոխանակում են կատարում։

Մրցող հանրապետությունների գյուղատնտեսության աշխատողները եղբայրաբար նշում են նաև միմյանց աշխատանքներում գոյություն ունեցող թերությունները ու վրիպումները և ուղիներ նշում նրանց արագ վերացման համար։ Սովետական Ադրբեջանի օրինակով վառ կերպով երևում են միութենական 15 իրավահավասար հանրապետությունների հսկայական աճը տնտեսության ու կուլտուրայի ասպարեզում, նրանց եղբայրական համագործակցությունը կոմունիստական շինարարության մեջ։ ՍՍՀՄ-ում սոցիալիզմի լիակատար և վերջնական հաղթանակը Ադրբեջանի ժողովրդին հանեց միջազգային հարաբերությունների նոր ասպարեզ։ Հանրապետության ժողովրդական տնտեսության արտադրանքը ծովային ճանապարհներով արտահանվում են աշխարհի 56 պետություններ։ Նավթը, մետաղը արտահանվում է Իտալիա և Ճապոնիա, Բաքվի նավթամշակման մեքենաները մեծ անուն են հանել Մերձավոր Արևելքի երկրներում, իսկ Ադրբեջանում արտադրվող ապրանքները իրենց որակով աչքի են ընկնում Ռումինիայում, Լեհաստանում, Վիետնամում, Հնդկաստանում և Արաբական երկրներում։ Սակայն Սովետական Ադրբեջանը միայն մեքենաներ չէ, որ արտահանում է աշխարհի բազմաթիվ երկրներ։ Սովետական իշխանությունը Ադրբեջանի ժողովրդի կյանքում կատարել է կուլտուրական, տեխնիկական, գիտական մեծագույն հեղաշրջում, որի շնորհիվ նա արտասահմանյան երկրներին հաղորդում է նաև սովետական մարդկանց աշխատանքի փորձը։ Բաքվի նավթագործները հորատում են ո՛չ միայն Թուրքմենական ՍՍՀ-ում կամ Տյումենի մարզում, այլև սովետական մեծ հայրենիքի սահմաններից դուրս։ Ադրբեջանի կոմունիստական կուսակցությունը ՍՄԿԿ առաջավոր ջոկատներից մեկն է։ Կենսագործելով լենինյան ազգային քաղաքականությունը, նա ՍՍՀՄ-ի ժողովուրդների եղբայրական ընտանիքում կարողացավ հմտորեն հաղթահարել ադրբեջանական ժողովրդի տնտեսական ու կուլտուրական հետամնացությունը և նրան դուրս բերել բարգավաճման ուղին։ Ադրբեջանը հսկայական հաջողությունների հասավ նաև կուլտուրայի զարգացման գործում[1]։ Սովետական իշխանությունը ադրբեջանական ժողովրդի համար ապահովեց ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական գրականության և արվեստի վերելքը։ Անցյալում Ադրբեջանի բնակչության ճնշող մեծամասնությունն անգրագետ էր։ Սովետական իշխանության տարիներին Ադրբեջանում ստեղծվել են առաջավոր գիտական ու ուսումնական հաստատություններ, գիտահետազոտական ինստիտուտներ, ակումբներ, գրադարաններ, թատրոններ։ Յուրաքանչյուր տարի հանրապետությունում հրատարակվող գրքերի տպաքանակը հասնում է 12,5 միլիոնի, իսկ թերթերինն ու հանդեսներինը՝ 10 միլիոնի։ 1966 թվականին Ադրբեջանի թատրոնները հաճախել են մեկ միլիոն, իսկ կինոթատրոններ՝ 43 միլիոն հանդիսականներ։

ՍՍՀՄ եղբայրական ժողովուրդների գրականության մեջ իր արժանի տեղն ունի Սովետական Ադրբեջանի գեղարվեստական գրականությունը։ ՍՍՀՄ-ում և արտասահմանյան երկրներում հսկայական ժողովրդականություն են վայելում Սա-

[1] Տե՛ս **Б. Курбанов**, Шефская помощь бакинских рабочих азербайджанской деревне, Баку, 1960.

[1] Տե՛ս **Н. Пашаев**, Очерки истории культурного строительства Советского Азербайджана, Баку, 1960.

մեդ Վուրգունի, Միրզա Իբրահիմովի, Մեհտի Հուսեյնովի, Ս. Ռահիմովի, Ռասուլ Ռզայի, Սուլեյման Ռուստամի, Մ. Ռահիմի և ադրբեջանական շատ ուրիշ գրողների ստեղծագործությունները։

Ադրբեջանական սովետական գրող Հուսեյն Իբրահիմովի «Բարեկամություն» պատմվածքը կարևոր երևույթ է արդի գրականության մեջ։ Նրանում գրողը փայլուն կերպով դրսևորում է Անդրկովկասի ժողովուրդների ավանդական բարեկամության մեծ ուժը, նշում է Մ. Ֆ. Ախունդովի և Խ. Աբովյանի եղբայրական կապերը, որոնք նոր սերնդի կողմից իրենց հետագա զարգացումը ստացան սոցիալիստական շինարարության տարիներին։ Անդրկովկասի ժողովուրդների բարեկամությանն են նվիրված ադրբեջանական ժողովրդական բանաստեղծ Սամեդ Վուրգունի շատ ստեղծագործություններ։ Ահա դրանցից մեկը.

Թող միավորվենք Ղազախ, Դիլիջան,
Թող գրկախառնվենք ինչպես մի հոգի,
Ընկեր Հայաստան, յոլդաշ Ադրբեջան,
Մեկ էլ Վրաստան, ամխանագո ջան։

Սովետական Ադրբեջանի գրողները սոցիալիստական և կոմունիստական շինարարության մեջ տեսնում են 26 կոմիսարների փառահեղ գործունեության շարունակությունը, որոնք ապրում են կոմունիզմ կառուցող սովետական մարդկանց սրտերում։

Եվ նայում է կարծես
Շահումյանն ահա քեզ,
Հուշարձանից վառ խինդն է հորդում,
Եռանդով կրակոտ,
Բոլորի սրտի մոտ
Անցյալից ներկան է պատմում։
. . . . . . . . . . . . . . . .
Ու ժպտում է պայծառ
Մեշադին հայրաբար,



Մեզ ձեռքով նշան է անում,
Թվում է Ալյոշան
Քայլերով առնական՝
Ժպտալով ամբիոն է ելնում[1]։

Սովետական Ադրբեջանի կոմպոզիտորները բազմաթիվ ստեղծագործություններ են նվիրել կոմունիզմ կառուցող մարդկանց կյանքին ու աշխատանքին։ Ադրբեջանում ճանաչվել և սիրվում է լենինյան մրցանակի դափնեկիր, կոմպոզիտոր Կարա Կարաևի երաժշտությունը։ Կարա Կարաևի երաժշտական լեզուն մատչելի է ո՛չ միայն ադրբեջանական, այլև աշխարհի շատ ժողովուրդներին։

ՍՍՀՄ-ում սոցիալիզմի լիակատար և վերջնական հաղթանակը վճռական նշանակություն ունեցավ ադրբեջանական ժողովրդի կուլտուրայի սոցիալիստական բովանդակության զարգացման, նրա ինտերնացիոնալ հիմքի հետագա ամրապնդման և բոլոր ազգերի ու ազգությունների բարեկամության և համագործակցության բարգավաճման համար։

Սովետական իշխանության տարիներին զարգացան ո՛չ միայն Ադրբեջանի քաղաքներն ու գյուղերը, ո՛չ միայն ամեբոցյան նավթային հանքահորերը, գործարաններն ու կոլտնտեսությունները, այլև մարդիկ՝ մեր հասարակության ամենաթանկ կապիտալը։

Կոմունիստական կուսակցության հոգատարությամբ աճեցին ու զարգացան նոր մարդիկ՝ կոմունիզմի հաջողությունների իսկական կերտողները։ Սոցիալիստական աշխատանքի հերոս, նավթագործ Ակիֆ Ջաֆարովի, սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, բամբակագործ Շամամա Հասանովայի և հազարավոր հերոսների աշխատանքով, Ադրբեջանի աշխատավորների հետ միասին, հպարտանում են Սովետական Միության բոլոր ժողովուրդները։ Կոմունիստական շինարարության պրոցեսում Անդրկովկասի ժողովուրդների բազմադարյան բարեկամության լավագույն օրինակներից մեկը հանդիսացավ Ղազախ-Թբիլիսի-Երևան գազամուղի «բարեկամության տրասսան»։ Հանրահայտ է, որ Սովետական Ադրբեջանը հարուստ է բնական գազով։ Ադրբե-

[1] Սամեդ Վուրգուն, Հատընտիր, Երևան, 1949, էջ 101։

չանական ժողովուրդն այդ հարստությունից բաժին հանեց իր եղբայր Վրաստանի և Հայաստանի աշխատավոր մարդկանց։ Ղարադաղից 750 կիլոմետրի վրա ձգվում են գազամուղի խողովակները դեպի Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի քաղաքներն ու գյուղերը։ «Բարեկամության տրասան» կառուցվել է արագ և որակով։ Նրա կառուցման աշխատանքներին մասնակցեցին բազմաթիվ ազգությունների ներկայացուցիչներ՝ ռուսներ, հայեր, վրացիներ, ադրբեջանցիներ, ուկրաինացիներ... Նրանց համերաշխ աշխատանքով ու բարեկամության մեծ ուժով կարճ ժամանակամիջոցում գազամուղը անցավ 12 գետ, 180 ջրանցք, բարձր, շատ բարձր լեռներ ու խոր ձորեր։

«Բարեկամության տրասսան» խոշոր նշանակություն ունեցավ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի տնտեսական կապերի ամրապնդման համար։ «Երևան տանող տրասսայի շինարարները,— գրում է «Պրավդա»-ն,— զգում են իրենց բարեկամների ամուր օգնությունը։ Վրաստանը կապի համար ուղարկում էր երկաթբետոնե հենարաններ, ադրբեջանցիները կառուցում էին գլխավոր կառույցները։ Վրացիները, հայերը, ադրբեջանցիները մեծ երախտագիտությամբ են լցված դեպի գազամուղների կառուցման վետերանները՝ Ռուսաստանի ֆեդերացիայից և Ուկրաինայից եկած վարպետները»։

Եղբայրական այդ հերոսական աշխատանքի շնորհիվ Թբիլիսիում և Երևանում վառվում են գազի կապույտ բոցերը։ Այդ օրերին Ադրբեջանի բանվորները եղբայրական հանրապետությունների աշխատավորներին գրեցին. «Մենք՝ բաքվեցիներս, կտանք այնքան գազ, որքան հարկավոր է Վրաստանին և Հայաստանին»[1]։

Անդրկովկասի ժողովուրդները սոցիալիստական համագործակցության և եղբայրական բարեկամության հարուստ պատմություն ունեն։ Նրանք իրենց բարեկամության հնագույն ավանդույթների հիման վրա այժմ կոմունիստական շինարարության պրոցեսում անընդհատ ընդարձակում են աշխատավորների լենինյան համագործակցությունը։ Նոր հնգամյա պլանը ժամանակից շուտ կատարելու համար ստեղծագործական մրցություն է ծավալվում Անդրկովկասի եղբայրական հանրապետությունների աշխատավորների միջև։ Ուշադրավ է Անդրկովկասի տեքստիլագործների և գաղգահաշինարարների գործարար, միմյանց օգնող սոցիալիստական մրցությունը, որն արդեն 20 տարվա պատմություն ունի։ Կիրովաբադ, Լենինական և Քութայիսի քաղաքների կուսակցական կազմակերպությունների նախաձեռնությամբ, դեռևս 1948 թվականին Լենինական քաղաքում տեղի ունեցավ երեք քաղաքների տեքստիլագործների ներկայացուցիչների հավաք, որտեղ քննարկվեց սոցիալիստական պարտավորություններ ստանձնելու հարցը։

[1] «Правда», 3 ноября 1959.



Տեքստիլագործները որոշեցին սրբությամբ պահպանել իրենց ժողովուրդների բարեկամության ավանդույթները, ծավալել սոցիալիստական մրցությունը և կոմունիստական շինարարության ասպարեզում նվաճել նորանոր բնագծեր։ Նման միջոցառումները սովետական հանրապետություններում տարբեր ազգությունների աշխատողների կոմունիստական դաստիարակության համար ունեն վճռական նշանակություն՝ թույլ չտալով ազգային մեկուսացման որևէ դրսևորում։ Սոցիալիստական մրցության լայն ծավալումը մեծապես նպաստում է աշխատանքի նկատմամբ մարդու նոր, սոցիալիստական վերաբերմունքի զարգացմանը։ Ադրբեջանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության արդյունաբերության, գյուղատնտեսության և կուլտուրայի նվաճումները խիստ հսկայական են, որի համար նա պարգևատրվել է Լենինի շքանշանով։ Ադրբեջանական ՍՍՀ ունի 4 միլիոն 917 հազար բնակչություն։ Նրա կազմում են Նախիջևանի ԻՍՍ Հանրապետությունը[1] և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը[2]։ Մեծ ու արգասավոր է Ադրբեջանի աշխատավորների գործունեությունը՝ սովետական հայրենիքի ժողովուրդների եղբայրական բարեկամության անխորտակելի ուժը ավելի ևս հզորացնելու և կոմունիստական շինարարության մեջ նրանց համագործակցությունն ընդարձակելու գործում։

[1] Տե՛ս 40 лет Нахичеванской АССР, Баку, 1964.

[2] Տե՛ս 40 лет Нагорно-Карабахской Автономной Области, Баку, 1963.



Լիտվական ՍՍՀ։ Վ. Ի. Լենինի հուշարձանը Վիլնյուսում

# Լիտվական ՍՍՀ

## 8. ՍՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԾԱՂԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԳԱՎԱՃՈՒՄ Է ՍՈՎԵՏԱԿԱՆ ԼԻՏՎԱՆ

Լիտվական Սովետական Սոցիալիստական Հանրապետության բնակչությունը 3 միլիոն մարդ է, իսկ տերիտորիան՝ 65,2 հազար քառակուսի կիլոմետր[1]։ Լիտվական ժողովուրդը ամենասերտ կապերով կապված է ռուս մեծ ժողովրդի և Սովետական Միության բոլոր ազգերի ու ազգությունների հետ[2]։ Ընդհանուր թշնամիների դեմ մղած պայքարում ծնունդ է առել լիտվական և ռուս ժողովրդի եղբայրական բարեկամությունը։ Այդ բարեկամության նոր փուլը հիմնադրեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, որը ռուսական հերոսական պրոլետարիատի շուրջը համախմբեց Լիտվայի աշխատավորներին։ 1918 թվականին Լիտվայի բանվորները և աշխատավոր գյուղացիները, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, հաստատեցին սովետական իշխանություն։ Ռուսաստանի Ժողկոմխորհը 1918 թվականի դեկտեմբերի 22-ի դեկրետով, որ ստորագրել էր Վ. Ի. Լենինը, ճանաչեց Լիտվական Սովետական Հանրապետությունը, լիտվական ժողովրդի անկախությունը։ Սակայն իմպերիալիստական ռեակցիան 1919 թվականի աշնանը ինտերվենցիա կազմակերպեց և խեղդեց երիտասարդ Լիտվական Սովետական Հանրապետությունը։ Լիտվայի աշխատավորները նորից ընկան բուրժուազիայի ծանր լծի տակ։

Լիտվական ժողովրդի ազատագրական պայքարը, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, պսակվեց հաղթանակով։ 1940 թվականի հուլիսի 21-ին Լիտվայի ժողովրդական սեյմը դեկլարացիա հռչակեց Լիտվական Սովետական Սոցիալիստական Հանրապետության ստեղծելու մասին[3]։ Ժողովրդական սեյմը ընդունեց Դեկլարացիա Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների կազմի մեջ

[1] СССР в цифрах в 1967 году. Краткий статистический сборник. Стр. 7.

[2] Советский Союз. Литва. (Географическое описание в 22 томах), М., 1967, стр. 105—110.

[3] **Т. Анбиндерис,** О некоторых особенностях социалистической революции 1940 года в Литве, «Коммунист», Вильнюс, 1958, № 9.



Լիտվայի մտնելու մասին։ 1940 թ. օգոստոսի 3-ին ՍՍՀՄ Գերագույն սովետի VIII սեսիան լսեց Լիտվական ՍՍՀ ժողովրդական սեյմի լիազոր պատվիրակության զեկուցումը և Լիտվային ընդունեց Սովետական Միության կազմում[1]։

1941 թ. հունիսի 22-ին հիտլերյան Գերմանիան ուխտադրուժ կերպով հարձակվեց ՍՍՀՄ-ի վրա։ Ֆաշիստական զավթիչները օկուպացրին Սովետական Լիտվան։ Ֆաշիստները քայքայեցին Լիտվայի ժողովրդական տնտեսությունը։ ՍՍՀՄ եղբայրական ժողովուրդների անշահախնդիր օգնությունը, սովետական բանակի պատմական հաղթանակը լիտվական ժողովրդին ազատեցին գերմանական ֆաշիզմի ոչնչացման սպառնալիքից, և երկրում կրկին ծածանվեց Սովետների դրոշը։

Լիտվական ժողովրդի պատմության մեջ սկսվեց սոցիալիստական շինարարության ժամանակաշրջանը, որը հագեցված է [illegible] հաջողություններով։

Սովետական Լիտվայի աշխատավորներն այժմ էլ հիշում են հնագույն ժամանակների երգերից մեկը, որում ասված է. «Արևելքի երկրներից արևն է ծագում, Արևմուտքից չարամիտ ամպերն են հավաքվում», իսկ հիմա Լիտվայի աշխատավորներն ասում են. «Մեզ համար սարսափելի չէ ո՛չ մի թշնամի, ո՛չ մի ահաբեկում, որովհետև մենք ապրում ենք ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական մեծ ընտանիքում»։

Սովետական բազմազգ ժողովրդի անխախտ և համերաշխ բարեկամության ու համագործակցության նկատմամբ այսպիսի սեր ու հավատ ունի Լիտվայի աշխատավորությունը։ Սովետական հասարակարգը Լիտվայի աշխատավորներին լայն հնարավորություններ տվեց արտադրողական ուժերի զարգացման համար։

ՍՍՀՄ եղբայրական ժողովուրդների օգնությամբ, սովետական իշխանության տարիների անհամեմատ կարճ ժամանակամիջոցում, Լիտվայում ստեղծվեց տեխնիկայի վերջին խոսքով զինված հզոր արդյունաբերություն։

[1] Մ. Բուռնկյավիչյուս, Լիտվան ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում, Ե. 1967, էջ 5—7։

Հանրապետությունում զարգացած է հատկապես էլեկտրատեխնիկական, քիմիական, մեքենաշինության, մետաղամշակման, թեթև և սննդի արդյունաբերությունը։ Մեծ չափով զարգացավ էներգետիկան։ Սովետական Լիտվան ավելի քան 170 միլիոն կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա է տալիս ՍՍՀՄ եղբայրական մյուս հանրապետություններին։ Հանրապետության արդյունաբերության զարգացման բարձր մակարդակի մասին է վկայում այն փաստը, որ ՍՍՀՄ-ում արտադրվող էլեկտրահաշվիչների 95 և էլեկտրազոդիչ ապարատների 85 տոկոսը[1] տալիս է Սովետական Լիտվան։ Սովետական Լիտվայի արդյունաբերության արտադրանքն արտահանվում է արտասահմանյան 75 երկրներ։ Նրա ձեռնարկությունների արտադրությունը, մասնավորապես բարձրորակ դազգահները, էլեկտրահաշվիչ մեքենաները միջազգային տոնավաճառներում մեծ անուն են հանել։

Սովետական Լիտվայի արդյունաբերությունն այժմ երեք շաբաթում արտադրում է այնքան արտադրանք, որքան բուրժուական Լիտվան՝ ամբողջ տարվա ընթացքում[2]։ Սովետական իշխանության տարիներին հանրապետությունում ստեղծված արդյունաբերությունն ունի ավելի քան 25 նոր ճյուղ։ Սովետական Լիտվայի արդյունաբերության համախառն արտադրանքը ավելի բարձր թափով զարգացավ, քան ՍՍՀՄ-ն ամբողջապես վերցրած։

Այսպես, եթե ՍՍՀՄ-ի արդյունաբերության համախառն արտադրանքը 1940 թ. մինչև 1966 թվականը աճել է 8,5 անգամ, լիտվականը աճել է 20 անգամ։ Այս փաստը պերճախոս կերպով խոսում է փոքր ժողովուրդների նկատմամբ կոմունիստական կուսակցության ցուցաբերած հոգատարության մասին։

Լիտվան ագրարային երկրից վերածվեց ինդուստրիալ հանրապետության, նա ամենասերտ կապերով կապված է Սովետական Միության բազմաթիվ հանրապետությունների, երկրամասերի և ազգային օկրուգների հետ։

[1] Տե՛ս Народное хозяйство Литовской ССР. Статистический сборник, Вильнюс, 1968, стр. 16.

[2] «Советская Литва», 30 декабря 1967, Вильнюс.



Սովետական Լիտվայի ինդուստրիան զարգացավ սովետական հանրապետությունների օժանդակությամբ ու համագործակցությամբ։

Այսպես, Ռուսաստանյան Ֆեդերացիայի, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Ուզբեկստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի 52 քաղաքներ[1] Սովետական Լիտվա են ուղարկում արդյունաբերական սարքավորումներ, ինչպես և ինժեներատեխնիկական բարձրորակ կադրեր։

Սովետական Լիտվան 1969 թ. տնտեսական կապեր է պահպանում սովետական երկրի միութենական բոլոր հանրապետությունների ավելի քան երեք հազար ձեռնարկությունների հետ։ Այդ ձեռնարկությունները սերտ, ժամկետին և բարձր որակով կատարում են եղբայրական Լիտվայի բոլոր պատվերները։

Հսկայական աշխատանք է կատարված նաև տրանսպորտի զարգացման ասպարեզում[2]։

Կոլտնտեսային կարգի հաղթանակի հիման վրա արմատական փոփոխություններ են տեղի ունեցել Լիտվայի գյուղատնտեսության մեջ։ Հսկայական չափով ամրապնդվել է կոլտնտեսությունների ու սովխոզների նյութատեխնիկական բազան։ Ներկայումս հանրապետության կոլտնտեսությունների դաշտերում աշխատում են 56 հազար տրակտոր ու կոմբայն և գյուղատնտեսական բազմաթիվ այլ մեքենաներ[3]։

Կոմունիստական կուսակցությունն ու սովետական կառավարությունը մեծ միջոցներ են ներդնում Լիտվայի կոլտնտեսությունների հետագա ամրապնդման և զարգացման համար։ Սովետական Միության մյուս հանրապետությունների հարուստ փորձի օգտագործման հիման վրա Լիտվայի գյուղատնտեսությունը էլեկտրիֆիկացվել է, որի հետևանքով հեշտացան գյուղատնտեսական շատ աշխատանքներ։ Հանրապետությունում զգալիորեն աճել է հացահատիկային կուլ-

[1] Մ. Բուռնկյավիչյուս, Լիտվան ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում, էջ 23։

[2] «Советская Литва», 30 декабря 1968.

[3] СССР в цифрах в 1967 году. Краткий статистический сборник. Стр. 7.

տուրանների բերքատվությունը։ Մեծ աշխատանք է կատարվում նաև մսի և կաթի արտադրության բարձրացման ուղղությամբ։

Սովետական Լիտվայի կոլտնտեսային շարժման պատմության մեջ որպես առանձնահատկություն նշվում է նաև այն, որ սկսվեց ՍՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակի պայմաններում, երբ Սովետական Միությունում ձեռք էր բերվել, գիտության կողմից ուսումնասիրվել և կուտակվել էր աշխատանքի հարուստ փորձ։ Եղբայրական հանրապետությունների այդ փորձը, նյութական ու քաղաքական օգնությունը հսկայական չափով հեշտացրին Լիտվական Սովետական Սոցիալիստական Հանրապետության գյուղատնտեսության կոլեկտիվացումը, որը սակայն տեղի ունեցավ դասակարգային սուր պայքարի պայմաններում։ Հանրապետության կոլտնտեսային շարժման կազմակերպման և զարգացման համար բացառիկ նշանակություն ունեցան կուսակցության Կենտկոմի մի շարք միջոցառումները կոլտնտեսային շինարարության վերաբերյալ։

Սոցիալիզմի հաղթանակը Լիտվայում բացառիկ նպաստավոր պայմաններ ստեղծեց ազգային կուլտուրայի ու գիտության զարգացման համար։

Լիտվական ժողովրդի պատմության մեջ երբեք կուլտուրան այնպես համակողմանիորեն չի ծաղկել, ինչպես Սովետական Միության ժողովուրդների մեծ ընտանիքում, սոցիալիստական հասարակարգի պայմաններում։ Սովետական պետությունը Լիտվայում ընդլայնեց ժողովրդական կրթության ու լուսավորության ցանցը։ Ներկայումս հանրապետության 11 բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում է ավելի քան 51 հազար ուսանող, իսկ 75 միջնակարգ մասնագիտական դպրոցներում՝ շուրջ 55 հազար սովորող[1]։ Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար

[1] Народное хозяйство Литовской ССР. Статистический сборник, Вильнюс, 1968, стр. 18.



բարձրորակ դասախոսական կադրեր պատրաստելու գործում Սովետական Լիտվային եղբայրական օգնություն ցույց տվեցին միութենական հանրապետությունների գրեթե բոլոր բուհերը։

Լիտվայի հարյուրավոր քաղաքացիներ սովորում են սովետական հանրապետությունների բուհերում, որոնց նկատմամբ ցուցաբերվում են ջերմ վերաբերմունք և հոգատարություն։ Այսպիսի համագործակցությունը ավանդույթ է դարձել նաև գեղարվեստական գրականության և արվեստի բնագավառում։ Այս ճակատում ստեղծագործող մտավորականները հսկայական ջանքերով հարստացնում են սովետական կուլտուրան։ Հանրապետության գրողները, կոմպոզիտորները, նկարիչները հայրենասիրական, ժողովուրդների բարեկամության, ինտերնացիոնալ բնույթի ստեղծագործություններով օգնում են կոմունիստական կուսակցությանը՝ նոր մարդու դաստիարակության աշխատանքում։ Այդ տեսանկյունից ուշագրավ են Սովետական Լիտվայի գրողների արժեքավոր ստեղծագործությունները, որոնց մեջ արտահայտված է Լիտվայի աշխատավորների անսահման սերը Սովետական Միության բազմազգ ժողովուրդների, հայրենիքի, սոցիալիստական պետության նկատմամբ։ Լենինյան մրցանակի դափնեկիր Է. Մեժելայտիսի «Մարդը» գրքում զետեղված բանաստեղծություններում տրված են կոմունիզմ կառուցող մարդու վեհությունը, նրա գաղափարական բարձր հատկությունները և անսահման նվիրվածությունը սովետական մեծ հայրենիքին, կոմունիստական կուսակցության անմահ գործին։

Գեղարվեստական և գաղափարական մեծ նշանակություն ունեն Լիտվայի գրողների գեղարվեստական ստեղծագործությունները, որոնք դարձել են սովետական ընթերցասեր հասարակայնության սեղանի սիրված գրքերը։

Լիտվական երաժշտությունը հսկայական քայլերով առաջ է ընթացել, և ՍՍՀՄ բոլոր ազգերն ու ազգությունները այն ընդունում են ջերմ սիրով։ Լիտվայի մասսայական երաժշտական ժանրերը, հատկապես մասսայական երգի, վոկալ և գործիքային երաժշտությունը դարձել են ժողովրդական լայն զանգվածների սեփականությունը։ Սովետական Միության

բոլոր ժողովուրդներին բաց հայտնի է Լիտվայի երգի ու պարի պետական անսամբլի, լարային կվարտետի և կամերային նվագախմբի բարձր արվեստը: Վերջին տարիներին ստեղծագործական նոր հաջողություններ են ձեռք բերել Լիտվայի բալետը, օպերան և դրաման:

Սովետական Լիտվայի նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդեսները եղբայրական հանրապետություններում անցնում են մեծ հաջողությամբ: Սովետական ժողովուրդը սիրում է Լիտվայի գեղարվեստական գրականությունը և արվեստը, որոնք այժմ բուռն կերպով զարգանում են ՍՍՀՄ մեծ ընտանիքում, բոլոր ազգերի ու ազգությունների կուլտուրայի հետ սերտ համագործակցության պայմաններում:

Լիտվական նշանավոր գրող Վ. Յու. Միկոլայտիս-Պուտինասը գրել է, որ Սովետական Լիտվան զարգանում է ճիշտ ուղիով:

«Պատմական-հասարակական հարաբերությունների զարգացման մեջ,— գրել է նա,— ժողովուրդը նվաճեց առաջատար դիրքը, որը նա ոչ ոքի չի տա: Ընթանալ ժողովրդի հետ միասին մարդկային գործունեության ամեն մի ոլորտում, նշանակում է ընթանալ միակ ճիշտ և առաջադիմական ուղիով»[1]:

Սովետական իշխանության տարիներին, պատմական կարճ ժամանակամիջոցում Լիտվայի աշխատավորների ձեռք բերած բոլոր հաջողությունները տնտեսության և կուլտուրայի բնագավառում արդյունք են կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության: Սովետական Լիտվայի մեծագույն հաջողություններն անտեսում են հակակոմունիզմի բուրժուական գաղափարախոսները և հարձակվում կոմունիստական կուսակցության վրա, ասելով, թե իբր Լիտվան սովետական իշխանության տարիներին կորցրել է իր ինքնատիպությունը, ինքնուրույնությունը: Եվ այդ զրպարտությունը արվում է այն պահին, երբ Լիտվայի բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը և մտավորականությունը

[1] Տե՛ս «Культура и жизнь», 1958, № 12, стр. 43, 45.



թյունը հանրագումարի են բերում իրենց փայլուն հաջողությունները հզոր արդյունաբերության, մեքենայացված գյուղատնտեսության, առաջավոր գիտության և կուլտուրայի բնագավառում, երբ աշխատանքի մարդիկ անկեղծորեն ուրախանում են իրենց սոցիալիստական նոր կյանքով, երբ նոր ջանքերով ու անսպառ եռանդով աշխատում են ընթացիկ հնգամյակում նոր բնագծեր գրավել: Լիտվայի հանրապետության աշխատավորները իրենց տնտեսության խոշոր հաջողություններով և սքանչելի արվեստով ուրախացնում են ՍՍՀՄ եղբայրական բոլոր ժողովուրդներին:

Սովետական Լիտվայի աշխատավորներն իրենց խոշոր հաջողությունների համար մեծագույն երախտագիտությամբ նշում են, որ այդ բոլոր հաղթանակները տնտեսության ու կուլտուրայի ասպարեզում չէին լինի, Լիտվան կմնար խավարի ու կարիքի մեջ, եթե չլիներ ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական մեծ ընտանիքի լիիրավ անդամը, եթե չլինեին սովետական երկրի բոլոր ազգերի ու ազգությունների սերտ համագործակցությունը, ռուս մեծ ժողովրդի անշահախնդիր օգնությունը: Սովետական Լիտվայի աշխատավորները թանկ են գնահատում ՍՍՀՄ ժողովուրդների լենինյան բարեկամությունը, նրանց անշահախնդիր օգնությունը և աջակցությունը: Նրանք ասում են. «Մեզ համար ոչ մի ուժ սարսափելի չէ, որովհետև մենք ապրում ենք ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում»:



Մոլդավական ՍՍՀ: Հաղթանակի հրապարակը Քիշնևում

# Մոլդավական ՍՍՀ

РССМ

## 9. ՄՈԼԴԱՎԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻ ԷՋԵՐԸ

Տարեգիրները Մոլդավիան անվանել են բոլոր ասպատակողների ճանապարհին ընկած երկիր։ Եվ իսկապես, դարեր շարունակ Մոլդավիան եղել է վշտի և արցունքի երկիր։ Մոլդավ ժողովուրդը կրել է կեղեքիչների ծանր լուծը։ Սակայն նա երբեք չի հաշտվել իր դառը վիճակի հետ, անընդհատ ի մի է հավաքել իր ուժերը և խիզախորեն պայքարել անկախության համար։ Ազատության և անկախության համար մղած պայքարում նրան օգնության են եկել ռուս և ուկրաինական ժողովուրդները։

Մոլդավ ժողովրդի հեղափոխական պայքարի պատմությունն անխզելիորեն կապված է Ռուսաստանի բոլոր ժողովուրդների ազատագրական շարժման հետ։ Մոլդավիայի բանվորների ու գյուղացիների հեղափոխական շարժումների պատմությունը հարուստ է բարեկամության փաստերով և օրինակներով։ «Իսկրա»-ի ռուսական առաջին ընդհատակյա տպարանը հիմնադրվել է Քիշնևում։ Ռուսական հերոսական պրոլետարիատի հեղափոխական պայքարի անմիջական ազդեցությամբ Մոլդավիայում տարածվել են սոցիալիստական գաղափարները։ Մոլդավիայի բանվորներն ու աշխատավոր գյուղացիներն ակտիվ մասնակցություն են ունեցել 1905—1907 թվականների ռուսական առաջին հեղափոխությանը։ 1917 թվականին Մոլդավիայում ծավալվեցին հեղափոխական շարժումները։ Այսպես, 1917 թ. մարտին տեղի ունեցան գյուղացիական չորս, իսկ հուլիսին արդեն յոթանասուներեք ելույթներ, որոնք խոշոր նշանակություն ունեցան կապիտալիստների ու կալվածատերերի դեմ մղվող պայքարում։ Քիշնևի բանվորների ու զինվորների դեպուտատների սովետը 1917 թ. նոյեմբերի 22-ին անցավ Ռուսաստանի սովետական իշխանության կողմը, իսկ 1918 թվականի հունվարի 4-ին, երբ հեղափոխական ուժերը գրավեցին երկաթուղային կայարանն ու Քիշնևի ստրատեգիական այլ օբյեկտները, իշխանությունն ամբողջ Մոլդավիայում անցավ սովետների ձեռքը։ Այդ օրը մոլդավ ժողովրդի պատմության մեջ նշանա-



կավորվեց որպես Մոլդավիայում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի օր։ Սակայն իմպերիալիզմի զավթողական քաղաքականության պատճառով գրավվեց Բեսարաբիան։ Իմպերիալիստները զավթած շրջաններում վերացրին ժողովրդի նվաճումները, ստեղծեցին արյունոտ ռեժիմ։ Զավթիչների դեմ Բեսարաբիայում ժողովրդական զանգվածները բազմաթիվ անգամ բարձրացրին զինված ապստամբության և գործադուլային շարժման դրոշը[1]։ Մոլդավ ժողովրդի կամքով 1940 թվականի հունիսի 28-ին երկրում վերահաստատվեց սովետական իշխանություն, և ստեղծվեց Մոլդավիայի Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը։

Սովետական Մոլդավիան հավասարների մեջ որպես լիիրավ անդամ մտավ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների կազմի մեջ։ Սովետական Մոլդավիայում սոցիալիստական շինարարությունն բուռն թափով սկսվեց Հայրենական մեծ պատերազմի հաղթանակից հետո։

Մոլդավիան ագրարային երկիր էր, ուներ միայն մի քանի տնայնագործական արհեստանոցներ։

Սովետական ժողովուրդների օգնությամբ Մոլդավիայում ծավալվեց սոցիալիստական շինարարությունը։ Դեպի Մոլդավիա շարժվեցին սարքավորումներով, շինանյութերով բեռնված գնացքներ, այստեղ մեկնեցին մասնագետներ, սովետական պետությունը հատկացրեց հսկայական միջոցներ։ Կարճ ժամանակամիջոցում փոխվեց Մոլդավիայի դեմքը[2]։

Մինչև հեղափոխությունը մոլդավ ժողովուրդը զրկված էր պետականությունից, չուներ արդյունաբերություն, ուներ արգավանդ հող, բայց այն էլ գտնվում էր կալվածատերերի ձեռքում։ Պատահական չէ, որ Մոլդավիայի երկրամասի ճակատագրի մասին ասում էին. «Նա հյուսված է կախարդանքներից և վշտերից»։

---

[1] Տե՛ս Революционное движение в 1917 г. и установление Советской власти в Молдавии, Кишинёв, 1964.

[2] Տե՛ս Из истории революционного движения и социалистического строительства в Молдавии. Сборник статей института истории АН МССР, Кишинёв, 1960.

Մոլդավ ժողովուրդն իր երջանկությունը նվաճեց նրանով, որ ազատագրվեց սոցիալական ու ազգային ճնշումից, որ նա ապրում և ստեղծագործում է սովետական հզոր պետության մեջ, ՍՍՀՄ բոլոր ազգերի ու ազգությունների եղբայրական մեծ միությունում[1]։ Քառորդ դարի ընթացքում Սովետական Մոլդավիայի աշխատավորները, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, ժողովուրդների աջակցությամբ Մոլդավիան դարձրին սննդի արդյունաբերության խոշոր կենտրոն։ Այնտեղ զարգացավ էլեկտրատեխնիկական, գործիքաշինական, ցեմենտի և թեթև արդյունաբերությունը։ Ետպատերազմյան տարիներին Մոլդավիայում կառուցվել են ավելի քան 180 խոշոր գործարաններ ու ֆաբրիկաներ, ստեղծվել են արդյունաբերության նոր ճյուղեր։ Ներկայումս Սովետական Մոլդավիան արտադրում է ժամանակակից բարդ մեքենաներ ու սարքավորումներ։ Արդյունաբերության համախառն արտադրանքը 1940 թվականի համեմատությամբ աճել է 19, իսկ 1913 թվականի համեմատությամբ 109 անգամ։ Այդ նույն ժամանակաշրջանում թեթև արդյունաբերության արտադրանքն աճել է 72 անգամ։

Սովետական Մոլդավիայում հատկապես արագ է զարգանում սննդարդյունաբերությունը։ Հանրապետության պահածոյի գործարանները երկրին տալիս են 6,4 անգամ[2] ավելի շատ արտադրանք, քան անցյալում տվել է ամբողջ ցարական Ռուսաստանը։ Պահածոների, գինու, շաքարի ու շաքարավազի արտադրությամբ Սովետական Մոլդավիան ՍՍՀՄ-ում գրավում է երրորդ, իսկ ձեթի թողարկմամբ՝ չորրորդ տեղը։ Մոլդավիան մրգի արտադրության հիմնական բազաներից մեկն է Սովետական Միությունում։ Պտղատու և խաղողի այգիները գրավում են 423 հազար հեկտար տարածություն՝ երկու անգամ ավելի, քան մինչև պատերազմը[3]։

Կոմունիստական կուսակցության ու սովետական կառավարության ամենօրյա օգնության և ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական անխզելի կապերի ու համագործակցության շնորհիվ զարգացման բարձր մակարդակի է հասել Սովետական Մոլդավիայի սոցիալիստական գյուղատնտեսությունը։ Հանրապետության գյուղատնտեսության հիմնական ճյուղը հանդիսանում է խաղողագործությունը։ Սովետական Միության խաղողի բերքի մեկ երրորդ մասը Մոլդավիան է տալիս։ Գյուղատնտեսությունը զինված է ժամանակակից տեխնիկայով։ Այժմ հանրապետության կոլտնտեսությունների դաշտերում աշխատում են 44 հազար տրակտոր, 10 հազար կոմբայն, ավելի քան 15 հազար բեռնատար ավտոմեքենա, 30 հազար էլեկտրամեքենաներ ու գործիքներ։ Վերջին երկու տասնամյակում գյուղատնտեսության արտադրանքի ծավալը մեծացել է շուրջ երեք անգամ։ Մոլդավական գյուղը համատարած էլեկտրիֆիկացված է։ Սովետական Մոլդավիայի աշխատավորները ո՛չ միայն ուսումնասիրում և սովորում են եղբայրական հանրապետությունների աշխատանքի փորձը, այլև Սովետական Միության կոլտնտեսային շինարարության հետագա զարգացման համար նշում են նոր ձևեր և ուղիներ։ Սովետական Մոլդավիայի գյուղատնտեսության բնորոշ կողմերից մեկն այն է, որ կատարվում է առանձին ճյուղերի մասնագիտացում և համակենտրոնացում։ Ստեղծվել են միջկոլտնտեսային շինարարական հզոր կազմակերպություններ, որոնք ունեն իրենց փայտամշակման, բետոնի գործարաններ, քարհանքեր, ավտոտրանսպորտ, նախագծային ինստիտուտներ և այլն։ Նրանք կառուցում են ֆերմաներ, դպրոցներ, մանկական հիմնարկներ, հիվանդանոցներ, արհեստանոցներ, խանութներ, կուլտուրայի տներ, միջկոլտնտեսային զանազան ձեռնարկություններ և այլն։

Սովետական պետությունը բարձր գնահատեց գյուղատնտեսության աշխատավորների ջանքերը. Մոլդավական ՍՍՀ-ն պարգևատրվեց Լենինի շքանշանով, իսկ 45 կոլեկտիվներ պարգևատրվել են հուշադրոշներով[1]։

---

[1] Այդ հարցի վերաբերյալ ուշագրավ նյութեր կան «Молдавия станет садом Советского Союза» գրքում, Кишинёв, 1960.

[2] «Советская Молдавия», 30 декабря 1967.

[3] «Правда», 15 января 1968.



---

[1] Очерки истории Коммунистической партии Молдавии, Кишинёв, 1968, стр. 487.

Սովետական Միության ժողովուրդների օգնությամբ և աջակցությամբ մոլդավական ժողովուրդը խոշոր հաջողություններ է ձեռք բերել նաև կուլտուրական շինարարության բնագավառում:

Ավելի քան քառորդ դար առաջ Բեսարաբիայի գյուղացիական երեխաների կեսը չէր սովորում, իսկ այժմ Սովետական Մոլդավիայում իրականացվել է ութամյա պարտադիր կրթությունը: Եթե անցյալում երկրամասում չկար ոչ մի բարձրագույն դպրոց, ապա ներկայումս Սովետական Մոլդավիայի 8 բուհերում և 44 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորում է ավելի քան 80 հազար, իսկ հանրակրթական դպրոցներում՝ 764 հազար մարդ[1]:

ՍՍՀՄ ժողովուրդների լենինյան մեծ ընտանիքում մոլդավական ժողովուրդը ստեղծել և արագորեն զարգացնում է իր սոցիալիստական կուլտուրան, որով նա միաժամանակ նպաստում է նաև սովետական երկրի մյուս ժողովուրդների արվեստի, գրականության, կենցաղի կոմունիստական ընդհանուր գծերի զարգացմանը, նրանց փոխադարձ վստահության և բարեկամության հետագա ամրապնդմանը:

Ճապոնական նշանավոր երգիչ Իկու Սատակին գրել է. «Ես կցանկանայի սովորել երգել այնպես, ինչպես երգում է Մարիա Բիեշուն»:

Մոլդավիան դժվար է պատկերացնել առանց երգի, որովհետև երգերը և բանաստեղծությունները ստեղծվում են աշխատանքում: Հենց այդպես սկսեց երգել և ժողովրդական լայն ճանաչում ստացավ Մարիա Բիեշուն, որը Ճապոնիայում միջազգային կոնկուրսում գրավեց առաջին տեղը: Ընդհանուր ճանաչման են արժանացել «Ժոկ», «Ֆլուերաշ», «Բուկուրիա», «Միորիցա» գեղարվեստական կոլեկտիվները, որոնք ելույթներ են ունեցել ԳԴՀ-ում, Չեխոսլովակիայում, Բուլղարիայում, Լեհաստանում, Ֆինլանդիայում, Սիրիայում, Լիբանանում, Թուրքիայում, ԱՄՆ-ում, Անգլիայում և բազմաթիվ այլ երկրներում: Գեղարվեստական ինքնագործու-

[1] «Советская Молдавия», 10 января 1968.



նեությանը մասնակցում է մի ամբողջ բանակ, շուրջ 100 հազար մարդ:

Մոլդավիայի արվեստի նշանավոր գործիչները հիմնականում աճել են գեղարվեստական խմբերում: Այդ ճանապարհով են ընթացել և լայն ճանաչում գտել մոլդավական արվեստի նշանավոր գործիչներ Տամարա Չեբանը, Մարիա Բիեշուն, Սպիրիդոն Մոկանուն և Պյոտր Զախարիան:

Կոմունիստական շինարարության պրոցեսում ընդարձակվում են մոլդավական հանրապետության տնտեսական և կուլտուրական կապերը և համագործակցությունը ինչպես սովետական հանրապետությունների, այնպես էլ Բուլղարիայի, Ռումինիայի, Հունգարիայի և սոցիալիստական մյուս երկրների ժողովուրդների հետ, դրանով իսկ ավելի ու ավելի արդյունավետ է դառնում նյութական ու հոգևոր հարստությունների փոխանակումը ազգերի միջև, աճում է յուրաքանչյուր երկրի ավանդը կոմունիզմի կառուցման ընդհանուր գործում:

Ամենայն իրավամբ կարելի է ասել, որ սովետական իշխանության տարիներին Մոլդավիան դարձել է ժողովուրդների բարեկամության իսկական այգի, ուր եղբայրաբար ապրում ու աշխատում են բազմաթիվ ազգեր՝ մոլդավներ, ռուսներ, ուկրաինացիներ, գագաուզներ, բուլղարներ, հրեաներ, գնչուներ, հույներ և այլն:

Մոլդավ ժողովուրդը հատուկ սեր է տածում ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության նկատմամբ, որի մեծ ընտանիքում սովետական երկրի բոլոր ազգերն ու ազգությունները կառուցում են նոր կյանք: Այդ կապակցությամբ մոլդավական ժողովուրդը ասում է. «Շնորհակալություն քեզ, իմաստուն կուսակցություն, շնորհակալություն ձեզ, եղբայր ժողովուրդներ»:

Սովետական Մոլդավիայի 50-ամյակի կապակցությամբ «Литературная газета»-ն զետեղել է մի փոքրիկ, բայց արժեքավոր թղթակցություն, որի մեջ ի միջի այլոց ասված է.

«Մի քանի տարի առաջ հեռավոր Ավստրալիայից հայրենի երկիրը վերադարձավ Գրիգորե Մերեուցեն: Երեսուն

տարի ապրեց նա Ավստրալիայում, սակայն օտար հողում արմատներ գցել չկարողացավ։

— Դու ո՞ւր ես պատրաստվում, Գրիգորե,— մեկնելու պահին հարցրեց հարևանը։

— Երջանկության երկիրը։

— Իսկ որտե՞ղ է այդ երջանկության երկիրը, Գրիգորե։

— Այստեղից շատ հեռու է, սարերի և ծովերի այն կողմը, հարևան։

— Իսկ ինչպե՞ս է կոչվում այդ երջանկության երկիրը, Գրիգորե։

— Կոչվում է Սովետական Մոլդավիա, հարևան[1]։

— Այս տողերը ես վերցրել եմ Գ. Մերեուցեի օրագրից,— գրում է Պիտրա Կրուչենյուկը,— իր «անբռնազատ տողերը», ինչպես ինքն է անվանում այդ գրառումները, երբեմն անց էր կացնում տետրում։ Հին Բեսարաբիայից փախչում էին հարյուրները, հազարները... աշխատանք գտնելու։ Փախչում էին աղքատությունից ու վշտից, տգիտությունից ու գործազրկությունից։

«Ես տեսել եմ աղքատ երկիր, տեսել եմ հյուծված հողի»,— գրում է Կորոլենկոն Բեսարաբիայի մասին։

Այո՛, մեր Մոլդավիան հողմերից տապալված ցորենի դաշտ էր՝ գյուղացու կորացած մեջքով, մայրական չմարող արցունքով... Բայց նա միաժամանակ խռովարար հայդուկի գիտուկ կրակոց էր ճանապարհների խաչմերուկում, կալվածատիրական դաստակերտի բոցերի լեզու, Դանկոյի հրավառ սիրտն էր, Գրիգորի Կոտովսկու քաջ Թուրը և անվախ Սերգեյ Լազոյի պայծառ իմաստնությունը։

Մեր հողը և նրա մարդիկ իրենց սրտի խորքում կրում էին ազատագրման օրվա սուրբ հավատը։

Այս բոլորի մասին ես հիշում եմ արևային Մոլդավիայի 50-ամյակի բերկրալի տոնական օրերին։

Մոլդավիան բանվորների և գյուղացիների սոցիալիստական հանրապետություն է, հավասարների մեջ հավասարը սովետական երկրի մեծ եղբայրության մեջ, բարձր զարգացած

[1] Տե՛ս «Литературная газета», 17 января 1968, № 3.



արդյունաբերությամբ, ինտենսիվ գյուղատնտեսությամբ, իր ակադեմիայով, հեղափոխական իր անցյալով, իր բազմակողմանի լիարյուն սովետական կյանքով։

«Ես տեսել եմ ծաղկող երկիրը, լսել եմ եղբայրության ղողանջները»,— այսպես իր ուրախությունն է արտահայտում պոետ Միխայիլ Սվետլովը մոլդավ բարեկամներին ուղղած իր նամակներում։

«Այո՛, այդ այդպես է։ Մեր երկիրը ծաղկում և ամրապնդվում է սոցիալիստական եղբայրության սովետական միասնական ընտանիքում։ Մեր հողում հավերժ հաստատվել է կյանքը, որի համար պայքարել են մեր հայրերն ու ավագ եղբայրները, աշխատանքային եռուզեռով լի, երջանիկ կյանքը»[1]։ Մոլդավական ՍՍՀ-ն ունի 33,7 հազար քառ. կմ տարածություն և 3 միլիոն 484 հազար բնակչություն։ Սոցիալիստական ազգերի մեծ համագործակցության մեջ մոլդավական հանրապետության համար բացվել են լուսավոր հեռանկարներ։

Մոլդավական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը այսօր ապրում է ստեղծագործական եռանդով լեցուն, ժողովուրդների անխախտ բարեկամության հզոր ուժով, որոնք կոմունիստական շինարարության նոր հաղթանակների հուսալի երաշխիքն են։

[1] «Литературная газета», 17 января 1968, № 3.



Լատվիական ՍՍՀ։ Տեսարան գիշերային Ռիգայից

# Լատվիական ՍՍՀ

## 10. ԼԱՏԻՇՆԵՐԻ ՋԱՆՔԵՐԸ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ

Լատվիական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը գտնվում է Բալթիկ ծովի ափին, տերիտորիան հավասար է 63,7 հազար քառակուսի կիլոմետրի։ Հանրապետության ազգաբնակչության թիվը կազմում է 2,3 միլիոն մարդ։ Սովետական Լատվիայի նավահանգիստները ՍՍՀՄ-ին հնարավորություն են տալիս ելք ունենալ դեպի Արևմտյան Եվրոպայի երկրները և Ատլանտյան օվկիանոս[1]։

Դարերի ընթացքում Լատվիայի աշխատավորները գտնվել են դաժան շահագործողների՝ գերմանական և լեհական կալվածատերերի, օտարերկրյա և տեղական կապիտալիստների ծանր լծի տակ։ Լատվիան եղել է ԱՄՆ-ի, Անգլիայի, Գերմանիայի և իմպերիալիստական մյուս պետությունների ագրարային-հումքային բազաներից մեկը։ Իմպերիալիստական պետությունները բուրժուական Լատվիային գրել են տնտեսական կախման մեջ։ Ռազմական օգնության անվան տակ ամերիկյան և անգլիական մոնոպոլիստական կապիտալը Լատվիան դարձրել էր իր գաղութը՝ աշխատավորների ուսերի վրա դնելով ծանր և երկարատև հարկեր ու պարտքեր։

Բուրժուական Լատվիան Անգլիային պարտք էր 2 միլիոն 320 հազար ֆունտ ստեռլինգ, իսկ ԱՄՆ-ին՝ 5 միլիոն 775 հազար դոլլար[2]։ Իմպերիալիստական պետությունների գաղութային քաղաքականության հետևանքով Լատվիայում աճում էր գործազուրկների բանակը, ուժեղանում աշխատավորների շահագործումը, սրվում ազգամիջյան կռիվները։

Լատիշ ժողովուրդը միշտ էլ բարձր է պահել ազատության դրոշը։ Հեղափոխական շարժումները Լատվիայում

[1] Լատվիական ՍՍՀ աշխարհագրական նպաստավոր դիրքը և տնտեսությունը նկարագրված է Վ. Ի. Պուրինի «Լատվիան սովետական հանրապետությունների մեծ ընտանիքում» գրքույկում, որը լույս է տեսել ռուսերեն և հայերեն լեզուներով 1967 թվականին։ Տե՛ս այդ գրքույկի հայերեն հրատարակության էջ 3—7։

[2] Նույն տեղը։



զարգացան մասնավորապես 1905—1907 թվականներին։ Լատիշական բանվոր դասակարգը, աշխատավոր գյուղացիությունը Ռուսաստանի ժողովուրդների հետ ուս-ուսի տված՝ պայքար են մղել բոլոր կեղեքիչների դեմ։

1940 թվականին Լատվիայում հաստատվեց սովետական իշխանությունը։ Սակայն ՍՍՀՄ-ի վրա ֆաշիստական Գերմանիայի կատարած ուխտադրուժ հարձակման հետևանքով ամբողջ երկիրը մտավ պատերազմի մեջ։ 1944 թ. հոկտեմբերին Լատվիայի մեծ մասը ազատագրվեց, իսկ 1945 թ. մայիսի 9-ին պատմական հաղթանակի դրոշը ծածանվեց Լատվիայի վրա։

Ֆաշիստական Գերմանիան քայքայեց երկրի ժողովրդական տնտեսությունը։ Լատվիային հասցրած հիտլերականների վնասը կազմեց 20 միլիարդ ռուբլի[1]։ Անհրաժեշտ էր վերականգնել հանրապետության ժողովրդական տնտեսությունը։ Լատիշ ժողովուրդը ինչպես միշտ, այնպես էլ այս անգամ իր գոյության բանալին գտավ և զարգացման ուժը տեսավ ժողովուրդների բարեկամության ու համագործակցության, բազմազգ սովետական պետության և կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության մեջ։ Դեռևս 1919 թվականին Պետր Ստուչկան, որ գլխավորում էր երիտասարդ Սովետական Լատվիայի Հանրապետության կառավարությունը և կոմունիստական կուսակցության գործունեությունը, գրել էր, որ ինչպես հեղափոխական շարժման, այնպես էլ սոցիալիստական շինարարության տարիներին լատիշ ժողովուրդն ամենասերտ կապերով կապված է եղել Ռուսաստանի բոլոր ժողովուրդների հետ, որոնց բարեկամությունը եղել է նրա հաղթանակի երաշխիքը։ Առաջնորդվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, Լատվիայի կոմունիստական կուսակցությունն անընդհատ ամրապնդել և զարգացրել է ժողովուրդների բարեկամությունը, աշխատավորներին դաստիարակել պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով։ Սովետական Լատվիան կամովին կերպով մտնելով ՍՍՀՄ կազմի մեջ, հնարավորություն ստացավ ա-

[1] Դրամի հին կուրսով։

րագորեն զարգացնելու Հանրապետության տնտեսությունը և կուլտուրան։ Եղբայրական Հանրապետություններից, և առաջին հերթին Ռուսաստանյան Ֆեդերացիայից, ստացվեցին արտադրական սարքավորումներ, ինչպես և հումք, զանազան նյութեր։ Հանրապետությունում սկսվեց սոցիալիստական ինդուստրացումը։ Սովետական իշխանության տարիներին Լատվիայում ստեղծվել է էլեկտրատեխնիկական, ռադիոէլեկտրոնիկայի, սարքաշինության, տրանսպորտային մեքենաշինության, փայտամշակման, թղթի, քիմիական արդյունաբերությունն[1]։

Կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության անշեղ կենսագործման շնորհիվ, ՍՍՀՄ ամբողջ արդյունաբերության նախապատերազմյան զարգացման համեմատությամբ, Լատվիայի արդյունաբերական արտադրության աճման տեմպերն ավելի քան երկու անգամ բարձր են։ Ահա թե ինչու Սովետական Լատվիան ՍՍՀՄ ժողովուրդների լենինյան ընտանիքում Մեծ Հոկտեմբերի 50-ամյակը տոնեց իր ամենից ստեղծագործական վերելքի պայմաններում։ Հոբելյանական տարում՝ 1967 թվականին, Լատվիայում շահագործման հանձնվեցին արդյունաբերական ձեռնարկություններ, գիտական հիմնարկներ։ Լատվիական ՍՍՀ տնտեսության ծաղկումը տեղի է ունենում կոմպլեքսային զարգացման նշանաբանով, որն ավելի արդյունավետ է դարձնում ժողովրդի ստեղծագործական աշխատանքը։

Հանրապետության արդյունաբերությունը թողարկում է մոտոհեծանիվների համամիութենական արտադրության գրեթե կեսը, յուրաքանչյուր քառորդ ռադիոընդունիչը, վեցերորդ դիզելը, յուրաքանչյուր քառորդ էլեկտրավագոնը և վեցերորդ տրամվայը[2]։

[1] «Советская Латвия», 6 октября 1967.

[2] СССР в цифрах в 1967 году, стр. 7.



Սովետական Լատվիայի արդյունաբերությունը յուրաքանչյուր երեք շաբաթում ավելի շատ արտադրանք է թողարկում, քան բուրժուական Լատվիան արտադրում էր ամբողջ տարվա ընթացքում։

Սովետական Լատվիայում արագ կերպով զարգանում է քիմիական արդյունաբերությունը։ Վերջին տարիներին կառուցվեցին՝ Դաուգավպիլսում՝ սինթետիկ մանրաթելի, Վալմիերում՝ ապակեթելի, Ռիգայում՝ լաքի-ներկերի քիմիական գործարանները և մի շարք արտադրամասեր, որոնք հանրապետության տնտեսության զարգացման համար նոր հեռանկարներ բացեցին և հարստացրին ՍՍՀՄ քիմիական արդյունաբերությունը տեխնիկայի վերջին խոսքով կառուցված ձեռնարկություններով։

Հանրապետությունում շահագործման հանձնված քիմիական գործարանները տնտեսական կապերով կապված են միութենական հանրապետությունների հետ և իրենց համեստ ավանդն են ներդնում ժողովուրդների բարեկամության և համագործակցության զարգացման գործում։

Լայն չափով զարգացել է նաև ժողովրդական սպառման ապրանքների արտադրանքը, որը ներկայումս կազմում է Սովետական Լատվիայի արդյունաբերական արտադրության զգալի մասը։ Տրիկոտաժային գործվածքի, կաշվե կոշկեղենի, կարի արտադրանքի արտադրության ծավալը գերազանցում է մեկ շնչին ընկնող ռացիոնալ նորմաները։ Ուշագրավ է նաև այն փաստը, որ վերնահագուստի ու սպիտակեղենի արտադրությամբ Լատվիական Սովետական Հանրապետությունը բնակչության մեկ շնչի հաշվով Եվրոպայում գրավում է առաջին տեղը, իսկ գուլպաների արտադրությամբ՝ աշխարհում առաջին տեղը[1]։

Լատվիական աշխատավորները զգալի հաջողություններ են ձեռք բերել նաև սննդի արդյունաբերության բնագավառում։ Հենց այն փաստը, որ Լատվիայում սննդի արդյունաբերության տեսակարար կշիռը ավելի բարձր է, քան սովե-

[1] Տե՛ս «Расцвет народного хозяйства Советской Латвии», Рига, 1967, стр. 18.

տական ամբողջ երկրում, խոսում է նրա բուռն զարգացման մասին։ Հանրապետությունում արտադրվող ապրանքների մեկ քառորդը կազմում են սննդամթերքները։ Լատվիան հայտնի է ձկնորսությամբ և ձկան վերամշակման արդյունաբերությամբ։

Լատվիական արդյունաբերությունը լայն հնարավորություններ է ստեղծել նրա տնտեսական կապերի ընդարձակման համար։ Նրա արդյունաբերական արտադրանքը լայն ժողովրդականություն է վայելում ՍՍՀՄ բոլոր հանրապետություններում և արտասահմանյան շատ երկրներում։ Նա տնտեսական սերտ կապեր ունի և համագործակցության մեջ է Ռուսաստանյան Ֆեդերացիայի, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Էստոնիայի, Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի և միութենական մյուս հանրապետությունների հետ։

Սովետական հանրապետությունների հետ Լատվիական ՍՍՀ տնտեսական համագործակցությունը տեղի է ունենում արտադրանքի փոխանակությամբ, արտադրության կոոպերացմամբ, աշխատանքային փորձի փոխանակմամբ։ Միջհանրապետական փոխանակության մեջ ավելի շատ մասնակցում են մեքենաշինությունն ու մետաղամշակումը, թեթև և սննդի արդյունաբերությունը[1]։

Նոր հնգամյակի տարիներին ավելի է ընդարձակվել Սովետական Լատվիայի տնտեսական համագործակցությունը եղբայրական հանրապետությունների հետ։ Արագ կերպով զարգանում է ռադիոէլեկտրոնիկական, սարքաշինության, քիմիական արդյունաբերությունը։

Հանրապետության տնտեսական բուռն զարգացումը նրան հնարավորություն կտա ավելի ընդարձակել համագործակցությունը և եղբայրական բարեկամությունը ՍՍՀՄ ժողովուրդների հետ։

Լատվիան Հայաստանից շատ հեռու է։ Ավելի քան երեք հազար կիլոմետր է բաժանում Ռիգան Երևանից, բայց այդ բնավ չի խանգարում, որ լատիշ և հայ ժողովուրդների բա-

[1] Народное хозяйство Латвийской ССР. Стат. сборник, Рига, 1967.



րեկամությունն անընդհատ ամրապնդվի և զարգանա։ Նրանց բարեկամությունը սկիզբ է առել անցյալում և ամրապնդվել սովետական իշխանության տարիներին։ Հանրահայտ է լատիշական ժողովրդական բանաստեղծ Յան Ռայնիսի և հայ դասական գրականության նշանավոր ներկայացուցիչ Հովհաննես Թումանյանի բարեկամական սերտ կապը, որը հսկայական նշանակություն ունեցավ երկու ժողովուրդների գրականության և փոխըմբռնման համար։

Մեծ Լենինի աշակերտ ու զինակից, ականավոր հեղափոխական, հայ ժողովրդի արժանավոր զավակ Ստ. Գ. Շահումյանն ուսանել է Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտում և հեղափոխական գործունեություն է ծավալել Լատվիայում։ Նա իր անմահ գործերով զարգացրել է լատիշ ու հայ աշխատավորների և բոլոր ժողովուրդների բարեկամությունը։

1920 թ. նոյեմբերի 29-ին, երբ հայ ժողովուրդը ռուս մեծ ժողովրդի օգնությամբ տապալեց դաշնակների տխրահռչակ տիրապետությունը, նրան եղբայրական ձեռք մեկնեցին նաև լատիշ ժողովրդի զավակները։ Հայ ժողովրդի զավակներն իրենց հերթին ակտիվորեն մասնակցեցին Լատվիայի ազատագրմանը։

Այդ երկրների միջև գոյություն ունեցող հեռավորությունը չխանգարեց, որ Հայաստանից Լատվիան ստանա մետաղներ, էլեկտրաչափիչներ, տրանսֆորմատորներ, կաբել և Հայաստան արտահանի շինափայտ, դիզելներ, բեռնիչներ, ռադիոընդունիչներ, հեռախոսային ապարատներ, էլեկտրական գործիքներ և այլն։

Սովետական Լատվիան իր արդյունաբերական արտադրանքն արտահանում է արտասահմանյան ավելի քան 75 երկրներ, որտեղ մեծ հետաքրքրություն է առաջ եկել լատվիական արտադրանքի նկատմամբ։

Հանրապետության ծովային տրանսպորտը հիմնականում սպասարկում է ՍՍՀՄ արտաքին առևտուրը։ Ռիգայի, Վենտսպիլսի, Լիեպայայի նավահանգիստներն չսառչող ջրերը ամբողջ տարին նավարկության համար շատ հարմար են։ Ծովային փոխադրությունների ծավալը, 1940 թվականի համե-

մասնությամբ, ավելացել է ավելի քան տասը անգամ[1]: Հանրապետությունում զգալի չափով զարգացել է երկաթուղային տրանսպորտը և բարեկարգվել ավտոճանապարհների բազմաճյուղ ցանցը:

Անճանաչելիորեն վերափոխվել է նաև Լատվիական ՍՍՀ գյուղատնտեսությունը: Հանրապետության կոլտնտեսությունները և սովխոզները դարձել են բարձր մեքենայացված գյուղատնտեսական ձեռնարկություններ: Սովետական իշխանության տարիներին Լատվիայի գյուղատնտեսությունը զինվել է տեխնիկայով, իսկ էլեկտրաֆիկացման զինվածությունը նույն ժամանակաշրջանում աճել է 43 անգամ: Սովետական իշխանության տարիներին Լատվիան դարձել է առաջավոր գիտության և զարգացած կուլտուրայի երկիր:

Հանրապետության գիտությունների ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտներում հետազոտվում են ատոմային էներգիայի, ռադիոէլեկտրոնիկայի, քիմիայի, կենսաբանության, բժշկության, լեզվաբանության արդիական բազմաթիվ պրոբլեմներ, որոնց լուծումը հսկայական չափով հարստացնում է հայրենական գիտությունը: Լայն ծավալ է ստացել հանրակրթական դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանցը, զարգացել են ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան, արվեստը և գեղարվեստական գրականությունը, մամուլը:

Սովետական Լատվիայի հաջողությունները հնարավոր դարձան սովետական հասարակարգի, կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության հաղթանակի, ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների եղբայրական օգնության, համագործակցության և բարեկամության շնորհիվ:

Լատվիական ՍՍՀ տնտեսության և կուլտուրայի բուռն զարգացումը ափշված են ընդունել նույնիսկ արտասահմանյան երկրների շատ գործիչներ: Այսպես, 1967 թ. Սովետական Լատվիայում եղավ Ֆինլանդիայի Ժողովրդական Դեմոկրատական Միության պատվիրակությունը, որի ղեկա-

[1] «Коммунист Советской Латвии», 1967, № 4, Рига.



վար դոկտոր Ալենիուսն ասաց. «Մենք սպասում էինք տեսնել ագրարային Լատվիային, իսկ մեր առաջ է սովետական փոքրիկ հանրապետությունը՝ իր մեծ ինդուստրիայով»:

Սովետական փոքրիկ Լատվիայի գործարանները լրիվ հիմքով կարելի է անվանել մեծ ինդուստրիայի ձեռնարկություններ ինչպես Սովետական Միության, այնպես էլ համաշխարհային մասշտաբով:

Փոքրիկ Լատվիայի մեծ արդյունաբերության առատ աղբյուրը սկիզբ է առնում սովետական հզոր պետության և նրա բազմազգ ժողովուրդների եղբայրական համերաշխ ընտանիքից:

Սովետական Լատվիան ունի բազմազգ բնակչություն: 1959 թ. մարդահամարի տվյալներով լատիշները կազմում են բնակչության 62, ռուսները՝ 26,6, բելոռուսները՝ 2,9, լեհերը՝ 2,9, հրեաները՝ 1,8, ուկրաինացիները՝ 1,4, լիտվացիները՝ 1,5 տոկոս: Այսպիսի բազմազգ ժողովուրդների համերաշխ ընտանիքում գրանիտի պես ամուր են եղբայրական բարեկամությունն ու համագործակցությունը: Լատվիական ժողովրդի վիթխարի հաջողությունները ուրախություն են պատճառում ՍՍՀՄ բոլոր ազգերի աշխատավորներին, որովհետև կոմունիստական շինարարության պրոցեսում ստեղծված բարիքները մեծ ու անսասան Սովետական Միության ընդհանուր հարստության մի անբաժանելի մասն են կազմում և արդարացիորեն բաշխվում են բոլոր ազգերի և ազգությունների միջև: Կոմունիստական կուսակցությունը, ինչպես միշտ, կոմունիստական շինարարության պրոցեսում վարում է բոլոր ազգերի ու ազգությունների փաստական հավասարության քաղաքականություն՝ լիովին հաշվի առնելով յուրաքանչյուրի շահերը: Լատվիական Սովետական Սոցիալիստական Հանրապետության աշխատավորների փայլուն հաջողությունները, ժողովրդի կենսամակարդակի անշեղ բարձրացումը ցույց են տալիս, թե ինչպես փոքր ազգը սովետական եղբայրական մեծ ընտանիքում ազատ զարգանում է, որը արդյունք է Սովետական Միության կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության և երկրի բազմազգ ժողովուրդների անխախտ բարեկամության ու

սոցիալիստական համագործակցության։ Լատիշ ժողովուրդը դեպի կոմունիզմ է գնում սովետական ամբողջ ժողովրդի հետ։ Նա իր բոլոր ջանքերը գործադրում է ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության և համագործակցության զարգացման համար՝ նրա մեջ տեսնելով իր վաղվա էլ ավելի երջանիկ կյանքի բարգավաճումը, սովետական երկրի հզորությունը։ Լատիշ ժողովուրդը ոչ մի ջանք ու եռանդ չի խնայում ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական բարեկամության և սոցիալիստական համագործակցության զարգացման համար։

# Ղիրղիզական ՍՍՀ



Կիրգիզական ՍՍՀ: Սովետսկայա հրապարակը Ֆրունզեում

## 11. ԿԻՐԳԻԶԻԱՆ ԽՐԱԽՃԱՆՔ Է ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

*Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը կյանք է տվել կիրգիզ ժողովրդին[1]։ Ցարիզմի պայմաններում այդ ժողովուրդը ֆիզիկապես ոչնչանում էր։ Մինչև հեղափոխությունը նա գտնվում էր սոցիալական և ազգային ծանր ճնշման տակ, զրկված էր տնտեսական ու քաղաքական իրավունքից, ապրում էր չտեսնված աղքատության մեջ, չուներ արդյունաբերություն, գիր ու գրականություն։ Գյուղատնտեսությունը հիմնականում սահմանափակվում էր քոչվորական անասնապահությամբ[2]։*

*Սովետական իշխանության տարիներին կիրգիզ ժողովուրդը իր տնտեսությամբ և կուլտուրայի առաջընթացով հսկայական թռիչք է կատարել հետամնացությունից դեպի սոցիալ-քաղաքական կյանքի բարձունքները։ Ոչ հեռավոր անցյալի հետամնաց լեռնային Կիրգիզիան վերափոխվել ու դարձել է ծաղկած սոցիալիստական հանրապետություն, որի ժողովուրդը ՍՍՀՄ ժողովուրդների միասնական ընտանիքում աճել ու զարգացել է և դուրս եկել համաշխարհային քաղաքակրթության լայն ասպարեզ։*

*Սովետական Կիրգիզական Հանրապետությունն ունի ժամանակակից հզոր արդյունաբերություն[3]։ Նրա արտադրանքը դուրս է եկել ՍՍՀՄ-ի սահմաններից և մեծ գնահատականի է արժանացել համաշխարհային շուկաներում ու ցուցահանդեսներում։ Սովետական Կիրգիզիան արտադրում է մետաղ հատող դազգահներ, գյուղատնտեսական մեքենաներ, ավտոմեքենաներ, էլեկտրական սարքեր, գործիքներ, էլեկտրաշարժիչներ։ Սովետական իշխանության տարիներին հանրապետությունում արագորեն զարգացել են գունավոր մետալուրգիան, թեթև և սննդի արդյունաբերությունը։*

---

1 *Տե՛ս* Великая Октябрьская Социалистическая революция и гражданская война в Киргизии (1917—1920). Документы и материалы, Фрунзе, 1957.

2 *Տե՛ս* История Киргизии, т. I, 1956.

3 **Н. С. Есипов,** Промышленность Киргизии, Фрунзе, 1967.

Կիրգիզիայի տնտեսության զարգացման համար սովետական պետությունը հսկայական միջոցներ է ձեռնարկել։ Բավական է ասել, որ սովետական իշխանության տարիներին հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ պետական և կոոպերատիվ միջոցներից ներդրվել է 2,8 միլիարդ ռուբլի։ Կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության հոգատարության շնորհիվ Կիրգիզիայի արդյունաբերությունը զարգացավ և նրա արտադրանքի բազմաթիվ տեսակներ ստացան միութենական նշանակություն։ Գունավոր և հազվագյուտ մետաղների, մետաղահատ դազգահների և արտադրության այլ տեսակների գծով Կիրգիզիան Միության մեջ առաջավոր տեղ է գրավում։ Սովետական Կիրգիզիայի արդյունաբերությունն ավելի արագ տեմպերով է զարգանում, քան միջին մակարդակը ՍՍՀՄ-ում։ Արդյունաբերության համախառն արտադրանքը 1913 թվականի համեմատությամբ 1966 թվին աճել է 117 անգամ։ Արդյունաբերության զարգացմանը զուգընթաց ստեղծվել են բանվորական և տեխնիկական մասնագիտական բարձրորակ կադրեր։ Առաջին տարիներին զարգանում են հանրապետության գունավոր մետալուրգիան, էլեկտրատեխնիկական, թեթև և սննդի արդյունաբերությունը։

Մեծ թափով աճում է հանրապետության էլեկտրաէներգետիկան։

Կիրգիզները, տեսնելով իրենց այսօրվա արդյունաբերությունը, ասում են, թե այս բոլորը հրաշք է, որի մասին անցյալում անհնար էր անգամ երազել, դա արդյունք է միայն և միայն Մեծ հոկտեմբերի ծնունդ սովետական կարգի, կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության հաղթանակի, ՍՍՀՄ ժողովուրդների սոցիալիստական համագործակցության։

Կիրգիզիայի հանրապետությունը դարձել է մեքենայացված, բարձր բերքատվության սոցիալիստական հողագործության և անասնապահության երկիր, որի կոլտնտեսային դաշտերում աշխատում են հազարավոր տրակտորներ, կոմբայններ, ավտոմեքենաներ։ Կիրգիզիայի կոլտնտեսությունները և սովխոզները 1967 թվականին խնամում էին ավելի



քան տասը միլիոն այծեր, որոնց մազերից յուրաքանչյուր տարի պատրաստվում են 27 միլիոն բարձրորակ կոստյումներ։

Կիրգիզ ժողովուրդը հսկայական հաջողություններ է ձեռք բերել գիտության և կուլտուրայի զարգացման ասպարեզում։ Կիրգիզիան համատարած գրագիտության հանրապետություն է։ Ժողովրդական տնտեսության մեջ աշխատում են բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական կրթությամբ ավելի քան 114 հազար մասնագետներ։ Հանրապետության գիտական հիմնարկներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում 4 հազար գիտական աշխատողներ և մանկավարժներ են աշխատում, այդ թվում՝ 1100 դոկտոր և գիտության թեկնածու։ Հանրապետության 8 բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում է 37 հազար ուսանող։ Կիրգիզ ժողովուրդն ունի գիտությունների ակադեմիա, որ հետազոտական մեծ աշխատանք է կատարում։

Հսկայական տեղաշարժ է կատարվել Կիրգիզիայի աշխատավորների կենցաղում, նրանց կենսական մակարդակի բարձրացման բնագավառում։ Մինչհեղափոխությունը Կիրգիզիայի բնակչության միայն 12 տոկոսն էր բնակվում քաղաքներում, իսկ այժմ հանրապետության քաղաքային բնակչությունը կազմում է 38 տոկոս։

Սովետական իշխանության տարիներին հանրապետության ազգաբնակչությունն աճել է երեք անգամ[1]։

| | 1913 | 1926 | 1939 | 1959 | 1966 |
|---|---|---|---|---|---|
| Ընդամենը (հազար մարդ) | 864 | 1002 | 1458 | 2066 | 2652 |
| Այդ թվում՝ | | | | | |
| քաղաքային (հազար մարդ) | 106 | 122 | 270 | 696 | 1020 |
| գյուղական (հազար մարդ) | 758 | 880 | 1188 | 1370 | 1632 |
| քաղաքային (%-ով) | 12 | 12 | 19 | 34 | 38 |
| գյուղական (%-ով) | 88 | 88 | 81 | 66 | 62 |

[1] Տե՛ս Союз Советских Социалистических Республик, стр. 593.

Կիրգիզական ՍՍՀ-ն 1968 թվականին ուներ 2 միլիոն 836 հազար ազգաբնակչություն։ Հանրապետությունում բնակվում են կիրգիզներ, ռուսներ, ուկրաինացիներ, ուզբեկներ, ղազախներ, գերմանացիներ։ Հանրապետության արդյունաբերական խոշոր քաղաքներից են Ֆրունզեն, որն ունի 385 հազար բնակչություն, Օշը՝ 108 հազար, իսկ 25-ից 50 հազար բնակիչներ ունեն Պրժևալսկ, Ջալալ-Աբադ, Կիզիլ-Կիյա, Թոկմակ քաղաքները, որտեղ կան արդյունաբերական բազմաթիվ ձեռնարկություններ և կուլտուրական հիմնարկներ։

40 տարում Սովետական Կիրգիզիայում կառուցվել է 8 միլիոն 600 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն։ Նույն տարիներին կոլտնտեսականները կառուցել են 176 հազար լուսավոր տներ՝ կոմունալ բոլոր հարմարություններով, ունեն ռադիո, հեռուստացույց, անձնական գրադարան[1]։

Հանրապետության գյուղական բնակչության կուլտ-կենցաղային սպասարկումը Կիրգիզիայի կոմունիստական կուսակցության և կառավարության գլխավոր խնդիրներից մեկն է։ Այդ ուղղությամբ ևս մեծ աշխատանք է կատարվում։

Սովետական իշխանության տարիներին աճել է արտադրության առաջավորների, աշխատանքի նորարարների, գիտության ու կուլտուրայի գործիչների բանակը։ Ջանասեր աշխատանքի համար Սովետական Միության շքանշաններով և մեդալներով պարգևատրված են հանրապետության ավելի քան 26 հազար բնակիչներ։ Կիրգիզ ժողովրդի բազմաթիվ տղաների և դուստրերի շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում։

Կիրգիզիայի ժողովրդական տնտեսության կարևոր բնագավառներից մեկը անասնապահությունն է։ Դժվար է հատկապես հովիվների աշխատանքը։ Հայտնի է, որ մինչև հեղափոխությունը հովիվներն արհամարհված մարդիկ էին և զուրկ քաղաքական իրավունքից։ Անցյալում հովիվներն անգրագետ և անկուլտուրական մարդիկ էին, ոչ ոք նրանց մասին հոգ չէր տանում, չէր գնահատվում նրանց աշխատանքը։

[1] «Советская Киргизия», 6 ноября 1967.



Սովետական Կիրգիզիայում արմատապես փոխվել են նաև հովիվների աշխատանքի պայմանները։ Նրանք ակտիվ մասնակցություն են ունենում հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին։ Այսպես, Կիրգիզիայի երեք հովիվներ՝ Մարուսա Ժանդիրաևան, Տոլոգոն Այմակունովը և Մամբետ Արգիլաևը ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատներ են։ Կիրգիզական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատներից 31-ը հովիվներ են, իսկ Սոցիալիստական աշխատանքի հերոս հովիվ Հուլքարա Օրմոնովը հանրապետության Գերագույն սովետի նախագահի տեղակալն է, Սոցիալիստական աշխատանքի հերոս հովիվ Կալիր Մուկաշևը Կիրգիզիայի Գերագույն սովետի նախագահության անդամ է։ Ավագ հովիվ Կենեբայ Սարիևը ՀամԼԿԵՄ Կենտկոմի անդամ է։

Այդ մարդիկ մշտապես սովորում են, որ հարստացնեն իրենց գիտելիքները, որպեսզի էլ ավելի արդյունավետ դարձնեն աշխատանքը։

Կիրգիզ ժողովրդի արվեստը և գրականությունը հարուստ պատմություն ունեն և բարձր գնահատվեցին ինչպես սովետական հայրենիքի մայրաքաղաք Մոսկվայում, այնպես էլ միութենական հանրապետություններում կազմակերպված տասնօրյակների ժամանակ։ Արվեստի տասնօրյակները կիրգիզական կուլտուրայի յուրատեսակ հաշվետվությունն էին անցած ճանապարհի մասին և միաժամանակ խոշոր քայլ հանդիսացան ՍՍՀՄ ազգերի ու ազգությունների մերձեցման և փոխադարձաբար միմյանց օգնելու ու կոմունիստական շինարարության պրոցեսում էլ ավելի ընդարձակելու ուղղությամբ։

Կիրգիզական գրականությունը ծնունդ առավ 1924 թ. նոյեմբերի 7-ին, երբ լույս տեսավ ազգային առաջին թերթը, նրա մեջ առաջին անգամ կիրգիզական լեզվով տպագրվեց առաջին բանաստեղծությունը։ Այժմ Կիրգիզիայի գրողների ստեղծագործությունները տպագրվում են ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների լեզուներով, իսկ դերասանները հանդես են գալիս աշխարհի շատ երկրներում։

Սովետական Կիրգիզիայի արվեստը նույնպես իր ձևով յուրահատուկ է։ ՍՍՀՄ ժողովուրդներն այն ընդունում են ի-

բենց սրտին մոտ և տալիս բարձր գնահատական: Եթե կիրգիզ ժողովրդի ազգային կուլտուրան չտեսնված կերպով ծաղկել է, եթե կրթությունն ու գիտությունը զարգացել և առաջ են ընթացել ո՛չ միայն Արևելքի արտասահմանյան երկրներից, այլև շատ ուրիշ պետություններից, եթե Կիրգիզիայի աշխատավորների կյանքի կենսամակարդակը բարձրացել և հանրապետությունում համակողմանիորեն աճել են նոր մարդիկ, որոնք իրենց սոցիալիստական երկրի հայրենասերներն են, կոմունիզմի ակտիվ կառուցողներ, ապա այդ **բոլորի համար հանրապետության բոլոր աշխատավորներն անսահման պարտական են մեծ Լենինին, Սովետական Միության կոմունիստական կուսակցությանը, ՍՍՀՄ ժողովուրդների միասնական բնտանիքին, որի իրավահավասար անդամըն է կիրգիզ ժողովուրդը:** *Մեծ Հոկտեմբերի 50-ամյակի առթիվ այսպես ընդհանրացրել իր նվաճումները կիրգիզ ժողովուրդը, այն ժողովուրդը, որը ո՛չ միայն ընդունակ է օբյեկտիվորեն հանրագումարի բերել անցած ուղու արդյունքները, այլև գիտականորեն ուրվագծել ապագայի խնդիրները: ՍՍՀՄ ազգերի ու ազգությունների եղբայրական բնտանիքի բոլոր անդամների հետ սերտորեն դաշնակցած՝ ամբողջ եռանդով և ուժով նա ձեռնամուխ է եղել կոմունիզմի նոր բնագծեր գրավելու վեհ գործին:*

Կիրգիզները հաճախ են ասում. «Բարձր են մեր երկրի լեռները, որոնց վրայից հարմար է նայել և՛ անցած ճանապարհին, և՛ տեսնել առաջիկայում անցնելիք ուղին: Նրանց ձեռք բերած արդյունքները հոյակապ են, իսկ գալիքն իրոք պայծառ է: Բավական է ասել, որ Սովետական Կիրգիզիայի արդյունաբերության արտադրանքը 1970 թվականին 1965 թվականի համեմատությամբ աճելու է 80 տոկոսով, իսկ գյուղատնտեսական արտադրությունը ընդարձակվելու է մեկ երրորդով[1]:

Կիրգիզ ժողովուրդը հոյակապ ներկայի և փառահեղ ապագայի համար իր «չոն-ռահմաթ» խոսքը առաջին հերթին ուղղում է լենինյան կուսակցությանը, ռուս մեծ ժողովրդին:

[1] Տե՛ս Народное хозяйство Киргизской ССР, Фрунзе, 1967, стр. 11.



Կիրգիզ ժողովուրդն իր ստեղծագործական ուժերի նոր վերելքի պայմաններում, սոցիալիստական հայրենիքի բոլոր ժողովուրդների հետ միասին յուր ավանդն է ներդնում կոմունիստական շինարարության ընդհանուր գործում: Կոմունիստական կուսակցության նկատմամբ կիրգիզ ժողովուրդը տածում է անսահման երախտագիտության զգացմունք: ՍՍՀՄ ժողովուրդների անխախտ բարեկամության մեջ կիրգիզ ժողովուրդը տեսնում է իր զարգացման երաշխիքը: Այդ պատճառով նա ոգևորված է այն հսկայական աշխատանքով, որ կուսակցությունը կատարում է ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության և համագործակցության զարգացման համար:



Լենինի պողոտան Տաջիկական ՍՍՀ մայրաքաղաք Դուշանբեում

# Տաջիկական ՍՍՀ

## 12. ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՋԻԿ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՔՆ Է

*Տաջիկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության տերիտորիան 143,1 հազար քառակուսի կիլոմետր է։ Հանրապետության ազգաբնակչությունը կազմում է 2,7 միլիոն մարդ[1], որի 35 տոկոսը ապրում է քաղաքում, իսկ 65 տոկոսը՝ գյուղական վայրերում։ ՏՍՍՀ կազմի մեջ է մտնում Լեռնային Բադախշանի Ինքնավար Մարզը, որը զբաղեցնում է 63,8 հազար քառակուսի կիլոմետր տարածություն։ Սովետական Տաջիկստանի մայրաքաղաքը Դուշանբեն է, որն ունի 314,6 հազար բնակչություն[2]։*

*Մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը Տաջիկստանում տիրում էին ֆեոդալական ու կիսաֆեոդալական շահագործման ձևերը և հարաբերությունները[3]։*

*Հոկտեմբերյան հեղափոխությունը և սոցիալիզմը ոչնչացրին և ինքնուրույն ստեղծագործական կյանքի կոչեցին անցյալում ծայրահեղ հետամնաց տնտեսություն ունեցող ժողովուրդներին, իսկ նրանցից մի քանիսին փրկեցին ֆիզիկական ոչնչացումից։*

*Անցյալում այդպիսի ծանր վիճակի մեջ էր գտնվում նաև տաջիկ ժողովուրդը։ Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը Տաջիկստանը ամենահետամնաց տնտեսության և կուլտուրայի, ժողովրդի արցունքի ու ցավերի երկիր էր։ Այդ տարիներին բազմաթիվ ճանապարհորդներ լինելով Տաջիկստանում, գրել են իրենց հիշողությունները, ուր նկարագրված է այդ ժողովրդի ողբերգական վիճակը։ Նրանց զարմանք է պատճառել, ամենից առաջ, տաջիկ ժողովրդի խավար կյանքը, որ տարիներ շարունակ անցնում էր լեռնային կիրճերում։ Ժողովուրդը չուներ քաղաքական իրավունք, նրանց մարդկային արժանապատվությունը ոտնահարվում էր*

[1] СССР в цифрах в 1967 году, стр. 7.

[2] Ն. Ս. Սայիդմուրադով, Սովետական Տաջիկստանի տնտեսության և կուլտուրայի ծաղկումը, Ե., 1967, էջ 3—4։

[3] Հարցի մանրամասնությունները տե՛ս «История таджикского народа», Т. I, Душанбе, 1965.



*տեղական և օտարերկրյա շահագործող դասակարգերի կողմից։ Աշխատավոր մարդիկ հնարավորություն չունեին օգտվելու իրենց սեփական աշխատանքի արդյունքներից։ Երկրում արտադրողական ուժերի զարգացումը չէր հետաքրքրում շահագործող դասակարգերին։ Նրանք ժողովրդից գանձում էին շատ հարկեր։ Տաջիկական սովետական գրականության հիմնադիր Ս. Այնին չափազանց ճիշտ և դիպուկ կերպով ասել է, թե Բուխարայի իշխանության մեջ «միայն օդը չէր տուրքավորվում»։*

*Միջին Ասիան Ռուսաստանին միավորվելուց հետո Տաջիկստանը դարձել էր ցարական Ռուսաստանի տեքստիլ, կաշվի և սննդի արդյունաբերության հումքի բազաներից մեկը։*

*Հոկտեմբերյան հեղափոխությունն այն հզոր ուժն էր, որ տաջիկ ժողովրդին փրկեց ֆիզիկական ոչնչացումից և տվեց կյանք ու երջանկություն։ Մեծ Հոկտեմբերը Տաջիկստանի աշխատավորների արտադրողական ուժերի ու կուլտուրայի զարգացման համար չտեսնված հնարավորություններ բացեց։*

*Հոկտեմբերյան հեղափոխությունը 1917 թ. նոյեմբերից մինչև 1918 թ. մարտը տարածվեց ամբողջ Թուրքեստանյան երկրամասում և հյուսիսային Տաջիկստանում։ Որոշ ժամանակ շարունակեց գոյություն ունենալ Բուխարայի խանությունը, որը հովանավորվում էր իմպերիալիստական պետությունների կողմից։*

*1920 թ. օգոստոսին Չարջուու քաղաքում գումարվեց Բուխարայի կոմունիստական կուսակցության IV համագումարը[1], որը որոշեց կազմակերպել և գլխավորել աշխատավորական զանգվածների հասունացող հեղափոխական շարժումը՝ ընդդեմ Բուխարայի էմիրաթի։*

*Բուխարայի էմիրաթի տերիտորիայում ծավալվեց ժողովրդական ապստամբություն, և 1920 թ. սեպտեմբերի 2-ին տապալվեց հակահեղափոխության օջախը Միջին Ասիայում։*

[1] Տե՛ս **С. А. Раджабов,** Национально-государственное размежевание в Средней Азии и его значение для образования Таджикской Советской Социалистической Республики, Душанбе, 1954.

1920 թ. սեպտեմբերի 14-ին ժողովրդական ներկայացուցիչների համաբուխարական առաջին համագումարում հռչակվեց Բուխարայի ժողովրդական Սովետական Հանրապետությունը[1]։

Ռուս ժողովրդի և Միջին Ասիայի աշխատավորների եղբայրական օգնությամբ լիկվիդացվեց բասմաչների բանդան։

Միջին Ասիայի ազգային տերիտորիալ սահմանազատման հիման վրա Արևելյան Բուխարայի տերիտորիայում կազմավորվեց Տաջիկական Ինքնավար Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը, որը մտավ Ուզբեկական ՍՍՀ կազմի մեջ[2]։

1929 թ. ապրիլին կայացավ Տաջիկական ԻՍՍՀ խորհուրդների երկրորդ համագումարը, որն ընդունեց հանրապետության սահմանադրությունը և հավանություն տվեց Խոջենտյան օկրուգը Տաջիկական ԻՍՍՀ կազմի մեջ մտցնելու մասին։ Նույն թվականի դեկտեմբերի 5-ին ՍՍՀՄ Կենտգործկոմը հրամանագիր ընդունեց Տաջիկական ԻՍՍՀ Տաջիկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության վերակազմելու մասին։ Դրանով տաջիկ ժողովրդի տնտեսության և կուլտուրայի զարգացման համար ստեղծվեցին ամենալայն հնարավորություններն ու պայմանները։

ՍՍՀՄ-ում սոցիալիզմի լիակատար և վերջնական հաղթանակի, ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների եղբայրական օգնության շնորհիվ Տաջիկստանը դարձել է զարգացած սոցիալիստական հանրապետություն։ Սովետական Միության կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության շնորհիվ տաջիկ ժողովուրդը դարձավ իր ճակատագրի տերը, պատմական կարճ ժամանակամիջոցում երկրում կատարվեց հրաշք։ Ամայի տափաստանները վերածվեցին ծաղկած երկրի, յուրացվեց հողի հարստությունը, կառուցվեցին էլեկտրա-

[1] Տե՛ս **Ю. А. Николаев,** Укрепление органов государственной власти Таджикской АССР, «Материалы к истории таджикского народа в Советский период», Душанбе, 1957.

[2] Տե՛ս **С. А. Раджабов,** Таджикская ССР—суверенное советское государство, Душанбе, 1957.



կայաններ, որոնք անխափան կերպով էլեկտրաէներգիա են մատակարարում բոլորովին նոր կառուցված գործարաններին ու ֆաբրիկաներին, զարգացած քաղաքներին ու բանվորական ավաններին։

Էներգետիկան տաջիկական հանրապետությունում լայն հնարավորություններ ունի։ 1970 թվականին հանրապետությունը պետք է արտադրի շուրջ 4 միլիարդ կիլովատ-ժամ էներգիա և այդ այն դեպքում, երբ ամբողջ ցարական Ռուսաստանը արտադրում էր ընդամենը 2 միլիոն կիլովատ-ժամ։

Տաջիկստանի լեռնային գետերը շատ արագահոս են, որոնք հանրապետությունում խելացիորեն են օգտագործվում։ Այդպիսի գետերից են Վախշը և Փյանջը, որոնց վրա կառուցվելու են մի շարք էլեկտրակայաններ։ Միայն Վախշ գետի վրա կառուցվող էլեկտրակայանների ընդհանուր կարողությունը 7 միլիոն 800 հազար կիլովատ-ժամ էներգիա է լինելու[1]։ Փյանջ գետի վրա նախատեսված է կառուցել մի էլեկտրակայանների հսկա կասկադ, որը նոր հեղաշրջում կմտցնի տաջիկ ժողովրդի կյանքում։ Էլեկտրաէներգիայի հարուստ բազայի հիման վրա արագ թափով զարգանալու են քիմիական արդյունաբերությունը և գունավոր մետալուրգիան։

Սովետական Տաջիկստանում մեկընդմիշտ չքացան աղքատությունը և հետամնացությունը։ Ժողովրդի կյանքը դարձել է ուրախ, բովանդակալից, տնտեսապես և հոգևոր տեսակետից՝ հարուստ։

Տաջիկստանը ներկայումս տնտեսական տեսակետից դարձել է բազմակողմանիորեն զարգացած հանրապետություն։ Նա այժմ ունի արդյունաբերության ավելի քան 90 ճյուղ և 260 խոշոր ձեռնարկություն[2]։ Ծանր արդյունաբերությանը զուգընթաց հանրապետությունում զարգացել է նաև թեթև և սննդի արդյունաբերությունը։ Թեթև արդյունաբերության տեսակարար կշիռը համախառն արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ կազմում է 50 տոկոս, իսկ սննդի ար-

[1] Народное хозяйство Таджикской ССР. Стат. ежегодник, стр. 12, Душанбе, 1967.

[2] Տե՛ս **Խ. Ս. Սայիդմուրադով, Սովետական Տաջիկստանի տնտեսության և կուլտուրայի ծաղկումը, էջ 16։**

դյունաբերությունը թողարկում է հանրապետության համախառն արտադրանքի մեկ քառորդը[1]։

Սովետական Տաջիկստանի տնտեսության մեջ կարևոր տեղ է գրավում մեքենաշինական և էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը։ Հանրապետությունում կառուցվել են արդյունաբերական այնպիսի կարևոր ձեռնարկություններ, որոնց նշանակությունը զգում են ո՛չ միայն Տաջիկստանը, այլև Սովետական Միության մյուս հանրապետությունները։

Հենց այդպիսի ձեռնարկություններից է «Մետալիստ» գործարանը, որի արտադրանքը հայտնի է նաև արտասահմանյան շատ երկրներում։

Մեծագույն հրաշքներից մեկն էլ այն է, որ սովետական իշխանության տարիներին, եղբայրական ժողովուրդների օգնությամբ Տաջիկստանի արդյունաբերությունն այնպիսի արագ թափով զարգացավ, որ այսօր նա աշխարհի 36 երկրներ է արտահանում իր բարձրորակ արտադրանքը։ Իսկ Սովետական Տաջիկստանը ինչպիսի՞ ապրանքներ է արտահանում և ո՞ր երկրները։ Դույն գորգեր և այլ ապրանքնե՞ր։ Ո՛չ, նրա արտադրության համար այժմ այդ չի բնորոշը։ Միայն Դուշանբե քաղաքի Օրջոնիկիձեի անվան գործարանի արտադրանքը արտահանվում է աշխարհի 30 երկիր։ Ասիայի, Աֆրիկայի և Եվրոպայի բազմաթիվ երկրներ նա արտահանում է արմատուրա՝ նավթահորերի և նավթամշակման գործարանների համար։

Սովետական Տաջիկստանը արտասահմանյան շատ երկրների հետ տնտեսական կապերի մեջ է։ Նրանց ուղարկում է ավտոմատներ, դազգահներ, տրանսֆորմատորներ, գյուղատնտեսական տեխնիկա...

Սակայն դրանով չեն սահմանափակվում Սովետական Տաջիկստանի միջազգային կապերը։ Նա առևտրական և կուլտուրական կապեր ունի և բարեկամական հարաբերությունների մեջ է Աֆղանստանի, Իրանի, Հնդկաստանի, Նեպալի, Արաբական Արևելքի մի շարք երկրների հետ։ Տաջիկական ՍՍՀ-ը մասնակցում է նաև միջազգային առևտրական ցու-

[1] Տե՛ս «Коммунист Таджикистана», 8 октября 1967, Душанбе.



ցահանդեսներին և կինոֆեստիվալներին։ Տնտեսական ու կուլտուրական կապերի մեջ մեծ դեր են խաղում գիտատեխնիկական հաղորդումները, հասարակական կազմակերպությունների և ընկերությունների համագործակցությունը։ Վերջին մի քանի տարվա ընթացքում Սովետական Տաջիկստան են այցելել 230 արտասահմանյան պատվիրակություններ, որոնք հետաքրքրվել են գիտատեխնիկական, կրթական և կուլտուրական շինարարության հարցերով։ Այդ պատվիրակությունների հետ տեղի են ունեցել գործնական հանդիպումներ, որոնք անցել են բարեկամական փոխըմբռնման պայմաններում։

Սովետական Տաջիկստանը նույնպես իր պատվիրակություններն է ուղարկել Հնդկաստան, Աֆղանստան, Իրան, Հունաստան, Կանադա, Կուբա, Արաբական Միացյալ Հանրապետություն, Լիբանան և այլ երկրներ։ Այս բոլոր միջոցառումները նպաստեցին ժողովուրդների բարեկամության զարգացման գործին։

Սոցիալիստական կարգի հաղթանակի շնորհիվ հանրապետության գյուղատնտեսությունում ձեռք են բերվել խոշոր հաջողություններ։ Կառուցվել են բազմաթիվ մագիստրալային ջրանցքներ, ջրամբարներ, հիդրոտեխնիկական ձեռնարկություններ, որոնք հնարավոր դարձրին հարյուր-հազարավոր հեկտար հողային նոր տարածություններ ոռոգել։ Սովետական Տաջիկստանի գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են՝ բամբակագործությունը, այգեգործությունը, անասնապահությունը, շերամապահությունը և այլն։

Տաջիկ ժողովուրդն իր տնտեսության և կուլտուրայի զարգացման կարևորագույն պայմաններից է համարում սոցիալիստական համագործակցության և բարեկամության զարգացումը։ Կոմունիստական շինարարության ընթացքում հսկայական չափով ընդարձակվել են Տաջիկստանի տնտեսական կապերը ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների հետ։ Ներկայումս տաջիկ ժողովուրդը տնտեսական և կուլտուրական համագործակցության մեջ է սովետական բոլոր հանրապետությունների հետ։ Հանրապետության բամբակաթելի հիմնա-

կան սպառողները Մոսկվայի ու Լենինգրադի մարզերն են, որոնք վաղուց մասնագիտացել են ՍՍՀՄ-ի համար տեքստիլ արտադրանքի արտադրության մեջ, իսկ Գորկու, Վորոնեժի, Լենինգրադի, Մոսկվայի մարզերին Տաջիկստանը մատակարարում է յուղա-ճարպային արդյունաբերության արտադրանքը: Տաջիկստանը Իրկուտսկի մարզին, Ղազախական ՍՍՀ և Խաբարովսկի երկրամասին մատակարարում է մրգեղենի և բանջարեղենի պահածոների արտադրանք: Տաջիկստանի չոր մրգերը արտահանվում են ավելի քան 20 տնտեսական շրջաններ[1]: Սովետական Տաջիկստանը տնտեսական կապեր ունի Ուզբեկական, Թուրքմենական, Հայկական, Վրացական, Լատվիական հանրապետությունների հետ: Տաջիկստանն իր հերթին եղբայրական հանրապետություններից ներմուծում է անտառանյութ, հացահատիկ, մեքենական սարքավորում, մետաղ, նավթամթերքներ, հանքային պարարտանյութեր և այլն:

Սովետական իշխանության տարիներին Տաջիկստանում բնակչությունն աճել է 2,5 անգամ[2].

| | 1913 | 1926 | 1939 | 1959 | 1966 |
|---|---|---|---|---|---|
| Ընդամենը (հազ. մարդ) | 1034 | 1032 | 1484 | 1981 | 2579 |
| Այդ թվում՝ | | | | | |
| քաղաքային (հազ. մարդ) | 95 | 106 | 249 | 646 | 915 |
| գյուղական (հազ. մարդ) | 939 | 926 | 1235 | 1334 | 1664 |
| քաղաքային (%-ով) | 9 | 10 | 17 | 33 | 35 |
| գյուղական (%-ով) | 91 | 90 | 83 | 67 | 65 |

Ազգաբնակչության ընդհանուր աճին զուգընթաց զգալի տեղաշարժ է կատարվել նաև ազգային կազմում: Ներկայումս Տաջիկստանում բնակվում են տաջիկներ, ուզբեկներ, ռուսներ, ուկրաինացիներ, կիրգիզներ, ղազախներ, որոնք միացյալ ջանքերով ակտիվ մասնակցություն են ունենում հանրապետության կոմունիստական շինարարությանը: Այս-

[1] Տե՛ս «Коммунист Таджикистана», 12 января 1968, Душанбе.
[2] Տե՛ս Союз Советских Социалистических Республик, стр. 603.



տեղ ապահովված են բոլոր ազգերի համերաշխ ու եղբայրական կյանքն ու աշխատանքը:

Տաջիկական ՍՍՀ կազմում է Լեռնային Բադախշանի Ինքնավար Մարզը, որն ունի 91 հազար բնակչություն: Այստեղ ապրում են տաջիկներ, կիրգիզներ, ռուսներ և այլ ազգերի ներկայացուցիչներ: Լեռնային Բադախշանի Ինքնավար Մարզը համերաշխ սոցիալիստական ազգերի օրինակելի ընտանիք է, որի աշխատանքները սովետական պետությունը բարձր գնահատեց և 1967 թ. օգոստոսի 4-ին պարգևատրեց Լենինի շքանշանով:

Մեծ Հոկտեմբերը տաջիկ ժողովրդին ո՛չ միայն վերադարձրեց իր հնագույն կուլտուրայի հարուստ ժառանգությունը, այլև լայն պայմաններ ստեղծեց նրա նոր, սոցիալիստական կուլտուրայի զարգացման համար: Սովետական իշխանության տարիներին ստեղծվեց տաջիկ ժողովրդի նոր մտավորականությունը, որը ոչ մի ջանք ու եռանդ չի խնայում սոցիալիստական կուլտուրայի զարգացման համար:

Ահա բազմաթիվ օրինակներից մեկը:

Տաջիկ ժողովուրդը շատ լավ գիտե և չափազանց բարձր է գնահատում մանկավարժ Խիլոլ Քարիմովին: Նա հանրապետության լավագույն գիտնականներից է, որն իր ամբողջ կյանքը նվիրել է ուսուցիչների պատրաստման և ուսուցման գործին: Ավելի քան երեք տասնամյակ առաջ նա կազմեց տաջիկների առաջին այբբենարանը: Այժմ Սովետական Տաջիկստանի դպրոցներում երեխաները գրագիտություն են սովորում Խիլոլ Քարիմովի կազմած դասագրքով, որն ունի 35 հրատարակություն:

Այս նշանակում է, որ հեղափոխություն է կատարվել ո՛չ միայն անգրագետ ընտանիքից դուրս եկած Խիլոլ Քարիմովի, այլև ամբողջ տաջիկ ժողովրդի կյանքում, որի շնորհիվ նա ձեռք բերեց իր սոցիալիստական կուլտուրան, գիրն ու գրականությունը: Տաջիկ ժողովուրդը հպարտանում է իր համալսարանով, յոթ բարձրագույն և տասներեք միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններով, որտեղ ժողովրդական տնտեսության համար բարձրորակ մասնագետներ են պատրաստվում: Տաջիկստանում յուրա-

քանչյուր 10 հազար բնակչության ուսանողներ ընկնում են երկու անգամ ավելի, քան Իտալիայում և քսանհինգ անգամ ավելի, քան Իրանում։

Սովետական Տաջիկստանն արդեն ունի գիտությունների ակադեմիա, տասնյակ գիտահետազոտական ինստիտուտներ, որտեղ հետազոտվում են բազմաթիվ արդիական պրոբլեմներ։

Տաջիկ ժողովուրդն ամենայն իրավամբ հպարտանում է իր ազգային արվեստով և գրականությամբ։ Նա ունի դերասանների, գրողների, բանաստեղծների, կոմպոզիտորների, նկարիչների, գիտնականների, մանկավարժների, ինժեներների մեծ բանակ։ Սոցիալիստական աշխատանքի հերոս, նշանավոր բանաստեղծ Միրզո Թուրսուն-Զադեի և տաջիկ ժողովրդի մյուս զավակների ստեղծագործությունները սիրելի են դարձել ՍՍՀՄ եղբայրական բոլոր ժողովուրդներին։ Նրանց արվեստը լայնորեն տարածվում է ՍՍՀՄ բոլոր ազգերի աշխատավորների շրջանում։ Տաջիկ ժողովուրդը սովետական երկրում բնակվող բոլոր ժողովուրդների մեծ ընտանիքում զարգացնում է իր պետականությունը, ազգային կուլտուրան, գիտությունը, արվեստը։

Տաջիկ ժողովուրդն իր հաջողությունների հիմքը տեսնում է կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության և Սովետական Միության ժողովուրդների եղբայրական օգնության, համագործակցության և անխզելի բարեկամության մեջ։

Հավերժական բարեկամության համար տաջիկները հայտնում են իրենց շնորհակալությունը, բարեկամություն, որ կենսականորեն անհրաժեշտ է ՍՍՀՄ բոլոր ժողովուրդներին և որի առկայության դեպքում չկան անհաղթահարելի դժվարություններ, սարսափելի չէ որևէ թշնամի։

# Հայկական ՍՍՀ



Երևան։ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնը

## 13. ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆՇԱՆԱԲԱՆՆ Է

Մարդկության պատմության տարեգրության մեջ Հայաստանը դարեր շարունակ հիշվում է որպես հնագույն մի երկիր, տիրանքներով հարուստ իր պատմական անցյալով։ Գտնվելով աշխարհի երկու մայրցամաքների՝ Եվրոպայի ու Ասիայի սահմանագլխին, նա հանդիսացել է անընդհատ պատերազմների ու արշավանքների թատերաբեմ։ Հայ ժողովրդի կոշմարային անցյալը պատմությանը լավ հայտնի է։ Հայաստանում բազմաթիվ հարյուրամյակների ընթացքում մի նվաճող փոխարինել է մյուսին։ Հայ ժողովրդի տնտեսությունը և դարավոր կուլտուրան քայքայվել ու ոչնչացվել են, երկրի քաղաքներն ու գյուղերը ավերակների են վերածվել։

Ազատատենչ հայ ժողովուրդը դարեր շարունակ կրելով պարսիկների, հռոմեացիների, արաբների, բյուզանդացիների, սելջուկների, մոնղոլների, սուլթանների ծանր ու ցավալի լուծը, կյանքի ու մահու կռիվներ է մղել նրանց դեմ, մաքառել իր ազատության համար։

Համարյա մի ամբողջ դար, ընդհուպ մինչև սովետական իշխանության հաղթանակը, հայ ժողովրդի արևելյան հատվածը գտնվել է ռուսական ցարիզմի ծանր դարշապարի տակ, իսկ արևմտյան հատվածը շարունակել է հեծել թուրք բռնակալների դամոկլյան սրի ներքո։ Աշխարհի ժողովուրդներին հայտնի են վերջիններիս հայաջինջ քաղաքականության իրականացման հրեշավոր արդյունքները և հատկապես 1914—1915 թվականների հայկական մեծ ջարդերը, որոնց զոհ գնացին ավելի քան մեկ ու կես միլիոն հայեր։

Դաշնակների տիրապետության տարիներին Հայաստանը որբերի ու արցունքի երկիր էր։ Նրա քաղաքների ու գյուղերի փողոցները լիքն էին սովից ու համաճարակից մահացած մարդկանց դիակներով։ Տեռոր, սով, սուգ ու աղաղակ,— ահա դաշնակցության տխրահռչակ տիրապետության ժամանակաշրջանի մռայլ պատկերը։

Այսպես կոչված «հայկական հարցով» զբաղվել են շա-

ները։ Սակայն պատմությունը լավ հայտնի է, որ իմպերիալիստական պետությունները դրագվել են «հայկական հարցով», ելնելով միայն իրենց շահերից և հետապնդելով մի նպատակ՝ հայ ժողովուրդը պահել շղթաների և ստրկության մեջ, շահագործման ծանր լծի տակ։ Հենց այդ նպատակով թուրքական իմպերիալիստները 1920 թ. սեպտեմբերին պատերազմ սկսեցին Հայաստանի դեմ, որի ջարդեցին հայ ժողովրդի շատ զավակների, հափշտակեցին նրա քաղաքներն ու գյուղերը, նրա տերիտորիայի հսկայական մասը։

Պատերազմի հետևանքով ավելի վատթարացավ Հայաստանի տնտեսական վիճակը։ Պատերազմը մեկ ավելորդ անգամ ևս ցույց տվեց դաշնակցության քաղաքականության ամբողջ սնանկությունը։

Հայ ժողովուրդն իր ճակատագիրը սերտ կերպով կապեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հետ։

Հայ ժողովուրդը 1920 թ. նոյեմբերի 29-ին տապալեց դաշնակների տիրապետությունը և Հայաստանում հաստատեց սովետական իշխանություն։

Հայ ժողովրդի պատմության մեջ նոր էջ բացվեց, դա նրա իսկական վերածննդի դարաշրջանն էր։ Մեծ Հոկտեմբերը հայ ժողովրդին տվեց պետականություն և լիակատար ազատություն, զարգացման ու ծաղկման անսպառ հնարավորություններ։ Ինչպես իր ամբողջ պատմության ընթացքում, այնպես էլ սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում և այժմ, կոմունիստական շինարարության տարիներին, հայ ժողովուրդը բարձր է պահել ժողովուրդների բարեկամության դրոշը։ Նա իր ազատության և անկախության համար մղած պայքարում բոլոր ժողովուրդների հետ բարեկամական կապեր է ստեղծել։ Հայ ժողովրդի մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանը գրել է. «Մի մեծ բան կա, էդ ազգերի լավ հարաբերությունն է, որ հիմնված է դարերի պատմության վրա»։ Նա այնուհետև ընդգծել է գեղարվեստական գրականության նշանակությունը ժողովուրդների բարեկամության զարգացման գործում։

«Ազգերին լավ ճանաչելու և նրանց մեջ փոխադարձ սեր ու հարգանք ստեղծելու ավելի ազնիվ հող ու ավելի մեծ



կազմ չի կարող լինել,— գրել է Հովհ. Թումանյանը,— քան գրականությունն է, որի մեջ հանդես են գալիս նրանց լավագույն զգացմունքները, նրանց ազգային հանճարն ու ոգին»[1]։

Վ. Ի. Լենինը միշտ ընդգծել է Անդրկովկասի բազմազգ ժողովուրդների բարեկամության մեծ ու անխորտակելի ուժի նշանակությունը[2]։ Պրոլետարական մեծ գրող Մաքսիմ Գորկուն ուղղած իր նամակներից մեկում Վ. Ի. Լենինը գրել է. «Մեզ մոտ՝ Կովկասում վրացի + հայ + թաթար + ռուս սոցիալ-դեմոկրատները աշխատել են միասին, միասնական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մեջ տասը տարուց ավելի։ Այս ֆրազ չէ, այլ ազգային հարցի պրոլետարական լուծումն»[3]։ Ելնելով Անդրկովկասի ժողովուրդների տնտեսական, կուլտուրական զարգացման ու բարեկամության հետագա ամրապնդման խիստ անհրաժեշտությունից, Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ ստեղծվեց Անդրկովկասյան ֆեդերացիան։ Անդրկովկասյան ֆեդերացիան հսկայական նշանակություն ունեցավ երկրամասի բազմազգ ժողովրդի անխորտակելի բարեկամության և համագործակցության զարգացման համար։

Ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ զարգացման լայն ճանապարհ բացվեց Անդրկովկասի ժողովուրդների համար։ Հայ ժողովուրդը մեծագույն երախտագիտության զգացմունքով է նշում կոմունիստական կուսակցության, աշխարհում ամենահեղափոխական ռուսական բանվոր դասակարգի, սովետական բոլոր ժողովուրդների օգնությունը, որ նրանք հասցրին ամենածանր ու պատասխանատու պահին։

Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա, թե ինչպես անձամբ Վ. Ի. Լենինի ցուցումով սովետական կառավարությունը դժվարին պայմաններում Հայաստան ուղարկեց հաց, վառելանյութ, մանուֆակտուրա, իսկ ինքնաթիռով՝ նաև ոսկի։

[1] Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951, էջ 162։

[2] Այդ հարցը հանգամանորեն լուսաբանված է Գ. Բ. Ղարիբջանյանի «Վ. Ի. Լենինը և Անդրկովկասի ժողովուրդների պատմագրությունը» աշխատության մեջ, Երևան, 1960։

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 16, էջ 328։

ՍՍՀՄ բոլոր եղբայրական ժողովուրդներից առաջին հերթին ռուս մեծ ժողովուրդը օգնեց հայերին, որպեսզի կառուցեն նոր, սոցիալիստական կյանք։

Արտասահմանյան մեր հյուրերն ասում են. «Քարերի և լեռների երկրում հրաշք է կատարված»։

Իրոք, քարերով և լեռներով հարուստ է Հայաստան երկիրը։ Մինչև հեղափոխությունը հայ աշխատավոր գյուղացին մաքառում էր քարերի հետ, բայց արդյունքը քիչ էր։ Հայաստանը գրեթե արդյունաբերություն չուներ, տնայնագործական ձեռնարկություններում աշխատում էին ընդամենը չորս հազար մարդ։

Հայ ժողովուրդը դարձավ ՍՍՀՄ ժողովուրդների լենինյան համերաշխ ընտանիքի իրավահավասար անդամը։ Այդ միության հզոր ուժի օգնությամբ հայ ժողովուրդը սովետական իշխանության տարիներին այնպիսի թռիչք կատարեց տնտեսության, գիտության ու կուլտուրայի զարգացման ասպարեզում, որ այն իրավամբ հրաշք կարելի է համարել։ Եվ իսկապես, հայերը իրենց երկրում հրաշք են կատարել հենց նրանով, որ «քար-թշնամին» դարձել է «քար-բարեկամ»։ Սովետական Հայաստանում քարը քիմիայի, շինարարության համար դարձել է հումքի հարուստ աղբյուր։ Սովետական Հայաստանում կառուցվում են գեղեցիկ շենքեր, որոնց մեջ մեծ վարպետությամբ ազգային ճարտարապետությունը զուգակցվում է սոցիալիստական երկրների և համաշխարհային մշակույթի ճարտարապետության ու քաղաքաշինության բնագավառում ձեռք բերված նվաճումների հետ։ Դրա վառ վկայությունը գեղեցկուհի Երևանն է, որը աշխարհի ամենահնագույն քաղաքներից է. Նրա 2750-ամյակը մեծ հանդիսավորությամբ տոնվեց 1968 թվականի հոկտեմբերին։ Երևանով հպարտանում են ՍՍՀՄ բոլոր եղբայրական ժողովուրդները, արտասահմանյան մեր բարեկամները։ Սակայն հայերը քարերից միայն շենք չեն կառուցում։ Նրանք քարից ինչ ասես, որ չեն պատրաստում։ Տուֆից և պեմզայից, որոնցով հարուստ է Հայաստանը, ստացվում են բարձր որակի բետոն, ցեմենտ, ապակեգեն, թել...

ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական օգնության շնորհիվ



հրաշք տեղի ունեցավ նաև Հայաստանի գիտության և արդյունաբերության զարգացման բնագավառում։

Սովետական Հայաստանն առաջնակարգ արդյունաբերության հանրապետություն է, ուր սովետական իշխանության տարիներին կառուցվել է շուրջ 600 արդյունաբերական ձեռնարկություն, որտեղ աշխատում են 200 հազար բանվորներ։

Ստեղծվել և բուռն կերպով զարգացել են սոցիալիստական քաղաքներ, որոնք անցյալում չկային Հայաստանի քարտեզի վրա։ Նախկին Ղարաքիլիսան (այժմ Կիրովական) դարձել է մեծ քիմիայի կենտրոն, ուր արագ թափով զարգանում են նաև մեքենաշինությունը, տեքստիլ, կոշիկի արդյունաբերությունը։

Չարենցավանն արտադրում է դազգահներ և արտահանում ՍՍՀՄ բազմաթիվ հանրապետություններ։ Հյուրերը, երբ այցելում են Հայաստան և մոտիկից ծանոթանում արդյունաբերության արտադրանքի հետ, հաճախ հարցնում են. «Հանրապետությունում արդյունաբերության ո՞ր ճյուղն է համարվում առաջատար»։ Այդ հարցին տրվում են տարբեր պատասխաններ։ Ոմանք ասում են, թե հանրապետության արդյունաբերության մեջ առաջին ջութակը գտնվում է մեքենաշինարարների ձեռքում։ Այդ, իհարկե, ճիշտ է։ Այժմ Հայաստանի արդյունաբերության պարծանքը «Նաիրի» հաշվիչ մեքենան է, որը Լայպցիգի տոնավաճառում զարմանք պատճառեց համաշխարհային հանդիսատեսին։

Ուրիշները հաստատում են, որ դազգահաշինությունը հանրապետության առաջատար ճյուղն է։ Իրազեկ մարդիկ այդ պատասխանը նույնպես ճիշտ են համարում, քանի որ ՍՍՀՄ-ում պատրաստվող 10 հազարից ավելի դազգահներից 3 հազարը արտադրվում է Հայաստանում։ Իսկ մյուսները գտնում են, որ Հայաստանի արդյունաբերության գլխավոր ճյուղը պետք է համարել սարքաշինությունը և էլեկտրոնիկան։

Այդ նույնպես ճիշտ է։

Հանրապետությունում ստեղծվում են հաշվիչ բարդ մեքենաներ, որոնցով ստեղծագործ մարդիկ իրավունք ունեն

հպարտանալու։ Սակայն մասնագետներն ասում են, որ այդ բոլոր պատասխանները ճիշտ լինելով հանդերձ, չի կարելի մոռանալ քիմիական արդյունաբերությունը, գունավոր մետալուրգիան, էլեկտրաարդյունաբերությունը։ Հայաստանի էլեկտրակայանները մեկուկես անգամ ավելի էլեկտրաէներգիա են արտադրում, քան ամբողջ ցարական Ռուսաստանը 1913 թվականին։ Պղինձ, մոլիբդեն, ալյումին, հաշվողական մեքենաներ, ավելի... այս ամենն առանձին չափ են տալիս Սովետական Հայաստանի արդյունաբերությանը։ Ավելի քան չորս տասնամյակների ընթացքում Հայաստանի արդյունաբերությունն աճել է 120 անգամ և այժմ հանրապետությունում արտադրվում է բարձրորակ արտադրանք, որը հրապուրում է արտասահմանյան շատ երկրների։ ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը և համագործակցությունը զարգացնելու գործում հայ ժողովուրդն իր համեստ ավանդն է ներդնում։ Այդ ամենից առաջ արտահայտվում է նրանով, որ Հայաստանը տնտեսական բազմազան սերտ կապեր և համագործակցություն է ստեղծել բոլոր հանրապետությունների հետ։ Տնտեսական այդ սերտ կապերը կոմունիստական շինարարության պրոցեսում անընդհատ զարգանում և կատարելագործվում են։

Հայաստանը միութենական հանրապետություններ, հեռավոր մարզեր, ազգային օկրուգներ է ուղարկում պղինձ, կոնյակ, պահածոներ, ժամացույցներ, մոլիբդեն, պղնձյա կոմպրեսորներ, շարժական էլեկտրակայաններ։ Միայն վերջինիս արտադրությամբ Հայկական ՍՍՀ-ն միութենական հանրապետությունների մեջ գրավում է երկրորդ տեղը։

Հայաստանի արդյունաբերության արտադրանքը արտահանվում է արտասահմանյան 73 երկիր, մի բան, որի մասին անցյալում երազել անգամ հնարավոր չէր։ Միայն սովետական իշխանությունը, ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական օգնությունը հայ ժողովրդին պատմական կարճ ժամանակամիջոցում բարձրացրին զարգացման աներևակայելի աստիճանի։

Սովետական Հայաստանի կուլտուրական կապերը բոլոր ժողովուրդների հետ և նրա գործունեությունը՝ աշխարհում



երկարատև խաղաղության հաստատելու համար, հսկայական չափով ընդարձակվել են։ Հայաստանի գիտնականները, երաժիշտները, բանաստեղծները, նկարիչները, ճարտարապետներն իրենց ստեղծագործություններով գրավել են աշխարհի ուշադրությունը։ Նրանց գեղարվեստական ստեղծագործությունները, գիտական հետազոտությունները, հայտնագործությունները տեխնիկայի բնագավառում ստացել են ոչ միայն միութենական, այլև համաշխարհային ճանաչում։ Սովետական Հայաստանի աստղագետները, մաթեմատիկոսները, ֆիզիկոսները, մեխանիկները, կենսաբանները գիտության մեջ նոր հորիզոններ են բացել և այդ հիման վրա ամրապնդվել ու ծավալվել են Սովետական Հայաստանի կապերն աշխարհի բազմաթիվ ժողովուրդների ու երկրների հետ։ Հայ գիտնականները զեկուցումներով հանդես են եկել միջազգային կոնգրեսներում, Փարիզի, Լոնդոնի, Նյու-Յորքի, Կահիրեի, Բեյրութի և այլ քաղաքների ուսանողական լսարաններում։ Արտասահմանյան բազմաթիվ երկրների պատվիրակություններ և առանձին նշանավոր գիտնականներ, արվեստի և գրականության գործիչներ հաճախակի են այցելում Սովետական Հայաստան ու հանգամանորեն ծանոթանում քիմիայի, ռադիոտեխնիկայի, էլեկտրոնիկայի, աստղագիտության տեսական հետազոտությունների հետ։

Լենինյան միջազգային մրցանակաբաշխության դափնեկիր, ամերիկյան նկարիչ Ռոքուել Քենթը, լինելով Սովետական Հայաստանում, ծանոթացավ երկրի տնտեսությանն ու կուլտուրային, նրա ստեղծագործ մարդկանց հետ և ասաց. «Այն հոյակապ աշխատանքը, որ կատարվում է Սովետական Հայաստանում, արդյունք է մեծ տաղանդների, ժողովուրդների փոխօգնության... Եթե ինձ հարցնելու լինեն, թե աշխարհում „որտե՞ղ" կարելի է ամենից շատ հրաշքներ տեսնել, ես կասեմ՝ Հայաստանում»։

Անգլիական նշանավոր գրող Ջեյմս Օլդրիջը մեծ հիացմունքով է խոսում հայ ժողովրդի տնտեսական և կուլտուրական հաջողությունների մասին։

Հայ կոմպոզիտորները, երգիչները, երաժիշտները, նկարիչները իրենց ստեղծագործություններով մեծապես նպաս-

տում են ՍՍՀՄ ազգերի ու ազգությունների համագործակցության և բարեկամական կապերի հետագա զարգացմանը: ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում վիթխարի աշխատանք են կատարում հայ գրողները: Կոմունիստական շինարարության պրոցեսում հայ գրականությունը ստեղծում է նոր մարդու կերպարը, որը աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության համար մեծ նշանակություն ունի:

Հայ թատրոնը, որ ունի 2000 տարվա հարուստ անցյալ և հիանալի ներկա, իր բեմադրություններով նույնպես օգնում է ժողովուրդների բարեկամության համակողմանի զարգացմանը:

Սոցիալիստական աշխատանքի հերոս, ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը իր ստեղծագործական տաղանդով, բարձր արվեստով աշխարհի մարդկանց վրա թողել է անջնջելի տպավորություն: Հայ ժողովուրդն ամենայն իրավամբ հպարտանում է իր հարազատ զավակի՝ դարեր ապրող ժողովրդական մեծ արվեստով: Մարտիրոս Սարյանն իր հասարակական-քաղաքական գործունեությամբ ամրապնդում է ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական բարեկամությունը, պաշտպանում բոլոր ժողովուրդների միջև խաղաղության ստեղծելու գաղափարը:

Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը Բյուրականի աստղադիտարանով և գիտական հայտնագործություններով նոր քայլ է կատարում համաշխարհային գիտության զարգացման մեջ և նպաստում ժողովուրդների եղբայրության ու համագործակցության աննախընթաց զարգացմանը: Դրանով է բացատրվում աշխարհի շատ ժողովուրդների և գիտական հիմնարկների արտակարգ սերը և հարգանքը ակադեմիկոս Վ. Համբարձումյանի նկատմամբ: Նա պատվավոր անդամ է աշխարհի բազմաթիվ ակադեմիաների և գիտական հիմնարկների:

Կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները համաշխարհային լայն ճանաչում են գտել և հարազատ լինելով ՍՍՀՄ բոլոր ժողովուրդներին, ավելի են ամրապըն-





Բուլղարիայի մշակույթի տասնօրյակը Հայաստանում:
Նկարում — Բուլղարական ՍՍՀ պատվիրակությունը Հայաստանի ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսում

Հայաստանի աշխատավորները միշտ այսպես աղ ու հացով են դիմավորում իրենց հյուրերին





Հայկական մշակույթի օրերը Չեխոսլովակիայում: Ելույթ է ունենում Հայֆիլհարմոնիայի կամերային նվագախումբը

Ելույթ է ունենում Մոլդավական ժողովրդական պարի վաստակավոր անսամբլը





Հայկական ՍՍՀ կառավարական տուն

դում են սոցիալիստական հայրենիքի ժողովուրդների լենինյան բարեկամությունը։

ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Գոհար Գասպարյանը տարբեր ժողովուրդների երգերով հանդես է գալիս միութենական հանրապետություններում և աշխարհի շատ երկրներում, դրանով իսկ մերձեցնում սոցիալիստական կուլտուրան, ժողովուրդների մեջ սեր առաջացնում միմյանց նկատմամբ, ահա թե ինչու ամենուրեք նրան ընդունում են մեծ սիրով։

Հայ ժողովրդի ավագ զավակների կողքին վեր է բարձրանում սովետական կուլտուրայի և արվեստի երիտասարդ արվեստագետների մի հսկա բանակ, որը կոչված է ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան բարձրացնելու նոր, ավելի բարձր մակարդակի։ Այդ կապակցությամբ Մարտիրոս Սարյանը գրում է. «Ես տեսնում եմ, թե ինչպես հայ ժողովրդի ստեղծագործական աշխատանքը ՍՍՀՄ ժողովուրդների ընտանիքում յուրաքանչյուր տարի, ամիս, օր դառնում է ավելի արդյունավետ։ Հանդես է գալիս հայ մտավորականների նոր սերունդ, որը անսահման հավատարիմ է հարազատ կուլտուրայի ստեղծման գործին։ Այդ բոլորը լցնում են հոգու մեջ մեծ ուրախություն և հպարտության զգացմունքը»։

Հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական շինարարության հաջողությունները, նրա բարեկեցության հուժկու վերելքը հիմք հանդիսացան ավելի լայն մասշտաբի հայրենադարձության մանավանդ վերջին տարիներին։ Սովետական Հայաստանը դարձել է աշխարհով մեկ ցրված հայերի կենտրոնը, որը մագնիսի նման իրեն է ձգում հազարավոր մարդկանց։ Արտասահմանյան երկրներից հայրենիք վերադարձած հայ աշխատավորները սոցիալիզմի երկրում առաջին անգամ հնարավորություն ստացան բարձրագույն կրթություն ստանալու, զբաղվելու իրենց սիրած գործով և ակտիվորեն մասնակցելու երկրի հասարակական-քաղաքական կյանքին։ Նրանցից շատերը դարձել են նշանավոր գիտնականներ, գրականության, արվեստի անվանի գործիչներ։ Ներկայումս Սովետական Հայաստանի բնակչության

տասը տոկոսը հայրենադարձներ են, որոնք ՍՍՀՄ ժողովուրդ-ների միասնական ընտանիքում ակտիվորեն մասնակցում են կոմունիստական շինարարությանը։

Հայ ժողովուրդը եղբայրական բոլոր հանրապետություն-ների ժողովուրդների հետ միասին վստահ քայլերով գնում է դեպի կոմունիզմ։ Հայ ժողովուրդը կոմունիզմի այդ հաղթա-կան ճանապարհին բարձր է պահում ժողովուրդների բարե-կամության դրոշը։ Հայ բանաստեղծ Հրաչյա Հովհաննիսյա-նը «Զրույց ռուս բարեկամիս հետ» բանաստեղծության մեջ գրել է.

*Իմ ռուս բարեկամ, մեր գծից անդին*
*Այսօր էլ մեկ-մեկ լսվում է մի ձայն,*
*Որ մահացույց է կարդում մեր ուխտին*
*Ու մեր դաշինքին բարեկամության։*

*Մեր այս դաշինքը՝ անցած հուր ու ծով,*
*Արյամբ է պահվել, արյամբ է շաղվել,*
*Օրհնվել ծերերի սուրբ աղ ու հացով*
*Ու սերունդների սիրով շաղախվել։*

*Մեր այս դաշինքը հար ու շարունակ*
*Կռվի, կամքի, կայքի դարերում,*
*Քանի հիմավորոց այս արևի տակ*
*Հայ ժողովրդի սիրտն է բաբախում։*

Հայաստանը դարձել է վերածնված երկիր։ Հավերժական բարեկամությունը հայ ժողովրդի նշանաբանն է։ ՍՍՀՄ ժողո-վուրդների եղբայրական ընտանիքում աննկարագրելիորեն ներդաշնակ են հնչում հայկական պոեզիան ու երաժշտու-թյունը, նոր ներկերով է փայլում նկարչությունը, անդա-դրում աշխատում են գիտնականները,— ահա ձեզ Սովետա-կան Հայաստանն իր առօրյայով՝ կոմունիզմի կառուցման համար մղվող մեծ արշավանքում։

# Թուրքմենական ՍՍՀ






Թուրքմենական ՍՍՀ մայրաքաղաք Աշխաբադ։ Մայիսմեկյան փողոցը

## 14. ՍՈՎԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԵԾ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԾԱՂԿՈՒՄ Է ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԸ

Թուրքմենական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը գտնվում է Միջին Ասիայի հարավ-արևմտյան մասում։ Նրա տերիտորիան կազմում է 488 հազար քառակուսի կիլոմետր[1]։ Թուրքմենական ՍՍՀ-ի արևմտյան ափերը ողողում է Կասպից ծովը, հարավում սահմանակից է Իրանին և Աֆղանստանին, հյուսիսում և արևելքում Ամու-Դարյա գետով՝ Ուզբեկական ՍՍՀ-ին, հյուսիսում՝ մասամբ նաև Ղազախական ՍՍՀ-ին։

Թուրքմենական ՍՍՀ-ն ունի 2 միլիոն ազգաբնակչություն, որի 54 տոկոսը բնակվում է գյուղական վայրերում, իսկ 46 տոկոսը՝ քաղաքներում և քաղաքատիպ ավաններում։ Հանրապետության մայրաքաղաքը Աշխաբադն է, որն ունի 250 հազար բնակչություն։ Հանրապետությունում բնակվում են թուրքմեններ, ռուսներ, ուզբեկներ, ղազախներ, հայեր։ Սովետական իշխանության տարիներին Թուրքմենստանի ազգաբնակչությունը աճել է 1,8 անգամ։ Սովետական Թուրքմենստանում կան 14 քաղաքներ և 64 քաղաքատիպ ավաններ[2]։

Անցյալում ճանապարհորդները և երկիրը հետազոտելու եկածները նկարագրել են Թուրքմենստանը որպես մի երկիր, ուր տիրել է սովը, աղքատությունը, մեծ չափերով տարածված էին հիվանդությունները։ Թուրքմենական ժողովուրդը դարերի ընթացքում եղել է խավարի ու տգիտության մեջ։ Ֆեոդալական մասնատվածությունը և գաղութային ճնշումը ժողովրդին կանգնեցրել էր ֆիզիկական կործանման առաջ։

Ցարիզմն իր գաղութատիրական քաղաքականությամբ Միջին Ասիայի ժողովուրդներին պահեց տնտեսական, քաղաքական և կուլտուրական հետամնացության մեջ։ Նախահեղափոխական թուրքմենական գյուղում տեղական բնակիչներից գրագետ մարդ գտնելը դժվար բան էր։ «Եթե այս հողի

[1] СССР в цифрах в 1967 году, стр. 7.

[2] Հ. Ալլայարով, Թուրքմենստանը սովետական ժողովրդի եղբայրական ընտանիքում, Ա., 1967, էջ 3—4։

վրա հրաշք չկատարվի,— գրել են հետազոտողները,— այս թուրքմենները կկործանվեն։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը հրաշք կատարեց թուրքմենական հողի վրա։ Նա թուրքմեն ժողովրդին փրկեց ֆիզիկական ոչնչացումից[1]։ Թուրքմենստանը կալվածատիրական կարգից սոցիալիստական վերափոխումներին հասել է՝ անցնելով դժվարին, բայց հերոսական ուղի։

1924 թ. հոկտեմբերի 27-ին կազմվեց Թուրքմենական ՍՍՀ-ն։ 1925 թ. փետրվարի 14-ին տեղի ունեցավ համաթուրքմենական խորհուրդների համագումարը, որի աշխատանքներին մասնակցեց Մ. Ի. Կալինինը։ Համագումարը որոշեց Թուրքմենական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը կամավոր կերպով ՍՍՀՄ կազմի մեջ մտնելու հարցը։ Համագումարի այդ որոշումը 1925 թ. մարտին ՍՍՀՄ խորհուրդների երրորդ համագումարը քննարկեց և որոշեց Թուրքմենական ՍՍՀ ընդունել ՍՍՀՄ կազմում, որով նրա տնտեսության և կուլտուրայի զարգացման համար լայն հնարավորություններ և պայմաններ ստեղծվեցին։

Թուրքմենական ՍՍՀ-ի առաջ խնդիր դրվեց՝ արագ կերպով հաղթահարել երկրի տնտեսական ու կուլտուրական հետամնացությունը և կարճ ժամանակամիջոցում հասնել սովետական երկրի եղբայրական մյուս հանրապետություններին, նրանց հետ միասին ընթանալ սոցիալիզմի ուղիով։

Դրա համար, ամենից առաջ, անհրաժեշտ էր Թուրքմենստանում ստեղծել արդյունաբերություն։ Սակայն թուրքմենները միայն իրենց միջոցներով և հնարավորություններով չէին կարող պատմական կարճ ժամանակամիջոցում լուծել այդ դժվարին խնդիրը։

Երկրի ինդուստրացումն իրականացնելու և փաստական անհավասարությունը վերացնելու համար պահանջվում էր ստեղծել սոցիալիզմի նյութատեխնիկական բազա և պատրաստել որակյալ կադրեր։

[1] Подготовка и проведение Великой Октябрьской социалистической революции в Туркменистане. Сб. документов, Ашхабад, 1954.



Թուրքմեն ժողովրդին եղբայրական օգնություն ցույց տվեցին ՍՍՀՄ բոլոր ժողովուրդները։ Սովետական կառավարությունը համամիութենական բյուջեից խոշոր գումար բաց թողեց թուրքմենական ժողովրդին՝ հանրապետության ինդուստրացման համար[1]։ Ռուս մեծ ժողովուրդն առաջինը մեկնեց իր եղբայրական օգնության ձեռքը և Թուրքմենստան ուղարկեց ինժեներա-տեխնիկական բարձրորակ աշխատողներ, տրամադրեց սարքավորում, մեքենաներ, մեխանիզմներ։ Ռուսաստանից Թուրքմենստան փոխադրվեցին արդյունաբերական մի քանի ձեռնարկություններ։ Այսպես, օրինակ՝ 1925 թվականին Մոսկվայի մոտ գտնվող Ռեուտովյան մանածագործարանն ամբողջովին տրվեց Թուրքմենական Սովետական Հանրապետությանը[2]։ Սովետական բոլոր հանրապետություններում Թուրքմենստանի համար պատրաստվեցին ինժեներա-տեխնիկական կադրեր։

Սովետական Միության բազմազգ ժողովուրդների օգնությամբ Թուրքմենստանում առաջին հնգամյակի տարիներին կառուցվեցին 90 արդյունաբերական ձեռնարկություններ[3], որոնք կարևոր նշանակություն ունեցան հանրապետության տնտեսության հետագա զարգացման համար։ Երկրորդ հնգամյակի տարիներին բուռն կերպով զարգացավ հատկապես նավթի և քիմիայի արդյունաբերությունը։ Հետագա հնգամյակների տարիներին Թուրքմենստանում արմատական փոփոխություններ կատարվեցին։ Հաղթանակեց սոցիալիստական ինդուստրացման լենինյան քաղաքականությունը։

Սովետական իշխանության տարիներին Թուրքմենական ՍՍՀ-ում արագ կերպով զարգացան նավթի, քիմիական, գազի, թեթև և սննդի արդյունաբերության բազմաթիվ ճյուղերը։

[1] **Б. Л. Пальванова,** Образование и развитие Туркменской ССР, Ашхабад, 1954, стр. 84.

[2] *Տե՛ս* «Известия» АН Туркм. ССР, Ашхабад, 1957, № 5, стр. 18.

[3] **А. Артыков,** Промышленность Туркменской ССР за 25 лет, Ашхабад, 1950, стр. 20.

Թուրքմենստանի նավթագործները յուրաքանչյուր տարի արտադրում են ավելի քան տասը միլիոն տոննա նավթ¹, իսկ ընթացիկ հնգամյակի վերջում այն զգալի չափով ավելանալու է։

Թուրքմենստանը հարուստ է նաև բնական գազով։ Երկրաբանների հաշիվներով հանրապետության տերիտորիայում գոյություն ունի 6 տրիլիոն խոր. մետր կապույտ կրակ։ Թուրքմենստանի գազը օգտագործվում է Սովետական Միության մի քանի շրջաններում։ ՍՍՀՄ ժողովուրդների մեծ ընտանիքում Թուրքմենստանն արդյունաբերական արտադրանք սպառող երկրից դարձել է հզոր արդյունաբերության հանրապետություն։

Կոմունիստական շինարարության տարիներին Սովետական Թուրքմենստանը լայն չափով արդյունաբերական արտադրանքի փոխանակում է կատարում եղբայրական բոլոր հանրապետությունների հետ։ Նա արտահանում է մեծ քանակությամբ բամբակ, նավթ ու նավթամթերքներ, մետաղի հումք, կարակուլ։ Այսօր նա դարձել է տեքստիլ, մեքենաշինական և մորթու արդյունաբերության կարևոր կենտրոն[2]։

Սովետական երկրի մի շարք շրջաններ է արտահանվում թուրքմենական հանրապետության մեքենաշինական արդյունաբերության արտադրանքը, որը ցույց է տալիս, թե ինչպես սոցիալիզմի հաղթանակի շնորհիվ թուրքմենական ժողովուրդը ո՛չ միայն հաղթահարել է իր տնտեսական ու կուլտուրական հետամնացությունը, լիկվիդացրել է փաստական անհավասարությունը, այլև երկրի եղբայրական մյուս հանրապետությունների կողքին, որպես ՍՍՀՄ ժողովուրդների մեծ ընտանիքի լիիրավ անդամ, ակտիվորեն մասնակցում է կոմունիզմի կառուցմանը։ Նա իր արդյունաբերության արտադրանքը արտահանում է Լեհաստան, Հունգարիա, Չեխոսլովակիա, Կուբա, Վիետնամ, Գերմանական Դեմոկրա-

[1] «Туркменская искра», 12 октября 1967.

[2] Очерки истории Коммунистической партии Туркменистана, 1965, Ашхабад, стр. 761—763.



տական Հանրապետություն և դրանով իսկ մասնակցում սոցիալիզմի երկրների զարգացման կարևոր գործին։

Սովետական իշխանության տարիներին հսկայական չափով զարգացավ Թուրքմենստանի գյուղատնտեսությունը։ Ներկայումս հանրապետության կոլտնտեսություններում և սովխոզներում աշխատում են հազարավոր տրակտորներ, հացահատիկահավաք կոմբայններ, բամբակահավաք մեքենաներ, բեռնատար ավտոմեքենաներ[1]։

Գյուղատնտեսության գլխավոր ճյուղը բամբակի մշակումն է, որի բերքի զգալի մասը հավաքվում է մեքենայով։ Թուրքմենստանի գյուղատնտեսության զարգացման համար կարևոր նշանակություն ունի ջրաշինարարական աշխատանքների ծավալումը։ Սովետական պետությունը հսկայական գումարներ է ներդնում հանրապետությունում ջրանցքներ կառուցելու համար։ Եղբայրական ազգային հանրապետությունների ջերմ օգնությամբ սովետական կառավարության կողմից սահմանված ժամկետում Թուրքմենստանում կառուցվեցին Կարակումի ջրանցքը՝ 800 կմ ընդհանուր երկարությամբ, Տաշխաուզի և Կույալինի ջրամբարները՝ 500 մլն խմ տարողությամբ։ Սարի-Յազինյան և Թեջենյան ջրամբարները բացառիկ նշանակություն ունեն հանրապետության գյուղատնտեսության զարգացման գործում։ Թուրքմենստանի ջրանցքների կառուցումը դարձել է համաժողովրդական գործ։ Այսպես, Կարակումյան ջրանցքի կառուցմանը մասնակցեցին Սովետական Միության 32 ազգերի ներկայացուցիչներ, 202 քաղաքներ այնտեղ ուղարկեցին շինարարական նյութեր, տեխնիկա[2]։ Կարակումյան ջրանցքի շինարարության մեջ իր ամբողջ վեհությամբ դրսևորվեցին ՍՍՀՄ բազմազգ ժողովուրդների լենինյան բարեկամության կենարար ուժը և սոցիալիստական համագործակցության հսկայական նշանակությունը։ «Համաշխարհային իռիգացիան իր պատմության

[1] Народное хозяйство Туркменской ССР. Статистический сборник, Ашхабад, 1967, стр. 14.

[2] Ջ. Ալլադատով, *Թուրքմենստանը սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում*, էջ 32—33։

ընթացքում,— գրել է ակադեմիկոս Ի. Ա. Ճարովը,— նշանակալից շատ հիդրոտեխնիկական կառուցումներ է ստեղծել: Սակայն դրանց մեջ Կարակումյան ջրանցքը իրավամբ հատուկ տեղ կգրավի: Իրոք, որ դա ոռոգման շինարարության պրակտիկայում մարդկային մտքի յուրահատուկ, եզակի ստեղծագործություն է, դա երկրագնդի անապատների հրաշքն է»[1]:

Սովետական կառավարության այս միջոցառումների շնորհիվ հսկայական չափով բարձրացավ Թուրքմենստանի գյուղատնտեսության արտադրությունը, մասնավորապես բամբակի բերքատվությունը: Թուրքմենստանում ժողովրդական փառքի են արժանացել հռչակավոր բամբակագործներ, որոնք բամբակի մշակման ժամանակ հմտորեն օգտագործում են տեխնիկան: Բամբակից բացի հանրապետությունում բարձր բերք է ստացվում նաև խաղողի, բանջարեղենի և այլ կուլտուրաների գծով: Զարգացվում է նաև անասնապահությունը:

Սովետական Թուրքմենստանի տնտեսության զարգացման հետ միասին հսկայական քայլեր են կատարվել նաև աշխատավորների կենցաղի ու կուլտուրայի բնագավառում: Հանրապետությունն ունի իր գիտությունների ակադեմիան, գիտահետազոտական մի շարք ինստիտուտներ, բարձրագույն ուսումնական հաստատություններ, միջնակարգ մասնագիտական և հանրակրթական դպրոցներ: Սովետական Թուրքմենստանում յուրաքանչյուր 10 հազար բնակչության ընկնող ուսանողների թիվը գերազանցել է Թուրքիային ավելի քան 9 անգամ, իսկ Իրանին՝ 25 անգամ: Հանրապետության 5 բուհերում սովորում է 23 հազար ուսանող: Ներկայումս հանրապետությունում լույս են տեսնում 30 թերթ, 69 մլն օրինակ տարեկան տպաքանակով, 33 անուն ամսագիր, գոյություն ունի 807 մասսայական գրադարան՝ 5 մլն օրինակ գրքային ֆոնդով[2]: Սովետական իշխանության մեծագույն հաջողություններից մեկը Թուրքմենստանում կանանց ազատագրումն է: Այժմ Սովետական Թուրքմենիայում կանայք

[1] Տե՛ս «Туркменская искра», Ашхабад, 17 мая 1959.

[2] Հ. Այրապետով, Թուրքմենստանը սովետական ժողովրդի եղբայրական ընտանիքում, էջ 39:



ակտիվ մասնակցություն են ունենում երկրի հասարակական-քաղաքական կյանքին: Թուրքմենստանի պետական համալսարանի ռեկտոր Բ. Պավլանովան հազարավոր երիտասարդների դաստիարակում է պրոլետարական ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների եղբայրական բարեկամության մեծ գաղափարներով: ՍՄԿԿ և սովետական կառավարության լենինյան ազգային քաղաքականությունը նոր հեռանկարներ են բացում Թուրքմենստանի ժողովրդի տնտեսության և կուլտուրայի զարգացման համար:

Հանրապետության ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում ամեն օր, ամեն ժամ զգացվում է ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական մեծ ընտանիքի օգնությունը: Սովետական Թուրքմենստանն իր բոլոր հաջողությունների համար պարտական է Լենինի կուսակցությանը, սովետական պետությանը, սոցիալիստական մեծ հայրենիքի եղբայրական բոլոր ժողովուրդներին:

ՍՍՀՄ ժողովուրդների մեծ ընտանիքում ծաղկում և օրավոր բարգավաճում է նրա իրավահավասար անդամներից մեկը՝ Սովետական Թուրքմենստանը:

# Էստոնական ՍՍՀ



Էստոնական ՍՍՀ մայրաքաղաք Տալլինը

## 15. ԷՍՏՈՆԻԱՆ ԴԵՊԻ ԿՈՄՈՒՆԻԶՄ Է ԳՆՈՒՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ԴՐՈՇՈՎ

*Էստոնական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը գտնվում է Բալթիկ ծովի ափին։ Հարավում նա սահմանակից է Լատվիական ՍՍՀ-ին, արևելքում և հարավ-արևելքում՝ Ռուսաստանյան ֆեդերացիային, հյուսիսում և արևմուտքում՝ Բալթիկ ծովին։*

*Էստոնական ՍՍՀ բնակչության թիվը 1,3 միլիոն մարդ է։ Հանրապետությունում ապրում են էստոնացիներ, որ կազմում են 75 տոկոս, ռուսներ՝ 20 տոկոս և Սովետական Միության գրեթե բոլոր ազգերի ներկայացուցիչներ։*

*Հանրապետության քաղաքներում է բնակչության 62 տոկոսը, որն ավելի բարձր է, քան միութենական որևէ այլ հանրապետությունում[1]։ Էստոնական ժողովուրդը բարդ և դժվարին ուղի է անցել։ Էստոնիայի բանվորներն ու գյուղացիները երկարամյա հեղափոխական պայքարի ավանդույթներ ունեն։ Հենվելով Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի վրա, նրանք դեռևս 1917 թվականին հաստատեցին սովետական իշխանություն[2]։ Սակայն իմպերիալիստական Գերմանիան արյան մեջ խեղդեց երիտասարդ սովետական իշխանությունը Էստոնիայում։ Այդ իշխանությունն իր գոյությունը պահպանեց միայն երեք ամիս։ 1918 թվականի վերջին[3] Էստոնիայում կրկին հաստատվեց ժողովրդական իշխանություն, որը ճնշվեց օտարերկրյա իմպերիալիստների օգնությամբ, և Էստոնիայում նորից*

[1] *Էստոնական ՍՍՀ տնտեսական և կուլտուրական շինարարության հարցերն իրենց գիտական լուսաբանումն են ստացել հատկապես Վ. Յու. Տարմիսաոյի, Լ. Ա. Տուլզի և Կ. Ա. Խալլիկի «Էստոնական ՍՍՀ էկոնոմիկայի և կուլտուրայի ծաղկումը սովետական իշխանության տարիներին» աշխատությունում, որը լույս է տեսել հայերեն լեզվով 1967 թվականին։ Տե՛ս վերը նշված աշխատության էջ 4—10։*

[2] *Տե՛ս* Великая Октябрьская социалистическая революция в Эстонии. Сб. документов и материалов, Таллин, 1958.

[3] *Տե՛ս* «История Эстонской ССР (с древнейших времен до наших дней)», Таллин, 1958.



*հաստատվեց բուրժուազիայի դիկտատուրան։ Էստոնիան դարձավ իմպերիալիստական երկրների կցորդը։ Այդ էստոնական ժողովրդի պատմության ամենամռայլ ժամանակաշրջանն էր, որովհետև իշխում էին սովը, աղքատությունը, գործազրկությունը։ Միայն 1940 թվականին էստոնական ժողովրդին հաջողվեց տապալել բուրժուական դիկտատուրան, ազատագրվել ներքին ու օտարերկրյա շահագործողների ծանր լծից և երկրում հռչակել սովետական իշխանություն։ Սովետական Էստոնիայի պատվիրակությունը 1940 թ. օգոստոսի 6-ին բերեց 1905 և 1917 թվականների հեղափոխական պայքարի դրոշները և ՍՍՀՄ Գերագույն սովետի սեսիային խնդրեց՝ Սովետական Էստոնիային ընդունել ՍՍՀՄ-ի կազմում։ ՍՍՀՄ Գերագույն սովետի սեսիան հարգեց էստոնական ժողովրդի խնդրանքը և նրան ընդունեց Սովետական Միության եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում՝ որպես նրա լիիրավ անդամ։ Էստոնական ժողովուրդը ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների միասնական շարքերում մարտնչեց գերմանական ֆաշիզմի դեմ։ 1944 թվականին Էստոնական ՍՍՀ-ն ազատագրվեց գերմանա-ֆաշիստական օկուպացիայից։ Հանրապետության ժողովրդական տնտեսությունն ու կուլտուրան ՍՍՀՄ եղբայրական ժողովուրդների օգնությամբ ու համագործակցությամբ սկսեց արագորեն զարգանալ։ Միութենական բյուջեից առանձնացվեց մեծ գումար և ներդրվեց էստոնական ՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ։ Այդ անշահախնդիր օգնությամբ Սովետական Էստոնիայի տնտեսությունը զարգացավ բարձր տեմպերով։ Ետպատերազմյան տարիներին Էստոնիան ագրարային երկրից վերածվեց առաջավոր ինդուստրիալ հանրապետության՝ մեքենայացված ու ինտենսիվ գյուղատնտեսությամբ, ժողովրդական բարձր արվեստով ու գրականությամբ։*

*ՍՍՀՄ ժողովուրդների օգնության և համագործակցության շնորհիվ Սովետական Էստոնիայի արդյունաբերական արտադրանքը հսկայական չափով աճել է։ Ներկայումս հանրապետության արդյունաբերությունը քսան օրվա ընթացքում*

թողարկում է նույնքան արտադրանք, որքան արտադրվել է ամբողջ 1940 թվականին[1]։ Հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման հիման վրա տեղի է ունեցել ազգային եկամտի աճը։ Այսպես, եթե ամբողջ ՍՍՀՄ-ում բնակչության մեկ շնչին ընկնող ազգային եկամուտն ընդունենք 100 տոկոս, ապա Սովետական Էստոնիայում այն կազմում է 120 տոկոս[2]։

Սովետական Էստոնիայում լայն զարգացում են ստացել էլեկտրամեքենաշինությունը, քիմիական, թղթի, թեթև և սննդի արդյունաբերությունը։ Հանրապետությունում մեծ պաշարներ կան մասնավորապես վառելիքային, էներգետիկ և քիմիական արդյունաբերության զարգացման համար։ Կոմունիստական շինարարության ժամանակաշրջանում արագ կերպով զարգացան մեքենաշինությունն ու մետաղամշակությունը։ Այդ ճյուղերի արտադրանքի տեսակարար կշիռը արդյունաբերական ընդհանուր արտադրության մեջ ներկայումս 50 տոկոսից էլ բարձր է[3]։ Հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ քիմիական արդյունաբերությունն առավել հեռանկարային ճյուղերից մեկն է։ Այդ բացատրվում է նրանով, որ Էստոնիայում այրվող թերթաքարերը բազա են հանդիսանում թերթաքարային-քիմիական արտադրանքի արդյունաբերության համար։ Այդ հիման վրա մոտակա տարիներին հանրապետության քիմիական արտադրանքի թողարկումը կաճի մի քանի անգամ։ Հսկայական չափով ընդարձակվել է հանրապետության էներգետիկ բազան։ Սովետական Էստոնիայում 1940 թվականի համեմատությամբ այժմ մի քանի անգամ ավելի էլեկտրաէներգիա է արտադրվել։

[1] Народное хозяйство Эстонской ССР. Статистический сборник, Таллин, 1967, стр. 13.

[2] «Советская Эстония», Таллин, 24 марта 1969.

[3] Советский Союз. Эстония. (Географическое описание в 22 томах), М., 1967, стр. 89—103.



Էստոնական ՍՍՀ արդյունաբերական արտադրանքի կարևորագույն տեսակներն ունեն հետևյալ պատկերը[1].

| Արտադրանքի անվանումը | 1913 | 1940 | 1950 | 1965 |
|---|---|---|---|---|
| Էլեկտրաէներգիա (մլն կվտ-ժամ) | 5,5 | 190 | 435 | 7103,7 |
| Թերթաքար (մլն տոննա) | — | 1,9 | 3,5 | 15,8 |
| Գազ (մլն խմ) | — | 1,7 | 173 | 515,4 |
| Էքսկավատորներ (հատ) | — | — | — | 880 |
| Պարարտանյութեր (հազ. տոննա) | — | — | 78 | 803,7 |
| Ցեմենտ (հազ. տոննա) | 115 | 70,9 | 90,6 | 675,7 |
| Թուղթ (հազ. տոննա) | 22,9 | 21,6 | 37,7 | 94,5 |
| Բամբակե գործվածքներ (մլն մ.) | 77,5 | 22,8 | 26,8 | 140,2 |
| Բրդյա գործվածքներ (մլն մ.) | 0,9 | 1,1 | 1,8 | 3,7 |
| Կանեփի գործվածքներ (մլն մ.) | — | 1,3 | 3,3 | 9,5 |
| Մետաքսե գործվածքներ (—»—) | — | 1.5 | 1 | 3,1 |
| Սպիտակեղեն (մլն հատ) | — | 1,3 | 1,7 | 7,1 |
| Վերնաշապիկ (—»—) | — | 0,2 | 0,4 | 2,5 |
| Կաշվե կոշիկ (մլն զույգ) | — | 0,6 | 1,2 | 5,7 |
| Պահածոներ (մլն պայմանական տուփ) | 0,3 | 3,6 | 9,5 | 95,6 |
| Միս (արդ. արտադրանք հազ. տոննա) | — | 16,7 | 8,8 | 65,1 |
| Կենդանական յուղ (արդ. արտադրանք հազ. տոննա) | — | 13,2 | 9,5 | 21,6 |
| Ձկան որս (հազ. տոննա) | 14 | 22,8 | 26,4 | 181,1 |

Կոմունիստական ծավալուն շինարարության ժամանակաշրջանում նոր հեռանկարներ են ստեղծվում Սովետական Էստոնիայի զարգացման համար։

Էստոնական ՍՍՀ-ն ունի զարգացած գյուղատնտեսություն։ Հանրապետության գյուղատնտեսության հիմնական ճյուղերն են բարձր կաթնատու տոհմական անասնապահությունը, խոզաբուծությունը, թռչնաբուծությունը և մեղվաբուծությունը։

Սովետական Էստոնիան ունի 150 սովխոզ, 30 այլ պետական տնտեսություններ և 470 գյուղատնտեսական արտել։ Հանրապետության գյուղատնտեսությունը մեքենայացված է։ Երկրի գյուղատնտեսության մեջ աշխատում են ավելի քան 30 հազար էլեկտրաշարժիչներ[2]։ Զարգացած արդյունաբերու-

[1] Союз Советских Социалистических Республик, стр. 634.

[2] «Советская Эстония», 26 мая 1967.

թյանն ու գյուղատնտեսությանը սպասարկում են տրանսպորտի երկաթուղային, ավտոմոբիլային, ծովային, օդային և խողովակաշար տեսակները։ Այժմ ավելի, քան երբեք, Սովետական էստոնիան տնտեսական սերտ կապեր ունի ՍՍՀՄ եղբայրական բոլոր հանրապետությունների հետ։ Ներկայումս հանրապետությունից դուրս է ուղարկվում նրա արտադրանքի 75 տոկոսը, որով էստոնական ժողովուրդը հազարավոր թելերով կապվում է Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ։ Էստոնական թուղթը, ձուկը, ձկան պահածոները, բամբակե և վուշե գործվածքները ուղարկվում են Սովետական Միության բոլոր հանրապետությունները, մարզերը և սոցիալիստական երկրները։

Միութենական հանրապետություններին և արտասահմանյան երկրներին Սովետական էստոնիան բավարարում է թեթև արդյունաբերության և սննդի արդյունաբերության արտադրանքի զգալի մասը[1]։

Սովետական Միության բոլոր հանրապետություններն իրենց հերթին եղբայրական օգնություն են ցույց տալիս Սովետական էստոնիային։ Եղբայրական հանրապետությունները էստոնիային մատակարարում են մետաղ, քարածուխ, նավթ, դազգահներ, տեքստիլ արդյունաբերության մեքենաներ, միրգ, պահածոներ, գինի, ցորեն, աղ, բրինձ, թեյ։ Այսպես, օրինակ, եղբայրական Ուկրաինական ՍՍՀ-ն էստոնիային մատակարարում է պարենային ապրանքներ, սև մետաղ, բուրդ։ ՌՍՖՍՀ ուղարկում է արդյունաբերական սարքավորում, ապրանքներ և քիմիական արտադրանք։ Ադրբեջանը, Վրաստանը, Հայաստանը, Մոլդավիան, Ուզբեկստանը, Կարելական Ինքնավար Հանրապետությունը ոչինչ չեն խնայում էստոնական ժողովրդին, և արվում է ամեն բան, որպեսզի ՍՍՀՄ ժողովուրդների մեծ ընտանիքում բարգավաճի, ծաղկի ու զարգանա էստոնական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը։

Սոցիալիստական ազգերի ու ազգությունների եղբայրա-

[1] Народное хозяйство Эстонской ССР, Статистический сборник, Таллин, 1967, стр. 17.



կան համագործակցության հրաշալի օրինակ են ցույց տալիս էստոնական և Հայկական հանրապետությունները։ Նրանք միմյանցից հազարավոր կիլոմետր հեռավորության վրա են գտնվում, սակայն այդ բնավ չի խանգարում նրանց տնտեսական ու կուլտուրական կապերի զարգացմանը, սոցիալիստական համագործակցությանը։

Սովետական էստոնիայի և Հայկական ՍՍՀ-ի միջև գոյություն ունի բազմազան ապրանքափոխանակություն։ Հայկական ՍՍՀ-ն էստոնիա է ներմուծում մետաղահատ ճշգրիտ հաստոցներ, տրանսֆորմատորներ, էլեկտրաշարժիչներ, ավտոմոբիլային պահեստամասեր, կաբելային արտադրանք, ավտոդողեր, կոնյակ, ծխախոտ, ժամացույցներ, գորգեր և շատ ուրիշ ապրանքներ։ Այդ ամենը հայ բանվորը պատրաստում է առանձին սիրով։ Նույնպիսի սիրով և երախտագիտության զգացումով ստեղծագործում է Սովետական էստոնիայի բանվոր դասակարգը։ էստոնական ՍՍՀ-ն Հայկական ՍՍՀ է արտահանում էլեկտրաշարժիչներ, բամբակյա գործվածքներ, ձկան պահածոներ, թուղթ, ռադիոընդունիչ և բազմաթիվ այլ ապրանքներ։ ՍՍՀՄ ժողովուրդների համագործակցությունը զարգանում է ո՛չ միայն տնտեսության, այլև կուլտուրական և քաղաքական բնագավառներում։ էստոնական ժողովուրդը նշանակալից հաջողությունների է հասել կուլտուրական շինարարության բնագավառում։ Սովետական իշխանության տարիներին ժողովրդի համար ստեղծվեցին բոլոր պայմանները, որպեսզի ունենա միջնակարգ ու բարձրագույն կրթության լայն ցանց, մի բան, որ չկար բուրժուական էստոնիայում։ Հանրապետության բոլոր դպրոցներում և ուսումնական հաստատություններում ներկայումս սովորում են 269,7 հազար մարդ, որից 213 հազար մարդ սովորում է հանրակրթական միջնակարգ դպրոցներում, 7,8 հազարը՝ պրոֆ-տեխնիկական ուսումնարաններում, 26,2 հազարը՝ տեխնիկումներում և միջնակարգ այլ դպրոցներում[1]։

Հանրապետության 6 բուհերում սովորում է 22,7 հազար

[1] СССР и Союзные Республики в 1967 году. М., 1968, стр. 299.

ուսանող։ Սովետական Էստոնիայի 10000 բնակչին ընկնում է ավելի քան 120 ուսանող, որոնք երկրի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում են 85 տարբեր մասնագիտությամբ[1]։

Սովետական Էստոնիան ունի իր գիտությունների ակադեմիան, որը հիմնադրվել է 1946 թվականին։ Հանրապետության 82 գիտահետազոտական հիմնարկներում աշխատում են չորս հազար գիտաշխատողներ։

Էստոնիայի ժողովրդի՝ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան, որն ունի խոր ժողովրդական հիմքեր և օժտված է դեմոկրատիզմով, տոգորված է պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարներով և բազմակողմանի կապերով ու համագործակցության ձևերով կապված է ՍՍՀՄ եղբայրական ազգերի ու ազգությունների կուլտուրայի հետ։ Էստոնական թատրոնը ստեղծագործական կապեր ունի եղբայրական հանրապետությունների թատրոնների հետ, սիստեմատիկաբար կատարվում է ռեպերտուարի փոխանակում։ Կոմունիստական շինարարության տարիներին հսկայական չափով ընդարձակվում է արվեստի ու գրականության համագործակցությունը սովետական բոլոր հանրապետություններում։ Սովետական Էստոնիան այս առումով ձեռք է բերել հրաշալի փորձ։ Նրա երաժշտական ու դրամատիկական թատրոնների ռեպերտուարներում կարևոր տեղ ունեն ռուսական, ուկրաինական, բելոռուսական, լատիշական, լիտվական, հայկական, ադրբեջանական, վրացական, ուզբեկական և մյուս ազգերի գրողների ստեղծագործությունները, որոնք նպաստում են ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը և ամբողջ սովետական կուլտուրայի հարստացմանը։ Այս տեսակետից չափազանց ուշագրավ գործունեություն է ծավալում էստոնական սովետական պարբերական մամուլը։ Նա ժողովրդական լայն զանգվածներին հաղորդեց սովետական իշխանության տարիներին ձեռք բերած եղբայրական ժողովուրդների թատերական արվեստի և գեղարվեստական գրականության նվաճումները։ Սովետա-

[1] Народное хозяйство Эстонской ССР, Статистический сборник, Таллин, 1968.



կան պարբերական մամուլը զգալի դեր խաղաց եղբայրական սովետական ժողովուրդների հետ էստոնական ժողովրդի մերձեցման գործում։

Ռուսաստանյան Ֆեդերացիայի, ինչպես և Լատվիայի, Լիտվայի, Հայաստանի ու Էստոնիայի կոմպոզիտորների ստեղծագործական համագործակցությունը խթան հանդիսացավ սովետական կուլտուրայի զարգացմանը։ Դրա լավագույն օրինակներից մեկը այն է, որ էստոնական ժողովրդի երաժշտությունը դուրս է եկել ազգային սահմաններից և վաստակել սոցիալիստական բոլոր ազգերի սերը։ Սովետական ժողովրդի սոցիալիստական կուլտուրայի նվաճումների մասսայականացման և հարստացման գործում նշանակալից ծառայություններ ունի Սովետական Էստոնիայի տղամարդկանց պետական ակադեմիական երգչախումբը։ Ստեղծագործական կոլեկտիվը կատարում է Սովետական Միության բոլոր ժողովուրդների երգերը։ Երգչախումբը հանրապետությունից դուրս, Սովետական Միության բազմաթիվ քաղաքներում տվել է բազմաթիվ համերգներ միշտ վերածվելով ժողովուրդների բարեկամության ցույցի։ ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության զարգացմանը մեծապես նպաստում են սովետական նկարիչների ստեղծագործություններին նվիրված ցուցահանդեսները, որոնք դիտում են միլիոնավոր մարդիկ։ Սովետական Էստոնիայում սիստեմատիկաբար կազմակերպվում են Ուկրաինայի, Հայաստանի, Վրաստանի, Ուզբեկստանի և եղբայրական մյուս հանրապետությունների նկարիչների գործերի ցուցահանդեսները։

Ժողովուրդների բարեկամությունը և համագործակցությունը միութենական հանրապետությունների արվեստը և գրականությունը դուրս են բերում լայն ասպարեզ և ուղիներ մշակում նրանց հետագա համակողմանի զարգացման համար։ Ժողովուրդների բարեկամության թեման միշտ գրավել է սովետական արվեստի ու գրականության գործիչների ուշադրությունը։

Կոմունիզմի համար մղվող պայքարում ամեն օր, կյանքի ու աշխատանքի բազմաթիվ բնագավառներում ցեմենտվում

և ամրապնդվում է Սովետական Միության բազմազգ ու միաձույլ ժողովուրդների լենինյան բարեկամությունը։

Ներկայումս Սովետական Միությունը և նրա անբաժանելի մաս կազմող յուրաքանչյուր միութենական հանրապետություն ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության և համագործակցության հիման վրա հասել են զարգացման այնպիսի մակարդակի, որի մասին անցյալում երազել անգամ հնարավոր չէր։ Զարգացման ներկա պրոցեսում ՍՍՀՄ բոլոր իրավահավասար ազգերը միաձույլ կերպով կառուցում են նոր հասարակարգը, որն ունի միասնական սոցիալիստական հիմք։ Հավասար չափով բավարարվում են յուրաքանչյուր ժողովրդի նյութական ու հոգևոր պահանջմունքները, ընդհանուր շահերով ժողովուրդները միավորված են լենինյան մեծ ընտանիքում և համերաշխ ապրում ու աշխատում են ՍՍՀՄ-ում, որի նմանը մարդկային հասարակության պատմությունը ո՛չ տեսել, ո՛չ էլ կարող է տեսնել կապիտալիստական աշխարհում։

Արդի էտապում ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների ջանքերն ու ստեղծագործական ուժերը ի սպաս են դրված կոմունիզմի նյութատեխնիկական բազայի կառուցման գործին։

Կյանքը պերճախոս կերպով հաստատեց, որ սովետական ամեն մի հանրապետություն այսուհետև ևս կարող է ծաղկել, բարգավաճել, տնտեսապես ավելի ամրապնդվել միայն ՍՍՀՄ եղբայրական բազմազգ ժողովուրդների մեծ ընտանիքում։

Սովետական երկրի աննախընթաց զարգացման պատմությունը ցույց է տալիս, թե ինչպես օրավուր աճում է յուրաքանչյուր սովետական հանրապետության ավանդը կոմունիստական շինարարության ընդհանուր գործում։

# IV

## ՍՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈԳԵՇՆՉՈՂ ՕՐԻՆԱԿ Է ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Սովետական ժողովրդի տիտանական աշխատանքը, նրա լենինյան հավերժական բարեկամությունը և սոցիալիստական համագործակցությունը ոգեշնչող օրինակ են հանդիսանում սոցիալիստական բոլոր ազգերի և ողջ աշխարհի մարդկության համար։ ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական բարեկամությունն աշխարհի առաջադիմական բոլոր մարդկանց դրոշն է իմպերիալիզմի լծից ազատագրության համար մղվող պայքարում։

ՍՍՀՄ կազմի մեջ մտնող բոլոր ազգերի ու ազգությունների բարեկամությունը և համագործակցությունը քաղաքական, տնտեսական և կուլտուրական շինարարության բնագավառներում հսկայական բարերար ազդեցություն են գործում առաջադեմ մարդկանց գիտակցության վրա և աշխարհի բոլոր երկրների աշխատավորների սերն ու հարգանքն են նվաճում, նրանց ավելի ու ավելի համոզելով, որ միայն սոցիալիզմի պայմաններում են հնարավոր իրականացնել բոլոր ազգերի լրիվ ազատագրումը և իրավահավասարությունը,

ապահովել անկախության, ազգային կուլտուրայի, ժողովրդական զանգվածների ամբողջ ուժերի ծաղկումը և տաղանդների ունակությունների զարգացումը։

## 1. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի մեջ մտնող սոցիալիստական պետությունները և ժողովուրդները Սովետական Միության օրինակով ընթանում են սոցիալիզմի և կոմունիզմի ուղիով։ Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի երկրներն ու նրանց ժողովուրդներն ունեն միասնական շահեր ու նպատակներ, որոնք սոցիալիզմի համար մղվող պայքարում առատորեն օգտագործում են ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքի ուսանելի փորձը, սոցիալիզմի կառուցման օրինաչափությունները։ Սոցիալիզմի համաշխարհային սիստեմը իմպերիալիզմի լծից ազատագրված երկրների տնտեսական ու քաղաքական հարաբերությունների նոր տիպ է, որի հետագա զարգացման համար հսկայական նշանակություն ունեն անկեղծ ու հավատարիմ բարեկամությունը, բազմակողմանի աջակցությունը և սոցիալիստական համագործակցությունը։

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի երկրների շահերը պահանջում են նոր աստիճանի բարձրացնել սոցիալիստական հասարակության արտադրողական ուժերը, որոնք, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, ապագայում մշակելու են համաշխարհային կոմունիստական տնտեսության ստեղծման տենդենցները և նպաստելու նրա զարգացմանը։ Հաղթանակած աշխատավորության այդ տնտեսությունը միասնական պլանով կարգի կբերի և կզարգացնի՝ պահպանելով բոլոր ազգերի համագործակցությունը։ Այդ վեհ գաղափարի կենսագործումը և աշխարհի բոլոր ժողովուրդների շահերը պահանջում են անընդհատ զարգացնել և ամրապնդել սոցիալիզմի համաշխարհային սիստեմը։ Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների կոմունիստական ու բանվորական կուսակցությունները միացյալ ուժերով և սերտ



համագործակցությամբ ջանում են քաղաքական, տնտեսական և կուլտուրայի բնագավառներում հետևողականորեն կենսագործել բազում խնդիրներ։ Այսպես, օրինակ, քաղաքական բնագավառում հիմնական նպատակն է համակողմանիորեն ամրապնդել համաշխարհային սոցիալիստական սիստեմը։ Իմպերիալիստական ամեն մի ագրեսիայի դեմ պայքարելու, ժողովուրդների համար երկարատև խաղաղություն ստեղծելու և կոմունիզմը կառուցելու նպատակով սոցիալիզմի համաշխարհային սիստեմի բոլոր երկրները կամավոր համագործակցության հիմունքներով զարգացնում և ամրապնդում են եղբայրական բարեկամությունը։ Սոցիալիստական ազգերի քաղաքական համագործակցությունը լայնորեն ընդարձակվում ու զարգանում է կյանքի բոլոր բնագավառներում և տալիս իր գոհացուցիչ արդյունքները։ Այդ գործում առաջատար դեր է խաղում սովետական երկիրը, որը մասնավորապես վերջին տարիներին հանդես եկավ մի շարք կարևոր նախաձեռնություններով։

Սովետական Միությունը և սոցիալիստական մյուս երկրները տնտեսական բնագավառում համագործակցությունն անընդհատ ընդարձակում են։ Վերջին քսան տարվա ընթացքում սոցիալիստական երկրների միջև հսկայական չափով ընդլայնվել է ապրանքաշրջանառությունը։ Ավելի հմտորեն են կոորդինացվում հեռանկարային տնտեսական պլանները, անընդհատ ամրապնդվում և կատարելագործվում է գիտատեխնիկական համագործակցությունը սոցիալիստական պետությունների միջև, որոնք բացառիկ նշանակություն ունեն սոցիալիզմի համաշխարհային սիստեմի հետագա զարգացման համար։ Այդ գործում կարևոր դեր են խաղում սոցիալիզմի հաղթանակներն ու նվաճումները, որոնք անխզելիորեն կապված են միջազգային հարաբերությունների հետագա բարելավման և կատարելագործման հետ։ Քաղաքական ու տնտեսական հարաբերությունների մեջ պահպանվում են սոցիալիզմի համաշխարհային սիստեմի սոցիալիստական բոլոր պետությունների ազգերի ու ազգությունների իրավահավասարությունն ու սուվերենությունը։ «Սոցիալիզմի ուղին բռնած երկրների մերձեցումը,— ասված է ՍՄԿԿ Կենտ-

կամի թեզիսներում,— սոցիալիստական համագործակցության մեջ նրանց համախմբումը համապատասխանում են ժողովուրդների արմատական շահերին, այն հիմնվում է սոցիալ-տնտեսական ու քաղաքական միատիպության, մարքս-լենինյան գաղափարախոսության միասնության վրա, իմպերիալիզմի դեմ, խաղաղության, դեմոկրատիայի ու սոցիալիզմի համար մղվող պայքարի խնդիրների ընդհանրության վրա։

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի գոյության ընթացքում դրվել է սոցիալիստական երկրների համագործակցության ամուր հիմքը, որի համար ոգեշնչող օրինակ հանդիսացան ժողովուրդների եղբայրությունն ու բարեկամությունը։

Սոցիալիզմի երկրների տնտեսական փոխօգնության խորհուրդը ստեղծվեց 1949 թվականի հունվարին։ Նա իր գոյության ընթացքում մեծ աշխատանք կատարեց սոցիալիզմի երկրների տնտեսական համագործակցության զարգացման բնագավառում։

Սոցիալիստական երկրների պետությունները ստեղծել են կոլեկտիվ տնտեսական, քաղաքական ու ռազմական համագործակցություն, որը կենսագործվում է տնտեսական փոխօգնության խորհրդի միջոցով, ինչպես և բազմաթիվ համատեղ խորհրդակցությունների, կապերի, Վարշավայի պայմանագրի և այլ միջոցառումներով։ Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի գոյության հիման վրա սոցիալիստական պետությունները իրենց համատեղ աշխատանքով միջազգային ասպարեզում կուտակել են համագործակցության և միացյալ գործողությունների ուսանելի փորձ, որը հսկայական բարեբար ազդեցություն է ունենում մարդկության համաշխարհային պատմության ընթացքի վրա։

Սովետական երկիրը, հավատարիմ մնալով ինտերնացիոնալիզմի գաղափարներին, սոցիալիստական երկրներին համակողմանի օգնություն է ցույց տալիս, նրանց տրամադրում է առաջին հերթին ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման իր հարուստ փորձը։

ՍՍՀՄ-ի փորձն ապացուցեց, որ միայն սոցիալիզմը կա-



րող է վերջ տալ մարդու շահագործմանը. նա բոլոր ազգերի ու ազգությունների համար ազատ ու իրավահավասար պայմաններ է ստեղծում և ապահովում նրանց խաղաղ շինարարական աշխատանքը, վերջ տալիս գործազրկությանը։ ՍՍՀՄ-ի փորձով մարդկությունը ստացավ ռեալ գոյություն ունեցող սոցիալիստական հասարակարգ, որն այժմ վճռական դեր է խաղում մարդկության ճակատագրերը որոշելու գործում։ ՍՍՀՄ-ի փորձը ապացուցեց, որ սոցիալիզմի ուղիով վաղ թե ուշ կընթանան աշխարհի բոլոր երկրների ժողովուրդները։

Համաշխարհային սոցիալիստական սիստեմի փորձը ցույց է տալիս, որ սոցիալիզմը բոլոր ազգերի ու ազգությունների համար ապահովում է իրավահավասարություն, տնտեսության և կուլտուրայի բարգավաճում, փոխադարձաբար շահավետ համագործակցություն, եղբայրական բարեկամություն, որոնք անհնար են բուրժուական աշխարհում։

Սոցիալիստական երկրների ժողովուրդները, հենվելով եղբայրական փոխօգնության վրա, լուրջ հաջողություններ են ձեռք բերել, որոնք է՛լ ավելի են ամրապնդում նրանց բարեկամությունը և համագործակցությունը։ Հենց այդ մասին է վկայում «Բարեկամություն» նավթամուղի ինտերնացիոնալ կառույցը, որի շինարարությունը կատարվեց ՍՍՀՄ, Չեխոսլովակիայի, Լեհաստանի, Հունգարիայի, Գերմանական Դեմոկրատական Հանրապետության միացյալ ուժերով։ 4500 կիլոմետր ձգվող խողովակները պատրաստել են ՍՍՀՄ և Լեհաստանի արդյունաբերական ձեռնարկությունները։ «Բարեկամություն» նավթամուղի միջոցով Վոլգայի ափերով սովետական բարձրորակ նավթը մատակարարվում է Լեհաստանի, Գերմանական Դեմոկրատական Հանրապետության, Չեխոսլովակիայի և Հունգարիայի ձեռնարկություններին։ Միայն 1965 թվականին ՍՍՀՄ-ից եվրոպայի սոցիալիստական երկրներին մատակարարվող նավթի արտահանումը ավելացել է հինգ անգամ։ Սոցիալիզմի երկրների արդի արդյունաբերության զարգացման համար կենսական նշանակություն ունի էներգետիկ և վառելիքի բազայի ստեղծումն ու նրա հետագա ընդլայնումը։

Այս կարևորագույն հարցի լուծման նպատակով կատար-

ված է տնտեսական փոխօգնության խորհրդի մեջ մտնող երկրների էլեկտրաէներգիայի և վառելիքի պահանջների նախնական հաշվառում։ Հաշիվները ցույց են տալիս, որ սոցիալիզմի երկրները 1960 թվականի 970 միլիոն տոննայի դիմաց 1980 թվականին պետք է արտադրեն 3400 միլիոն տոննա պայմանական վառելիք։ Էլեկտրաէներգիայի արտադրությունը աճելու է 9 անգամ։

Իրականացվել է Վ. Ի. Լենինի հայտնի ցուցումն այն մասին, որ համատարած էլեկտրիֆիկացվում է ո՛չ միայն առանձին երկիր, այլև միաժամանակ մոտակա մի շարք երկրներ, նրանց համար ստեղծելով էլեկտրաէներգիայի միասնական սիստեմ։ Այսպես, 1960 թվականին ավարտվեցին Լեհաստանի, ԳԴՀ-ի, Չեխոսլովակիայի և Հունգարիայի էներգետիկ միասնական սիստեմի ստեղծման աշխատանքները։ Սոցիալիզմի երկրների միացյալ ցանցերով օրավուր ծավալվում է արդյունաբերական ձեռնարկությունների շինարարությունը։ Լեհաստանի հարավ-արևմտյան մասում՝ Տուրոշուվում կառուցվում է վառելիքա-էներգետիկ կոմբինատ։ ԳԴՀ-ում, Լեհաստանում և այլ երկրներում միացյալ ուժերով կառուցվում են կարևորագույն գործարաններ ու ֆաբրիկաներ, որոնք հենց այժմվանից նշանակալից դեր են խաղում համաշխարհային սոցիալիստական սիստեմի երկրների ժողովուրդների համագործակցության և բարեկամության զարգացման գործում։

1965 թվականին Հունգարիայի, Լեհաստանի, Չեխոսլովակիայի և սոցիալիզմի մյուս երկրների միջև կնքվեց համագործակցության պայմանագիր, որով ներկայումս լուծվում են տնտեսական ու քաղաքական մի շարք կարևոր պրոբլեմներ։ ՍՍՀՄ եղբայրական օգնությամբ Ռումինիայում, ԳԴՀ-ում, Չեխոսլովակիայում և Լեհաստանում կառուցվում են գործարաններ, որով է՛լ ավելի են ամրապնդվում սոցիալիզմի երկրների տնտեսական ու քաղաքական կապերը։

ՍՍՀՄ-ի օրինակով սոցիալիզմի երկրները միմյանց հետ ընդարձակում են առևտրական և տնտեսական համագործակցությունը, փոխօգնությունը։ Չեխոսլովակիայում 1966 թվականին քիմիական արդյունաբերության համար ար-



տադրվող արտադրանքը աճեց 31,5, իսկ տեքստիլ արդյունաբերությունը՝ 13,2 տոկոսով։ Հունգարիայում դազգահների և կապի միջոցների արտադրությունն աճեց 24, նավթամշակման գործիքները՝ 59, իսկ քիմիական արդյունաբերության համար արտադրվող մեքենաների արտադրությունը՝ 41 տոկոսով[1]։

Սոցիալիզմի երկրների համագործակցության զարգացման շնորհիվ ընդարձակվում և ամրապնդվում է ժողովրդական տնտեսությունը։ 1968 թվականին Բուլղարիան արտադրել է 15.600 միլիոն կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա։ Մարդիկ հարցնում են՝ այդ քի՞չ է, թե՞ շատ։

20 տարի առաջ այդ թիվը համարվում էր անհավատալի։ Իսկ այդ ժամանակաշրջանում էլեկտրաէներգիայի արտադրությունը երկրում աճեց 28 անգամ։ Միայն 1968 թվականի առաջին կեսին արտադրական հզորությունը աճեց ավելի քան 800 մեգավատ, և այդ այն ժամանակ, երբ 1948 թվականին երկրի բոլոր էլեկտրակայանների հզորությունը կազմում էր 145 մեգավատ[2]։

Սովետական Միության եղբայրական օգնությամբ Բուլղարիայում ստեղծվում է էլեկտրաէներգիայի խոշոր բազա։

ՍՍՀՄ-ի օգնությամբ Բուլղարիայում առաջին անգամ կառուցվում է ատոմային էլեկտրակայան։

Սովետական երկիրն այժմ տալիս է Բուլղարիայի ամբողջ էլեկտրաէներգիայի 66 տոկոսը։

Բուլղար ժողովուրդը դրա մեջ տեսնում է սոցիալիստական համագործակցության վիթխարի ուժը և այն բարձր է գնահատում։

Հունգարիայի ժողովրդական տնտեսությունում լայնորեն արմատավորվում է մեխանիզացիան։ Երկրի 60 զանազան վայրերում աշխատում են 215 մեքենա, որոնք հսկայական չափով օգնում են արդյունաբերության և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի ղեկավարման գործին։ Հունգարիայում 1968 թվականին շարք մտան 46 էլեկտրահաշվիչ

---

[1] «Внешняя торговля», 1967, № 5, стр. 18.

[2] «Правда», 31 августа 1968.

մեքենաներ։ Այժմ երկրում արտադրվում են զանազան տեխնիկական մեքենաներ, որոնք դարձել են ծառայողների, տնտեսագետների, ապրանքագետների օգնականները։ Այժմ լայն աշխատանք է կատարվում, որպեսզի մեքենաներով աշխատանք կատարվի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում։ Այդ ծրագրի կատարման համար Հունգարիայի ժողովրդին համակողմանի օգնություն են ցույց տալիս Սովետական Միությունը, Լեհաստանը, Բուլղարիան և սոցիալիստական մյուս երկրները։

Չեխոսլովակյան ժողովուրդը միշտ էլ տեսել է Սովետական Միության և եղբայրական մյուս հանրապետությունների օգնությունը։ ՍՍՀՄ-ի պլանային, տնտեսական և արտաքին առևտրի կազմակերպությունները բարեխղճորեն կատարում են իրենց պայմանագրային պարտավորությունները։ Սովետական Միությունից երկաթուղային տրանսպորտով բազմաթիվ գնացքներ են մեկնում Չեխոսլովակիա, որոնք տանում են ածուխ, հաց, բամբակ։ Խողովակներով ՍՍՀՄ-ից անընդմեջ ուղարկվում է նավթ և գազ։ 1968 թվականի օգոստոսին Մոսկվայում կնքվեց պայմանագիր, մի կողմից համամիութենական «Մաշինոիմպորտ» և մյուս կողմից Չեխոսլովակիայի «Պրագա Ինվեստ» տնտեսական միավորումների միջև, որի համաձայն 1969—1972 թվականներին ժողովրդական տնտեսության կարիքների համար մեծ քանակությամբ գազի մեքենաներ կարտադրվեն։ ՍՍՀՄ-ի և Չեխոսլովակիայի միջև տնտեսական համագործակցությունը միշտ էլ տեղի է ունեցել փոխադարձ շահավետության և հավասարության հիման վրա։ Համաձայնության հիման վրա սովետական արտաքին առևտրի կազմակերպությունները Չեխոսլովակիա են ուղարկում անհրաժեշտ քանակությամբ կենսական ապրանքներ։ Այսպես՝ 1956—1968 թվականներին սովետական երկիրը Չեխոսլովակիա է արտահանել 17 միլիոն տոննա հացահատիկ, շուրջ 700 հազար տոննա բամբակ, մոտ 70 հազար տոննա բուրդ, 51 միլիոն տոննա նավթ, 80 միլիոն տոննա հանքաքար, շուրջ 2 միլիոն տոննա պողպատ, 2,5 տոննա գլանվածք, 285 հազար տոննա պղինձ, ավելի քան 200 հազար տոննա ալյումին, 200 հազար տոն-



նա կապար, 170 հազար տոննա ցինկ, ինչպես և բազմաթիվ մեքենաներ, որոնք խիստ անհրաժեշտ են Չեխոսլովակիայի ժողովրդական տնտեսությանը։ Եթե այդ ապրանքները Չեխոսլովակիան գներ արտասահմանյան երկրներից, նա ըստիպված դրանց համար պետք է վճարեր շուրջ 3,5 միլիարդ դոլլար[1]։

«Ռուդե պրավո» թերթը հաղորդում է, որ տնտեսագետները հաշիվներ են կատարել, որի համաձայն սովետական մեկ տոննա նավթի համար Չեխոսլովակիայի «Սլովնաֆթ» կոմբինատը վճարել է 273,5 կրոն, իսկ Իրանից ստացվող մեկ տոննայի նույն կոմբինատը վճարել է 408,6 կրոն։ ՍՍՀՄ-ի և Չեխոսլովակիայի տնտեսական համագործակցությունը անընդհատ ընդարձակվում է, նպատակ ունենալով բարձրացնելու ժողովրդի կենսամակարդակը, ամրապնդելու սոցիալիզմի դիրքերը և ամբողջ սոցիալիստական սիստեմի համագործակցությունը։ Երկու ժողովուրդների բարեկամությունը և համագործակցությունը էլ ավելի ամրապնդվեցին Հայրենական մեծ պատերազմի տարիներին։ Ահա հազարավոր օրինակներից մեկը։ Սոկոլով գյուղը գտնվում է Խարկով քաղաքից ոչ շատ հեռու։ Նա արդի պատմության մեջ է մտել որպես Սովետական Միության և Չեխոսլովակիայի ժողովուրդների մեծ ու մարտական բարեկամության խորհրդանիշ։ Շուրջ 25 տարի առաջ Սոկոլով գյուղում սովետական բանակի մարտիկները և չեխոսլովակյան զինվորները փակեցին ֆաշիստական տանկերի ճանապարհը։ Այժմ այդ պատմական գյուղի բարձունքի վրա գտնվում է եղբայրական գերեզմանը, որի վրա ոսկե տառերով գրված է. «Կանցնեն դարեր, բայց Սովետական Միության ու Չեխոսլովակիայի զինվորների քաջագործությունները կմնան որպես հերոսական պայքարի օրինակ. նրանք իրենց արյունը կաթիլ առ կաթիլ թափեցին ֆաշիզմի դեմ մղված պայքարում»։

Սոկոլով գյուղի բարձունքի վրա կողք-կողքի թաղված են Սովետական Միության հերոսներ ռուս Գրիգորի Գոնչարովը և չեխ Օտակար Յարոշը։ Սոկոլով գյուղի միջնակարգ դպրոցը

[1] «Экономическая газета», № 36, 1968, стр. 2.

և Խարկովի փողոցներից մեկը կոչվում են Օտակար Յարոշի անունով։

Սոկոլով գյուղում ստեղծված է ՍՍՀՄ և ՉՍՀ բարեկամության թանգարան։ Թանգարանի պատվո գրքում կարդում ենք. «Թանկագին բարեկամներ, մեծ ուշադրությամբ ծանոթացանք Ձեր հրաշալի թանգարանի շատ արժեքավոր և պատմական նշանակություն ունեցող փաստաթղթերի հետ։ Սովետական Միության և Չեխոսլովակիայի հանրապետության ժողովուրդները անկեղծ բարեկամներ են, նրանց բարեկամությունը անհաղթ է»[1]։

Չեխոսլովակիայի աշխատավորները բարձր են գնահատում Սովետական Միության տնտեսական, կուլտուրական, քաղաքական և ռազմական օգնությունը։ Նրանք այդ օգնությունն իր ամբողջ ուժով զգացին 1968 թվականին, երբ սոցիալիզմի երկրների ուժերով ձախողվեցին իմպերիալիստական ռեակցիայի փորձերը և պաշտպանվեցին սոցիալիզմի նվաճումները Չեխոսլովակիայում։

Դարխանը բարեկամության քաղաք է,— այսպես են անվանում ժողովրդական Մոնղոլիայի աշխատավորները։ Մոնղոլիայի նոր, սոցիալիստական Դարխան քաղաքը ստեղծվել է Սովետական Միության, Լեհաստանի, Բուլղարիայի, Չեխոսլովակիայի եղբայրական օգնությամբ։ Նա այժմ երկրի արդյունաբերական կարևոր կենտրոններից մեկն է, որ 1968 թվականին երկրի ժողովրդական տնտեսության կարիքների համար արտադրվել է 750 հազար տոննա ածուխ, ավելի քան 100 միլիոն կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա։ Այդ երիտասարդ քաղաքի արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալը 1968 թվականին 1967 թվականի համեմատությամբ աճեց 45 տոկոսով[2]։

Սոցիալիզմի երկրների եղբայրական օգնությամբ առաջիկայում է՛լ ավելի արագ թափով է աճելու Դարխանը։ Այստեղ շուտով ավարտվելու և շահագործման են հանձնվելու մի շարք գործարաններ և ֆաբրիկաներ, որոնք է՛լ ավելի հզոր, է՛լ ավելի գեղեցիկ են դարձնելու բարեկամության քաղաք Դարխանը։

[1] Սոկոլով գյուղի թանգարանի նյութերը։

[2] «Известия», 31 августа 1968.



Այսպիսով, սոցիալիզմի համաշխարհային սիստեմի մեջ մտնող երկրների համագործակցությունն ու տնտեսական կապերն ամրապնդվում և զարգանում են, նոր պայմաններ և հնարավորություններ են ստեղծվում եղբայրական փոխօգնության սկզբունքի հետագա ընդարձակման համար։ Օրավուր լայնորեն զարգանում է ՍՍՀՄ և սոցիալիստական երկրների գիտատեխնիկական համագործակցությունը, որը զգալի չափով նպաստում է արդյունաբերության նոր ճյուղերի ստեղծմանը։ Միայն 1955—1965 թվականներին 38 միլիոն ռուբլու[1] արժողությամբ տեխնիկական նախագծեր և փաստաթղթեր են փոխանակվել սոցիալիստական երկրների միջև։ Մեծ նշանակություն է ստացել նաև գիտահետազոտական ինստիտուտների համագործակցությունը։ Սովետական երկրի աշխարհահռչակ մասնագետները մեծ օգնություն են ցույց տալիս սոցիալիստական երկրների մետալուրգիական, քիմիական, էներգետիկ արդյունաբերության կազմակերպման և զարգացման ասպարեզում։

ՍՄԿԿ XXIII համագումարը նշեց սոցիալիզմի համաշխարհային սիստեմի հետագա զարգացման և ամրապնդման ուղիները։ Նա հատուկ ուժով ընդգծեց, որ անհրաժեշտ է եղբայրական սոցիալիստական երկրներում անշեղորեն ամրապնդել սոցիալիստական հասարակարգը, իսկ դրա ամենից գլխավոր աղբյուրներից են այդ երկրների պետությունների ու ժողովուրդների համագործակցությունը և համերաշխությունը։ «Այդ համագործակցության զարգացումն ու խորացումը համապատասխանում են սոցիալիզմի ամբողջ համաշխարհային սիստեմի յուրաքանչյուր երկրի և միասին վերցրած բոլոր երկրների շահերին, նպաստում են մեր շարքերի համախմբմանը իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում»[2]։ Կուսակցության XXIII համագումարն անհրաժեշտ համարեց սոցիալիզմի բոլոր երկրների հետ այսուհետև զարգացնել գաղափարական-քաղաքական, տնտեսական, գիտա-տեխնի-

[1] «Внешняя торговля», 1967, № 5, стр. 18.

[2] ՍՄԿԿ XXIII համագումարի նյութերը, էջ 11։

կական համագործակցությունը և կուլտուրական կապերը, սովետական երկրի աշխատավորներին դաստիարակել եղբայրական ժողովուրդների բարեկամության և ինտերնացիոնալ համերաշխության ոգով։

Սոցիալիստական երկրների հետ Սովետական Միությունն ունի քաղաքական, տնտեսական և կուլտուրական բազմազան կապեր։ Դրա լավագույն արտահայտություններից մեկն այն է, որ մի քանի տարվա ընթացքում միայն տնտեսական փոխօգնության խորհրդի անդամ երկրների հետ ապրանքաշրջանառությունը կազմեց 8,5 միլիարդ ռուբլի։ Սոցիալիզմի երկրների տնտեսական համագործակցության զարգացման շնորհիվ փոխադարձ ձեռնտու պայմաններով իրագործվեցին արտադրության մասնագիտացման ու կոոպերացման կարևոր միջոցառումներ։ Այսպես, օրինակ, սոցիալիստական երկրների փոխադարձ համաձայնությամբ արտադրության մեջ ավելի քան 1200 տեսակի մեքենաների և սարքավորումների արտադրությունը մասնագիտացված են առանձին երկրներում։ Տնտեսական փոխօգնության խորհրդի անդամ երկրների համաձայնությամբ նավթամշակման սարքավորումները կենտրոնացված են ՍՍՀՄ-ում, Ռումինիայում և Չեխոսլովակիայում, իսկ ցեմենտի գործարանների սարքավորումների արտադրությունը՝ ԳԴՀ-ում։

Լեհաստանում կենտրոնացվել է շաքարի բոլոր տեսակի գործարանների սարքավորումների, գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը և այլն։

Սոցիալիստական ազգերի համագործակցության և փոխօգնության սկզբունքների հիման վրա զգալի չափով աճել են տնտեսական փոխօգնության խորհրդի անդամ երկրների կապիտալ ներդրումները։ Միայն 1966—1975 թվականներին Կենտրոնական Եվրոպայում էլեկտրատեխնիկական խոշոր կառուցումների շինարարության համար Հունգարիայի և Չեխոսլովակիայի ուժերով նախատեսված է ծախսել 12,4 միլիարդ ֆորինտ[1]։

Մեծ հաջողությամբ զարգանալու է նաև տնտեսական փոխօգնության խորհրդի անդամ երկրների գյուղատնտեսու-

[1] «Правда», 6 марта 1968.



թյունը։ Այդ երկրների օգտագործվող հողային տարածությունների 90 տոկոսը գտնվում է սոցիալիստական սեկտորի ձեռքում։ Այդ հանգամանքը հեղափոխական մեծ շրջադարձ է առաջ բերել սոցիալիստական երկրների գյուղատնտեսության մեջ։ Տնտեսական փոխօգնության խորհրդի անդամ երկրները որոշել են մասնագիտացնել գյուղատնտեսության հիմնական ճյուղերը։ Մասնագիտացումը անելի է ունենալու շուրջ 30 կուլտուրաների գծով։ Այսպես, օրինակ, Հունգարիայում ուժերը կենտրոնացվելու են արևածաղիկ, սոյա, ինչպես և բանջարեղեն, մրգեր, խաղող, ծխախոտ արտադրելու համար։ Բուլղարիայում զարկ է տրվելու գլխավորապես վարունգի, պոմիդորի, վաղահաս կարտոֆիլի մշակմանը և դրանք սոցիալիստական երկրներին մատակարարելու գործին։ Չեխոսլովակիայում հատուկ խնամքով զարկ է տրվելու անասնապահությանը և այլն։

Տնտեսական փոխօգնության խորհրդի անդամ երկրները 1964 թվականի հունվարի 1-ից Մոսկվայում ստեղծել են միջազգային բանկ՝ կապիտալ ներդրումները արդյունաբերության և գյուղատնտեսության ընդլայնման շահավետ օգտագործելու և առևտրական ու տնտեսական կապերի ամրապնդման նպատակով։

Ժողովուրդների փոխըմբռնման և համագործակցության համար օգտագործվում են բոլոր հնարավոր միջոցները։ Այս տեսակետից բնորոշ է Դանուբ գետը իբրև հաղորդակցության միջոց ծառայեցնելու փաստը։ Հայտնի է, որ Եվրոպայի ամենախոշոր գետերից մեկը՝ Դանուբը, իրար հետ կապում է ութ երկրներ։ Բուլղարիան, Հունգարիան, Ռումինիան, Սովետական Միությունը, Չեխոսլովակիան, Հարավսլավիան 1948 թ. Բելգրադում կնքեցին կոնվենցիա։ 1960 թ. նրանց միացան նաև Ավստրիան, Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը։ Ստեղծված է Դանուբյան հանձնաժողով, որը հանդիսանում է նրա անդամների սուվերենության և իրավահավասարության հիման վրա ստեղծված միջկառավարական կազմակերպություն։ Նա իր վրա դրված խնդիրները կատարում է համագործակցության և փոխադարձ շահերի հարգման հիմունքներով։

Դանուբի վրայով բեռների փոխադրման ծավալը 1967 թվականին, 1950 թվականի համեմատությամբ, ավելացել է ավելի քան 4 անգամ և գերազանցել 40 միլիոն տոննայի։ Միայն 1962 թվականից մինչև 1966 թվականը Դանուբի նավատորմը ավելացել է 3142 միավորով։

Դանուբի տրանսպորտային կոնվեյերին ակտիվորեն մասնակցում է սովետական նավատորմը։ Սովետական Միությունը ամեն կերպ նպաստում է Դանուբյան համաձայնագրի կազմի մեջ մտնող երկրների միջև համագործակցության ամրապնդմանը և նրա միջազգային հեղինակության բարձրացմանը։

ՄԱԿ-ի տնտեսական հանձնաժողովի քարտուղարությունը հրատարակել է «Եվրոպայի տնտեսական վիճակի 1967 թվականի տեսությունը», որի հեղինակները ընդգծել են Եվրոպայի սոցիալիստական երկրների ժողովրդական տնտեսության հաջողությունները։ «Սովետական Միությունում և Եվրոպայի սոցիալիստական մյուս երկրներում տնտեսական զարգացումը,— ասված է հանձնաժողովի հրատարակած տեսությունում,— շարունակվել է արագ տեմպերով առաջ ընթանալ 1967 թվականին։ ՍՍՀՄ-ում արդյունաբերական զարգացման պրոցեսի նկատելի արագացումը զուգակցվել արտաքին առևտրի ընդլայնման խիստ ակտիվության հետ՝ գյուղատնտեսական արտադրության բարձր մակարդակի պահպանությամբ»։ Տեսության հեղինակները ընդգծում են, որ Եվրոպայի սոցիալիստական բոլոր երկրների համար բնորոշ է լայն սպառման ապրանքների արտադրության արագ զարգացումը՝ արտադրության միջոցների ընդլայնման արտադրանքի լայն թողարկման հետ միասին։ Այդ բոլորը զգալի չափով նպաստեցին բնակչության մեկ շնչի հաշվով ռեալ եկամուտների աճին։

«Огонёк» հանդեսը և Հունգարական Ժողովրդական Հանրապետության հյուպատոսությունը, բարձր գնահատելով ՍՍՀՄ և Հունգարիայի ժողովուրդների բարեկամությունը, 1968 թ. փետրվարի 10-ին հայտարարեցին կոնկուրս, որի նշանաբանն էր Եղբայրական բարեկամություն[1]։ Դիմելով «Огонёк» հանդեսի ընթերցողներին, նրանք խնդրել են իրենց պատմվածքներում խոսել այն մարդկանց մասին, որոնք ոչ մի ջանք ու եռանդ չեն խնայել Սովետական Միության և Հունգարիայի եղբայրական բարեկամության ստեղծման ու ամրապնդման համար։ Նրանք խնդրել են գրել Հունգարիայի ինտերնացիոնալիստների մասին, որոնք կես դար առաջ սովետական ժողովրդի հետ միասին պաշտպանել են սովետական հեղափոխությունը, մասնակցել են քաղաքացիական կռիվներին և 1919 թվականին զենքը ձեռքներին՝ պաշտպանել են Հունգարիայի սովետները, ովքեր իրենց անձնազոհ աշխատանքով ամրապնդել են սովետա-հունգարական բարեկամության, համագործակցության և փոխօգնության լենինյան սկզբունքները։

Եղբայրական բարեկամության կոնկուրս հայտարարելը բխում է ինտերնացիոնալիզմի վեհ գաղափարից և ցույց է տալիս, թե ինչպես համաշխարհային սոցիալիզմի սիստեմի բոլոր երկրների աշխատավորները գործադրում են բոլոր միջոցներն ու հնարավորությունները, որպեսզի էլ ավելի զարգանան ժողովուրդների բարեկամությունը և համագործակցությունը՝ նրանցում տեսնելով հավերժական դաշինքի մեծ ուժը։

Վիետնամում սահմանել են «Բարեկամություն» մեդալը, որով պարգևատրվում են արտասահմանյան երկրների այն մասնագետները, որոնք օգնում են Վիետնամի ժողովրդական տնտեսության զարգացմանը։ Վիետնամական «Բարեկամություն» մեդալով պարգևատրվել են նաև Սովետական Միության բազմաթիվ մասնագետներ, որոնք ոչ մի ջանք չեն խնայել Վիետնամին օգնելու համար։ Սովետական Ադրբեջանի մի խումբ մասնագետներ ավելի քան երկու տարի աշխատեցին Վիետնամում։ 1968 թվականի մարտ[1] ամսին վիետնամական «Բարեկամություն» մեդալը հանձնվեց ադրբեջանական ՍՍՀ գյուղատնտեսական ինստիտուտի ամբիոնի վարիչ Մ. Մահմեդալիևին, որը ակտիվ մասնակցություն է ունեցել Վիետնամի Հանոյ քաղաքի համալսարանի մեխանիզացիայի

[1] «Огонёк», 10 февраля 1968, № 7, стр. 3.



[1] «Правда», 24 марта 1968.

ֆակուլտետի ստեղծմանը և մանկավարժ-դասախոսների պատրաստման գործին։

Համագործակցությունը և համերաշխությունը սոցիալիստական համաշխարհային սիստեմի ամենից կարևոր արդյունքներից են, որոնց հետագա զարգացման ուղղությամբ խոշոր աշխատանք են կատարում եղբայրական բոլոր ժողովուրդները։ Սոցիալիստական ազգերի համագործակցության և փոխօգնության լենինյան սկզբունքներն անշեղորեն կենսագործվում են և այդ հիման վրա ավելի ու ավելի է ամրապնդվում սոցիալիստական համաշխարհային սիստեմը։ Սոցիալիստական սիստեմի երկրներն իրենց գոյության և բազմակողմանի գործունեության ընթացքում կուտակել են միլիոնավոր մարդկանց կյանքի արմատական վերափոխման հարուստ փորձ, որն ունի միջազգային կարևոր նշանակություն։ Այդ կուտակված փորձը և զարգացման օրինաչափությունները ցույց տվեցին, որ սոցիալիզմի համաշխարհային սիստեմը տնտեսական և քաղաքական հարաբերությունների նոր տիպ է, որի հետագա ամրապնդումը միջազգային կոմունիստական և բանվորական հեղափոխական շարժման ինտերնացիոնալ խնդիրն է։ Միջազգային հարաբերությունների նոր տիպի ստեղծումը բարդ պրոցես է և կապված է մի շարք դժվարությունների հաղթահարման հետ։ Հեղափոխական մեծագույն նվաճումների հիման վրա հաղթահարվում են այդ ընդգրավում գոյություն ունեցող դժվարությունները։ Եվ դրա արդյունքն այն եղավ, որ վերջին ժամանակաշրջանում համաշխարհային սոցիալիստական սիստեմն զգալիորեն ամրապնդվեց, աճեց նրա միջազգային հեղինակությունը և մեծ ազդեցություն ունեցավ մարդկության ճակատագրի վրա։

Հանրագումարի բերելով սոցիալիստական պետությունների իրավահավասարության ու ազգային սուվերենության համակողմանի, փոխադարձ շահավետ համագործակցության և եղբայրական փոխօգնության սկզբունքների կենսագործման արդյունքները, ՍՄԿԿ XXIII համագումարը նշեց, որ «...սոցիալիստական երկրների հարաբերությունները և այդ երկրների եղբայրական կուսակցությունների հարաբերությունները ամրապնդվում էին մարքսիզմ-լենինիզմի հիման



վրա, սոցիալիստական ինտերնացիոնալիզմի, իրավահավասարության, ներքին գործերին չմիջամտելու, միմյանց հարգելու, կուսակցությունների ու պետությունների ինքնուրույնության սկզբունքների հիման վրա։ Սոցիալիստական երկրների հետ Սովետական Միության հարաբերությունները վերջին տարիներս հարստացան, դարձան ավելի սերտ և սրտագին»[1]։

ՍՄԿԿ XXIII համագումարը ընդգծեց համաշխարհային սոցիալիստական սիստեմի ամրապնդման և ժողովուրդների բարեկամության զարգացման կարևոր փաստը, միաժամանակ նշելով նաև Չինաստանի և Ալբանիայի հետ անբավարար հարաբերությունները։ Համագումարը հույս հայտնեց, որ բարեկամությունը ժողովրդական Չինաստանի և ժողովրդական Ալբանիայի հետ կվերականգնվի և «Մենք համոզված ենք, որ մեր կուսակցությունները, մեր ժողովուրդները վերջ ի վերջո կհաղթահարեն բոլոր դժվարությունները և միասնական շարքում կընթանան ընդհանուր հեղափոխական մեծ գործի համար մղվող պայքարում»[2]։

Կենսագործելով համագործակցության և փոխօգնության լենինյան սկզբունքները, սոցիալիստական երկրների ժողովուրդները, կոմունիստական և բանվորական կուսակցությունների ղեկավարությամբ, իրենց ավանդն են ներդնում սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման ընդհանուր գործում, որի կենսատու աղբյուրներից մեկը սոցիալիստական ազգերի հավերժական բարեկամությունն է։

## 2. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱԶԳԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՈԳԵՇՆՉՈՂ ՕՐԻՆԱԿԸ

Սովետական Միության կազմում գտնվող սոցիալիստական ազգերի ու ազգությունների բարեկամությունն արժանացել է ամբողջ աշխարհի աշխատավորների համակրանքին։

Աշխարհի բազմաթիվ երկրներից մարդիկ հաճախակի այցելում են Սովետական Միություն։ 1952—1954 թվականներ-

[1] ՍՄԿԿ XXIII համագումարի նյութերը, էջ 289։
[2] Նույն տեղը, էջ 13։

րին սովետական երկիր են այցելել 60 երկրների 800 պատվիրակություն, 1955—1965 թվականներին այդ թիվը ավելացել է մի քանի անգամ, իսկ վերջին երեք տարվա ընթացքում ՍՍՀՄ են եկել պատվիրակություններ ու տուրիստներ աշխարհի գրեթե բոլոր երկրներից։ Սովետական բոլոր ժողովուրդների հետ միասին, Մոսկվայում Մեծ Հոկտեմբերի հիսնամյա հոբելյանական տոնակատարությանը մասնակցեց 100 երկրների 589 պատվիրակություն[1], այդ թվում աշխարհի 83 երկրների և 17 միջազգային կազմակերպությունների պատվիրակություն հրավիրված էր սովետական հասարակական միությունների կողմից։

Սովետական արհմիությունները բարեկամական կապերի մեջ են կապիտալիստական երկրների բազմաթիվ բանվորական կազմակերպությունների հետ։ Այդ բարեկամությունն իր բովանդակությամբ լայն ծավալ է ընդունել Իտալիայի, Ֆրանսիայի, Ֆինլանդիայի, Ճապոնիայի արհմիություններում։ Բարեկամության և համագործակցության ոգով մեծ ու արդյունավետ աշխատանք է կատարվում սովետական արհմիությունների և Ասիայի, Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի բանվորական և արհմիութենական շարժման կողմից։ Այսպես, օրինակ, ՍՄԿԿ XXIII համագումարից հետո ընկած ժամանակաշրջանում Սովետական Միություն են այցելել Լատինական Ամերիկայի բանվորական ու արհմիութենական շուրջ 200 պատվիրակություն։ Միայն չորս տարվա ընթացքում սովետական երկիր է եկել Աֆրիկայի և Արաբական Արևելքի 25 երկրի պատվիրակություն։

1966 թվականին Սովետական Միություն եկավ բրիտանական տրեդ-յունիոնիստական կոնգրեսի գլխավոր խորհրդի պաշտոնական պատվիրակությունը, որին ամենալայն հնարավորություններ տրվեց՝ ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների կյանքին ծանոթանալու։ Արտասահմանյան հյուրերը ծանոթացել են սովետական երկրի տնտեսության, կուլտուրայի, գիտության ու տեխնիկայի նվաճումներին, աշխատավորների ապրելակերպին, նրանց աշխատանքային պայմաններին

[1] «Правда», 28 февраля 1968.



և ժողովուրդների բարեկամության սկզբունքներին։ Արտասահմանյան երկրների պատվիրակությունները համակողմանիորեն ծանոթանում են սովետական երկրին, տեսնում են սովետական երկրի ժողովուրդների բարեկամության կենարար ուժը և կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության վիթխարի դերը, որոնց շնորհիվ արմատական փոփոխություններ են տեղի ունեցել ՍՍՀՄ բոլոր ազգերի ու ազգությունների կյանքում։

Սովետական բազմազգ ժողովրդի աշխատանքային եռանդը ու անօրինակ սխրանքները, նրա համաշխարհային պատմական առաջընթացը հիացնում են արտասահմանի մեր բարեկամներին, աշխատավոր ժողովուրդներին։

Սովետական Միության հաջողությունները տնտեսության, կուլտուրայի և գիտության բնագավառներում այնքան ակնհայտ են, որ չեն կարող չտեսնել նաև կոմունիզմի թշնամիները։ Ամեն տարի Սովետական Միություն այցելող արտասահմանյան երկրների հարյուրավոր պատվիրակություններ, տասնյակ հազարավոր զանազան մասնագետներ ու քաղաքական տարբեր հայացքների տեր մարդիկ, ծանոթանալով սոցիալիզմի հաղթանակի շնորհիվ մեր երկրում տեղի ունեցած անժխտելի վերափոխումներին, չեն կարողանում չարտահայտել իրենց հիացմունքը։ Նրանք հիանում են ոչ միայն Սովետական Միության տնտեսության, գիտության ու կուլտուրայի բնագավառներում ձեռք բերված վիթխարի հաջողություններով, այլև տեսնում են սովետական նոր մարդուն, որ ստեղծում է նյութական և հոգևոր բարիքներ, կառուցում է կոմունիզմ։ Նրանց առանձնահատուկ ուշադրությանն է արժանանում լենինյան բարեկամությամբ զոդված ՍՍՀՄ ժողովուրդների հզոր ընտանիքը։

Արտասահմանյան երկրների բազմաթիվ պատվիրակությունները մեծ հետաքրքրությամբ ծանոթանում են ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության, համագործակցության և փոխօգնության սկզբունքներին ու ձևերին։ Այդ, իհարկե, պատահական չէ։ Այժմ, ավելի քան երբևէ, աշխարհի բոլոր երկրների ժողովուրդները ակնառու կերպով տեսնում են, որ Սովետական Միության հաղթանակների գլխավոր աղբյուրը

ՍՍՀՄ սոցիալիստական ազգերի ու ազգությունների բարեկամության, համերաշխության, եղբայրության, սովետական ազգային քաղաքականության, ժողովուրդների իրավահավասարության մեջ է, որ ՍՄԿԿ-ն կռում ու կոփում է՝ պաշտպանելով նրանց հետևողական կենսագործումը։

Արտասահմանյան երկրների պատվիրակություններին, պետական, հասարակական, արվեստի, գրականության գործիչներին շատ է հետաքրքրում ՍՍՀՄ ժողովուրդների քաղաքական միասնության հարցը։ Նրանց լայն հնարավորություններ են տրվում ուսումնասիրելու այս հարցը նաև։ Այդ ուսումնասիրությունները համոզիչ կերպով հաստատում են, որ սովետական երկրի ժողովուրդների բարեկամությունը հավերժական է, իսկ քաղաքական միասնությունը՝ անխախտ, տնտեսական և կուլտուրական կապերը՝ բազմազան ու անսպառ։ Այս հարցերի վերաբերյալ արտասահմանյան պատվիրակությունների ու հասարակական գործիչները ո՛չ միայն սովետական մամուլում, այլև իրենց երկրներում գրել են բազմաթիվ գրքեր ու հոդվածներ, արել են պաշտոնական հայտարարություններ, հրատարակել են փաստաթղթերի ժողովածուներ և ցուցադրական զանազան նյութեր։ Այդ ամենը վկայում է այն մասին, թե ինչպես արտասահմանյան երկրների պատվիրակությունները օբյեկտիվորեն և համոզված կերպով նշում են մասնավորապես ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության կենսարար ուժի և ՍՄԿԿ լենինյան ազգային քաղաքականության հսկայական նշանակությունը հասարակության առաջընթացի համար։ Այսպես, օրինակ, 1963 թ. մայիսի 13-ին Ալժիրի պատվիրակությունը մեծ գոհունակությամբ հայտնեց, որ այն, ինչ տեսան սովետական երկրում, դժվար է նկարագրել առանց հուզվելու, առանց գոչելու «Կեցցե՛ ՍՍՀՄ-ի ժողովուրդը»։

«Սովետական երկրում,— գրում է Հուբին Թոմաշը,— մենք հանդիպեցինք շատ ազգերի ներկայացուցիչների, որոնք աշխատում են հասարակական, կուլտուրական, արհմիութենական կազմակերպություններում և զանազան հիմնարկներում։ Մենք բազմաթիվ անգամ համոզվեցինք, որ ՍՍՀՄ-ում ամեն ազգ լիակատար հնարավորություն ունի արտահայտե-



լու իր կամքը և օգտվելու այն բոլոր իրավունքներից, որոնք գոյություն ունեն սովետական երկրում։ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը երջանիկ կյանքի, իրավահավասարության, միասնության իսկական օրինակն է։

Մենք զգացինք ինչպես մեր երկրում,— շարունակում է Հ. Թոմաշը,— մեր հարազատների մոտ։ Մենք երբեք չենք մոռանա նրանց կատարած բարի գործերը։ Խոստանում ենք մեր բոլոր գործերում հետևել նրանց»[1]։

1964 թ. հոկտեմբեր ամսին սովետական երկրում մեքսիկական բալետի ղեկավար Սոնյա Ամելիոնը հնարավորություն ստացավ մոտիկից ծանոթանալ ՍՍՀՄ ժողովրդի կյանքին։ Նրա ուշադրությունը գրավեց հատկապես ՍՍՀՄ ժողովուրդների քաղաքական միասնության հարցը։ Դրա համար նա հանգամանորեն ծանոթացավ Սովետական Միության բազմաթիվ ժողովուրդների կյանքին, նրանց նիստուկացին, փոխհարաբերություններին։ Լինելով Սովետական Հայաստանում, նա այցելեց ուսումնական, կուլտուրական հաստատություններ, գործարաններ, ուր աշխատում են սոցիալիստական ազգերի բազմաթիվ ներկայացուցիչներ։ Այնտեղ Ս. Ամելիոնը զրույցներ ունեցավ սովետական մարդկանց հետ, նրանց տվեց իրեն հետաքրքրող բազմաթիվ հարցեր, որոնք վերաբերում էին սովետական ազգային քաղաքականության և ազգային լեզուների զարգացմանը։

> «Մեծ է Սովետական Հայաստանի նվաճումները տնտեսության և կուլտուրայի բնագավառներում,— հայտարարեց նա։— Ոչ մի տարակուսանք չկա այն բանում, որ Սովետական Միությունում գոյություն ունի լիակատար միասնություն։ Մենք տեսանք ո՛չ միայն ժողովուրդների միասնությունը, տեսանք նաև միութենական հանրապետությունների ազգերի հպարտության զգացմունքն իրենց կուլտուրայի և պետականության նկատմամբ։

[1] «Հայաստանի աշխատավորուհի», 1967, № 5, էջ 2։

«Մենք համոզվեցինք, որ միութենական հանրապետությունները անկախ և ինքնուրույն պետություններ են։

Սակայն այս եզրակացությունն ու խոր համոզմունքը միայն մեկ մարդու կամ մի խումբ մարդկանց կարծիքը չէ։ Դրանում համոզվելու համար մեջ բերենք արտասահմանյան պատվիրակությունների պաշտոնական կարծիքներից ու հայտարարություններից մի քանիսը, որոնք արտահայտվել են տարբեր ժամանակներում։

Մոսկվայում կայացած պրեսկոնֆերանսում Մեքսիկայի կուլտուրայի գործիչների պատվիրակությունը հայտարարել է.

«Հայաստանը, որն իր տերիտորիայով Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը կազմող հանրապետություններից ամենափոքրն է, կենդանի և ակնառու օրինակ է այն բանի, թե ինչ է նշանակում այստեղ իրագործվող իմաստուն ազգային քաղաքականությունը։ Գործարանները, կոլտնտեսությունները, ուսումնական հաստատությունները և ընդհանրապես կուլտուրական հիմնարկները Հայաստանում, ինչպես և սովետական ամենամեծ հանրապետությունում, այնպիսի զարգացման են հասել, որ դժվար է պատկերացնել։ Մենք կարող ենք ասել, որ մեզ՝ մեքսիկացիներիս վրա դա խորագույն տպավորություն է թողել այն բոլորից, ինչ տեսանք այս վիթխարի երկրում»[1]։

Կանանց միջազգային դեմոկրատական ֆեդերացիայի բրիտանական կոմիտեի քարտուղար Մոլլի Կեյտր պատվիրակության անունից արեց հետևյալ հայտարարությունը.

«Մենք այցելեցինք Հայաստան...

Այստեղ չկա մարդու շահագործում մարդու կողմից, չկա հասարակության այնպիսի մաս, որը ապրեր հասարակության մի այլ մասի հաշվին... Մենք տեսանք այդ հանրապետությունն իր [illegible], իր կուլտուրա-

[1] «Известия», 21 мая 1952, № 119.



յով, ավանդույթներով, արդյունաբերությամբ, մի հանրապետություն, որը օգտվում է լիակատար իրավահավասարությունից՝ Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ միասին։ Ահա թե որտեղ գոյություն ունեն ազգերի լիակատար իրավահավասարություն, մի նպատակի շուրջը միավորված ժողովուրդների փոխադարձ հարգանք և սեր»[1]։

Չեխ քիմիկոս-ինժեներ Չիրիկ Ստանիսլավն այցելեց Սովետական Միության մի քանի հանրապետություններ, հանդիպումներ ունեցավ բազմաթիվ ազգերի ներկայացուցիչների հետ, զրույցներ և հարցեր ավեց սովետական քաղաքացիներին։ Վերադառնալով հայրենիք, նա ռադիոյով ելույթ ունեցավ, որում ասված է.

«Ինձ առավել հիացրեց սովետական երկրի ժողովուրդների անխախտ բարեկամությունը, որը հուրհրատում է Ադրբեջանից ստացված գազի այս ջահի պես։ Այսպիսի լուսավոր ջահերով սովետական մարդիկ քայլում են դեպի կոմունիզմ»[2]։

Կորեայի անվանի գործիչներ բազմաթիվ առիթներով եղել են ՍՍՀՄ-ում և իրենց ջերմ վերաբերմունքը արտահայտել սովետական ժողովուրդների բարեկամության նկատմամբ։ Կորեացի կոմպոզիտորները լինելով Անդրկովկասում, իրենց աչքերով տեսան ժողովուրդների բարեկամությունը և սոցիալիստական արվեստի համագործակցությունը։ Այդ առիթով իրենց տպավորությունները գրի են առել կորեացի ականավոր կոմպոզիտորներ Պան Խան-Չուն և Պակ Սու-Դինը։

«Մենք անհունորեն երջանիկ ենք, որ ժամանակին եղանք Անդրկովկասյան երաժշտական գարնանը,— գրում են նրանք,— երբ եղբայրական ժողովուրդների այդ յուրատեսակ երաժշտական ֆեստիվալին։ Մենք հիացած ենք Ադրբեջանի երաժշտությամբ, որ լսեցինք Բաքվում։ Անդրկովկասի երաժշտությունը հուզիչ մե-

[1] «Հայաստանի աշխատավորուհի», Երևան, 1968, № 2, էջ 2։

[2] Սովետական Հայաստանը արտասահմանյան հյուրերի աչքերով, Երևան, 1960, էջ 238։

գեղինեբ ունի, վառ կոլորիտ։ Մենք գիտենք, որ Անդրկովկասի ժողովուրդները ջերմորեն սիրում են իրենց երաժշտությունը, այդ երաժշտությունը յուրովի արտացոլում է Կովկասի ժողովուրդների՝ իրենց ազատության համար օտար բռնակալների դեմ մղած բազմադարյան պայքարը։ Սովետական տարիներին ստեղծված այնպիսի օպերաներ, ինչպես, օրինակ, Հաջիբեկովի «Քյոռ-Օղլին» և Տիգրանյանի «Դավիթ Բեկը» վարպետորեն անդրադարձնում են Անդրկովկասի ժողովուրդների հերոսական պայքարի դրվագները։ Այդ օպերաները մեզ վրա ուժեղ տպավորություն թողեցին։ Դրանց բովանդակությունը խորապես հայրենասիրական է, շատ հարուստ ու բազմազան են այդ օպերաների մեղեդիները։ Ինչ վերաբերում է բեմադրություններին, ապա այդ տեսակետից ևս մենք շատ գոհ մնացինք։ Թե՛ բեմադրության մեջ, թե՛ գեղարվեստական ձևավորման մեջ զգացվում են մեծ վարպետություն ու ճաշակ։

Մենք կարծում ենք, որ եթե այդ օպերաները ցուցադրվեն ուրիշ երկրներում ևս, ապա ամբողջ աշխարհի ժողովուրդները սիրով կընդունեն դրանք, ինչպես ընդունում են Եվրոպայի դասական օպերաները։ Տարակույս չկա, որ այդ օպերաներն իրենց ներդրումը կարող են անել համաշխարհային օպերային արվեստի գանձարանը։

...Առաջիկայում նպատակ ունենք կորեական ժողովրդին ծանոթացնել Անդրկովկասի կոմպոզիտորների ստեղծագործություններին։ Անդրկովկասը գտնվում է Կորեայի հետ նույն լայնության վրա։ Այդ պատճառով էլ թե բնության նմանությամբ, թե կլիմայական պայմաններով կովկասցիներն ու կորեացիները ընդհանուր շատ բան ունեն։ Չնայած հսկայական այն տարածությանը, որ բաժանում է մեր երկրները, մենք այսօր իրար շատ մոտ ենք։ Եվ կասկած չկա, որ գնալով կամրապնդվեն մեր ստեղծագործական կապերը։ Ջերմագին երախտագիտություն ենք հայտնում Ան-



դրկովկասի մեր եղբայր կոմպոզիտորներին ու ժողովուրդներին սրտաբաց ընդունելության համար։ Մենք բոլորը կպատմենք մեր ընկերներին, երբ վերադառնանք հայրենիք»[1]։

«Սովետական Միությունում,— գրում է ճապոնական հայտնի երաժիշտ Մասաո Ուեդան,— ես իմ աչքերով տեսա, որ ձեր երկրի տարբեր ազգերի զարգացման մակարդակը խիստ բարձր է, մի հանգամանք, որ մեծ տպավորություն թողեց ինձ վրա»[2]։

Հունգար բանաստեղծ, «Նագիվիլագ» գրական հանդեսի գլխավոր Գերեբեյշ Լայոշն ուշադրությամբ ծանոթանալով սովետական ազգային քաղաքականությանը, անկեղծորեն գրում է. «Ես կարդացել եմ Բուդապեշտի առաջադեմ գրող Կարոլ Լենի գիրքը՝ Սովետական Միություն կատարած իր ուղևորության մասին, որտեղ նա գոհունակությամբ է պատմում Սովետական Հայաստանից ստացած իր տպավորությունները»[3]։ Սակայն Գ. Լայոշն, երևում է, կասկածանքով է նայել այդ բոլորի վրա, իսկ երբ նա անձամբ եղավ ՍՍՀՄ-ում, հրապարակորեն հայտարարեց. «Բարեբախտաբար, ես սխալվել էի»[4]։

Բուդապեշտյան գրող Կարոլ Լենին Սովետական Միությունում կատարած իր ուղևորության վերաբերյալ գրել է գիրք, որում նկարագրված են ժողովուրդների համերաշխ ընտանիքը, ապրելակերպը, իրավունքները։ Այդ գրքում հատուկ տեղ է հատկացված Սովետական Միության կուլտուրայի, գրականության, կրթության հարցերին։ Կարոլ Լենին իր ընթերցողներին պատմում է, որ ՍՍՀՄ-ի քաղաքացիներն ունեն կրթության իրավունք։

Արգենտինայի պատվիրակությունը ծանոթանալով ՍՍՀՄ ազգերի փոխհարաբերություններին, հայտարարել է. «Բոլոր ողբերգություններից և արյունոտ խռովարձություններից հե-

[1] «Սովետական արվեստ» ամսագիր, Երևան, 1958, № 6, էջ 28։

[2] Սովետական Հայաստանը արտասահմանյան հյուրերի աչքերով, էջ 133։

[3] Նույն տեղը։

[4] Նույն տեղը։

տա հայ ժողովուրդը ապրել է և հաղթել մահին։ Նա հարգում է իր պատմությունը և կառուցում իր ապագան։ Նա կանգնել է հեղափոխական ուղու վրա և մյուս ժողովուրդների հետ կերտում է իր երջանիկ վաղը։ Թող հայ ժողովուրդը պատմության մեծ շեմին գնա առաջ, դեպի բարգավաճում ու հաղթանակ հանուն խաղաղության և բոլոր ժողովուրդների բարեկամության»[1]։

Նորվեգիայի կուլտուրայի գործիչների պատվիրակության ղեկավար, Օսլոյի առողջապահության վարչության դիրեկտոր Տրյուգվե Բրեքուսն «Սովետական Հայաստան» թերթում տպագրել է մի հոդված, որտեղ ընդգծված է այն միտքը, թե «Մոսկվայից և Լենինգրադից բացի մենք շատ էինք ուզում այցելել Հայաստան, որի մասին գիտենք շատ տարի-

ներ առաջ այստեղ եկած մեր հայրենակից Նանսենի երկերից։ Ծանոթանալով Երևանին ու նրա արվարձաններին, ես բացեիբաց կարող եմ ասել, որ այն ամենը, ինչ որ տեսանք, գերազանցեցին մեր սպասելիքները։ Հայ ժողովուրդը սովետական իշխանության պայմաններում աննախընթաց մեծ հաջողությունների է հասել։ Մեզ առանձնապես հիացրեց Երևանի շինարարությունը, որը լավ պլանավորված է և որը հարստանում է ճարտարապետական գեղեցիկ շենքերով»[2]։

Հնդկաստանի ներկայացուցիչները մասնակցելով Մոսկվայի միջազգային տնտեսական խորհրդակցությանը, ցանկություն հայտնեցին լինել Սովետական Միության ազգային հանրապետություններում, ծանոթանալ ժողովրդի կյանքին։ Նրանք հատուկ հետաքրքրություն հանդես բերին ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության և համագործակցության նկատմամբ և ցանկացան այդ նպատակով մեկնել Միջին Ասիայի սովետական հանրապետությունները։ Կատարվեց հնդիկների պատվիրակության ցանկությունը։ Նրանք եղան Ուզբեկական ՍՍՀ-ում և ծանոթանալով հանրապետության էկոնոմիկային, գիտական ու կուլտուրական հիմնարկներին, եկան այն եզրակացության, որ

[1] «Հայաստանի աշխատավորուհի», Երևան, 1967, № 5, էջ 2։
[2] «Սովետական Հայաստան», 2 նոյեմբերի 1955։



«Հնդիկները շատ բան ունեն սովորելու Միջին Ասիայի սովետական հանրապետություններից։ Մենք տեսանք,— ասացին Հնդկաստանի պատվիրակության անդամները,— թե ինչպես ամեն մի ազգ պահպանում է իր առանձնահատկությունները ու միաժամանակ հանդիսանում է մեկ ընդհանուր ընտանիքի օրգանական մասը և այդ ընդհանուր նպատակի սահմաններում կատարում է որոշակի խնդիր։ Գիտության և տեխնիկայի բնագավառում ձեռք բերած ավելի զարգացած հանրապետության հաջողություններից օգտվում են մյուսները։ Ոչ մի տարբերություն չի դրվում ռուսի և ուզբեկի միջև։ Ռուսները վարչարարության ոչ մի փորձ չեն կատարում։ Նրանք իրենց խնդիրները կատարում են, օգնելով երկրի բոլոր մասերի զարգացմանը։ Բացակայում են ռասայական տարբերությունները և ազգային կատարածները, սովետական բոլոր քաղաքացիները լիիրավ են, տարբեր ազգերի ու ռասաների միջև գոյություն ունի բարեկամական համագործակցություն, որոնք արտասահմանյան երկրների պատվիրակությունների մեջ առաջ են բերում բարի զգացմունք և ուրախություն»։

Վերջին մի քանի տարվա ընթացքում Տաջիկստան են այցելել ավելի քան 10 հազար արտասահմանյան տուրիստներ։ Դրանք քաղաքական տարբեր հայացքների ու համոզմունքների տեր մարդիկ են։ Սակայն նրանց մեծամասնությունը Սովետական Տաջիկստանից ստացել է լավ տպավորություն։ Այդ տպավորությունները գրի են առնված մամուլում և տպավորությունների գրքերում։ Այսպես, օրինակ, ԱՄՆ-ից դոկտոր Արնոլդ Շուլցը գրել է.

«Ինձ շատ հաճելի է այցելել Դուշանբե, բայց ինձ համար ավելի ուշագրավ են ժողովրդի ինքնորոշումը և առաջադիմությունը»։

Նա այնուհետև նկարագրել է Տաջիկստանի բնությունը, հարստությունները, տեսարժան վայրերը, բայց հատուկ կերպով ընդգծել է սովետական ժողովրդի համերաշխ աշխատանքը, հրաշալի մարդկանց, որոնք պատրաստ են հյուր ընդունել ամենքի երկրում։

ԱՄՆ-ի բազմաթիվ պատվիրակություններ և տուրիստներ, օգտագործելով բոլոր հնարավորությունները, մոտիկից ծանոթանում են Սովետական Միության ժողովուրդների նիստուկացին, նրանց ապրելակերպին, ազգային փոխհարաբերություններին։ Վերջին տարիներին Ամերիկայում երևան եկան մի քանի գրքեր, որոնցում ազնիվ մարդիկ օբյեկտիվ կերպով փորձել են Սովետական Միության վերաբերյալ գրի առնել տպավորությունները։ Այսպես, «Մենք այդ տեսել ենք մեր աչքերով» գրքույկում 19 ամերիկացի պատմում են, թե ինչպես ՍՍՀՄ տարբեր ազգեր ապրում են ազատ և միասին հաճախում միևնույն կինոն, թատրոնը, գիշերում նույն հյուրանոցում, ճաշում համատեղ, ճանապարհորդում երկաթուղային նույն վագոնով։ Այնուհետև, նրանք պատմում են, թե ինչպես Սովետական Միությունում բոլոր քաղաքացիներն ունեն իրավունք, այսինքն՝ ապահովված աշխատանք ստանալու իրավունք։ ՍՍՀՄ-ի քաղաքացիներն ունեն հանգստի իրավունք։

Հիշյալ գրքույկում հանգամանորեն տուրիստները պատմում են, որ ՍՍՀՄ-ի քաղաքացիները նյութական ապահովվածության իրավունք ունեն ծերության, ինչպես նաև հիվանդության և աշխատունակությունը կորցնելու դեպքում։

Սովետական երկրի ժողովուրդների գիտության, կուլտուրայի և բարեկամության մասին գրել են նաև շվեդացի փիլիսոփայության դոկտոր Յորան Ծիլդը, Նորվեգիայի պետական թատրոնի դիրեկտոր Ֆրից Ֆոն դեր Լեպպեն, Սիրիայի պառլամենտի դեպուտատ Տ. Զրաճյանը, մեքսիկական բանաստեղծ Էֆրեն Ռեբոլը, Վիեննայի համալսարանի դոցենտ Գուստավ Հենրիխը, Ցեյլոնի աշխատանքի Ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Փոլի Բանդա Վիջայասունդերոն, անգլիական գրող Ջեյմս Օլդրիջը, հնդիկ գրող, Դելիի համալսարանի պրոֆեսոր Գոփինդ Սինգեն, ԱՄՆ-ի Տեխաս նահանգի համալսարանի դոկտոր-պրոֆեսոր Ա. Փախչանյանը, Նյու-Յորքի ժամանակակից արվեստի թանգարանի դիրեկտոր Ալֆրեդ Բարրը և շատ ուրիշներ։ Նրանց աշխատությունների ու հոդվածների մեջ մանրամասնորեն նշված են ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության մեծ ուժը, նրա ոգեշնչող օրինակը և նշանակությունը ամբողջ աշխարհի մարդկության համար՝ անկախ նրանց ազգությունից և լեզվից։



ՍՍՀՄ քաղաքացիների իրավահավասարությունը տնտեսական, պետական, կուլտուրական ու հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում, անկախ նրանց ազգությունից ու ռասայից, անխախտ օրենք է, որը և հետևողականորեն կյանքում կենսագործվում է։ Այդ բանի վրա հատուկ ուշադրություն դարձրեց ԱՄՆ-ի հնագետ Ուինիֆրեդ Մորգանը։ Նրա համար ակնառու դարձան սովետական ազգերի ու ազգությունների տնտեսական և կուլտուրական վիթխարի նվաճումները։ Նա տեսավ, որ ՍՍՀՄ-ում ռասայական «տեսություն» գոյություն չունի։ Ֆաշիստական ռասայական «տեսությունը» նպատակ ունի ոչնչացնել մի շարք ժողովուրդների, որը մարդկության համար ամոթալի է,— գրում են առաջադիմական հայացքների տեր մարդիկ,— թըվում է, թե մարդկությունը անհրաժեշտ հետևություն կաներ և մեկընդմիշտ վերջ կտար ռասիզմի ակունքներին։ Ցավոք, այդ տեղի չունեցավ։ Թեև ՄԱԿ-ն իր Դեկլարացիայում ռասիզմը և ռասայական խտրականությունը դատապարտել է, բայց ճնշված ժողովուրդների նկատմամբ ԱՄՆ-ում այն շարունակվում է գործադրվել։

Բուրժուական տեսաբանները փորձում են ապացուցել, թե անհավասարությունն ազգերի միջև պետք է գոյություն ունենա հավերժորեն։ Բուրժուական հասարակագիտության ջատագովներն այդ «հիմնավորում են» նրանով, որ ամեն մի ազգ ունի իր հոգեկան կերտվածքը, կուլտուրան, կենցաղը և սովորությունները։ Նրանց կարծիքով այդ ամենը հանգեցնում են այն բանին, որ բոլոր ազգերը ձգտում են միմյանց չսիրել։ Ներկա պայմաններում կապիտալիստական սիստեմն այն հիմքն է, որի վրա ծաղկում է ռասայականությունը։

Նյուրնբերգյան օրենքը արիական ռասայի առավելության մասին փոխարինվել ամերիկյան ռասիզմի պրոպագանդայով, որը հաստատում է, թե իբր անգլո-սաքսոնական ռասան վեր է կանգնած բոլոր ազգերից։ Հակագիտական այդ ըմբռնումը հեշտությամբ մերկացվում է, քանի որ

այդպիսի ռասա առհասարակ գոյություն չի ունեցել։ Հայտնի է, որ ամերիկյան ազգի ձևավորումը տեղի է ունեցել մի շարք առանձնահատկություններով։ Նա մի շարք ազգերի խառնուրդն է, այդ պատճառով սպիտակամորթ մարդկանց բնավորության հետ այնտեղ կարելի է գտնել բնավորության նաև այնպիսի գծեր, որոնք հատուկ են բոլոր ռասաներին, այդ թվում նաև նեգրերին։ Պաշտոնական վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ ԱՄՆ-ում նեգրական ընտանիքի միջին եկամուտը կազմում է սպիտակամորթ ընտանիքի եկամուտի 52 տոկոսը, իսկ գործազուրկ նեգրերը միջին հաշվով երկու անգամ ավելի են, քան մյուս ազգերը։ ԱՄՆ 109 քաղաքում նեգրերի 80 տոկոսը որպես կանոն ապրում է քաղաքների ծայրամասերի անբարեկարգ թաղամասերում։

Միայն Հարլեմի բնակելի շենքերի 50 տոկոսը, որտեղ ապրում են նեգրերը, բնակվելու համար բոլորովին հարմար չէ։ ԱՄՆ-ի մի շարք նահանգներում նեգրերից բնակվարձը 1,5 անգամ ավելի են գանձում, քան սպիտակամորթներից։ Ռասայական տարբերությունները արտահայտվում են ամերիկացիների կյանքի բոլոր բնագավառներում։ Պատահական չէ, որ ԱՄՆ-ում նեգրերի կյանքի տևողությունը 6—7 տարով կարճ է, քան սպիտակամորթ մարդկանց, իսկ մինչև մեկ տարի ապրող յուրաքանչյուր հազար նեգր երեխաներից մահանում են 19 անգամ ավելի շատ։ Նեգրերի հիվանդությունների և մահվան բարձր տոկոսը բացատրվում է նաև նրանով, որ ԱՄՆ-ի մեծամասնությունում բուժման բնագավառում գոյություն ունեն խիստ տարբերություններ և խտրականություն։ Ավելին, 10 նահանգում խտրականությունը օրենքի ուժ է ստացել և այդ պատճառով նեգրերը ստանում են բժշկական չնչին օգնություն։

ԱՄՆ-ում տնտեսական և քաղաքական ծանր վիճակի մեջ են գտնվում նաև պուերտոռիկացիները և հնդիկները։

Այսպես, օրինակ, երկրի գործազուրկների միջին մակարդակից երկու անգամ պուերտոռիկացին և տասը անգամ հնդիկ գործազուրկների քանակը ավելի է։ Ավելի ծանր պայմանների մեջ են գտնվում հյուսիսային ազգությունները, հատկապես էսկիմոսները և ալեուտները։ Ամերիկյան հետա-



զոտողները ստիպված են ընդունել, որ Ալյասկայում ռասայական տարբերությունները երևան են գալիս ո՛չ միայն կյանքի շատ ասպարեզներում, այլև բացահայտ բիրտ քաղաքականության մեջ։ Ճնշված ազգերն ու ազգությունները վերջին տարիների ընթացքում մի քանի անգամ ելույթ են ունեցել իրենց հալածողների դեմ։ 1964 թվականին Ջեկսոն և Հարլեմ քաղաքներում ժողովրդական ցասում տեղի ունեցավ։ 1965 թվականին նույնպիսի շարժում ծագեց Լոս-Անջելոսում և Չիկագոյում, իսկ 1966 թվականին նեգրերի շարժումը տարածվեց Չիկագոյի և Ալաբամի նահանգներում։ 1967 թվականի օգոստոս ամսին ուժեղ ընդհարումներ տեղի ունեցան Նյու-Հեյվեն, Նյու-Արկ քաղաքներում։ Ամերիկայի ազգային ընդհանուր հարստությունը, որը կազմում է շուրջ 250 տրիլիոն դոլլար, չի կարողանում լուծել 20 միլիոն նեգրերի, 1,2 միլիոն պուերտոռիկացիների ու մոտ կես միլիոն հնդիկների և հյուսիսային մի քանի ազգությունների պրոբլեմը։

Նյու-Յորքի նահանգապետ Ն. Ռոկֆելլերը 1967 թ. սեպտեմբերին հանդես եկավ հեռուստատեսությամբ։ Նա իր ելույթում ընդունեց, որ ԱՄՆ-ը կարող է կանգնել քաղաքացիական կռիվների փաստի առաջ, քանի որ դեպի այդ է հրում նեգրերի կյանքի ցածր կենսամակարդակը։ Վիճակագրական տեղեկությունները,— ասաց նա,— ցույց են տալիս, որ նեգրերի 42 տոկոսը ապրում է աղքատ։ Այդ միտքը արտահայտել է նաև ամերիկյան հրապարակախոս Հ. Ֆրիմենը։ Նա ընդգծել է, որ ԱՄՆ-ի կոնգրեսը 1967 թվականին միայն պաշտպանության մինիստրությանը ֆինանսավորել է 70 միլիարդ դոլլար, որը հանցագործ պատերազմ է մղում վիետնամական ժողովրդի դեմ։

Ամերիկայում ստիպված են ընդունել, որ ռասայական անկարգությունները տեղի են ունենում այն շրջաններում, որտեղ կյանքի մակարդակը խիստ ընկած է, աճում է գործազրկությունը։

Երբ ամերիկացիները ողբերգական նման վիճակին ականատես լինելուց հետո այցելում են Սովետական Միություն, բնականաբար արձանագրում և ողջունում են ազգերի

ու ազգությունների համերաշխ եղբայրական բարեկամություն և համագործակցություն։

Ահա այդ են վկայում հետևյալ օրինակները.

«Սովետական մարդիկ ինձ դիմավորեցին որպես ազատ կնոջ,— հուզմունքով պատմում է Վարշավայում հրավիրված խաղաղության կողմնակիցների երկրորդ համաշխարհային կոնգրեսի ամերիկյան պատգամավորուհի Ջեկի Կլեկը,— այն ջերմ ընդունելությունը, որ ցուցաբերվեց իմ նկատմամբ, առաջ բերեց իմ մեջ անձնական արժանապատվության զգացում և հարգանք ինքս իմ նկատմամբ, որը ես երբեք չեմ զգացել Ամերիկայում, նեգրերի նկատմամբ ցուցաբերվող խտրականության շնորհիվ։ Սովետական մարդիկ ինձ և մյուս նեգրերին՝ մեր պատգամավորության անդամներին, զգացնել տվեցին, որ մենք էլ մարդ ենք։ ՍՍՀՄ-ում մոռանում ես, որ դու նեգր ես»։

Իտալական պատվիրակությունը, հիացած սովետական ժողովրդի բարեկամության օրինակով, վերադառնալով հայրենիք, պատմեց այդ մասին, որից հետո Կարրարա քաղաքի բնակիչներն իրենց հիշատակ ուղարկեցին «Բարեկամության ձեռքեր» հուշարձանը, որը այժմ դրված է Երևան քաղաքի կենտրոնական զբոսայգիներից մեկում։

Թունիսի կանանց պատվիրակությունը 1966 թվականին այցելելով Սովետական Միություն և ծանոթանալով ազգային հարցի լուծմանը, գրել է.

— Մեր պատվիրակությունը չի մոռանա Սովետական Միություն կատարած իր այցելությունը, որի ընթացքում ծանոթացանք սովետական խաղաղասեր ժողովուրդների կյանքին և բարեկամությանը։ Այստեղ մենք տեսանք անկեղծ բարեկամություն։

Արտահայտելով իր հիացմունքը ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության վերաբերյալ, Մավրիկյան կանանց ասոցիացիայի նախագահ Սանդրա Անժելա Պեննն ասաց.

— Տարիները մեռնում են, բայց գարունը հավերժ է։ Թող մեր բարեկամությունը գարնան նման հավերժ լինի։

Բրազիլիայի հասարակական գործիչ Մարիա Պրեստեսն իր



երկու այցերի հետ միասին գրի է առել իրենց հիշողությունները, որտեղ կարդում ենք.

«Մեզ հիացնում է սովետական մարդկանց գործունեությունը ընդհանուր բարեկամության ստեղծելու ուղղությամբ»։

Ականատես լինելով ՍՍՀՄ ազգերի ու ազգությունների եղբայրական բարեկամությանը, մեքսիկական գրող Խուան Միգել Մորան գրել է.

«Անցել են այն ժամանակները, երբ մարդիկ երազում էին այնպիսի բաների մասին, որոնք կարող էին իրականացվել։ Այժմ հասել է այն բաներն իրականացնելու ժամանակը։ Ձեր Հայաստանը այդ ցույց է տալիս այնպիսի համոզիչ ապացույցներով, որոնք ոչ մի կասկածի տեղիք չեն տալիս։ Ձեր այս խոսակցությունները մի փոքրիկ, բայց և մեծ հանրապետության մասին ակամայից հարկադրում են մեզ՝ հիշել գրողի պարտքի մասին, այն պարտքի, որը հավասար ու համընդհանուր է աշխարհի բոլոր այն գրողների համար, որոնք արժանի են իրենց կոչմանը, փութաջանորեն փնտրել ճշմարտությունը, գտնել այն և հռչակել աշխարհով մեկ, անկախ այն բանից, թե որքան դուր չի գա աշխարհի բռնակալներին — այս է մեր կարծիքով գրողի առաջնակարգ պարտքը, որը միայն իրեն՝ գրողին է վերաբերում, նրա խղճին, նրա ժողովրդին և ոչ երբեք նրանց, ովքեր անարժան կերպով նմանել են ժողովրդին պատկանող իշխանությունը։ Մեր խորին համոզմունքն այն է, որ ճշմարտության համար այլ ճանապարհ չկա, քան ծառայել մարդկության մեծամասնությանը։ Հավերժապես անցել են այն հեռավոր ժամանակները, երբ գրողը գրում ու աշխատում էր միայն թագավորների զվարճության համար։ Այսօր գրողը պարտավոր է պատկանել ժողովրդին, գրել ժողովրդի համար»[1]։

Սովետական Միության նկատմամբ արտակարգ հետաքրքրության առաջ բերեց «ՍՍՀՄ 1917—1967» ֆոտոցու-

[1] «Գրական թերթ», 22 նոյեմբերի 1958։

ցուցահանդեսը, որը 1967 թվականին շրջեց Արևմտյան Գերմանիայում: Ցուցահանդեսը կազմակերպել էր ՍՍՀՄ ժուռնալիստների միությունը սովետական ֆոտոժուռնալիստների ուժերով: Ցուցահանդեսը փաստական նյութերով պատմում է սովետական երկրի կեսդարյա հերոսական ուղու մասին: Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության քաղաքացիները դիտելով «ՍՍՀՄ 1917—1967» ֆոտոցուցահանդեսը, այն անվանեցին «Սովետական կյանքի հայելի»:

«Ցուցահանդեսը հրաշալի է և բազմաձայն,— գրել են Հանս և Ինգեհարդ Կրոլները,— Նա լավ պատկերացում է տալիս Սովետական Միության զարգացման և այդ երկրի մասին: Այդ ցուցահանդեսը մեր ժողովուրդների փոխըմբռնման և բարեկամության գործում թող ավանդ հանդիսանա»[1]:

Ցուցահանդեսը հաճախող մի այլ քաղաքացի գրել է.

«1000 նկարներ ցույց են տալիս, որ Սովետական Միությունում մարդը գտնվում է ուշադրության և նրա քաղաքականության կենտրոնում»[2]:

«ՍՍՀՄ 1917—1967» ֆոտոցուցահանդեսը լուրջ նշանակություն ունեցավ ժողովուրդների փոխըմբռնման գործում: Նա ցույց տվեց ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության և համագործակցության վիթխարի ուժը սոցիալիստական ու կոմունիստական շինարարության ընթացքում և ամբողջ աշխարհում խաղաղություն ստեղծելու գործում: Հենց դրան են վերաբերում ԳՖՀ բազմաթիվ քաղաքացիների տպավորությունների գրառումները: «Ֆոտոցուցահանդեսը լավ միջոց է խաղաղության և ժողովուրդների միջև փոխըմբռնումների ուղի ստեղծելու համար»[3]:

Այս բոլորը վկայում են այն մասին, որ ՍՍՀՄ-ում ժողովուրդների բարեկամությունը և համագործակցությունը աշ-

[1] «За рубежом», февраль 1968, № 6, стр. 31.

[2] Նույն տեղը:

[3] Նույն տեղը:



խարհի բոլոր ազգերի ու ազգությունների համար ոգեշնչող օրինակ են հանդիսանում:

Սովետական Միությունում ազգային հարցի լուծումը, սովետական հանրապետությունների տնտեսական ու կուլտուրական շինարարության վիթխարի հաջողությունները լուսավորում են ճնշված ժողովուրդների ազատագրական շարժման ճանապարհը, հանդիսանում են ոգեշնչող օրինակ և ամուր հիմք՝ սոցիալական ու ազգային ճնշման դեմ մղվող պայքարում:

Որքան մեծանում է սոցիալիստական բազմազգ պետության հզորությունը, այնքան խոր է թափանցում կապիտալիստական երկրների ժողովրդական զանգվածների մեջ ժողովուրդների բարեկամության գաղափարը, այնքան ավելի ու ավելի է հզորանում խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի կողմնակիցների բանակը:

Ահա թե ինչու սովետական բազմազգ ժողովուրդը, կոմունիստական կուսակցությունը, սոցիալիստական երկրների աշխատավորները միացյալ ուժերով կառուցում են նոր հասարակարգ, գիտենալով, որ կոմունիզմի կառուցումը հաղթանակ է կապիտալիզմի նկատմամբ:

### 3. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԱՇԽԱՐՀԻ ԲՈԼՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Կապիտալիզմի պայմաններում չկա ու չի կարող լինել ազգերի իրավահավասարություն: Կապիտալիզմին յուրահատուկ են զավթողական պատերազմները, ազգային ջարդերը, ազգային ճնշումը, գաղութային ստրկությունը և շովինիզմը: Կապիտալիզմի տիրապետության ժամանակաշրջանում ազգերը իրավազուրկ են, չունեն քաղաքական որևէ իրավունք:

Իմպերիալիզմը մոնոպոլիստական կապիտալի միջոցով շահագործում և թալանում է ճնշված ժողովուրդներին: Իմպերիալիզմի պայմաններում ազգային ճնշումը ընդունում է ամենաբիրտ և բազմաձև ձևեր:

Իմպերիալիզմը ծնում է ֆաշիզմ՝ ժողովուրդների և ռասաների թշնամանքի և հալածանքի գաղափարախոսության

և քաղաքականության։ Իմպերիալիզմի ամբողջ պատմությունը փոքր ժողովուրդներին ու ազգություններին դաժան հալածանքի և իրավազրկման պատմությունն է։ Իմպերիալիստները հավելյալ արժեքը պոկում են իրենց երկրների և ուրիշ պետությունների աշխատավորներին շահագործելու միջոցով։ Ժողովուրդները երբեք չեն հաշտվել իրենց ստրկական վիճակի հետ։ Գաղութային երկրների ժողովուրդները միշտ բարձրացրել են ազգային-ազատագրական պայքարի դրոշը։

Ազգային-ազատագրական հեղափոխությունները ոչնչացնում են գաղութային սիստեմը և քայքայում իմպերիալիզմի հիմքերը։ Նախկին գաղութային և կիսագաղութային երկրներում առաջացել են ավելի քան 70 անկախ ազգային պետություններ, որտեղ ժողովուրդները թևակոխել են իրենց զարգացման նոր շրջանը, որը նշանավորվում է ազատ կյանք ստեղծելով։

«Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, իմպերիալիզմի ընդհանուր թուլացման, սոցիալիզմի համաշխարհային սիստեմի առաջացման, բանվորական ու դեմոկրատական շարժման հզոր վերելքի իրադրության մեջ, հակաիմպերիալիստական, ազգային-ազատագրական հեղափոխությունների հարվածների ներքո քայքայվեց ժողովուրդների ճնշման գաղութային սիստեմը, որն ստեղծել է կապիտալիզմը»[1]։

Այժմ իմպերիալիզմը գործադրում է իր բոլոր ճիգերը՝ նախկին գաղութները տնտեսական ու սոցիալական կախման մեջ պահելու, նրանց առաջադիմությունը արգելակելու համար։ Իմպերիալիստները հանդես են գալիս «օգնության» դրոշի ներքո, որպեսզի այդ խարդախ եղանակով կարողանան նախկին գաղութային երկրներում պահել իրենց հին դիրքերը և գրավել նոր դիրքեր։ Այդ նպատակով նրանք օգտագործում են նաև ազգային և ռասայական դժտության թունավոր զենքը, ազգամիջյան կռիվները։ Սակայն ժողովուրդները հասկանում են իմպերիալիստական պետությունների նպատակները և ամենից առաջ ԱՄՆ-ի իմպերիալիզմի

[1] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50 տարին, էջ 78։



մտադրությունները։ ԱՄՆ-ի իմպերիալիզմը հենվելով ռեակցիայի վրա, կազմակերպում է դավադրություններ ու հեղաշրջումներ, բորբոքում ազգամիջյան երկպառակություններ, ազատագրված ժողովուրդների միջև հրահրում տերիտորիալ վեճեր։

Իմպերիալիզմի ագրեսիվ ուժերի դեմ հանդես են գալիս Սովետական Միությունը, սոցիալիստական երկրները և հակաիմպերիալիստական խաղաղասեր բոլոր ուժերը։ Սովետական Միությունն իր գլխավոր խնդիրն է համարում կանխել նոր համաշխարհային պատերազմը, ժողովուրդների միջև ստեղծել խաղաղություն ու բարեկամություն։

Սովետական ժողովուրդը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ անընդհատ օգնություն է ցույց տալիս ազատության և ազգային անկախության գործին, մարդկությանը փրկում համաշխարհային ջերմամիջուկային պատերազմից, պաշտպանում բոլոր ժողովուրդների շահերը, զարգացնում համագործակցությունը երիտասարդ անկախ պետությունների հետ, հետևողականորեն կենսագործում սոցիալական տարբեր կարգ ունեցող պետությունների խաղաղ գոյակցության սկզբունքները։

Ներկայումս Սովետական Միությունը առևտուր է անում աշխարհի գրեթե բոլոր երկրների հետ։ Նա տնտեսական, տեխնիկական և կուլտուրական կապեր ունի Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երիտասարդ անկախ պետությունների հետ։ ՍՍՀՄ-ի հետ տնտեսական կապերը ամրապնդում են այդ պետությունների անկախությունը և կարևոր պայմաններ ստեղծում խաղաղության և ժողովուրդների ազատ ու անկախ զարգացման համար։

ՍՍՀՄ արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը այդ երկրների հետ 1958 թվականին 805 միլիոն ռուբլի էր, իսկ 1965 թվականին հասավ մինչև 1744 միլիոն ռուբլու, այսինքն՝ աճը տեղի ունեցավ ավելի քան 2,1 անգամ։ Այդ նույն ժամանակաշրջանում ապրանքափոխանակության տարեկան միջին աճը կազմեց 11,7 տոկոս[1]։

[1] «Внешняя торговля», 1966, № 5.

Սովետական պետության և տնտեսապես թույլ զարգացած երկրների տնտեսական համագործակցությունը զարգանում է մի շարք ձևերով։

Առաջին՝ Սովետական Միությունն այդ երկրներին ցույց է տալիս տնտեսական մեծ օգնություն՝ երկարատև վարկեր տալով, որի շնորհիվ արագ կերպով զարգանում են նրանց ազգային արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և գիտությունը։

Երկրորդ՝ պետությունների փոխադարձ համաձայնությամբ ՍՍՀՄ սիստեմատիկաբար ցույց է տալիս գիտական ու տեխնիկական օգնություն։ Այդ երկրների համար ՍՍՀՄ-ում կազմվում են արդյունաբերական նորակառույցների տեխնիկական նախագծեր, օգնության կարգով այնտեղ են ուղարկվում ինժեներներ, տեխնիկներ, գիտական աշխատողներ։

Երրորդ՝ ՍՍՀՄ-ը տնտեսապես թույլ զարգացած երկրների հետ կամավոր առևտրի սկզբունքների հիման վրա կատարում է փոխադարձ շահավետ առևտուր։

Ազատագրված երկրների, ՍՍՀՄ և սոցիալիստական երկրների միջև կատարվող առևտուրը, տնտեսական ու տեխնիկական համագործակցությունը նպատակ ունեն միջազգային կյանքում սահմանել պետությունների և ժողովուրդների նոր փոխհարաբերություններ, որոնք արմատապես մերժում են անհավասարության որևէ տարրի առկայությունը։

Սովետական Միությունը երիտասարդ անկախ պետություններին տվել է շուրջ չորս միլիարդ ռուբլի պետական վարկ[1]։ Սովետական պետության անշահախնդիր օգնության հիման վրա այդ երկրները ինքնուրույն կերպով զարգացնում են իրենց էկոնոմիկան և կուլտուրան։

Այսպես, օրինակ, Հնդկաստանում պետական կապիտալ ներդրումների մեջ սովետական պետության կողմից տրված վարկերը կազմում են 12 տոկոս։ Աֆղանստանում սովետական պետության օգնության շնորհիվ ապահովվել է երկրի 1956—1961 թթ. առաջին հնգամյակի կապիտալ ներդրումների 1/3-ը։ Սովետական Միությունը օգնության կարգով Ասիայի և Աֆ-

[1] «Внешняя торговля», 1966, № 1.



րիկայի երկրներն է ուղարկում բազմաթիվ սարքավորումներ, մեքենաներ, ինչպես նաև տեխնիկական նախագծեր, որոնք հսկայական չափով օգնում են նրանց ազգային տնտեսության արագ զարգացմանը։

ՍՍՀՄ-ի օգնությամբ Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրներում կառուցվել ու կառուցվում են արդյունաբերական 600 օբյեկտ, որոնք առաջնակարգ նշանակություն ունեն այդ երկրների ինքնուրույն զարգացման համար։

ՍՄԿԿ և սովետական պետության արտաքին քաղաքականության մեջ կարևոր տեղ են գրավում երկրների համագործակցության ու համախմբվածության հետագա ամրապնդումը և ժողովուրդների բարեկամության զարգացումը։ ՍՍՀՄ արտաքին քաղաքականությունն ամբողջովին համապատասխանում է ամբողջ աշխատավոր մարդկության շահերին։ Սովետական Միությունը հանդես է գալիս ազգային խտրականության, ռասայական հակագիտական «տեսության» դեմ, որոնք խայտառակ կերպով ստորացնում են մարդու իրավունքները։

Աշխարհի ժողովուրդները այլևս չեն ցանկանում ապրել հին ձևով։ Նրանք պետության բախտը վերցնում են իրենց ձեռքը։ Մարդկության պատմության մեջ առաջին անգամ ստեղծվել է խաղաղության ճակատ, որն իր առաջ խնդիր է դրել մարդկությանը փրկել համաշխարհային նոր պատերազմից և ապահովել ժողովուրդների խաղաղ համագործակցությունը։ Աշխարհը երբեք չի տեսել այնպիսի մասսայական շարժում, որպիսին ներկայումս հանդիսանում է խաղաղության ու ժողովուրդների բարեկամության համար ծավալվող միջազգային շարժումը։ Սովետական Միության հետ միասին ձեռք-ձեռքի տված խաղաղության և բարեկամության համար պայքարում են սոցիալիստական երկրների ժողովուրդները։ Ժողովուրդների միջև եղբայրական բարեկամության և խաղաղության ամրապնդելու համար ծավալվող շարժումը պահանջում է բոլոր ազգերին ու ազգություններին տալ ազատություն և անկախություն։

Խաղաղության և բարեկամության գաղափարը միավո-

բում է բոլոր ռասաների ու ազգերի մարդկանց՝ առանց տարիքի և մասնագիտության, քաղաքական հայացքների և կրոնական համոզմունքների տարբերության:

Խաղաղության և ժողովուրդների բարեկամության համար մղվող պայքարն արդիականության ամենակենտրոնական հարցն է: Այդ գործում բացառիկ նշանակություն ունի ՍՍՀՄ բազմազգ ժողովուրդների լենինյան բարեկամության, սոցիալիստական երկրների համագործակցության ոգեշնչող օրինակը, որը զոդված է հեղափոխության բարիկադների վրա և սոցիալիստական շինարարության ու ֆաշիզմի դեմ մղված պայքարի տարիներին:

ՍՍՀՄ և սոցիալիստական երկրների եղբայրական ժողովուրդները միավորված են հիմնական նպատակների ու խնդիրների ընդհանրությամբ, որոնք ծառանում են սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման ընթացքում:

ՍՍՀՄ և սոցիալիստական երկրների ժողովուրդների բարեկամությունն ու համագործակցությունը, որ ոգեշնչող օրինակ են ամբողջ աշխարհի մարդկության համար, զոդված են աշխարհն վերափոխող մարքս-լենինյան ուսմունքով, պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարախոսությամբ:

Փոխադարձ խոր հարգանքը և վստահությունը միմյանց նկատմամբ, փոխադարձ անկեղծ շահագրգռվածությունը միմյանց հաջողություններով կազմում են ՍՍՀՄ ու սոցիալիստական երկրների ժողովուրդների դաշինքի, բարեկամության և համագործակցության հիմքը, որը հիանալի նոր օրինակ է ամբողջ աշխարհի մարդկության համար:

Այդ բարեկամությունն ու համագործակցությունը խարսխված են այն լավագույն ձգտումներով ու առաջավոր գաղափարներով, որոնց մասին երազել և պայքարել են միլիոնավոր մարդիկ, այժմ էլ երազում ու պայքարում են կապիտալիստական երկրների աշխատավոր ժողովուրդները:

ՍՍՀՄ և սոցիալիստական երկրների ժողովուրդների հզոր դաշինքի եղբայրական բարեկամության, անշահախնդիր համագործակցության սկզբունքները և վեհ գաղափարը կհաղթանակեն ամբողջ աշխարհում:

## ՎԵՐՋԱԲԱՆ

Սովետական ժողովուրդը, նրա հետ միասին նաև մյուս սոցիալիստական երկրների ժողովուրդները, առաջադեմ մարդկությունը 1967 թվականին տոնեցին Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության հիսունամյակը: Այդ տոնակատարության ժամանակ իրոք խոշորագույն հաղթանակ նշվեց, որ ՍՍՀՄ-ը դարձել է աշխարհի ամենազարգացած, ամենազորեղ տերություններից մեկը, որի հիմնական շարժիչ ուժերից մեկն էլ ժողովուրդների բարեկամությունն է, այն կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ նպաստում է աշխատավորական հոծ զանգվածների քաղաքական նախաձեռնության և ակտիվության զարգացմանը:

Սովետական երկիրը թևակոխել է իր երկրորդ հիսնամյակը, որի ընթացքում ՍՍՀՄ ժողովրդի առջև կանգնած է կոմունիզմի կառուցման վիթխարի խնդիրը:

Կոմունիզմի կառուցումը, սոցիալիստական երկրների և ամբողջ աշխարհի առաջադեմ մարդկության շահերը պահանջում են, որ էլ ավելի ամրապնդվեն ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունն ու համագործակցությունը և ժողովուրդները ուս-ուսի տված պայքարեն իմպերիալիստական ագրեսորների դեմ, բոլոր ժողովուրդների համար ապահովեն խաղաղությունն ու ազատ կյանքը:

Կոմունիստական շինարարության տարիներին եւ բարձր գնահատելով ժողովուրդների բարեկամությունը, եղբայրական դաշինքում իրենց ընդհուպ դիրք հանդես են գալիս փոխա-

դարձ խոր հարգանքը և վստահությունը միմյանց նկատմամբ։

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը, սոցիալիստական երկրների և ամբողջ աշխարհի կոմունիստական ու բանվորական կուսակցությունները, առաջնորդվելով մեծ Լենինի անմահ ուսմունքով, ամրապնդում և անընդհատ զարգացնում են ժողովուրդների եղբայրական բարեկամությունն ու սոցիալիստական համագործակցությունը։ Սովետական Միության և սոցիալիստական երկրների մեծ ընտանիքի ժողովուրդները շաղկապված են մարքսիզմ-լենինիզմի ու սոցիալիստական ինտերնացիոնալիզմի սկզբունքների վրա խարսխված, պատմության ընթացքում ահավոր փորձությունը դիմացած եղբայրական անխախտ բարեկամության ու համակողմանի համագործակցության կապերով, որոնք օրավուր զարգանում և ամրապնդվում են։ Պատմական այն ժամանակաշրջանը, որի մեջ ապրում է մարդկությունը, դա սոցիալիզմի գաղափարների հաղթանակի, առաջադիմության, ազգային-ազատագրման և խաղաղության ժամանակաշրջանն է, որը սկսվեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով, և իրենց ժողովուրդների բարեկամության լենինյան գաղափարը։

Համաշխարհային սոցիալիստական սիստեմը բոլորովին նոր պայմաններ և եղբայրական հարաբերություններ է ստեղծել ժողովուրդների անշահախնդիր օգնության և բարեկամության պատմության մեջ, որոնք էլ ավելի միասնական են դարձնում ժողովուրդների համատեղ գործողությունները։ Այժմ, քան երբևէ, խոսուն է հնչում սոցիալիստական երկրների բազմազգ ժողովուրդների բարեկամության միասնական կոչը, որն իր բարերար ազդեցությունն է ունենում սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման ընթացքի, կոմունիստական աշխարհի բարգավաճման և համայն աշխարհի խաղաղության գործի հաղթանակի վրա։ Դրա լավագույն օրինակը հանդիսացան 1968 թ. փետրվարին կոմունիստական և բանվորական կուսակցությունների ներկայացուցիչների Բուդապեշտի կոնսուլտատիվ հանդիպումը, քաղաքական կոնսուլտատիվ կոմիտեի Սոֆիայի խորհրդակցությունը և միջազգային նշանակություն ունեցող այլ իրադարձություններ,



որոնցով այնքան հարուստ է ժողովուրդների արդի պատմությունը։ 1968 թվականի փետրվարի 6—7-ը Սոֆիայում կայացավ Վարշավայի պայմանագրի երկրների քաղաքական կոնսուլտատիվ կոմիտեի հերթական խորհրդակցությունը, որին մասնակցեցին բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագրի մասնակից՝ եվրոպայի սոցիալիստական երկրների եղբայրական կուսակցությունների ու կառավարությունների ղեկավարները։ Այստեղ ընդունվեց Դեկլարացիա, որը լուրջ նախազգուշացում է Ամերիկայի Միացյալ Նահանգներին։ Դեկլարացիայում նշված է, որ զավթիչների դեմ խիզախորեն մարտնչող Վիետնամի ժողովրդի, Վիետնամի Դեմոկրատական Հանրապետության կողմն են եղբայրական սոցիալիստական երկրները, հակաիմպերիալիստական և խաղաղության հզոր ուժերը։ «Հենվելով նրանց աջակցության և օգնության վրա, Վիետնամի ժողովուրդը կհաղթի, և այն արդար գործը, որի համար նա պայքարում է, կհաղթանակի»,— ասված է այդ փաստաթղթի մեջ։

Խաղաղության և ժողովուրդների անվտանգության համար մղվող պայքարի գլխավոր հենարաններն են բոլոր խաղաղասեր ուժերը և ամենից առաջ սոցիալիստական երկրների միասնությունն ու համախմբվածությունը, որոնց էլ ավելի ամրապնդումն այժմ առավել մեծ նշանակություն ունի։ Նա կոչված է պաշտպանելու ու ամրապնդելու խաղաղությունը և ժողովուրդների բարեկամությունը։

1968 թվականի ապրիլի 9—10-ը տեղի ունեցավ ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի պլենումը։ Պլենումը քննարկեց հատուկ զեկուցում միջազգային դրության հրատապ պրոբլեմների և համաշխարհային կոմունիստական շարժման համախմբման համար ՍՄԿԿ-ի պայքարի մասին։ Այդ կապակցությամբ պլենումն ընդունեց որոշում, որի մեջ հատուկ ուժով նշվեց Վարշավայի պայմանագրի քաղաքական կոնսուլտատիվ կոմիտեի Սոֆիայում կայացած խորհրդակցությունում ընդունված դեկլարացիայի նշանակությունը։ Պլենումը նշեց, որ պատմական զարգացման արդի ժամանակաշրջանը բնութագրվում է կապիտալիզմի և սոցիալիզմի գաղափարական

պայքարի խիստ սրումով: Կար ժամանակ,— ասված է պլենումի որոշման մեջ,— երբ իմպերիալիզմը գլխավոր հույսը դնում էր սոցիալիզմը մարտադաշտերում խորտակելու վրա: Հիմա դրությունն արմատապես փոխվել է: Անխորտակելի է սոցիալիստական համագործակցության և ամենից առաջ Սովետական Միության պաշտպանական հզորությունը:

Իմպերիալիզմը և ամենից առաջ ԱՄՆ-ի իմպերիալիզմը, ռազմա-քաղաքական ավանտյուրաներ կատարելուց բացի, ավելի ու ավելի մեծ ջանքեր է թափում սոցիալիստական երկրների, կոմունիստական ու ամբողջ դեմոկրատական շարժման և ժողովուրդների բարեկամության դեմ քաղաքական ու գաղափարական քայքայիչ գործունեություն ծավալելու համար[1]:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, պլենումն իր որոշման մեջ ընդգծեց, որ Սովետական Միության՝ որպես սոցիալիզմի առաջին երկրի, որպես կոմունիզմ կառուցող երկրի, օրինակի ուժը արդի պայմաններում հատուկ նշանակություն ունի սոցիալիստական երկրների համագործակցության և բարեկամության զարգացման համար:

Սոցիալիստական լագերի երկրների ժողովուրդները, կոմունիստական և բանվորական կուսակցությունները, հանդես գալով ռեակցիայի ուժերի դեմ, միահամուռ կերպով ընդգծում են, որ համաշխարհային սոցիալիստական սիստեմը մեծ հաջողությունների է հասել տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում, ժողովուրդների բարեկամության զարգացման գործում:

Սոցիալիստական երկրների մեծ ընտանիքի բոլոր իրավահավասար անդամները արժանի ավանդ են ներդնում խաղաղության, ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում՝ հակաիմպերիալիստական բոլոր ուժերի միասնությունն ու համախմբվածությունը ամրապնդելու համար:

Համաշխարհային սոցիալիստական սիստեմի նորանոր հաղթանակների համար հսկայական նշանակություն ունի

[1] «Правда», 12 апреля 1968.



ժողովուրդների եղբայրական բարեկամության և սոցիալիստական համագործակցության հզոր ուժի անընդհատ զարգացումը: Այդ մեծ նպատակի համար իրենց միասնական կամքով պատրաստակամություն են հայտնում սոցիալիստական երկրների կոմունիստական և բանվորական կուսակցությունները[1]:

1968 թվականի օգոստոսի 3-ին Բրատիսլավայում տեղի ունեցավ Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության, Հունգարիայի Ժողովրդական Հանրապետության, Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության, Լեհաստանի Ժողովրդական Հանրապետության, Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության, Չեխոսլովակիայի Սոցիալիստական Հանրապետության կոմունիստական ու բանվորական կուսակցությունների ներկայացուցիչների խորհրդակցությունը: Խորհրդակցության մասնակիցները լիակատար անկեղծության ու բարեկամության մթնոլորտում քննարկեցին սոցիալիզմի, սոցիալիստական համագործակցության հետագա ամրապնդման, համաշխարհային կոմունիստական շարժման համախմբվածության հետագա ամրապնդման համար մղվող պայքարի հրատապ հարցերը: Խորհրդակցությունում նշվեց, որ յուրաքանչյուր ժողովրդի հերոսական ջանքերի, անձնվեր աշխատանքի գնով ձեռք բերված նվաճումների ամրապնդումն ու պաշտպանությունը սոցիալիստական բոլոր երկրների ընդհանուր ինտերնացիոնալ պարտքն է, իսկ դրա իրականացման համար անհրաժեշտ են սոցիալիզմի երկրների ժողովուրդների միասնություն, եղբայրական բարեկամություն, փոխադարձ օգնություն և համագործակցություն: Եղբայրական կապերը,— ասված է սոցիալիստական երկրների կոմունիստական ու բանվորական կուսակցությունների հայտարարության մեջ,— ընդլայնում ու բազմապատկում են սոցիալիզմի ամեն մի երկրի հնարավորությունները, բազմակողմանի համագործակցությունը, ամրապնդում ամեն մի երկրի սուվերենությունը և ազգային անկախությունը: Սակայն ակնհայտ է, որ արդի

[1] «Правда», 24 февраля 1968.

էտապում սոցիալիզմի երկրների ժողովուրդների անձնվիրաբար աշխատանքը կատարվում է միջազգային բարդ իրադրության պայմաններում։ Իմպերիալիզմը ձգտում է սոցիալիստական համագործակցությունը խարխլել ներսից, գժտեցնել սոցիալիզմի երկրների ժողովուրդներին, սասանել համաշխարհային սոցիալիզմի երկրների միասնությունը։ Այդ նպատակով ռեակցիոն ուժերը սոցիալիզմի երկրների դեմ կազմակերպում են քաղաքական ու գաղափարական դիվերսիաներ։ Նրանք ամեն կերպ փորձում են արատավորել, զրպարտել, կեղծել սոցիալիստական սիստեմը։ Իմպերիալիզմը շարունակում է ագրեսիայի ու պատերազմի քաղաքականությունը, ժողովուրդներին ստրկացնելու քաղաքականությունը։

Ռեակցիոն ուժերի նենգ տակտիկան ակնհայտորեն երևան եկավ Չեխոսլովակիայում 1968 թվականին տեղի ունեցած իրադարձություններում։ Չեխոսլովակիայում իմպերիալիզմի ակտիվ աջակցությամբ, աջ, հակասոցիալիստական ուժերը, ռևիզիոնիստական և նացիոնալիստական տարրերը կատաղի գրոհներ սկսեցին սոցիալիստական կարգի հիմքերի դեմ։

Իմպերիալիզմի գաղափարախոսությունը ձգտում է պղտորել չեխոսլովակյան ժողովրդի գիտակցությունը։ Ռեակցիոն ուժերը ցանկանում էին ապակողմնորոշել չեխոսլովակյան ժողովրդին և խարխլել այն համոզմունքը, որ Չեխոսլովակիան իր անկախությունը և սուվերենությունը կարող է պահպանել միայն որպես սոցիալիստական երկիր, որպես սոցիալիստական համագործակցությամբ միավորված ընտանիքի անդամ։ Չեխոսլովակիայում տիրող այսպիսի իրադարձությունների նկատմամբ եղբայրական կոմունիստական կուսակցություններն անտարբեր լինել չէին կարող, քանի որ նրանցից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում ո՛չ միայն իր երկրի բանվոր դասակարգի, իր ժողովրդի հանդեպ, այլև միջազգային բանվոր դասակարգի, համաշխարհային կոմունիստական շարժման հանդեպ։ Ելնելով ինտերնացիոնալիզմի այդ սկզբունքից, Վարշավայի հանդիպման մասնակիցները իրենց կոմունիստական ու բանվորական կուսակցությունների կենտրոնական կոմիտեների անունից



դիմեցին Չեխոսլովակիայի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեին՝ կոչ անելով պաշտպանել բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների իշխանությունը, սոցիալիստական նվաճումները[1], ամրապնդել սոցիալիզմի եղբայրական երկրների միասնությունը, ժողովուրդների բարեկամությունը և համագործակցությունը։ Եղբայրական կուսակցությունները համառ ու հետևողական աշխատանքով հսկայական աջակցություն ցույց տվեցին Չեխոսլովակիայի կոմունիստական կուսակցությանը, որպեսզի նա կարողանա ճիշտ կողմնորոշվել և հաղթահարել այն լուրջ դժվարությունները, որոնք առաջացել էին երկրում։

Սոցիալիստական երկրների կոմունիստական ու բանվորական կուսակցությունների 1968 թվականի օգոստոսի 3-ին Բրատիսլավայում գումարված խորհրդակցությունում միահամուռ կերպով ընդունվեց հայտարարություն, որի մեջ ասված է, որ նրանք հանդես են գալիս միասնաբար, խորապես համոզված լինելով, որ հայտարարության մեջ արտահայտված դիրքորոշումներն ու հայացքները համապատասխանում են եղբայրական բոլոր երկրների ու կուսակցությունների շահերին, սոցիալիզմի երկրների ժողովուրդների անխախտ բարեկամության գործին, խաղաղության, դեմոկրատիայի, ազգային անկախության և սոցիալիզմի շահերին[2]։

Պատմական այդ փաստաթղթում մեկ անգամ ևս ընդգծվեց միասնության ուժի հսկայական նշանակությունը, եղբայրական ժողովուրդների բարեկամության ու համագործակցության կարևորությունը սոցիալիզմի երկրների անվտանգության ու կուլտուրական զարգացման և պաշտպանունակության ամրապնդման համար։

Սոցիալիստական համագործակցության պատմական փորձը ցույց տվեց, որ սոցիալիզմի երկրների միջև սիստեմատիկաբար անհրաժեշտ է զարգացնել և ամրապնդել ժողովուրդների եղբայրական բարեկամությունն ու միասնությունը, փոխօգնությունը։

[1] «Правда», 20 июля 1968.

[2] «Правда», 4 августа 1968.

Բոլոր երկրների կոմունիստական և բանվորական կուսակցությունները շատ կարևոր ավանդ են ներդնում ժողովուրդների բարեկամության գանձարանի մեջ, օրինակ ցույց տալիս միասնության համար մղվող պայքարում։

«Միջազգային կոմունիստական շարժման համախմբման, բոլոր եղբայրական կուսակցությունների, բոլոր հեղափոխական ուժերի գործողությունների միասնության գիծը նոր հնարավորություններ է բացում մոբիլիզացնելու ամենալայն մասսաներին իմպերիալիզմի դեմ, խաղաղության և ժողովուրդների անվտանգության գործի հաղթանակի համար, դեմոկրատիայի, ազգային ազատագրության և սոցիալիզմի հաղթանակի համար մղվող պայքարում»[1]։

Սովետական ժողովրդի համաշխարհային պատմական առաքելությունը հիացնում է արտասահմանյան մեր բարեկամներին։ Այդ հաջողությունները այնքան ակնբախ են, որ չեն կարող չտեսնել նաև կոմունիզմի թշնամիները։ ՍՍՀՄ ժողովուրդները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ իրականացնում են աշխարհի ժողովուրդների հետ բարեկամության, համագործակցության, փոխըմբռնման ու վստահության մեծագույն խնդիրները։

Գերմանա-ֆաշիստական ստրատեգները պնդում էին, թե սովետական կարգերը անկայուն են, թե պատերազմի ընթացքում առաջին իսկ հարվածից և սովետական բանակի առաջին անհաջողությունից հետո ընդհարումներ առաջ կգան բանվորների ու գյուղացիների միջև, հակասություններ կբռնկվեն ՍՍՀՄ ժողովուրդների միջև, և երկրի միասնությունը կխորտակվի։ Հիտլերը ի լուր ամենքի հայտարարեց. «Մենք կոչնչացնենք Ռուսաստանը, որ նա այլևս երբեք չկարողանա ոտքի կանգնել»։ Սակայն գերմանա-ֆաշիստական պարագլուխները չարաչար սխալվեցին։ Հայրենական պատերազմի տարիներին էլ ավելի ամրապնդվեցին ինչպես բանվորների ու գյուղացիների դաշինքը, այնպես էլ ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը և համագործակցությունը։ ՍՍՀՄ ժողովուրդների լենինյան ընտանիքը դարձավ էլ ավելի միասնական, անխորտակելի մի ամրոց, որը պատերազմում անձնվիրաբար աջակցեց իր զինված ուժերին։ ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական բարեկամությունն ու սոցիալիստական համագործակցությունը հանդիսանում են սովետական բանակի ցեմենտող հզոր ուժը, արիության և քաջության ծնող նրա աղբյուրը։ Սովետական բանակի միասնությունն ու հզորությունը արդյունք են ՍՍՀՄ եղբայրական ժողովուրդների բարեկամական սերտ կապերի ու համագործակցության։ Սովետական բանակի հերոսության աղբյուրը ժողովուրդների մեծագույն աջակցության մեջ է։ Սովետական Միության բոլոր ժողովուրդները միահամուռ պաշտպան կանգնեցին սոցիալիստական հայրենիքին՝ առանց ազգության և դավանանքի խտրության։

[1] «Правда», 11 января 1968.



Սովետական երկրի բազմազգ ժողովուրդների բարեկամությունը դիմացավ պատերազմի բոլոր դժվարություններին ու փորձություններին և էլ ավելի կոփվեց ու ամրապնդվեց։ Հայրենական պատերազմը ցույց տվեց, որ ՍՍՀՄ ժողովուրդը ընդունակ է հրաշքներ գործելու։

Սովետական ժողովրդի բարեկամության և հայրենասիրության մեծ ուժն այն է, որ նրանց հիմքում ո՛չ թե ռասայական կամ նացիոնալիստական նախապաշարմունքներ են, այլ ժողովրդի անսահման նվիրվածությունն ու հավատարմությունն իր հայրենիքին, ՍՍՀՄ և սոցիալիստական երկրների բոլոր ազգերի եղբայրական համագործակցությունը։

Մարքս-լենինյան ուսմունքում ներդաշնակորեն զուգակցվում են ժողովուրդների ազգային տրադիցիաները և ընդհանուր կենսական շահերը։ Կոմունիստական կուսակցությունը ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման ընթացքում Սովետական Միության բոլոր ազգերին ու ժողովուրդներին համախմբեց եղբայրական միասնական լենինյան ընտանիքի մեջ, որում դրսևորվում է ՍՍՀՄ ժողովուրդների անխորտակ և այժմ ավելի ու ավելի ամրապնդվող բարեկամության և համագործակցության հիմքերը։

Մեծ հոկտեմբերի հաղթանակի շնորհիվ սովետական երկրում հաստատված բոլոր ազգերի ու ազգությունների իրավահավասարության գաղափարախոսությունը, ժողովուրդ-

ների լենինյան բարեկամության ու համագործակցության անհաղթ ուսմունքը լիակատար հաղթանակ տարավ բուրժուական ռեակցիոն ռասայական քաղաքականության դեմ։

Սովետական Միությունը բազմազգ պետության օրինակ է, ուր ազգային հարցը և տարբեր ազգերի համագործակցությունը լուծված են լավագույն ձևով, քան որևէ այլ պետության մեջ։

ՍՍՀՄ զարգացման ամբողջ պատմությունը ամբողջապես հաստատեց ՍՄԿԿ իմաստուն և հեռատես քաղաքականությունը ազգային հարցում։ Ժողովուրդների բարեկամությունը սովետական ազգային քաղաքականության մեծագույն նվաճումներից մեկն է։ Քանի գոյություն ունի այդ բարեկամությունը, սովետական ժողովուրդը կլինի ազատ և անհաղթելի։ Ոչինչ սարսափելի չէ, ո՛չ ներքին և ո՛չ էլ արտաքին թշնամին, քանի այդ բարեկամությունը գոյություն ունի և զարգանում է։

Մեծ է սովետական ժողովրդի ծառայությունը մարդկության պատմության առաջ։ ՍՍՀՄ ժողովուրդները հարգում են աշխարհի բոլոր երկրների ժողովուրդների իրավունքներն ու անկախությունը և իրենց ամենօրյա գործունեությամբ, սոցիալիզմի և կոմունիզմի գաղափարների կենսագործումով օրինակ են ցույց տալիս հաշտ ու համերաշխ ապրելու համար։ Դրա մեջ է ազատասեր ժողովուրդների հետ Սովետական Միության աճող և ամրապնդվող կապերի հիմքը արդի էտապում։

ՍՍՀՄ բազմազգ ժողովուրդների եղբայրական բարեկամության մեծ ուժը, նրանց լենինյան համերաշխ ընտանիքը ոգեշնչող հիանալի օրինակ է ամբողջ աշխարհի աշխատավոր մարդկության համար։

# ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՑԱՆԿ

## 1. ՄԱՐՔՍԻԶՄ-ԼԵՆԻՆԻԶՄԻ ԿԼԱՍԻԿՆԵՐԻ ԵՐԿԵՐ


Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, *Կոմունիստական կուսակցության մանիֆեստ*, Երևան, 1962։

Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, *Ընտիր երկեր*, հ. 2, Երևան, 1950։

Վլադիմիր Իլյիչ Լենին. *Կենսագրություն*, Երևան, 1961։

**Ленин В. И.** Вопросы национальной политики и пролетарского интернационализма. М., 1959.

**Ленин В. И.** О дружбе с народами Востока. М., 1961.

**Ленин В. И.** О национальном и национально-колониальном вопросе (сборник). М., 1956.

**Ленин В. И.** Соч. т. т. 1, 5, 9, 13, 20, 21, 26, 28, 30.

**Маркс К., Энгельс Ф. и Ленин В. И.** О пролетарском интернационализме. М., 1957.


## 2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Աբովյան Խ., *Երկերի ժողովածու*, հատ. 2, 1949։

Առաքելյան Ա. Գ., *Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից*, Ե., 1953։

Ադիգյոզալյան Հ. Հ., *Հայաստանի աշխատավորների ավանդը ՍՍՀՄ հիդրոտեխնիկական կառուցումներում (նախապատերազմյան տարիներ)*, Ե., 1960։

Ալլավերդով Զ., *Թուրքմենստանը սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում*, Ե., 1967։

Ալիխանյան Ս. Տ., *Հայ և վրաց աշխատավորության համագործակցության վառ օրինակը*, Ե., 1953։

Ասատրյան Ա. Ա., *Անդրկովկասի ժողովուրդների տնտեսական համագործակցությունն ու փոխօգնությունը*, Ե., 1967։

Աղայան Մ. Գ., *Հայ և ադրբեջանական ժողովուրդների դարավոր բարեկամությունը*, Ե., 1961։

Բաբայան Խ. Հ., *Մարքսիզմի տարածումը Հայաստանում*, Ե., 1967։

Բուրոկյավիչյուս Մ. Մ., *Լիտվան ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում*, Ե., 1967։

Գրիգորյան Զ. Տ., *Հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը*, Ե., 1960։

Դարբինյան Հ., *ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության արտացոլումը սովետահայ գրականության մեջ*, Ե., 1958։

Դալլաքյան Կ. Մ., *Անդրկովկասի ժողովուրդների ինտերնացիոնալ համախմբման համար*, Ե., 1964։

Դալլաքյան Կ. Մ., *Հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամական կապերը*, Ե., 1966։

Եղիազարյան Ա. Մ., *Սոցիալիստական ազգերի զարգացման օրինաչափությունները և ինտերնացիոնալ դաստիարակությունը*, Ե., 1964։

Կարապետյան Տ., *Վրաց գրական միտքը Հայաստանի և հայերի մասին*, Ե., 1962։

Կախիանիձե Մ. Կ. և Խասիս Բ. Ա., *Սովետական Վրաստանի տնտեսական և կուլտուրական զարգացումը*, Ե., 1966։

Հակոբյան Ա. Մ., *Սովետական ժողովրդի անխախտ բարեկամությունը*, Ե., 1954։

Հարությունյան Ն. Բ., *Հայ և ուկրաինական ժողովուրդների բարեկամությունը*, Ե., 1954։

Հովհաննիսյան Ա. Գ., *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության*, գիրք 1, 2, Ե., 1957։

Հովեան Գ., *Ռուս-հայ գրական կապերը (19—20-րդ դարերում)*, գիրք 1, Ե., 1960։

Ղարիբջանյան Գ. Բ., *Վ. Ի. Լենինը և Անդրկովկասի ժողովուրդների ազատագրումը*, Ե., 1960։

Մառ. *Հայ-վրացական հարաբերությունների մասին անցյալում*, Թիֆլիս, 1898։

Մելիքսեթ-Բեկ Լ. Մ., *Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 1, քաղվածքներ վրաց. բնագրերից հայերեն թարգմանությամբ, ներածություն-ծանոթություններով և հավելվածներով*, Ե., 1934։

Նանումյան Ռ., *Հայ-ռուս գրական կապերի շուրջը։ Համառոտ ակնարկ*, Ե., 1945։

Նայզապարին Յ. Ա., *Ղազախական ՍՍՀ էկոնոմիկայի և կուլտուրայի վերելքը*, Ե., 1967։

Ներսիսյան Մ. Գ., *Դեկաբրիստները Հայաստանում*, Ե., 1958։

Շահինյան Ա. Խ., *Ուրվագծեր Անդրկովկասյան ժողովուրդների կուլտուրական համագործակցության պատմության*, Ե., 1963։

Ոսկերչյան Ա. Կ., *Ռուս և Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության մասին*, Ե., 1956։

Չապան Յա. Ե., *Ռուսաստանյան ֆեդերացիան 50 տարում*, Ե., 1967։

Պառսամյան Վ. Ա., *Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները*, Ե., 1947։

Պառսամյան Վ. Ա., *Հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը*, Ե., 1962։

Պետրոսյան Ս. Մ. և Խաչատրյան Գ. Մ., *ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը սովետական բազմազգ պետության հզորության և ամրապնդման հիմքն է*, Ե., 1956։



Վարդանյան Ա. Վ., *Սովետական Ռուսաստանի օգնությունը Հայաստանին 1920—1925 թթ.*, Ե., 1959։

Տարմխոտ Վ. Յու., Տալյուն Լ. Ա., Խալլիկ Կ. Ա., *Էստոնական ՍՍՀ էկոնոմիկայի և կուլտուրայի ծաղկումը սովետական իշխանության տարիներին*, Ե., 1967։

Ուզունյան Կ. Բ., *Բարեկամության մեծ ուժը*, Ե., 1965։

Օգանեսով Հ. Մ., *Լենինյան ազգային քաղաքականության կենսագործումը*, Ե., 1961։

Ֆազիխոջաև Կ. Ֆ. *Սովետական Ուզբեկստան*, Ե., 1967։

**Абдушукуров Р. Х.** Исторический опыт решения национального вопроса в республиках Средней Азии и Казахстана. М., 1962. (Материалы к Всесоюзной научной сессии «Закономерности перехода ранее отсталых народов к социализму и коммунизму, минуя стадию капитализма»).

**Абдушукуров Р. Х.** Октябрьская революция, расцвет узбекской социалистической нации и сближение ее с нациями СССР. Ташкент, 1962.

**Агаджанов М. В.** Г. К. Орджоникидзе в борьбе за осуществление национальной политики Коммунистической партии в Закавказье (1921—1926 г. г.). Тбилиси, 1960.

**Акимов А. Х.** Развитие содружества трудящихся Дагестана с братскими народами СССР и социалистического лагеря в послевоенный период. Махачкала, 1960.

**Аржаков С.** Дружба народов — могучий источник силы Советского Союза в борьбе за коммунизм. Якутск, 1956.

**Афтенюк С.** В братской семье народов СССР. Кишинёв, 1957.

**Бабаев С.** В братской семье народов СССР. Ашхабад. 1957.

**Багликов Б.** Ленинские произведения по национальному вопросу. М., 1962.

**Берикетов Х. Г.** Ленин и народы Закавказья. Нальчик, 1961.

**Брежнев Л. И.** Пятьдесят лет великих побед социализма. «Правда», 7 ноября 1967.

**Бурмистрова Т. Ю.** Разработка В. И. Лениным программы большевистской партии по национальному вопросу (1910—1914 г. г.). М., 1962.

**Верховцев И. П.** Великая дружба народов СССР. М., 1954.

**Гаджиев И. Б.** Совместная борьба бакинского пролетариата и трудящихся Дагестана против английских интервентов и деникинской контрреволюции в 1919—1920 г. г. Махачкала, 1960.

**Георгадзе М. П.** Разрешение национального вопроса в СССР. М., 1958.

Горький М. Ранняя революционная публицистика. М., 1938.
Грошев И. И. Борьба Коммунистической партии за развитие и укрепление дружбы народов СССР в годы строительства социализма. Кишинёв, 1955.
Джатиев Т. Магистраль дружбы. Очерк. Орджоникидзе, 1962.
Джафарли Т. Страницы Великой дружбы. Баку, 1961.
Дзержинский Ф. Э. Избранные произведения. Т. 1—2, М., 1957.
Добрынин Б. Ф. Физическая география СССР. М., 1948.
Еремян С. Т. Юрий Боголюбский в армянских и грузинских источниках. Е., 1946. (Научн. труды Ереванск. ун-та, XXIII, 1946).
Ерыгин С. К. и Рыженко Ф. Д. Ленинская программа по национальному вопросу. М., 1959.
Жвания Г. Большевики Закавказья в борьбе за ленинские идеи дружбы народов. Тбилиси, 1963.
Златопольский Д. Л. Ленинская национальная политика и дальнейшие расширения прав союзных республик. М., 1957.
Каприн В. М. Дружба народов СССР — источник могущества Советского государства. М., 1957.
Калинин М. И. Избранные произведения. Т. 1—2, М., 1960.
Каммари М. Д. Расцвет социалистических наций и их сближение в период перехода от социализма к коммунизму. Львов, 1961.
Капырин П. Законы Великой дружбы. М., 1962.
Касим-заде Ф. Дружба и братское сотрудничество социалистических наций Закавказья. Баку, 1961.
Киров С. М. Избранные произведения, статьи и речи (1914—1934). М., 1957.
Косыгин А. Н. Директивы XXIII съезду КПСС по пятилетнему плану развития народного хозяйства СССР на 1966—1970 годы. М., 1966.
Крупская Н. К. Педагогические сочинения. Т. 1—11, М., 1957.
Малыбаев О. Дружба испытанная в боях за Родину. Алма-Ата, 1955.
Назаренко Ю. Интерес на Украине к культуре братской Армении. Е., 1954. Отд. оттиск из «Известий» АН Арм. ССР, обществ. науки, 1954, № 5.
Нерсисян М. Из истории русско-армянских отношений. Кн. 1—2, Е., 1956—1961.
Новиков И. А. Дружба народов СССР — источник могущества Советского государства и его вооруженных сил. М., 1959.
Орджоникидзе Г. К. Статьи и речи. Т. 1—2, М., 1956.
Олонецкий А. А. Из истории Великой дружбы. (Очерки из истории грузино-русских взаимоотношений в первой половине XIX столетия). Тбилиси, 1954.
Пайчадзе Г. В единой братской семье народов. Тбилиси, 1961.
Палецкий Ю. Думы о старшем брате. М., 1959.



Писарев И. Ю. Народонаселение СССР. М., 1962.
Попов А. Г. Традиции дружбы. Грозный, 1962.
Пурин В. Р. Латвийская ССР в семье братских советских республик. М., 1960.
Радюк Д. Торжество ленинских идей дружбы народов. Минск, 1957.
Ронин С. Л. Принцип пролетарского интернационализма в советском социалистическом праве. М., 1956.
Сайранов Х. С. Дружба рождалась в борьбе. М., 1959.
Свердлов Я. М. Избранные произведения. Т. 1—3, М., 1957.
Сталин И. В. Сочинения, т. 1—13, М., 1946.
Степанян С. С. Интернационализм — основа национальной политики КПСС. Е., 1967.
Тошоев М. С. Из истории дружбы осетинского народа с великим русским народом. Орджоникидзе, 1954.
Туляну Вл. Великая сила нерушимой дружбы. Кишинёв, 1962.
Турсунбаев А. КПСС — вдохновитель и организатор дружбы и сотрудничества народов в строительстве социализма и коммунизма. Алма-Ата, 1962.
Хармандарян С. В. Боевое содружество армянского народа с народами Советского Союза в Великой Отечественной войне. Е., 1955.
Шалдыбин П. Я. Великое братство. Симферополь. 1962.
Шалимов М. Дружба и братство народов — закон нашей жизни. Хабаровск, 1962.
Шаумян С. Г. Избранные произведения. Т. 1—2, М., 1957—58.
Шиварадзе А. Дружба народов и строительство коммунизма в СССР. Баку, 1962.
Шкадаревич И. И. Пропаганда идей дружбы народов и социалистического интернационализма. М., 1962.

3. ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ ԵՎ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՒՍ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

*Բարեկամություն (Հայ և ռուս ժողովուրդների գրական և կուլտուրական կապերի մասին). (կազմեց Ա. Արզումանյանը), Երևան, 1958։*
*Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50 տարին։*
*ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսները, Երևան, 1967։*
*Մեծ Հոկտեմբերը և Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության ամրապնդումը, Երևան, 1958։*
*ՍՄԿԿ XXIII համագումարի նյութերը, Երևան, 1967։*
Великая дружба (сборник посвящается 300-летию воссоединения Украины с Россией). Ереван, 1954.
Вопросы истории Коммунистической партии Литвы. Вильнюс, 1961.
Декреты Советской власти. Т. 1—3, М., 1957—1964.

Из истории Коммунистической партии Таджикистана, Душанбе, 1964.

История Коммунистической партии Советского Союза, в 6 томах, т. 1—3, М., 1964—1967.

Исторические связи и дружба украинского и армянского народов (сборник материалов научной сессии). Ереван, 1961.

Исторические связи и дружба украинского и армянского народов. Киев, 1965.

КПСС в резолюциях и решениях съездов, конференций, пленумов ЦК. Ч. 1—4, М., 1954—1960.

Конституция (основной закон) Союза Советских Социалистических Республик. М., 1966.

Очерки истории Московской организации КПСС. М., 1966.

Очерки истории Ленинградской организации КПСС. Ч. I. Л., 1962.

Очерки истории Коммунистической партии Украины. Киев, 1964.

Очерки истории Коммунистической партии Белоруссии. Минск, 1966.

Очерки истории Коммунистической партии Узбекистана. Ташкент, 1966.

Очерки истории Коммунистической партии Казахстана. Алма-Ата, 1963.

Очерки истории Коммунистической партии Грузии. Тбилиси, 1968.

Очерки истории Коммунистической партии Азербайджана. Баку, 1963.

Очерки истории Коммунистической партии Молдавии, Кишинев, 1964.

Очерки истории Коммунистической партии Латвии. Рига, 1966.

Очерки истории Коммунистической партии Киргизии. Фрунзе, 1966.

Очерки истории Коммунистической партии Армении. Ереван, 1967.

Очерки истории Коммунистической партии Туркменистана. Ашхабад, 1965.

Очерки истории Коммунистической партии Эстонии. Т. 2. Таллин, 1963.

Программа Коммунистической партии Советского Союза. М., 1961.

Первый Всероссийский съезд Советов рабочих и солдатских депутатов (стеногр. отчет). Т. 1—2. М.—Л., 1930—1931.

Союз Советских Социалистических Республик. М., 1967.

Советский Союз, **Армения** (географическое описание в 22 томах). М., 1966.



СССР и Союзные Республики в 1967 году. М., 1968.

Советский Союз, **Узбекистан** (географическое описание в 22 томах). М., 1967.

Советский Союз, **Грузия** (географическое описание в 22 томах). М., 1967.

Советский Союз, **Литва** (географическое описание в 22 томах). М., 1967.

Советский Союз, **Эстония** (географическое описание в 22 томах). М., 1967.

Советское Закавказье в братской семье народов СССР. Баку, 1962.

Формирование социалистических наций в СССР. Сб. статей. М., 1962.

Эстафета дружбы (к пятидесятилетию газеты «Правда» посвящается). Кишинев, 1962.

X Всероссийский съезд Советов рабочих, крестьянских, красноармейских и казачьих депутатов. 23—27 декабря 1922 г., стенографный отчет. М., 1923.

1-й съезд Советов СССР. Стенографный отчет, М., 1922.

2-й съезд Советов СССР. Стенографный отчет, М., 1925.

VIII-й съезд Советов СССР (чрезвычайный). Стенографный отчет. М., 1936.

### 4. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

*«Արարատ»*
*«Ավանգարդ»*
*«Գրական թերթ»*
*«Հայաստանի աշխատավորուհի»*
*«Սովետական արվեստ»*
*«Սովետական Հայաստան»*
*«Սովետական Վրաստան»*
*«Կոմունիստ» (Բաքու)*
«Баку»,
«Бакинский рабочий»
«Внешняя торговля»
«Заря Востока»
«За рубежом»
«Известия»
«Казахстанская правда»
«Кавказский рабочий листок»
«Коммунист Советской Латвии»
«Коммунист Таджикистана»
«Коммунист» (Ереван)

«Культура и жизнь»
«Ленинградская правда»
«Ленинское знамя»
«Литературная газета»
«Московская правда»
«Огонек»
«Правда»
«Правда Украины»
«Советская Россия»
«Советская Белоруссия»
«Советская Киргизия»
«Советская Молдавия»
«Советская Латвия»
«Советская Литва»
«Советская Эстония»
«Ташкентская правда»
«Туркменская искра»
«Экономическая газета»

### 5. ԱՐԽԻՎՆԵՐ

Архив Института марксизма-ленинизма при ЦК КПСС.

Партийный Архив Азербайджанского филиала Института марксизма-ленинизма при ЦК КПСС.

Партийный Архив Армянского филиала Института марксизма-ленинизма при ЦК КПСС.

Центральный Государственный Архив Октябрьской Социалистической революции и социалистического строительства в СССР (Москва).

Центральный Государственный исторический Архив Армянской ССР.

Центральный Государственный исторический Архив Азербайджанской ССР.

Центральный Государственный исторический Архив Грузинской ССР.

Центральный Государственный исторический Архив Украинской ССР.



## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբաշիձե Գր.— 212
Աբաշիձե Ի.— 212
Աբգարյան Մ.— 265
Աբովյան Խ.— 47, 100, 224
Աբրահամյան Ա.— 119
Ազիզբեկովա Գ. Ա.— 218
Ազիզբեկով Մ.— 217, 224
Ալեքսիոս — 257
Ալլավերդով Զ.— 293, 297, 298
Ալմակուլով Տ.— 265
Ախմեդով Ն.— 180
Ախունդով Միրզա Ֆաթալի —105, 224
Աղայան Մ.— 119
Աղամիր — 163
Անեյլին Ս.— 331
Ալիև Ս.— 271
Անրինեգերիս Տ.— 230
Արիֆով Ռ.— 182
Արաբեկով Ա.— 295

Բակունց Ա.— 100
Բար Ալֆրեդ — 338
Բելինսկի Վ. Գ.— 12
Բիկյու Մարիա — 244, 245
Բուրեկյավիչյուս Մ.— 231, 233

Գամսախուրդիա Կ.— 212
Գանդի Ինդիրա — 184
Գասպարյան Գ.— 259
Գերցեն Ա. Ի.— 13
Գիտալով Ա.— 163
Գորկի Մ.— 16, 163, 283
Գուստով Հ.— 338

Դոբրոլյուբով Ն. Ա.— 13
Դոյնեյան Ե.— 163
Դոնելայտիս — 105
Դուլաևա Զ.— 220

Եսիպով Ն. Ս.— 26

Զարյան Ն.— 100, 163
Զիմանյազով Կ.— 150

Էնգելս Ֆ.— 11, 15, 65, 107

Թարվերդիևա Ք.— 119
Թելմանով Կ.— 200
Թումանյան Հ.— 255, 282, 283
Թուրսուն-Զադե Միրզո — 278
Թուրսունկուլով Խ.— 180

Ժանյիբաևա Մ.— 265

Իբրահիմով Հ.— 224
Իբրահիմով Մ.— 224
Իսահակյան Ա.— 100, 162

Իդեն Ու. Պ.— 191, 192
Իվերսեն Տրյուգվե — 336

Լազո Ս.— 246
Լասլո Դեբրեցեյշ — 335
Լենին Վ. Ի.— 7, 11, 12, 16—28, 43, 56, 57, 65—67, 71, 80, 86, 89, 103, 108, 110—112, 114, 123, 131, 136, 146, 151—153, 190, 205, 218, 230, 251,, 255, 266, 283, 299, 312, 316, 352
Լյուքսեմբուրգ Ռ.— 22
Լևի Պաոլո — 335

Խալլիկ Կ. Ս.— 302
Խանլյար — 217
Խաչատրյան Ա.— 288
Խոջա Բ. Ա.— 206

Ծերեթելի Ա.— 47, 211

Կալինին Մ. Ի.— 28, 29, 190, 294
Կախոտկինեն Մ. Կ.— 206
Կամո — 217
Կասսեն Ա.— 200
Կարաս Կ.— 225
Կեյս Մ.— 332
Կիրով Ս. Մ.— 15
Կլեկ Ջեկի — 342
Կնյազև Պ. Ա.— 91
Կնունյանց Բ.— 217
Կոլինչենկո Բ.— 163
Կոլցով Ա. Վ.— 91
Կոտլյարևսկի Ի.— 91
Կոտովսկի Գ.— 246
Կորոլենկո — 246
Կրայներ Հանս — 344
Կրուչենյուկ Պ.— 246
Կուրբանով Բ.— 222

Համբարձումյան Վ.— 288
Հալիբեկով — 334
Հասանով Ե.— 225
Հովհաննիսյան Հ.— 290
Հուսեյնով Մ.— 224

Ղարիբջանյան Գ. Բ.— 263

Մահմեդալիև Մ.— 325
Մահմեդով Ա.— 220
Մայակովսկի Վ.— 218
Մաշտոց Մ.— 105
Մարեմոն Գիրաք — 183
Մաո Ն. Ցա.— 210
Մարքս Կ.— 11, 18, 65, 107
Մասլենով Մ.— 200
Մեժելայտիս Է.— 235
Մեսցեր Ա.— 199
Մերկուրի Գ.— 245, 246
Միկոլայտիս-Պուտինաս Վ. Ցա.— 236
Միկոյան Ա.— 217
Միրեկ Գ.— 14
Միրզոյան Լ. Ի.— 191
Միրցխուլավա Ա.— 212
Մյասնիկյան Ա.— 217
Մոկանու Սպիրիդոն — 245
Մորա Միգել Խոսե — 343
Մորգան Ուինիֆրեդ — 339
Մուկաշև Կ.— 265
Մուսխելիշվիլի Ն. Ի.— 212

Յարոշ Օ.— 319, 320

Նալբանդյան Մ.— 47
Նալդաջարին Տ. Ա.— 190
Նանսեն — 336
Նավոյի — 105
Նար-Դոս — 100
Նարիմանով Ն.— 217
Նեյմաթուլա Ա.— 219
Նիզամի — 105
Նիկոլյան Յու. Ա.— 272
Նուռաեդդին Ա.— 142

Շահումյան Ստ. Գ.— 217, 244, 255



Շանշիաշվիլի Ս.— 212
Շարով Ի. Վ.— 295
Շեքսպիր — 107
Շիրց Յարան — 335
Շիրվանզադե Ալ.— 163
Շիապարելլի Ի. Ի.— 122
Շողգալենկո Ա.— 164
Շրեյդեր Է. Ս.— 197
Շուլց Արնոլդ — 337
Շևչենկո Տ. Գ.— 14, 91, 101

Չարան Տ.— 245
Չապաև Վա. Ի.— 134
Չարենց Ե.— 100, 163
Չերկասկին Ա.— 200
Չերնիշևսկի Ն. Գ.— 13
Չերքեզիշվիլի Ն.— 118
Չիկովանի Ս.— 212
Չիստյակով Օ. Ի.— 131
Չրաքյան Տ.— 335

Պալվանովա Բ. Լ.— 295, 299
Պակ Սու-Դիկ — 333
Պան Խան-Ջու — 333
Պառոն Բ. Ն.— 164
Պենն Սանդրա Անժելա — 342
Պետրովսկի Գ. Ի.— 152
Պյոտրա Զախարիա — 245
Պոտոպով Դր.— 319
Պրեստես Մարիա — 342
Պուշկին — 105
Պուրին Վ. Ռ.— 250

Ջափարիձե Ա.— 217, 225
Ջաֆարլի Թ.— 119
Ջաֆարով Ա.— 225

Ռախիմբաբաևա Զ.— 182
Ռահիմ Մ.— 224
Ռահիմով Ս.— 224
Ռամաշ Հ.— 330, 331
Ռայնիս Յան — 235
Ռաշիդով Շ. Ռ.— 121, 182, 183
Ռաջաբով Ս. Ա.— 271, 272
Ռզա Ռասուլ — 224
Ռոկֆելլեր Ն.— 341
Ռուսթավելի Շոթա — 105
Ռուստամ Սուլեյման — 224

Սայաթ-Նովա — 105
Սայիդմուրադով Խ. Ս.— 270, 272
Սատակի Ի.— 244
Սավչենկո Մ.— 163
Սարբի Կ.— 265
Սարյան Մ.— 106, 288, 289
Սինգհ Դովինդ — 338
Սպանդարյան Ս.— 217
Սվետլով Մ.— 247
Ստալին Ի. Վ.— 217
Ստանիսլավով Զ.— 333
Ստուչկա Պ.— 251
Սունդուկյան Գ.— 211
Սևունց Գ.— 163

Վիլյառունդեկո Փուլի Բանդա — 338
Վովչոկ Մարկո — 14
Վուրգուն Ս.— 224, 225

Տարմիտոռ Վ. Ցա.— 202
Տիգրանյան Ա.— 334
Տորեգայկ Աներն — 198
Տորեգայկ Աննեկի — 198
Տուլյա Լ. Ա.— 302

Ուեդա Մասաո — 335
Ուերտա Էֆրեն — 338
Ուկրաինկա Լեսյա — 14, 91

Փախչանյան Ա.— 338
Փաշան Ն.— 222

Քարիմով Խ.— 277
Քենթ Ռոքուել — 287
Քոչար Հր.— 163

Օլդրիջ Ջեյմս — 287, 338

Օսլով Ա. — 219
Օրմանով Հ. — 265
Օրջոնիկիձե Ս. — 217

Ֆաջիլխոջաև Կ. Ֆ. — 180
Ֆարուխ Գուլյամ — 184
Ֆրանկո Ի. — 14, 91
Ֆրանս Ա. — 16
Ֆրիմեն Հ. — 341
Ֆրից Ֆոն դեր Լեյպե — 338

## ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբխազական ԻՍՍՀ — 204
Ադրբեջան — 14, 35, 81, 82, 92, 95, 101, 106, 119, 122, 145, 182, 193, 204, 205, 209, 213, 217—227, 233, 254, 306, 325, 333
Ադրբեջանական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Ադրբ. ՍՍՀ) — 31, 37, 81, 82, 123, 158, 164, 173, 215, 216, 218, 219, 221, 227
Ալաբամա — 341
Ալբանիա — 327
Ալթայ — 54
Ալժիր — 330
Ալմա-Աթա — 155, 194, 199, 200
Ալյասկա — 341
Ախալցխա — 206
Ամերիկա — 177, 335, 341
ԱՄՆ — 52, 58, 140, 198, 244, 250, 337—341, 346, 347, 353, 354
Անգարսկ — 133
Անգլիա — 93, 140, 151, 156, 190, 244, 250
Անդիժան — 177
Անդրկովկաս — 14—16, 26, 27, 54, 92, 119, 120, 164, 167, 205, 207, 211, 213, 217, 218, 221, 224—227, 283, 333, 334
Անդրկովկասյան ֆեդերացիա — 25, 159, 204, 283
Աշխաբադ — 83, 292, 293
Աջարական ԻՍՍՀ — 204
Ասիա — 24, 183, 195, 208, 274, 281, 328, 347—349
Ավստրալիա — 245, 246
Ավստրիա — 323
Արաբական Միացյալ Հանրապետություն — 196, 275
Արգենտինա — 335
Արտաշատ — 161, 162
Արևմտյան Գերմանիա — 156, 344
Արևմտյան Եվրոպա — 24, 250
Աֆղանստան — 274, 275, 293, 346
Աֆրիկա — 183, 195, 274, 328, 347—349

Բաթումի — 208, 214
Բայկալ — 192, 194
Բաշկիրական Ինքնավար Հանրապետություն — 132
Բաշկիրիա — 87, 141—143
Բաքու — 9, 15, 53, 81, 119, 124, 213, 216, 217, 219, 222, 223, 333
Բելգիա — 96

Բելգրադ — 323
Բելոյարսկ — 137
Բելոռուսական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (ԲՍՍՀ) — 28, 31, 37, 152, 165—168, 170—174
Բելոռուսիա — 13, 27, 54, 82, 83, 88, 97, 122, 148, 158, 167, 169, 170, 172, 174, 195, 254
Բեյրութ — 287
Բեսարաբիա — 241, 244, 246
Բյուրական — 288
Բոգոսլովսկ — 54
Բորժոմի — 214
Բրազիլիա — 342
Բրատիսլավա — 99, 355, 357
Բրյանսկ — 54, 133
Բրեստ — 158
Բուդապեշտ — 352
Բուլղարիա — 98, 127, 208, 244, 245, 317, 318, 320, 323, 355
Բուխարա — 271
Բուրյաթական Ինքնավար Հանրապետություն — 143

Գերմանական Դեմոկրատական Հանրապետություն (ԳԴՀ) — 296, 315, 316, 322, 355
Գերմանիա — 34, 231, 250, 251, 302
Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն (ԳՖՀ) — 93, 127, 199, 244, 323, 344
Գոմել — 15
Գորի — 214
Գորկի — 53, 87, 134, 135, 139, 276
Գրոզնի — 143

Դաղստան — 143, 205
Դաղստանի Ինքնավար Հանրապետություն — 143
Դանիա — 196
Դարիան — 320, 321
Դաուգավպիլս — 253
Դելի — 338
Դիլիջան — 224
Դնեպրոպետրովսկ — 155
Դոնբաս — 83, 155, 193
Դոնեցկ — 83
Դոնի Ռոստով — 135, 137
Դուշանբե — 83, 268, 270, 274, 337

Եղիզավետպոլ — 15
Եվրոպա — 52, 57, 127, 151, 172, 195, 208, 253, 274, 281, 315, 323, 324, 334, 353
Երևան — 9, 15, 54, 81, 82, 117, 119, 160, 161, 200, 213, 226, 254, 280, 284, 336, 342

Էլիստա — 143
Էստոնական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Էստ. ՍՍՀ) — 31, 37, 72, 82, 158, 300—302, 305, 306, 307
Էստոնիա — 55, 95, 122, 148, 195, 254, 302—309

Թաթարական Ինքնավար Հանրապետություն — 132, 143
Թաթարիա — 87, 141, 142
Թբիլիսի — 9, 81, 83, 117, 119, 164, 202, 208, 213, 214, 226
Թոկմակ — 264
Թունիս — 342
Թուրքիա — 209, 244, 298
Թուրքմենական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Թուրքմ. ՍՍՀ) — 31, 37, 83, 158, 177, 223, 276, 293—295
Թուրքմենիա — 13, 81, 82, 148, 177, 182, 293—299

Իժևսկ — 143



Իջևան — 123
Իռլանդիա — 33
Իտալիա — 93, 96, 151, 190, 209, 222, 328, 335
Իրան — 209, 274, 275, 278, 293, 295, 319
Իրկուտսկ — 54, 134, 139, 276

Լայպցիգ — 285
Լատինական Ամերիկա — 325, 347, 349
Լատվիա — 81, 82, 95, 101, 122, 148, 171, 195, 250—256, 257, 309
Լատվիական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Լատ. ՍՍՀ) — 31, 37, 70, 83, 158, 248—250, 252, 254—257, 276, 302
Լեհաստան — 222, 244, 296, 315, 316, 318, 320, 322, 355
Լենինական — 54, 227
Լենինգրադ — 9, 53, 86, 87, 117, 124, 134, 137, 139, 146, 155, 158, 160, 182, 185, 193, 195, 276, 336
Լեռնային Բադախշանի Ինքնավար Մարզ — 270
Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ — 227
Լիբանան — 244, 275, 277
Լիեպայա — 253
Լիտվա — 95, 148, 171, 195, 230—237, 309
Լիտվական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Լիտ. ՍՍՀ) — 31, 37, 70, 158, 228—231, 234
Լոնդոն — 107, 287
Լոս-Անջելոս — 341
Լվով — 122

Խաբարովսկ — 134, 276
Խարկով — 53, 112, 151, 155, 319, 320
Խերսոն — 161

Ծխալտուբո — 214

Կաբարդա-Բալկարական Ինքնավար Հանրապետություն — 143
Կազան — 139, 143
Կալմիկական Ինքնավար Հանրապետություն — 143
Կահիրե — 287
Կանադա — 42, 275
Կաշկադարինյան մարզ — 177
Կասպիյսկ — 133
Կարագանդա — 54, 83, 192, 193
Կարաթաու — 194
Կարա-Կալպակյան ԻՍՍՀ — 177
Կարելյական Ինքնավար Հանրապետություն — 132, 143, 306
Կարելիա — 87
Կարրարա — 342
Կենտրոնական Եվրոպա — 322
Կիզիլ — 143
Կիզիլ-Կիյա — 264
Կիրգիզական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Կիրգ. ՍՍՀ) — 31, 37, 84, 85, 158, 259—261, 264, 265
Կիրգիզիա — 13, 85, 95, 101, 148, 182, 261—266
Կիրովաբադ — 227
Կիև — 9, 68, 81, 82, 112, 117, 121, 122, 124, 150, 160
Կիևյան Ռուսիա — 158
Կոմի Ինքնավար Հանրապետություն — 143
Կոմսոմոլսկ — 54, 133
Կովկաս — 13, 16, 34, 39, 111, 210, 283, 334
Կորեա — 208, 296, 333, 334
Կրամատորսկ — 53
Կրասնոյարսկ — 54, 82
Կրիվոյ Ռոգ — 53, 84, 155
Կուբա — 275

Կուզբաս — 53
Կուզնեցկ — 53, 135

Հայաստան — 13, 14, 55, 81, 82, 85, 92, 95, 98—101, 119, 148, 158—161, 164, 193, 195, 204, 205, 209, 213, 222, 224, 226, 233, 254, 255, 281—287, 289, 290, 306, 309, 331, 332, 336, 343
Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Հայկ. ՍՍՀ)— 31, 37, 81, 84, 85, 98, 123, 158, 161, 162, 164, 193, 276, 279, 286, 307
Հանոյ — 325
Հարավային Ամերիկա — 208
Հարավսլավիա — 96, 244, 323
Հարավ-Օսեթական Ինքնավար Մարզ — 204
Հարլեմ — 340, 341
Հյուսիս-Օսեթական Ինքնավար Հանրապետություն — 143
Հնդկաստան — 184, 196, 198, 223, 274, 275, 336, 337, 348
Հոլանդիա — 196
Հունգարիա — 97, 245, 296, 315—318, 322—325, 355

Ղազախ — 224
Ղազախական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Ղազ. ՍՍՀ)— 31, 37, 69, 92, 158, 171, 188—191, 199, 276, 293
Ղազախստան — 83, 95, 148, 182, 190—195, 200, 201
Ղարաքիլիսա (Կիրովական) — 285

Ճապոնիա — 190, 222, 224, 328
Ճիաթուրի — 206, 207

Մագնիտագորսկ — 53, 135
Մագնիտկա — 194
Մախաչկալա — 143
Մավրիկիա — 342
Մարիական Ինքնավար Հանրապետություն — 143
Մերձավոր Արևելք — 222
Մեքսիկա — 332
Մինսկ — 57, 112, 166, 167
Միջին Ասիա — 16, 34, 39, 57, 111, 121, 222, 271, 272, 293, 336, 337
Միրնի — 133
Մոգիլև — 15
Մոլդավական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Մոլդ. ՍՍՀ)— 31, 37, 70, 122, 158, 238, 239, 241, 243, 247
Մոլդավիա — 81, 92, 95, 148, 240—246, 306
Մոնղոլիա — 208, 320
Մոսկվա — 9, 27, 53, 55, 56, 87, 96, 107, 117, 123, 124, 130, 134, 135, 137, 139, 146, 155, 158, 160, 185, 192, 195, 265, 276, 295, 318, 323, 328, 332, 336
Մորդովական Ինքնավար Հանրապետություն — 143

Յակուտական Ինքնավար Հանրապետություն — 143
Յակուտիա — 13
Յարոսլավլ — 135, 160

Նալչիկ — 143
Նախիջևան — 15
Նախիջևանի Ինքնավար Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Նախիջ. ԻՍՍՀ)— 227
Նեպալ — 274
Նիժնի Տագիլ — 135
Նիկոպոլ — 206, 207
Նյու-Արկ — 341
Նյու-Հեյվեն — 341
Նյու-Յորք — 287, 338, 341
Նովգորոդ — 112
Նովի Վորոնեժ — 137
Նովո-Լիպեցկ — 53
Նովոսիբիրսկ — 124, 137, 189
Նովոտագիլսկայի — 54
Նոր Զելանդիա — 33
Նորիլսկ — 54
Նորվեգիա — 336, 338
Նոր Տուլա — 53
Նուբիա — 222

Շուշի — 15

Չարենցավան — 285
Չարջոու — 271
Չեբոկսարի — 143
Չելյաբինսկ — 53, 54, 135
Չեխոսլովակիա — 99, 100, 296, 315, 316, 318—320, 322, 323, 355—357
Չեչեն-Ինգուշական Ինքնավար Հանրապետություն — 143
Չերեպովեց — 54
Չիկագո — 341
Չիմքենդ — 193
Չինաստան — 327
Չուկոտկա — 142
Չուվաշական Ինքնավար Հանրապետություն — 132, 143

Պակիստան — 184, 198
Պետրոզավոդսկ — 143
Պսկով — 112
Պրահա — 100
Պրժևալսկ — 264

Ջալալ-Աբադ — 264
Ջեկսոն — 341

Ռիգա — 9, 83, 248, 253—255
Ռյազան — 137
Ռումինիա — 222, 245, 316, 322, 323
Ռուսաստան — 11—17, 19—25, 27, 35, 39, 46—48, 56, 57, 65, 66, 77, 82, 93, 103, 106, 108, 131, 132, 134—138, 140, 141, 144—146, 153, 172, 178, 190, 205, 218, 221, 230, 240, 242, 251, 271, 273, 295, 358
Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն (ՌՍՖՍՀ)— 27, 31, 37, 68, 69, 82, 83, 129, 131—148, 152, 158, 167, 173, 190—193, 205, 226, 233, 252, 254, 302, 306, 309
Ռուսթավի — 83, 207

Սաիրամ — 214
Սամարղանդ — 177
Սարանսկ — 143
Սարատով — 135, 139
Սեմիպալատինսկ — 53, 192
Սիբիր — 54, 139
Սիր-Դարյա — 177
Սիրիա — 244, 338
Սոկոլով — 319—320
Սոկոլովսկ-Սարբայ — 194
Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միություն (ՍՍՀՄ)— 3—10, 27, 28, 30—45, 49—64, 67—74, 76—80, 84—91, 93—106, 108—116, 118—128, 131, 133—135, 137—139, 142, 144—148, 152—159, 161, 167—171, 173, 174, 177—180, 183—187, 190—193, 195—197, 199—201, 204—209, 211—214, 218, 220—223, 225, 230—237, 241—245, 250—258, 261, 262, 264—267, 272, 274—276, 278, 284—286, 288—290, 294—

297, 299, 302—304, 306—325, 327—333, 335—336, 338, 339, 341—345, 347—352, 354—355, 358—360
Սոֆիա — 126, 352, 353
Սվերդլովսկ — 117, 124, 135, 137, 139, 195
Ստալինգրադ — 53, 112
Սուխումի — 214
Սումգայիթ — 123, 219, 220
Սուրխանդարինյան մարզ — 177
Սևաստոպոլ — 112
Սևերոդվինսկ — 133

Վալմիերա — 253
Վախշ — 273
Վարշավա — 314, 342, 353, 356
Վենտսպիլս — 255
Վիեննա — 338
Վիետնամ — 127, 222, 296, 325, 353
Վիլնյուս — 228
Վիռնեոպոլիե — 161, 162
Վիտեբսկ — 112
Վլադիմիր — 54
Վլադիվոստոկ — 134
Վոլգոգրադ — 135, 137, 158
Վոլժսկ — 135
Վորոնեժ — 112, 139, 160, 276
Վրաստան — 14, 70, 81—83, 92, 95, 101, 106, 118, 119, 148, 193, 204—208, 209—214, 222, 224, 226, 233, 254, 306, 309
Վրացական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Վրաց. ՍՍՀ) — 31, 37, 81, 83, 158, 164, 202—204, 209, 213, 214, 276

Տալլին — 300
Տաշքենդ — 9, 117, 176, 183—185
Տաջիկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Տաջ. ՍՍՀ) — 31, 37, 83, 158, 268—270, 272, 274, 277
Տաջիկստան — 13, 82, 101, 122, 148, 171, 182, 270, 271, 273, 275—278, 337
Տիրանա — 338
Տկվարչելի — 206
Տկիբուլի — 206
Տյումենի մարզ — 223
Տոմսկ — 139

Ցեյլոն — 338
Ցխինվալի — 214

Ուգլիչ — 54
Ուդմուրտական Ինքնավար Հանրապետություն — 143
Ուզբեկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Ուզբ. ՍՍՀ) — 31, 37, 158, 173, 175—177, 179, 181, 182, 187, 272, 276, 293, 336
Ուզբեկստան — 13, 38, 54, 69, 81, 92, 95, 98, 120, 121, 148, 171, 177—182, 184, 186, 193, 195, 306, 309
Ուլան-Ուդե — 143
Ուլյանովսկ — 95, 135
Ուկրաինա — 22, 27, 68, 69, 81, 82, 84, 87, 92, 97, 106, 121, 122, 148, 151—161, 163, 167, 193, 195, 209, 222, 226, 233, 254, 309
Ուկրաինական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Ուկր. ՍՍՀ) — 28, 31, 37, 68, 81, 92, 122, 149, 150—154, 156, 157, 160, 161, 164, 207, 306
Ուստ-Կամենոգորսկ — 194
Ուրալ — 53, 54, 135, 155
Ուրալ-Կուզնեցկ — 135



Ուրուգվայ — 33
Ուֆա — 143

Փարիզ — 16, 287
Փոթի — 214

Քիշնև — 9, 15, 238, 240
Քոբուլեթի — 214
Քութայիսի — 208, 214, 227

Օբնինսկ — 137
Օմսկ — 137
Օշ — 264
Օսլո — 336
Օրջոնիկիձե — 143, 274

Ֆերգանայի մարզ — 177
Ֆինլանդիա — 196, 244, 256, 328
Ֆրանսիա — 93, 140, 156, 190, 198, 328
Ֆրունզե — 260, 264

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն . . . . . . . . . . . 3

I

Լենինյան ազգային քաղաքականության հաղթանակը

1 Ցարական Ռուսաստանը ժողովուրդների բանտ . . . . 12
2 Ազգային հարցի լենինյան ծրագիրը . . . . . . . 17
3 Հոկտեմբերը և սոցիալիզմը լուծեցին ազգային հարցը . . 25

II

Ժողովուրդների բարեկամությունը կոմունիզմի համար մղվող պայքարի մեծ ուժն է

1 ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության տնտեսական, քաղաքական և գաղափարական հիմքերը . . . . . . . 45
2 ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը և համագործակցությունը սովետական հասարակության հզորության աղբյուրն է . . 51
3 Ռուս ժողովուրդը ՍՍՀՄ ժողովուրդների առաջատար ուժն է . 63
4 Ժողովուրդների բարեկամության ամրապնդումը և աշխատավորների կոմունիստական բարձր գիտակցականության դաստիարակումը կոմունիզմին անցնելու կարևոր պայմանն է . . . 73
5 Համաժողովրդական սոցիալիստական մրցությունը որպես սովետական ազգերի համագործակցության կարևոր գործոն . . 79
6 Ազգերի սոցիալիստական կուլտուրաների համագործակցությունը 90
7 ՍՄԿԿ-ն ժողովուրդների բարեկամության ու համագործակցության կազմակերպիչը և ոգեշնչողն է . . . . . . 109
8 Կուսակցական կազմակերպությունների գործունեությունը ժողո-

ժողովուրդների բարեկամության ամրապնդման և զարգացման գործում . . . . . . . . . . 116

## III

## Սովետական հանրապետությունների ավանդը ժողովուրդների բարեկամության զարգացման և կոմունիզմի կառուցման գործում

1 Ռուս մեծ ժողովուրդը կոմունիզմի կառուցման առաջին բնագծում . . . 131
2 Ուկրաինական ժողովուրդը սովետական հանրապետությունների եղբայրական ընտանիքում . . . . . . . . 151
3 Բելոռուսիայի աշխատավորների պայքարը կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման համար . . . . . 173
4 Ուզբեկստանը կանգնած է կոմունիստական շինարարության հարվածային հերթափոխում . . . . . . . . 177
5 Ժողովուրդների բարեկամության կենարար ուժը Ղազախստանի բարգավաճման աղբյուրն է . . . . . . . . 190
6 Վրաց աշխատավորները ժողովուրդների միասնության ամրապնդման համար մղվող պայքարում . . . . . . . 204
7 Ծաղկում է եղբայրական Ադրբեջանը . . . . . . . 217
8 ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում ծաղկում և բարգավաճում է Սովետական Լիտվան . . . . . . . 230
9 Մոլդավական ժողովրդի եղբայրական անխզելի կապերը . . 240
10 Լատիշների ջանքերը ժողովուրդների բարեկամության ամրապնդման համար . . . . . . . . . . 250
11 Կիրգիզիան երախտապարտ է ժողովուրդների բարեկամության համար . . . . . . . . . . . 261
12 Եղբայրական օգնությունը տաջիկ ժողովրդի հաջողությունների հիմքն է . . . . . . . . . . . 270
13 Հավերժական բարեկամությունը հայ ժողովրդի նշանաբանն է . 281
14 Սովետական ժողովուրդների մեծ ընտանիքում ծաղկում է Թուրքմենստանը . . . . . . . . . . . 293
15 Էստոնիան դեպի կոմունիզմ է գնում ժողովուրդների բարեկամության լենինյան ուղով . . . . . . . . . 302

## IV

## ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը և համագործակցությունը ոգեշնչող օրինակ է մարդկության համար

1 Սոցիալիստական երկրների համագործակցությունը և փոխօգնությունը . . . . . . . . . . . 312
2 Սոցիալիստական ազգերի բարեկամության ոգեշնչող օրինակը . 327



3 Սովետական Միության պայքարը աշխարհի բոլոր ժողովուրդների միջև բարեկամության ու խաղաղության ստեղծելու և ամրապնդելու համար . . . . . . . . . . 345
Վերջաբան . . . . . . . . . . . 351
Աղբյուրների և գրականության համառոտ ցանկ . . . . 361

Անձնանունների ցանկ . . . . . . . . . 369
Տեղանունների ցանկ . . . . . . . . . 373

Արամայիս Թադևոսի Հարությունյան—Հարենց

Անխախտ բարեկամություն

Գեղ. խմբագիր՝ Գ. Ա. Խուդիկյան
Նկարիչ՝ Ռ. Գ. Նանույան
Տեխ. խմբագիր՝ Օն. Ս. Փանիկյան
Վերստուգող սրբագրիչ՝ Լ. Մ. Ջարյան

Հանձնված է արտադրության 2/XII 1968 թ.։ Տիրաժ 5000։
Ստորագրված է տպագրության 9/IX 1969 թ.։ ՎՖ 07681։ Պատվեր 4։
Թուղթ տպագրական № 1, $84\times108^1/_{32}$։ Հրատ. 17,2 մամ.+11 ներդիր
տպ. 24,0 մամ.=20,16 պայմ. մամ.։ Գինը՝ 1 ռ. 41 կ.։
«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

ՀՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան 91։